Արեստակես Սիմավորյան
Վահրամ Հովյան
Կարեն Վերանյան

ԻՍՐԱՅԵԼԻ, ԻՐԱՆԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Երևան
2017

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Ս 500

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Գիտական խմբագիր՝
ԱՐԵՍՏԱԿԵՍ ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար

Սիմավորյան Ա.

Ս 500 ԻՍՐԱՅԵԼԻ, ԻՐԱՆԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ/ Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, Կ.Վերանյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2017. - 274 էջ:

Գիրքը նվիրված է սփյուռքի նկատմամբ Իսրայելի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի պետական քաղաքականության վերլուծությանը: Անդրադարձ է կատարվում հիշյալ երկրների սփյուռքերի ձևավորմանն ու արդի խնդիրներին: Քննարկվում են քաղաքականության, տնտեսության, գիտության և այլ ոլորտներում պետություն-սփյուռք փոխգործակցության հիմնահարցերը:

Գիրքը նախատեսված է պետական ծառայողների, քաղաքագետների, սփյուռքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2017
© «Նորավանք» ԳԿՀ, 2017

ISBN 978-9939-825-35-9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ……...…… 4

ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ 7

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ 84

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ 168

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ 213

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ …….....… 263

ԱՄՓՈՓՈՒՄ …….…….....… 267

РЕЗЮМЕ ……..……...……....……..… 269

SUMMARY ….……....……..… 271

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհում սփյուռք ունենալը վաղուց արդեն դադարել է առանձին երկրների մենաշնորհը լինել։ Միգրացիոն մեծածավալ հոսքերի հետևանքով աշխարհի գրեթե բոլոր պետություններն այսօր ունեն իրենց սփյուռքը։ Արդյունքում՝ ՀՀ սփյուռքի նախարար Հ.Հակոբյանի խոսքերով՝ այսօր տեղի է ունենում աշխարհի սփյուռքացում։ Եվ յուրաքանչյուր պետություն, ելնելով իր հնարավորություններից, խնդիրներից ու մարտահրավերներից, սփյուռքի առանձնահատկություններից, մշակում և իրականացնում է համապատասխան ռազմավարություն արտերկրի հայրենակիցների հանդեպ։

Հետազոտության նպատակն է վերհանել առանձին երկրների՝ սփյուռքի նկատմամբ պետական քաղաքականության, պետություն-սփյուռք հարաբերությունների ներուժը, առանձնահատկությունները, խնդիրներն ու բացթողումները։ Ուսումնասիրությունն իր առջև խնդիր է դրել նաև պարզել նշյալ երկրների պետություն-սփյուռք գործակցության փորձի ուսանելիության, որոշ դեպքերում՝ դրա կիրառելիության հնարավորությունները։ Զուգահեռներ են անցկացվել (Իրան, Իսրայել) հայ իրականության հետ։

Առանձնացված երկրների ընտրության հարցում նախապատվությունը տրվել է մեր տարածաշրջանի պետությունն-

ին՝ հաշվի առնելով ՀՀ ազգային անվտանգության հիմնախնդիրների և մարտահրավերների որոշակի ընդհանրությունը (տարածաշրջանի անկայունություն, ռազմական սպառնալիքներ, Թուրքիա-Ադրբեջան տանդեմ և այլն), աշխարհաքաղաքական ընթացիկ զարգացումները և այլ գործոններ։

Հետազոտությունում լուսաբանվել են հետևյալ հիմնահարցերը.

1. Առանձնացված երկրների սփյուռքերի ընդհանուր նկարագիրը և արդի վիճակը. անդրադարձ է կատարվել սփյուռքերի առաջացման և կայացման պատմությանը, աշխարհագրական սփռվածությանը, էթնիկ և կրոնական նկարագրին և այլն,
2. ազգային, հոգևոր-գաղափարական հայեցակարգային մոտեցումները, օրենսդրական նախաձեռնությունները, սփյուռքին ուղղված սոցիալ-մշակութային և կրթական ծրագրերը, սփյուռքի տեղեկատվական քաղաքականության առանձնահատկությունները,
3. պետություն-սփյուռք գործակցային ձևաչափում պետական քաղաքականության առանձնահատկությունները, մասնավորապես՝ սփյուռքի ինքնակազմակերպման խնդիրները, հայրենադարձության և ինտեգրման կազմակերպումը, սփյուռքի տնտեսական, գիտական ներուժի օգտագործման մեխանիզմները և այլն։

Վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացվում են գործնական առաջարկություններ, որոնք, ըստ մեզ, կարող են օգտակար լինել ՀՀ պատկան մարմինների, ինչպես նաև ոլորտով հետաքրքրվող մասնագիտական լայն շրջանակների համար։

Հետազոտության՝ Իսրայելին վերաբերող հատվածն իրականացրել է «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Կարեն Վերանյանը, Իրանին վերաբերող հատվածը՝ հիմնադրամի Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ-գիտական քարտուղար Վահրամ Հովյանը, իսկ Թուրքիային և Ադրբեջանին վերաբերող հատվածները՝ հիմնադրամի Հայագիտական կենտրոնի ղեկավար Արեստակես Սիմավորյանը։

ԻՍՐԱՅԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Նախաբան

Պետություն-սփյուռք փոխգործակցության կազմակերպման, կառավարման և զարգացման հիմնահարցն առհասարակ մշտապես փոփոխվող, դինամիկ գործընթաց է, որը տրամաբանորեն կարող է բերել ինչպես հնարավորություններ, այնպես էլ նոր խնդիրներ ու մարտահրավերներ: Անհնար կամ գրեթե անհնար է հասնել այնպիսի իրավիճակի, երբ հնարավոր լինի խոսել պետություն-սփյուռք փոխգործակցության կատարյալ կանոնակարգման, լիարժեք հարաբերությունների ապահովման մասին: Քանի որ պետությունը և սփյուռքը ներկայանում են որպես «կենդանի սուբյեկտներ» կամ «օրգանիզմներ», նրանց միջև համագործակցությունը մշտապես կատարելագործման կարիք կունենա, կլինեն երկխոսության կայացման նոր մոտեցումներ, հեռանկարներ: Նույնիսկ այն դեպքերում, երբ վերանում է տվյալ ժողովրդի պետականությունը կամ դարերի ընթացքում նրա ոչ հայրենաբնակ հատվածը լիովին կամ մեծ մասամբ ուծացվում է, առավել ևս՝ հաշվի առնելով ներկա միջազգային միգրացիոն հոսքերի բազմաշերտությունն ու խոշոր ծավալները, այսուամենայնիվ, մասնագիտական տեսանկյունից և իրատեսաբար,

թերևս, չենք կարող խոսել պետություն-սփյուռք հարաբերությունների «սպառման» մասին։

Հայրենիքի և սփյուռքի միջև գործակցության գործընթացի ողջ սպեկտրը՝ իր խնդիրներով և հեռանկարներով հանդերձ, բնորոշ է նաև հրեությունում պետություն-սփյուռք փոխհարաբերություններին։ Հնագույն ժամանակներում պետականությունը կորցնելով և երկհազարամյա պետականազուրկ ու աշխարհացրիվ պայմաններում լուծելով գոյապահպանման խնդիր՝ հրեա ժողովուրդը, ըստ էության, միաժամանակ մեկնարկել է պետություն-սփյուռք հարաբերությունների գործընթացը։

Հրեությունում պետություն-սփյուռք հարաբերությունների գործընթացը շարունակվում է նաև 20-րդ դարի կեսերին հրեական պետականության վերականգնումից հետո։ 1948թ. Իսրայել պետության հիմնադրմամբ հնարավոր եղավ կանոնակարգել պետություն-սփյուռք հարաբերությունների հոգևոր-գաղափարական նախկին խորքային հակասությունները՝ կապված այդ փոխգործակցության ռազմավարության հետ, իսկ պետականության վերականգնումով՝ կանոնակարգել նաև ազգային-հոգևոր ու պետական նշանակության խնդիրները։

Հրեությունն ի դեմս թե՛ Իսրայել պետության և նրա բնակչության, թե՛ հրեական սփյուռքի, այսօր էլ մտորում է պետություն-սփյուռք գործակցության զարգացման այլընտրանքային մոտեցումների մշակման հարցերի շուրջ, որոնք ժամանակակից միջազգային-տարածաշրջանային բազմաշերտ և բազմակողմանի մարտահրավերների ներքո կկարողանան լուծումներ առաջարկել Իսրայել պետության և համայն հրեության անվտանգության ապահովման, հրեության ինքնության հրեական ժառան-

գականության պահպանման հարցերին: Ինչ լուծումներ ու մոտեցումներ էլ մշակվել են մինչ օրս կամ կմշակվեն առաջիկա տասնամյակներում, անկախ այդ մոտեցումների շուրջ հրեության տարբեր հատվածների միջև քաղաքական, գաղափարական կամ կրոնական հակասություններից կամ անհամաձայնություններից, հրեա ժողովուրդը, որպես կանոն, ներկայանում է միասնաբար, երբ խոսքը վերաբերում է համայն հրեության անվտանգությանը, ինքնության պահպանմանն ու պետականության շարունակականությանը: Տեղին է մեջբերել հրեության շրջանում ընդունված թալմուդյան («Թալմուդը» հուդայականության իրավական և կրթական-բարոյական դրույթների, նորմերի բազմահատոր շտեմարան է) հետևյալ ձևակերպումը. *«բոլոր հրեաները պատասխանատու են մեկը մյուսի համար»*[1]:

«Սփյուռք», «հայրենադարձություն» սահմանումները հրեության համար, դրանց հոգևոր-գաղափարական հենքը

Հրեությունում «սփյուռք» եզրի և դրա հետ այս կամ այն չափով առնչություն ունեցող հասկացությունների ստուգաբանությունում, որպես կանոն, դրված են հոգևոր, գաղափարական իմաստ և նշանակություն: Այդ սահմանումների իմաստային բովանդակության ուսումնասիրումն ու լուսաբանումը հնարավորություն են տալիս առավել ճշգրիտ պատկերացումներ ձևավորել հրեությունում պետություն-սփյուռք հարաբերությունների, միմյանց նկատմամբ ընկալումների վերաբերյալ՝ հնարավորինս խուսափելով պատմագիտական, փորձագիտական-վեր-

[1] Համաշխարհային հրեական կոնգրես (World Jewish Congress), http://www.worldjewishcongress.org/ru/about.

լուծական հարթության սխալներից: Այս տեսանկյունից նպատակահարմար է սույն հետազոտության սկզբում անդրադառնալ նշյալ սահմանումների կամ հասկացությունների իմաստների լուսաբանման հիմնահարցերին:

«Հրեական սփյուռք» եզրը հրեությունում հայտնի է «գալութ» անվանմամբ, որը եբրայերենից թարգմանվում է որպես «արտաքսում» և բնորոշվում որպես հրեական պետության սահմաններից դուրս հրեա ժողովրդի հարկադրական գոյակցություն, գոյապահպանում: «Հրեական սփյուռք» սահմանումը եբրայերենում հայտնի է նաև մեկ այլ՝ «թֆուցա» ձևակերպմամբ, որը թարգմանվում է որպես հարկադրական արտաքսում, սփռում: Սակայն «թֆուցա» եզրը հրեությունում կիրառություն գտավ միայն 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո: Մեր պարագայում «սփյուռք» եզրն իր լեզվաբանական բացատրության առումով բնորոշում է հայրենիքի սահմաններից դուրս հայության սփռվածությունը, ցրվածությունը, աշխարհագրական բաշխվածությունը: Այստեղ խոսքը բնավ «հայկական սփյուռք» ձևակերպման ազգային, հոգևոր պատմական հիշողության բաղադրիչի մասին չէ, այլ նկատի է առնվում եզրի զուտ լեզվաբանական բացատրությունը, ոչ ավելին:

Հարկ է նշել, որ «գալութ» ձևակերպումը հրեա ժողովրդի պատմության տարբեր դարաշրջաններում ունեցել է տարբեր մեկնաբանություններ և մոտեցումներ: Չունենալով պետականություն և լինելով հայրենազուրկ՝ հրեության շրջանում շատ էին «գալութ» երևույթի աջակցման կողմնակիցները, որոնց կարծիքով՝ հրեության անվտանգությունը պայմանավորված է հրեական համայնքների հզորացմամբ: Հրեա հոգևորականու-

թյունում այս մոտեցումը և դրա հնարավոր բացասական հետևանքները բազմիցս քննարկվել են։ Մասնավորապես, այդ տեսակետի բացասական կողմերից մեկն այն է, որ գոյակցելով օտար միջավայրում՝ հաճախ այդ օտարությունը արտաքնապես դառնում է գրավիչ, ինչն իր հերթին աստիճանաբար բացասական ազդեցություն է թողնում հրեական ժառանգության, ազգային ինքնության և ինքնագիտակցության պահպանման հարցերում։

Միջնադարում քրիստոնեական և իսլամադավան երկրներում հրեական համայնքների նկատմամբ խտրական վերաբերմունքը, նրանց իրավունքների սահմանափակումը դրդում էին փնտրել հրեության գոյապահպանման այլընտրանքային, առավել արդյունավետ տարբերակներ, որտեղ առաջնակարգ նշանակություն էր ստանում հարմարվողականությունը։

Ուշ միջնադարում, լուսավորության և գիտության առաջընթացով պայմանավորված, հնարավորություններ ստեղծվեցին նաև հրեության համար՝ իրենց բնակության միջավայրում առավել արդյունավետ ինտեգրման և իրավունքների սահմանափակումների մասնակի վերացման ուղղությամբ։ Արդյունքում՝ «գալութ»-ի առումով ի հայտ եկան գաղափարական կազմակերպված շարժումներ, որոնք հետագայում հիմք հանդիսացան հրեական ազգային-հոգևոր վերածննդի գաղափարական հիմքերի ամրագրման համար։

Հետագայում, հատկապես 19-րդ դարի կեսերից սկսած՝ հրեա ժողովրդի գաղափարական առաջնորդներն աստիճանաբար էլ ավելի էին հակվում հրեական ազգային օջախ հիմնելու անհրաժեշտության տեսակետին։

Հոլոքոստից (ողջակիզում, Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի կողմից հրեա ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանություն) և 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո, երբ հրեա ժողովուրդը վերապրեց ցեղասպանությունը և պետականության կայացման առաջին քայլերին զուգահեռ՝ բախվեց հարևան արաբական երկրների հետ մշտական պատերազմների ներքո գոյակցելու իրադրությանը, հրեությունում գերիշխող դարձան այն մոտեցումները, ըստ որոնց՝ հրեա ժողովրդի անվտանգության ապահովման, համախմբման և «գալութ»-ի ասիմիլացման վտանգից խուսափելու միակ ուղին «գալութ»-ի վերացումն ու զանգվածային հայրենադարձության կազմակերպումն էր դեպի Իսրայել պետություն: Հրեական պետականության վերականգնումը՝ որպես համայն հրեության գոյապահպանման միակ երաշխիքի, ընկալումը էլ ավելի ամրապնդվեց աշխարհի մի շարք երկրներում հակասեմականության դրսևորումների ուժեղացման, տեղի հրեաների նկատմամբ խտրականության, անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորման արդյունքում: «Հրեական սփյուռք» ձևակերպմամբ փաստացի նշվում էր հրեության հոգևոր-ազգային, գաղափարական այն մոտեցումը, որ վերապրումի միջոցով հրեության բնական ճանապարհով զարգացման ապահովումը կարող է իրականացվել հրեական պետականության վերականգնման միջոցով: Ներկայում նույնպես հրեության առավել պահպանողական գաղափարակիրները և հոգևորականությունը հակված են այն տեսակետին, որ հրեական սփյուռքը ժամանակավոր երևույթ է, և հրեության զարգացումը կարող է ապահովվել, եթե հրեական սփյուռքն իր գոյությունը տեսնի Իսրայել պետությունում:

Դեպի Իսրայել պետություն հայրենադարձությունը նույնպես կրում է ազգային գաղափարախոսության, հոգևորության, հոգեղենության խորհուրդը: Հայրենիք հրեության հայրենադարձության գործընթացը եբրայերենից (եբր. עלייה, «ալիա») թարգմանաբար նշանակում է «վերելք», «հառնում»[1]: Ասել է թե՝ հրեաների հայրենադարձությունն Իսրայել պետություն դիտվում է որպես ժողովրդի փրկություն, վերածնունդ, որի անվտանգության ապահովման միակ երաշխավորը հրեական պետականությունն է: Մեզանում «հայրենադարձություն» եզրն իր լեզվաբանական ստուգաբանությամբ բնորոշում է ոչ հայրենաբնակ հայության հայրենիք վերադարձը: Կրկին նշենք, որ խոսքը վերաբերում է զուտ լեզվաբանական բացատրությանը, հաշվի չեն առնվում հայության ազգային-հոգևոր և պատմական հիշողության բաղադրիչները:

20-րդ դարի սկզբից հրեական պետականության վերականգնման գործընթացին զուգահեռ՝ հրեության գաղափարական և հոգևոր առաջնորդները լուծում էին նաև հայրենադարձության կազմակերպման հարցերը, զգալի աշխատանք տարվեց հատկապես մինչև Իսրայել պետության հիմնադրումը: Պետականության վերականգնմանը հաջորդած տասնամյակների ընթացքում և մինչ օրս Իսրայելի ղեկավարությունը լուրջ հաջողություններ է արձանագրել հրեության հայրենադարձության կազմակերպման և Իսրայել պետությունում հայրենադարձների հասարակական-քաղաքական, սոցիալական ինտեգրման ուղղությամբ: Հայրենադարձության և հայրենադարձների ինտե-

[1] *Ежеменцев Сергей*, «Государство Израиль и израильская диаспора за рубежом в XXI веке: реалии и перспективы взаимодействия», https://refdb.ru/look/2833756.html,

գրման իսրայելական փորձը կիրառվում է սփյուռք ունեցող մի շարք երկրներում:

Սակայն Իսրայել պետությունը, ինչպես և բազմաթիվ այլ երկրներ, նույնպես անմասն չմնաց արտագաղթից, որը թեև մեծ ծավալների չի հասնում, բայց որոշակի կայուն միտումներ նկատելի են: Իսրայելից տեղի հրեա բնակչությունն արտագաղթում է հիմնականում արևմտյան երկրներ, առաջին հերթին՝ ԱՄՆ, Կանադա, եվրոպական այլ երկրներ: Այս երևույթը հրեությունում հայտնի է որպես «երիդա» (եբր.՝ ירידה), որը թարգմանաբար նշանակում է «վայրէջք»: Իսրայելի պաշտոնական ժողովրդագրական վիճակագրության համաձայն, «յորեդ» (եբրայերենից թարգմ.՝ արտագաղթող) է համարվում Իսրայել պետության 17 տարին լրացած և տարիքով ավելի մեծ քաղաքացին, ով արտերկրում է գտնվում 3 և ավելի տարի և ով բացակայության յուրաքանչյուր տարվա կտրվածքով Իսրայելում լինում է 4 ամսից պակաս ժամկետով:

Պետք է նկատել, որ երկրից արտագաղթն Իսրայելի հրեա բնակչությունը բավական բացասական երևույթ է համարում, արտագաղթած հրեաներին ընկալում են որպես քաղաքացիական դասալիքներ: Իսրայելից արտագաղթն ունի մի քանի հիմնական դրդապատճառ՝ երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները, Իսրայել պետությունում կրոնական-ավանդական, տոհմիկ ապրելակերպը, որը հակասություններ է առաջացնում հրեա հասարակության առավել լիբերալ, աշխարհիկ շերտերի համար: Իսրայելից արտագաղթին նպաստող կարևոր գործոններից են արաբական երկրներից եկող մշտական ռազմական սպառնալիքները, հաճախակի ռազմական բախումներն ու

իսրայելական քաղաքների ու բնակավայրերի հրթիռակոծությունները, ահաբեկչությունների վտանգը[1]: Իսրայելի բոլոր քաղաքներում և շրջաններում, իհարկե, գործում է հասարակության քաղաքացիական պաշտպանության ցանցային արդյունավետ համակարգ: Այնուհանդերձ, ահաբեկչությունների, ռազմական գործողությունների սպառնալիքները, անգամ եթե չեն իրագործվում, հոգեբանական-տեղեկատվական բացասական ազդեցություն են թողնում հասարակության վրա:

Իսրայել պետության իշխանություններն արտագաղթած իսրայելցիների վերադարձի կազմակերպման ակտիվ քայլեր են ձեռնարկում: Նախաձեռնվում են կրթական, մշակութային և այլ ծրագրեր, կազմակերպվում են մասնագիտական, զբոսաշրջային այցելություններ, որոնք հնարավորություն են տալիս արտագաղթած իսրայելցիներին կրկին իրենց կյանքը հայրենիքի հետ կապել: Հատուկ նշենք Իսրայելի Հայրենադարձության հարցերով նախարարության և ԱԳՆ համատեղ նախագծի դերն արտագաղթած իսրայելցիների հայրենադարձության կազմակերպման գործում: Նախագիծը հայտնի է «Իսրայելական տուն» անվամբ: Ինչպես հավաստիացնում են նախագծի կազմակերպիչները, այն ներկայանում է որպես Իսրայել պետության «մասնաճյուղն» արտերկրում: Նախագիծը նպատակ է հետապնդում աջակցել արտերկրում բնակություն հաստատած իսրայելցի հայրենակիցներին ազգային ինքնության և ինքնագիտակցության պահպանման, հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ: Բացվել է ավելի քան 20 նման մասնաճյուղ, որոնց մի զգալի հատված գործում է Միացյալ Նահանգներում:

[1] Նույն տեղում:

Իսրայել հայրենադարձության քանակական ցուցանիշները 1919-2017թթ.

Անդրադառնանք 1919-2017թթ. Իսրայել հայրենադարձության քանակական ցուցանիշների զարգացման դինամիկային: Այսպես, Իսրայելի Կենտրոնական վիճակագրական բյուրոյի (ԻԿՎԲ) հաշվարկների համաձայն՝ 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո մինչ օրս ավելի քան 130 երկրներից հայրենադարձվել է 3.2 մլն մարդ: Ընդ որում, 1990-ականներից սկսած՝ այսպես կոչվող Մեծ հայրենադարձությանը (հետխորհրդային տարածքի հրեա բնակչության հայրենադարձություն) բաժին է ընկել ընդհանուր հայրենադարձվածների թվաքանակի 43%-ը՝ 1.35 մլն բնակիչ:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս, որ 1989-2003թթ. Իսրայել հայրենադարձների թվաքանակի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 1990-1991թթ.՝ համապատասխանաբար 200 հազ. 170 և 176 հազ. 650 հայրենադարձ: Ընդ որում, նշյալ տարիներին հայրենադարձվածների ճնշող մեծամասնությունը կազմում են հետխորհրդային տարածքից եկածները: Այս միտումը բնորոշ է 1989-2003թթ. վիճակագրությանը: Սույն ժամանակահատվածում Իսրայել հայրենադարձվածների ընդհանուր թվաքանակը 1 մլն 157 հազ. 865 մարդ է կազմում, որի ճնշող մասը՝ 951 հազ. 377, հայրենադարձվել է հետխորհրդային հանրապետություններից:

2012թ. Իսրայել հայրենադարձվեց մոտ 18 հազ. բնակիչ, 2013թ. այդ ցուցանիշն աճեց՝ կազմելով 19 հազ. 200: Միայն 2016թ. հայրենադարձվել է 25 հազ. 977 մարդ, ինչը, ըստ վիճա-

կագրության տվյալների, 7%-ով քիչ է 2015թ. ցուցանիշների համեմատ[1]:

Աղյուսակ 1

Հայրենադարձությունն Իսրայել 1990-ականների Մեծ հայրենադարձության ժամանակաշրջանում

Տարի	Հայրենադարձների ընդհանուր թվաքանակը	Այդ թվում՝ ԽՍՀՄ/ԱՊՀ-ից
1989	24,300	12,780
1990	200,170	184,740
1991	176,650	147,670
1992	77,350	64,880
1993	77,860	66,160
1994	80,810	67,750
1995	77,660	64,730
1996	72,180	58,830
1997	67,990	54,630
1998	58,500	46,140
1999	78,400	67,100
2000	61,542	51,060
2001	44,633	33,850
2002	35,168	18,508
2003	24,652	12,549
Ընդամենը	***1,157,865***	***951,377***

Աղբյուրը՝ http://www.ejwiki.org/ wiki/Алия_(репатриация_в_Израиль)

ԻԿՎԲ-ն վիճակագրական տվյալներ է ներկայացնում նաև 1919-2014թթ. հայրենադարձների թվաքանակի դինամիկայի վերաբերյալ (տե՛ս *Գծապատկեր 1*)։ Նշյալ ժամանակահատվա-

[1] «С 1948 года Израиль принял более 3 млн репатриантов», http://iland.tv/news/5400/С_1948_года_Израиль_принял_более_3_млн_репатриантов

ծում Իսրայել հայրենադարձվածների թվաքանակի ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Իսրայել պետության հիմնադրման տարիներին. 1948թ. Իսրայել է հայրենադարձվել 118 հազ. 993 մարդ, 1949թ. այդ ցուցանիշը կազմել է 239 հազ. 954։ Ընդ որում, վերջին ցուցանիշը 1919թ. մինչ օրս Իսրայել հայրենադարձվածների թվաքանակի ամենաբարձր արդյունքն է։ Համեմատաբար բարձր են եղել նաև 1950-1951թթ. ցուցանիշները (1951թ. հայրենադարձվել է 175 հազ. 279 մարդ)։

Գծապատկեր 1

Հրեաների հայրենադարձությունը Իսրայել 1919-2014թթ.



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader , http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/

Անհամեմատ բարձր են եղել նաև 1990-91թթ. հայրենադարձության ցուցանիշները, ինչը, ինչպես նշվեց, պայմանավորված էր հետխորհրդային տարածքից դեպի Իսրայել հրեաների հայրենադարձության կազմակերպման նոր հնարավորություններով։

1990թ. հայրենադարձվել է 199 հազ. 516 հրեա, ճնշող մեծամասնությունը՝ հետխորհրդային տարածքից: 1991թ. այդ ցուցանիշն արդեն կազմում էր 176 հազ. 100: Ի դեպ, 1990թ. արձանագրված արդյունքը երկրորդ բարձր ցուցանիշն է 1919-2017թթ. ժամանակագրական կտրվածքով:

Գծապատկեր 2

Հայրենադարձության վիճակագրությունը 1948-2014թթ. ըստ հայրենադարձների բնակության երկրների, %



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader

Գծապատկեր 2-ում ներկայացված է 1948-2014թթ. Իսրայել հայրենադարձների թվաքանակն ըստ իրենց բնակության երկր-

ների։ Այդ վիճակագրությունից պարզ է դառնում, որ նշյալ ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ԽՍՀՄ-ից (15 երկիր) հայրենադարձվածների պարագայում՝ 39.3%, հաջորդաբար բարձր են եղել Ռումինիայից, Մարոկկոյից, Լեհաստանից հայրենադարձների քանակական ցուցանիշները։ ԱՄՆ-ից հայրենադարձվածների թվաքանակը կազմել է 3,4%։

Գծապատկեր 3

Իսրայել հայրենադարձների թվաքանակը 2000-2014թթ. ըստ իրենց բնակության երկրների, %



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader

ԻԿՎԲ-ն վիճակագրություն է տրամադրում նաև վերջին տարիների կտրվածքով Իսրայել հայրենադարձվածների քանակական ցուցանիշների վերաբերյալ՝ ըստ իրենց բնակության երկրների տոկոսային հաշվարկի։ 2000-2014թթ. Իսրայել հայրենադարձված հրեաների թվաքանակով առաջատարն է ՌԴ-ն, որին

բաժին է ընկնում հայրենադարձների 21.3%-ը: Զգալի է հայրենադարձների թվաքանակն Ուկրաինայի (18.4%), ԱՄՆ-ի (10.1%), Ֆրանսիայի (9.6%) և Եթովպիայի (9.4%) պարագաներում: Ինչպես տեսնում ենք գծապատկերից, նշյալ ցուցանիշների շրջանակներում հայրենադարձվածների գրեթե կեսի՝ 45.5%-ի բնակության վայրը հետխորհրդային տարածքն է:

Գծապատկեր 4

Իսրայել հայրենադարձությունը 2000-2014թթ. ըստ հայրենադարձների բնակության մայրցամաքների, %



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader

Ուշագրավ են Իսրայել հայրենադարձների վիճակագրական տվյալներն ըստ իրենց բնակության մայրցամաքների հաշ-

վարկի: 2000-2014թթ. ամենաշատը Իսրայել հայրենադարձվել են Արևելյան Եվրոպայից՝ 54.1%, որին զգալի տարբերությամբ հաջորդում է Արևմտյան Եվրոպան՝ 14.1%: Բարձր են նաև Հյուսիսային Ամերիկայից և Աֆրիկայից հայրենադարձված հրեաների ցուցանիշները՝ համապատասխանաբար 11.7 և 10.5%:

Գծապատկեր 5

Ծնելիությունն Իսրայելում 1955-2014թթ. ըստ բնակչության խմբերի



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader, http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/

Իսրայել պետության ղեկավարությունը նախատեսում է առաջիկա տասնամյակներին աստիճանաբար ավելացնել

երկրի բնակչության թվաքանակն ինչպես ի հաշիվ հայրենադարձության արդյունավետ կազմակերպման, այնպես էլ հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, ծնելիության խթանման քաղաքականության:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 1955-1988թթ. երկրի բնակչության շրջանում ծնելիության ցուցանիշներն առանձնացել են ոչ կայուն դրական աճով: Սակայն 1990-ից սկսած՝ Իսրայել պետությունում ծնելիության ցուցանիշներն ունեցել են կայուն աճ. 2014թ.՝ 130 հազ. 774 նորածին, ինչն ավելի քան 80%-ով ավելի էր 1989թ. 72 հազ. 496 ցուցանիշից: Եվ եթե համեմատենք Իսրայելի հասարակության հրեա և մուսուլման բնակչության թվաքանակների հարաբերակցությունը նշյալ ժամանակահատվածում, ապա հրեա բնակչությունն ունեցել է թվաքանակի 87.6%-ի աճ, իսլամադավանները՝ 54%:

Հրեական մարդկային կապիտալի քանակական տեղաշարժը 1900-2017թթ. և 2040թ.կանխատեսումները

ԻԿՎԲ իրականացրած վիճակագրական հետազոտության մեջ ներկայացված են 1900-2015թթ. Իսրայելի և հրեական սփյուռքի բնակչության թվաքանակների զարգացման դինամիկան և հարաբերակցությունը: Այս հետազոտությունն ուշագրավ է նաև նրանով, որ հրեության (Իսրայել և հրեական սփյուռք) բնակչության թվաքանակի վերաբերյալ կանխատեսումներ են ներկայացվել մինչև 2040թ.[1]: Նշենք, որ հրեության թվաքանակի վերաբերյալ նման հետազոտություններում կիրառվում են տարբեր չափորոշիչներ, սակայն առավել հայտնի է հետևյալ երկուսը.

[1] *Я.Файтельсон*, «Еврейское население в Израиле и диаспоре», http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/

- հրեությանը պատկանելության սահմանումը կրոնական օրենսդրության համաձայն (հրեությունում այդ սահմանումը հայտնի է «Հալախա» անվանմամբ. հուդայական ավանդական օրենսգիրք է, որը կանոնակարգում է հրեաների կրոնական, ընտանեկան և հասարակական կենսակերպը)[1]:
- Իսրայել պետության «Վերադարձի մասին» օրենքի համաձայն՝ հայրենադարձության իրավունքի սահմանմամբ:

ԻՎԿԲ վիճակագրության համաձայն, 1900-1939թթ. Պաղեստինի հրեական բնակավայրերի (հիշեցնենք, որ Իսրայել պետությունը հիմնադրվել է 1948թ.) հրեա բնակչության թվաքանակը 400 հազ.-ով աճել է՝ 50 հազ.-ից հասնելով 450 հազ.-ի: Սա բավական տպավորիչ ցուցանիշ է՝ հաշվի առնելով 20-րդ դարի սկզբին միջազգային հարաբերություններում ռազմաքաղաքական լարվածության ընդհանուր տրամաբանությունը, տարածաշրջանային պատերազմներն ու Առաջին աշխարհամարտը և այլն:

Պետք է նշել նաև, որ հրեության գաղափարական և հոգևոր առաջնորդները 19-րդ դարի վերջից ակտիվ աշխատանքներ էին տանում հրեական պետականության վերականգնման ուղղությամբ: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ էր լուծել Պաղեստինում հրեական բնակավայրերի ստեղծման և այդ բնակավայրերը հրեաներով բնակեցնելու խնդիրը:

Նշյալ ժամանակահատվածում հրեական սփյուռքի բնակչության թվաքանակի վիճակագրության տվյալներն անհամե-

[1] Электронная еврейская энциклопедия, «Галаха», http://www.eleven.co.il/article/11019

Գծապատկեր 5

Իսրայել պետության և հրեական սփյուռքի բնակչության հարաբերակցությունը 1900-2015թթ. և 2040թ. կանխատեսումները, մլն բնակիչ[1]



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader, http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/

մատ ավելի բարձր են. եթե 1900թ. հրեական սփյուռքը կազմում էր 10 մլն 600 հազ., 1939թ. այդ ցուցանիշն աճել է շուրջ 6 մլն-ով՝ կազմելով 16 մլն 600 հազ.: Հրեական սփյուռքի թվաքանակի շեշտակի աճի ցուցանիշները, թերևս, պայմանավորված են 20-րդ դարի առաջին տասնամյակին և մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակաշրջանում առաջին հերթին Միացյալ

[1] Վիճակագրական հետազոտությունն իրականացվել է 2015թ.:

Նահանգների և եվրոպական մայրցամաքի բնակչության՝ այլ տարածաշրջանների համեմատ ավելի բարեկեցիկ կենսապայմաններով: Այստեղ էր հիմնականում կուտակված հրեական սփյուռքի մտավոր, ֆինանսական-տնտեսական կապիտալը, որն իր հերթին կարևոր դեր ունեցավ հրեության բարեկեցության ապահովման և թվաքանակի աճի հարցում:

Պատկերն այլ է նախորդ դարի 30-ականների վերջերից հրեական սփյուռքի բնակչության թվաքանակի դեպքում, որը կայուն նվազման դինամիկա է ունեցել: Իրավիճակն արմատապես փոխվեց հրեական Հոլոքոստի տարիներին, երբ ցեղասպանության զոհ դարձավ 6 մլն հրեա: ԻԿՎԲ վիճակագրության տվյալներով, մինչև 2040թ. կանխատեսումներով Իսրայել պետության ղեկավարությունը նախատեսում է մեծացնել Իսրայել պետությունում հրեության մարդկային-մտավոր կապիտալի կուտակման քանակական ծավալները՝ հիմնականում հրեական սփյուռքից հայրենադարձության գործընթացի շարունակման միջոցով:

Ինչպես պատկերված է *Գծապատկեր 5*-ում, Իսրայել պետության և հրեական սփյուռքի բնակչության ցուցանիշները կհատվեն 2025-2027թթ.՝ կազմելով համապատասխանաբար 7 մլն 650 հազ. և 7 մլն 770 հազ., իսկ հետագա տարիներին նախատեսվում է, որ Իսրայել պետության հրեա բնակչության թվաքանակը կգերազանցի 10 մլն-ն: Այն դեպքում, երբ հրեական սփյուռքի թվաքանակը, համաձայն ԻԿՎԲ կանխատեսումների, կնվազի մինչև 6 մլն 926. հազ.: Սա նշանակում է, որ համայն հրեության մարդկային-մտավոր, ֆինանսական-տնտեսական պոտենցիալի կուտակման և վերարտադրության ապահովման հարցում հրեու-

թյունն արդեն առաջնորդվում է ոչ թե ցանցակենտրոնության, այլ, ավելի շուտ, միակենտրոնության սկզբունքով:

Գծապատկեր 6

Իսրայել պետության և հրեական սփյուռքի բնակչության հարաբերակցությունը 1882-2015թթ. և 2040թ. կանխատեսումները, %[1]



Աղբյուրը՝ Իսրայելի կենտրոնական վիճակագրական բյուրո, http://cbs.gov.il/reader

Գծապատկեր 6-ում պատկերված պաղեստինյան հրեական բնակավայրերի (այսուհետ՝ Իսրայել պետության) և հրեա-

[1] Վիճակագրական հետազոտությունն իրականացվել է 2015թ.:

կան սփյուռքի բնակչության թվաքանակների համամասնության վիճակագրությունն իսկապես տպավորիչ է: 1882թ. վիճակագրությամբ հրեական սփյուռքը ներկայացնում էր համայն հրեության բնակչության ընդհանուր թվաքանակի ճնշող մեծամասնությունը՝ 99.7%, Պաղեստինում հրեական նորաստեղծ բնակավայրերի բնակչությունը՝ համայն հրեության բնակչության թվաքանակի ընդամենը 0.7%-ը: 1922թ. դրությամբ հրեական սփյուռքի բնակչության թվաքանակը կազմում էր համայն հրեության բնակչության թվաքանակի 99.4%-ը: Այս պատկերը պահպանվեց ընդհուպ մինչև 1930-ականների սկիզբը: Հրեական պետականության վերականգնման տարիներին տեղի հրեա բնակչությունն արդեն կազմում էր համայն հրեության 5.7%-ը, իսկ հետագա տասնամյակներին և մինչ օրս այդ ցուցանիշը պահպանել է կայուն դրական աճ:

Հրեությունում պետություն-սփյուռք գործակցության կառավարման մոդելները՝ ցանցակենտրոնություն և միակենտրոնություն. դրական և բացասական կողմեր

Երկու հազար տարի աշխարհացրիվ և պետականազուրկ պայմաններում հրեությունը փաստացի ներկայացված էր ի դեմս հրեական սփյուռքի, որտեղ, ի տարբերություն պաղեստինյան հրեական բնակավայրերի հրեա բնակչության, կենտրոնացված էր համայն հրեության մտավոր, մարդկային, ֆինանսական-տնտեսական կապիտալի գրեթե ողջ պոտենցիալը: Այդ ժամանակահատվածում հրեության գոյատևման, ազգային ինքնության և ինքնագիտակցության պահպանման, ազգային-գաղափարական և հոգևոր դաստիարակության հրամայականը ձևա-

վորվում և համակարգվում էր հրեական սփյուռքում, որի առաջատար և հիմնական ուժը կենտրոնացած էր Եվրոպայում և Միացյալ Նահանգներում:

Ինչպես նշվեց, իրավիճակը փոխվեց հրեական Հոլոքոստի տարիներին, երբ ցեղասպանության զոհ դարձավ 6 մլն հրեա: Արդյունքում՝ հրեական սփյուռքը կորցրեց մարդկային, մտավոր, հետևաբար և ֆինանսական կապիտալի գերակշիռ մասը: Այդ ժամանակահատվածում հրեության հոգևոր-գաղափարական առաջնորդների շրջանում աստիճանաբար արմատավորվեց այն համոզմունքը, որ հրեական պետականության վերականգնման գործընթացը, որպես համայն հրեության գոյության, ազգային ինքնության և ինքնագիտակցության պահպանման և անվտանգության ապահովման երաշխիք, այլընտրանք չունի: Սակայն սկզբնական փուլում խնդիր չէր դրված հրեության մտավոր-մարդկային, ֆինանսական կապիտալը կուտակել գերազանցապես Պաղեստինում հրեական ազգային օջախում, քանի որ պետականության վերականգնման գործընթացը դեռևս նոր էր զարգանում: Նպատակահարմար էր այդ շրջանում հրեա ժողովրդի զարգացումն ապահովել այսպես կոչված ցանցակենտրոն սկզբունքի համաձայն, որը ենթադրում էր հրեական սփյուռքի և ապագա Իսրայել պետության հրեա բնակչության մարդկային-մտավոր կապիտալի միաժամանակյա կուտակում և վերարտադրության ապահովում: Ի դեպ, ցանցակենտրոնության մոտեցումը զգալի կիրառություն գտավ նաև Իսրայել պետության հիմնադրմամբ, այն այսօր նույնպես ունի բազմաթիվ համախոհներ հրեության ղեկավար շրջանակներում:

Ընդհանուր առմամբ, պետություն-սփյուռք հարաբերությունների զարգացման հարցում հրեության շրջանում մինչ օրս գործում են երկու հիմնական մոտեցումներ, որոնցից մեկի համաձայն՝ Իսրայելը համայն հրեության հոգևոր ազգային օջախն է, բայց ոչ թե միակ կենտրոնը, այլ մի շարք կենտրոններից մեկը։

Ցանցակենտրոնության դրական կողմերից մեկն այն էր, որ սփյուռքն իր մտավոր-մարդկային, ֆինանսական-տնտեսական կարողություններով տիրապետում էր լոբբիստական լծակների՝ ազդելու բնակության երկրի քաղաքական որոշումների, հասարակական կարծիքի ձևավորման հարցերի վրա։ Սա կարևոր գործիք է հրեության համար՝ միջազգային հարթակներում գործնական քայլեր ձեռնարկելու Իսրայել պետության և հրեության հեղինակության բարձրացման, ինչպես նաև հրեա ժողովրդի մարտահրավերների կանխարգելման կամ չեզոքացման տեսանկյունից, ինչպես, օրինակ, հակասեմականության դեմ պայքարն է։

Բայց հատկապես 1948թ. Իսրայել պետության հիմնադրումից հետո նախկին մոտեցումները վերիմաստավորվեցին, արդյունքում՝ հրեության զարգացման և անվտանգության տեսանկյունից արդեն առաջնակարգ էր համարվում հրեա ժողովրդի ազգային կապիտալն Իսրայել պետությունում կուտակելու խնդիրը։ Դա է հաստատում նաև *Գծապատկեր 6*-ում ներկայացված վիճակագրությունը, ըստ որի՝ 1940-ականներից սկսած՝ Պաղեստինում հրեական բնակավայրերի (հետագայում՝ Իսրայել պետության) հրեա բնակչության թվաքանակն արձանագրել է կայուն աճ։

Պետություն-սփյուռք փոխհարաբերությունների թեմայի շրջանակներում միջազգային տեղեկատվական դաշտում հաճախ

կարելի է հանդիպել մոտեցումների, ըստ որոնց՝ հրեա ժողովրդի շրջանում պետություն-սփյուռք գործակցության կառավարման գործընթացն անթերի է, չկան հակասություններ կողմերի միջև։

Հրեա ժողովուրդը երկհազարամյա պետականազուրկ և աշխարհացրիվ գոյության պայմաններում գոյապահպանման խնդիրը լուծելով որպես փաստացի սփյուռք, անհայրենիք պայմաններում գոյապահպանման մեծ փորձառություն ունենալով՝ պետականության վերականգնման գործընթացով կարողացավ իր հոգևոր-ազգային ավանդույթները, հավաքական հիշողությունն ու ժառանգությունը կիրառել պետություն-սփյուռք համագործակցային ձևաչափում։ Սակայն պետություն-սփյուռք հարաբերություններում մշտապես խնդիրներ են առաջացել, և այսօր էլ դրանք կան։ Այդ խնդիրները վերաբերում են ինչպես կողմերի միջև փոխգործակցության կազմակերպչական, կառավարման ոլորտներին, այնպես էլ հրեությունում և Իսրայել պետությունում որոշումների կայացման հարցում կողմերի մասնակցության, երկրի հասարակական-քաղաքական կյանքում սփյուռքի ներկայացվածության, հայրենադարձության կազմակերպման և հայրենադարձների ինտեգրման ու այլ հիմնահարցերին։

Հայաստանյան իրականությունում ևս պետություն-սփյուռք փոխհարաբերությունների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություններում հանդիպող փորձագիտական հետազոտությունները կամ գնահատականները հիմնականում ներկայացնում են պետության հաջողությունները, ձեռքբերումները։ Սակայն բավական քիչ են հետազոտությունները, որոնք կլուսաբանեին կամ փորձագիտական գնահատական կտային տարբեր երկրների փորձի օրինակով պետություն-

սփյուռք գործակցության ոլորտում գոյացած խնդիրներին և դրանց լուծման հարցերին:

Ուստի, հաշվի առնելով վերը հիշատակված իրողությունները՝ նպատակահարմար ենք համարում սույն հետազոտությունում անդրադառնալ հրեությունում պետություն-սփյուռք գործակցության խնդիրներին, որոնց ուսումնասիրումը, ըստ մեզ, կարող է նպաստել նաև հայաստանյան իրականությունում պետություն-սփյուռք հարաբարերությունների հիմնահարցերի կարգավորմանը: Հավելենք, որ ցանցակենտրոն մոտեցումը առավելություններ է տվել ինչպես Իսրայել պետության միջազգային դիվանագիտության առաջմղման, այնպես էլ միջազգային հարաբերություններում հրեական սփյուռքի դերակատարման ընդլայնման հարցերում:

Մյուս կողմից, սակայն, ցանցակենտրոն կառավարման մոդելն ունի բացասական կողմեր, որոնք հատկապես Իսրայել պետության հիմնադրումից հետո ընկած ժամանակահատվածում երբեմն իրենց ազդեցությունն են թողել ինչպես հրեությունում պետություն-սփյուռք գործակցության, այնպես էլ հրեական սփյուռքի տարբեր համայնքների միջև հարաբերությունների վրա: Ըստ այս մոտեցման քննադատների՝ ցանցակենտրոն սկզբունքը միջազգային հարաբերություններում հրեության միջազգային կշռի և հեղինակության բարձրացման կարևոր դերակատարությունից զատ, զգալի բացասական ազդեցություն է ունեցել նաև Իսրայել պետության, նրա հասարակության և հրեական սփյուռքի հանրության՝ միմյանցից օտարման գործընթացում, ինչպես գաղափարական, կրոնական, այնպես էլ սոցիալ-հասարակական, քաղաքական հարթություններում:

Պետություն-սփյուռք գործակցության կառավարման երկրորդ ռազմավարության կամ մոդելի կողմնակիցները, որոնք ներկայացնում են հրեության առավել պահպանողական և կրոնական շրջանակները, գտնում են, որ հրեության զարգացման կենտրոնում Իսրայել պետությունն է, որը ոչ միայն հրեա ժողովրդի հոգևոր հայրենիքն է, այլև ազգային-գաղափարական կենտրոնը: Նրանց մոտեցման համաձայն, առանց հրեական պետականության և Իսրայել պետության անհնար կլինի ապահովել համայն հրեության անվտանգությունն ու ազգային ինքնության, ինքնագիտակցության պահպանման գործընթացը: Հրեական սփյուռքում այս մոտեցման հետևորդներն են հրեական փոքրաքանակ համայնքներն ու դրանց ներկայացուցիչները, որոնք խոշոր հրեական համայնքների համեմատ տիրապետում են մարդկային, ֆինանսական սակավ ռեսուրսների, ըստ այդմ՝ չունեն վճռորոշ ձայն հրեության օրակարգային խնդիրների վերաբերյալ որոշումների կայացման հարցում: Նման համայնքների համար կարևորվում է հրեության, համայնքների ազգային ինքնության պահպանման, Իսրայել պետության և հրեական սփյուռքի անվտանգության ապահովման համատեքստում՝ Իսրայել պետության՝ որպես հրեության միակենտրոնության, գաղափարը:

Հարցի նկատմամբ այլ է համեմատաբար խոշոր հրեական համայնքների դիրքորոշումը, որտեղ կուտակված է հրեության մարդկային-մտավոր, ֆինանսական կարողությունների զգալի հատվածը: Սա հնարավորություն է տալիս նշյալ համայնքների ղեկավարությանը հաստատելու, որ հրեական սփյուռքի այս հատվածը ներկայացնող ոչ հայրենաբնակ հրեությունն իրավասու է հանդես գալ որպես հրեության կարևոր կենտրոններից մեկը:

Վերջին տասնամյակում արտերկրի հրեական համայնքներում, հատկապես ԱՄՆ և Եվրոպայի հրեական համայնքներում, խորանում էին հակասություններն Իսրայել պետության ղեկավարության և հրեական համայնքների գաղափարական, հոգևոր առաջնորդների միջև: Խնդիրն այն է, որ հրեական ազգային-հոգևոր առաջնորդներից շատերն այլ պատկերացումներ ունեին հրեական պետականության վերականգնման, ավետյաց երկրի վերստեղծման և հրեական «հոգևոր-ազգային առաքելության» հարցերի վերաբերյալ: Սակայն Իսրայել պետության քաղաքական, հասարակական և կրոնական խնդիրները թերահավատություն են առաջացնում այդ քաղաքական-գաղափարական առաջնորդների շրջանում՝ Իսրայելը որպես համայն հրեության կենտրոն դիտարկելու համատեքստում:

Ավելին, բազմաթիվ են եղել քննարկումներն այն հարցի շուրջ, որ հրեության զարգացման համատեքստում Իսրայել պետությունն իր քաղաքական-հասարակական, կրոնական-գաղափարական գործառույթներով առանձնապես չի տարբերվում հրեական համայնքներից և կարող է դիտարկվել որպես այդ համայնքներից կամ համայնքային կենտրոններից մեկը, բայց ոչ միակը:

Սփյուռք-պետություն գործակցությունում հրեության տարբեր հատվածների միջև հակասությունները սրվում էին նաև Իսրայելի ներքաղաքական-իշխանական, սոցիալ-հասարակական գործընթացներում հրեական սփյուռքի մասնակցության նպատակահարմարության առնչությամբ: Մինչև վերջերս Իսրայելի քաղաքական ղեկավարությունը գտնում էր, որ Իսրայել պետության քաղաքական-հասարակական և պաշտ-

պանական ոլորտներում քիչ ներգրավված համայնքները, թերևս, չպետք է ունենան առաջնային դերակատարում հրեության մարտահրավերների դիմակայման, որոշումների ընդունման համակարգում: Ըստ նրանց՝ հրեության կենտրոնը պետք է լինի Իսրայելը, որը խորհրդանշում է հրեական պետականության շարունակականության գաղափարը:

Խնդիրը, սակայն, ունի նաև օբյեկտիվ պատճառներ: Վերջին երկու տասնամյակում աշխարհի ազդեցիկ հրեական համայնքներում տեղի է ունեցել սերնդափոխություն, ինչն էլ առիթ է հանդիսացել հրեական համայնքներ-պետություն հարաբերությունների զարգացման հարցերի վերանայման, վերիմաստավորման համար:

Եթե 20-րդ դարի առաջին տասնամյակների սերունդը, որն անմիջական մասնակցություն է ունեցել հրեական ազգային օջախի ձևավորման և պետականության վերականգնման գործընթացին և չէր կարող պատկերացնել հրեության զարգացման տեսլականն առանց Իսրայել պետությունը որպես համայն հրեության քաղաքական-հոգևոր կենտրոն դիտարկելու, ապա նոր սերունդն այդ հարցին վերաբերվում է համեմատաբար պրագմատիկ-գործնական տեսանկյունից: Նրանց մի մասը Իսրայել պետությունը դիտարկում է որպես հրեության կենտրոններից մեկը բազմաթիվ հրեական համայնքների շարքում:

Հարկ է նկատել, որ սփյուռքի և Իսրայել պետության միջև համագործակցության զարգացման հարցերում առաջացած հակասությունները կրում էին նաև զուտ կրոնական բնույթ: Խնդիրն այն է, որ Իսրայել պետությունում զարգանում է այսպես կոչված ուղղափառ հուդայականությունը, որի հոգևոր ղե-

կավարությունն ու հետևորդները բավական կոշտ, քննադատական վերաբերմունք ունեն հրեական համայնքների ոչ ուղղափառ հուդայականության հետևորդների նկատմամբ: Բուռն քննադատությունների առիթ էր տալիս հրեական համայնքներում ազգությամբ ոչ հրեաների հուդայականություն ընդունելու և ոչ ուղղափառ ուղղություններին դավանելու, այդպիսով հրեության շարքերը համալրելու միտումը, ինչն իր հերթին արդյունքում բացասական հետևանքներ ունեցավ Իսրայել պետության հասարակական-կրոնական կյանքին հրեական համայնքների որոշակի շերտերի ներգրավման հարցերում:

2000-ականների սկզբին հրեական համայնքներում բավական լուրջ քննարկումների առիթ դարձավ աշխարհի տարբեր համայնքների բազմաթիվ ներկայացուցիչների օտարումը հրեական համայնքային կյանքից և առհասարակ Իսրայել պետությունից ու հրեությունից: Սա առավել ակնառու էր և աստիճանական աճ էր արձանագրում հատկապես արևմտյան երկրների հրեական համայնքներում, ինչի արդյունքում աշխարհի առաջատար հրեական համայնքների և Իսրայելի ղեկավարությունը հրատապ քայլեր ձեռնարկեցին, որոնք հնարավորություն կտային կանխելու հրեական համայնքների ներկայացուցիչների ասիմիլացման ահագնացող վտանգը:

Ասիմիլացման եզրին կանգնած հրեական համայնքների որոշակի հատվածներին կրկին հրեական ինքնության արմատներին բերելու հարցում էական նշանակություն ունեցավ այն ծրագրային մոտեցումը, ըստ որի՝ նրանց և հատկապես երիտասարդությանը հրեական ինքնությանը վերադարձնելու առումով կարևոր կլինի Իսրայելի հետ նրանց կապերի ամրապնդման

քայլերի ձեռնարկումը՝ հաճախակի այցեր Իսրայել, կրթական ծրագրեր: Արդյունքում՝ սա դրական ազդեցություն ունեցավ Իսրայել-սփյուռք փոխհարաբերություններում Իսրայել պետության դերակատարությունը կրկին մեծացնելու առումով: Հրեական համայնքները նույնպես իրենց հերթին շահագրգռություն ցուցաբերեցին հրեության զարգացման տեսլականում Իսրայել պետությունը որպես միակ կենտրոն դիտարկելու մոտեցումներում, քանի որ հրեական համայնքները կարող էին կանգնել ամբողջական ասիմիլացման շեմին:

2012թ. կառավարությունը նախատեսում էր մշակել Իսրայել-սփյուռք փոխհարաբերությունների զարգացման նոր հայեցակարգ, որի համաձայն՝ Իսրայել պետությունը պատասխանատվություն է ստանձնում հրեության (ինչպես Իսրայելում, այնպես էլ նրա սահմաններից դուրս բնակվող հատվածի) պահպանման համար[1]: Իսրայել պետության այսօրվա ղեկավարության շրջանում իշխում է այն մոտեցումը, որ բոլոր հրեաները պետք է հայրենադարձվեն Իսրայել, սակայն մինչ նրանց բոլորի հայրենադարձության գործընթացի կազմակերպումը, Իսրայել պետությունը պետք է պարտավորություն վերցնի հրեա ժողովրդի պահպանման և զարգացման հարցում:

Հայեցակարգի էությունն այն է, որ «Իսրայել պետության գոյության առաջին 6 տասնամյակների ընթացքում սփյուռքի հրեաները պետք է իրենց աջակցությունը ցուցաբերեն Իսրայել պետությանը, իսկ հետագա 6 տասնամյակների ընթացքում Իսրայել պետությունը պետք է աջակցի հրեական սփյուռքին»[2]:

[1] «Новая концепция взаимоотношений Израиль-Диаспора», http://www.vaadua.org/news/novaya-koncepciya-vzaimootnosheniy-izrail-diaspora
[2] Նույն տեղում:

Այդ ժամանակվա կառավարության քարտուղար Ցվի Հաուզերի բնորոշմամբ, «Իսրայել պետության կառավարության ղեկավարը համայն հրեության առաջնորդն է, իսկ Իսրայելի կառավարությունը հրեության կառավարությունն է»[1]:

Հայեցակարգը նախատեսում էր պետբյուջեից ֆինանսական հատկացումների ծավալների տասնակի մեծում, որոնք նախատեսված են սփյուռքի ներկայացուցիչների հետ կապերի ամրապնդման և ազգային ինքնագիտակցության, ինքնության պահպանման համար: Այդ միջոցներով նախատեսվում է լուրջ քայլեր ձեռնարկել սփյուռքի կրթական համակարգում՝ ստեղծել իսրայելական կրթական կենտրոններ տարբեր երկրների հրեական համայնքներում, կազմակերպել Իսրայելի և սփյուռքի երիտասարդության համար հրեական կրթական մասնագիտական դասընթացներ, Իսրայելի և հրեական սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և այլն:

Հայեցակարգում կարևոր ուշադրություն է դարձվելու հրեական պետության և պետականության ապալեգիտիմացման փորձերին հակազդելու պայքարին, այս գործում զգալի կարևորություն պետք է տալ Իսրայելի որոշումների կայացման համակարգում սփյուռքի մասնակցության ընդլայնմանը: Հայեցակարգի քննարկումներին մասնակից փորձագետներն առաջարկում են ձևավորել մշտական գործող կառույց՝ Իսրայելի կառավարության և սփյուռքի միջև խորհրդատվությունների, կարծիքների փոխանակման ու քննարկումների անցկացման նպատակով:

2014թ. փետրվարի 17-ին Իսրայել պետության Երուսաղեմի և Սփյուռքի հետ կապերի հարցերով նախարար Նաֆթալի

[1] Նույն տեղում:

Բենեթի և «Հանուն Իսրայելի հրեական գործակալության»[1] (այլ կերպ հայտնի է նաև «Սոխնուտ» անվամբ) նախագահ Նաթան Շարանսկու նախաձեռնությամբ կազմակերպվեց պետություն-սփյուռք գործակցության հեռահար գիտաժողով՝ ԱՄՆ, Կանադայի, Ավստրալիայի, Պերուի, Մեքսիկայի, Բրազիլիայի, Արգենտինայի, ՌԴ, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների հրեական համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ: Միջոցառմանը մասնակցում էր 1500-ից ավելի ներկայացուցիչ: Քննարկման արդյունքում ընդունվեց որոշում «Իսրայելի կառավարության և հրեա ժողովրդի համատեղ նախաձեռնության» մեկնարկի մասին: Կազմակերպիչների ներկայացրած ծրագրով նախատեսվում էր, որ առաջիկա 5 տարիներին Իսրայելի կառավարության և «Հրեական գործակալության» համատեղ նախագծի իրականացման համար կծախսվի $1,4 մլրդ: Նախագծի նպատակն էր հրեական ինքնության պահպանումը, հրեական սփյուռքի կապերի ամրապնդումն Իսրայել պետության հետ: Ծրագրվում էր նաև իրականացնել հրեական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր: Սա աննախադեպ նախաձեռնություն էր այն առումով, որ Իսրայել պետության կառավարությունն առաջին անգամ կոչ էր անում աշխարհի հրեաներին անձնական մասնակցություն ունենալ հրեության զարգացման և Իսրայել պետության հետ հրեական

[1] «Հանուն Իսրայելի հրեական գործակալություն»-ը հիմնադրվել է 1929թ.: «Սոխնուտ» հրեական գործակալությունը միջազգային կազմակերպություն է, որ գործում է Իսրայել պետության հովանու ներքո: Կենտրոնակայանը գտնվում է Իսրայելում: Կազմակերպությունը զբաղվում է Իսրայել հայրենադարձության, հայրենադարձների աջակցության, ինչպես նաև հրեության հոգևոր-գաղափարական դաստիարակության և հրեությանը հուզող գլոբալ հիմնահարցերով:

սփյուռքի կապերի ամրապնդման ռազմավարական ծրագրերի քննարկմանն ու մշակմանը: Նախաձեռնությունը հնարավորություն էր տալիս հրեական համայնքներին, նրանց յուրաքանչյուր ներկայացուցչի մի քանի օր ժամկետ նախատեսող հեռահար կապի միջոցով կարծիք հայտնել հրեությանը հուզող այս կամ այն ակտուալ խնդրի վերաբերյալ: Ըստ էության, սա Իսրայել պետության ղեկավարության և հրեական սփյուռքի նախաձեռնած առաջին համատեղ փորձն էր՝ վերլուծել և գնահատել համայն հրեության խնդիրներն ու մարտահրավերները, մշակել հրեական սփյուռքի երիտասարդության ազգային ինքնության խորացման, Իսրայել-հրեական համայնքներ կապերի ամրապնդման համալիր և երկարաժամկետ ծրագիր: Այս նախաձեռնության շրջանակներում նախատեսվում էր նաև իրականացնել Իսրայել պետության և հրեական համայնքների մի շարք պետական-քաղաքական գործիչների, առաջնորդների հետ հարցազրույցների ծրագիր: Ըստ նախաձեռնության կազմակերպիչների, այս և այլ ծրագրերի, միջոցառումների արդյունքները պետք է քննարկվեին ռազմավարական պլանավորման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովի շրջանակներում, որին մասնակցելու էին Իսրայել պետության և հրեական համայնքների ավելի քան 120 պետական, հասարակական-քաղաքական գործիչներ, հոգևոր առաջնորդներ: Նախատեսվում էր նաև, որ գիտաժողովի արդյունքների ամփոփումից հետո կստեղծվեն աշխատանքային խմբեր հրեության համար օրակարգային հարցերի լուծման նպատակով:

Իսրայել պետության Երուսաղեմի և Սփյուռքի հետ կապերի հարցերով նախարար Նաֆթալի Բենեթի խոսքերով՝ «սփյուռ-

քի հետ Իսրայելի հարաբերությունները ներկայում կրում են լուրջ արմատական փոփոխություններ. եթե նախկինում ԱՄՆ և Արևմուտքի այլ երկրների հրեաներն օգնություն էին ցուցաբերում Իսրայելին՝ այն համարելով որպես աշխարհի ոչ բարեկեցիկ տարածաշրջաններից փախստականների ընդունման վայր, ապա այսօր հրեական պետության առաքելությունը հրեա ժողովրդի գոյապահպանման ապահովման հարցն է՝ պատմական հեռանկարով: Հրեական սփյուռքի ներկայացուցիչները պետք է իրավունք ունենան արտահայտել իրենց կարծիքն Իսրայելի ներքին խնդիրների վերաբերյալ:

Նաֆթալի Բենեթը միջոցառմանը հանդես եկավ սփյուռքի ներկայացուցիչներին «մասնակի իսրայելական քաղաքացիություն» ընձեռելու առաջարկությամբ: Ըստ նրա, «նախկինում գործող Իսրայել-սփյուռք հարաբերությունների մոդելն այսօր չի աշխատում. եթե նախկինում Իսրայելը սփյուռքը դիտում էր որպես դրամապանակ, ապա այսօր մենք պետք է մտածենք այն մասին, թե ինչպես պահպանենք հրեաների ազգային-հոգևոր ինքնությունը, ապահովենք նրանց կապը պատմական հայրենիքի հետ, նույնիսկ եթե նրանք մտադիր չեն հայրենադարձվել: Հայրենադարձության խթանման նպատակով հարկավոր է նաև զարգացնել սփյուռքում եբրայերենի ուսուցումը: ...Իսրայելն այսօր չի կարող սպասել հայրենադարձության նոր ալիքի, քանի որ աշխարհի ոչ բարեկեցիկ տարածաշրջաններում հրեաներ գրեթե չեն մնացել, և սփյուռքը գլխավորապես կենտրոնացած է զարգացած երկրներում, որտեղից չի սպասվում զանգվածային ներգաղթ: ...Մենք ձգտում ենք նրան, որ հայրենադարձությունը շարունակվի, սակայն միևնույն ժամանակ հաշվի ենք նստում

այն մտքի հետ, որ հրեաների մեծամասնությունը մտադիր է մնալ իր բնակության երկրներում»[1]:

Նախաձեռնության կազմակերպիչների համոզմամբ, նման միջոցառումները հնարավորություն են տալիս վերացնել կարծրատիպերն ու ընկալումները, որոնք գոյացել են Իսրայել պետության քաղաքականության հարցերում սփյուռքի հրեության ներգրավվածության գործում:

2014թ. սկզբին ԱՄՆ առաջատար հրեական կազմակերպությունների մասնակցությամբ ևս մեկ կարևոր միջազգային գիտաժողով տեղի ունեցավ, որին մասնակցում էին Իսրայել պետության բարձրաստիճան պաշտոնյաներ, հրեական համայնքների ղեկավարներ, հրեական միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների առաջնորդներ: Պետություն-սփյուռք փոխգործակցության ակտուալ շեշտադրումների տեսանկյունից բավական ուշագրավ էր միջոցառմանը Իսրայելի այդ ժամանակվա արտաքին գործերի նախարար Ավիգդոր Լիբերմանի ելույթը: Ելույթում նշվում էին հրեական սփյուռքի ասիմիլացման վտանգներն ու դրանց բացասական հետևանքները հրեության և Իսրայել պետության համար: Մեջբերենք հատված ելույթից. «Իրավիճակի շտկման նպատակով անհրաժեշտ է լուրջ և համակարգային քայլեր ձեռնարկել հրեական սփյուռքում կրթական համակարգի բարեփոխման ուղղությամբ[2]: Միացյալ Նահանգներում հրեա երեխաների ընդամենը 12%-ն է հաճախում հրեական դպրոցներ, իսկ այդ դպրոցների մեծամաս-

[1] http://www.jewish.ru/israel/days/2014/02/news994323205.php
[2] Израиль – диаспора: трещина углубляется,
http://ndi.org.il//израиль_-_диаспора_трещина_углубляет/,
http://mnenia.zahav.ru/Articles/4028/israel_diaspora

նությունն ունի բավական ցածր պատրաստվածություն։ Իսրայելցի դիվանագետների մեծ մասն իր երեխաներին ուղարկում է սովորելու ոչ թե հրեական կրթական հաստատություններ, այլ միջնակարգ դպրոցներ, քանի որ գտնում է, որ այնտեղ կրթության մակարդակն անհամեմատ բարձր է։ Իսրայել այցելող հրեաների կամ մշտական հայրենադարձվողների մեծ մասն ուղղափառներ են (73%) և 65-ն անց տարեցներ, իսկ երիտասարդության տոկոսային ցուցանիշն աննշան է։ Նման խնդիրներ առկա են Կանադայում, Հարավային Ամերիկայի երկրներում, ինչպես նաև Բրիտանիայում»։

Լիբերմանն առաջարկում էր հարցը լուծել հրեական կրթական ծրագրերի վերականգնման և հոգևոր-ազգային կրթության համակարգի («հրեական դպրոցների միջազգային ցանցի ձևավորում») ներդրմամբ[1]։

2016թ. դեկտեմբերի 18-24-ն ընկած ժամանակահատվածում Իսրայելում մեկնարկեց հրեական համայնքների միջև կապերի և համագործակցության զարգացման միջոցառումների մեկշաբաթյա շարքը։ Այս մշակութային միջոցառումն Իսրայելում անցկացվում էր առաջին անգամ։ Ծրագրի նպատակն էր հրեության տարբեր հատվածների ներկայացուցիչների, անհատների, կառույցների և Իսրայել պետության կապերի ամրապնդումը, ինչպես նաև համաշխարհային հրեության մարտահրավերների քննարկումը։ Միջոցառման կազմակերպիչների հավաստմամբ, այդ և նման միջոցառումները կարող են նպաստել հրեության միջև կապերի և համագործակցության զարգացմանը, նրա ներկայացուցիչների շրջանում Իսրայելին և հրեությանը պատկանելության զգացման

[1] Նույն տեղում։

զարգացմանը, ինչն իր հերթին հնարավորություն կտա խուսափել հրեա ժողովրդի թվաքանակի նվազումից[1]:

Աղբյուրի համաձայն, ներկայում աշխարհում բնակվում է 14,4 մլն հրեա, որից 8,1 մլն-ը՝ Իսրայելի սահմաններից դուրս: Ընդ որում, այդ թվաքանակի 80%-ը, որպես կանոն, կապեր գրեթե չի պահպանում տեղի հրեական համայնքի և Իսրայելի հետ: Աղբյուրում նշվում է նաև, որ Միացյալ Նահանգների հրեա բնակչության երիտասարդ սերնդի միայն 25%-ն է զգում կապը Իսրայելի և հուդայականության հետ, նրանց միայն 33%-ն է լուրջ վերաբերվում այդ հարցին[2]:

Այսպիսով, խոսքը հրեաների թվաքանակի կտրուկ նվազման մասին է, և ըստ միջոցառման կազմակերպիչների՝ Իսրայել պետությունը պետք է իր վրա վերցնի այդ խնդրի կարգավորման պատասխանատվությունը և ակտիվ մասնակցություն ունենա սփյուռքի հրեության կյանքին:

Ըստ Իսրայելի սփյուռքի հարցերով նախարարության՝ միջոցառումը նպատակ էր դրել նաև Իսրայել պետության քաղաքացիների շրջանում ընդլայնել և խորացնել հրեական սփյուռքի վերաբերյալ գիտելիքները, նպաստել սփյուռքի կարևորության ընկալմանը՝ որպես հրեա ժողովրդի գոյության շարունակականության ռազմավարական ռեսուրս[3]:

Իսրայել-սփյուռք փոխհարաբերությունների խնդիրների մասին վերջին տարիներին ավելի հաճախ են բարձրաձայնում

[1] «В Израиле стартовала неделя евреев мира», http://jewishnews.com.ua/ru/publication/b_izraile_startovala_nedelya_evreev_mira
[2] «Впервые в Израиле отмечается неделя, посвященная связям с еврейством диаспоры», http://www.vaadua.org/news/vpervye-v-izraile-otmechaetsya-nedelya-posvyashchennaya-svyazyam-s-evreystvom-diaspory
[3] Նույն տեղում:

հենց Իսրայել պետության ղեկավար շրջանակները։ Մասնավորապես նշվում է, որ այսօր հրեական համայնքներն աստիճանաբար անտարբեր են դառնում Իսրայել պետության նկատմամբ, և հրեական սփյուռքն այս առումով ոչ թե ռեսուրս է հրեության համար, այլ պարունակելով ռիսկեր՝ վերածվում է խնդրի։

Հրեական համայնքների առավել լիբերալ շրջանակներում Իսրայելի հետ հարաբերությունների պահպանման խնդիրների շարքում լուրջ տեղ են զբաղեցնում Իսրայելի անվտանգության հիմնահարցն ու պաղեստինա-իսրայելական հակամարտության չկարգավորվածությունը։ Խնդիրն այն է, որ առավել լիբերալ հրեաներին և հատկապես երիտասարդությանը հուզում է այն հարցը, թե ինչու իրենք պետք է հայրենադարձվեն Իսրայել, թողնեն բնակության երկրի համեմատաբար բարեկեցիկ ու անվտանգ կենսակերպը և Իսրայելում անցնելով ժամկետային կամ պահեստազորայյին զինծառայության՝ մասնակցեն հակամարտությանը և նույնիսկ վտանգեն իրենց կյանքը։ Սա իսկապես լուրջ խնդիր է պետություն-սփյուռք հարաբերությունների զարգացման համատեքստում, ինչն ընդունում են Իսրայել պետության քաղաքական և հոգևոր ղեկավարները։

Եթե տարեց սերնդի ներկայացուցիչներից շատերի համար հայրենադարձության մոտիվացիան ուներ հոգևոր, ազգային-գաղափարական հենք, ապա հրեական համայնքների երիտասարդության շրջանում մոտիվացիան կրում է պրագմատիկ բնույթ։ Այս տեսանկյունից Իսրայել պետության ղեկավարությունից բավական լուրջ քայլեր են պահանջվում հրեական սփյուռքի երիտասարդ սերնդին Իսրայելի հասարակական-քաղաքական, գիտակրթական, մշակութային կյանքին մասնա-

կից դարձնելու համար: Հրեական համայնքների երիտասարդության շրջանում աստիճանաբար ստվարանում են Պաղեստինի հետ հակամարտության կարգավորման անհրաժեշտության կողմնակիցների շարքերը:

Նշենք, որ Ավիգդոր Լիբերմանը, Իսրայելի պաշտպանության նախարար նշանակվելուց հետո, հարցազրույցներից մեկում ասել է. «Իսրայելը համարվում էր սփյուռքի հրեաների անվտանգության երաշխավորն առաջին հերթին այն առումով, որ այն հրեական աշխարհի հոգևոր կենտրոնն է»[1]: Նրա կարծիքով, «հրեական համայնքներում ասիմիլացման, հրեական ազգային ինքնագիտակցության թուլացման գործում զգալի են նաև բնակության երկրներում հակասեմականության ալիքի ակտիվացման միտումները: Ընդ որում, աշխարհի տարբեր հատվածներում հակասեմականության ալիքն սկսել է զուգորդվել Իսրայել պետության հետ և աստիճանաբար վեր է ածվում հակաիսրայելականության: Սա նույնպես հոգեբանական տեսանկյունից բացասական հետևանքներ է թողնում Իսրայելի հետ հրեական համայնքների գործակցության և կապերի զարգացման վրա: Հակաիսրայելականությունը տարածվում է հատկապես արևմտյան երկրների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) ազատական շրջանակներում, որոնց հետևորդների շարքում քիչ չեն այն հրեաները, որոնք արդեն հանդես են գալիս Իսրայել պետության դեմ»: Նրա պնդմամբ, «նման գաղափարախոսությունն օտար է առաջին հերթին հետխորհրդային տարածքից ԱՄՆ-ում հաստատված հրեական սփյուռքի ներկայացուցիչների համար,

[1] *Ш.Бриман*, «Министр обороны Израиля Авигдор Либерман о единстве народа и страны», http://www.forumdaily.com/ministr-oborony-izrailya-o-edinstve-naroda-i-strany/

որոնք կարող են էական նշանակություն ունենալ աշխարհի և առաջին հերթին ԱՄՆ հրեական համայնքների ազգային ինքնության, ինքնագիտակցության պահպանման և զարգացման հետագա գործընթացներում»[1]:

Պետություն-հրեական համայնքներ հարաբերություններում վերջերս հասունանում է կրոնական նշանակության որոշ հարցերի շուրջ անհամաձայնությունների նոր ալիք: Հայտնի է, որ Իսրայել պետության հոգևոր դասն աչքի է ընկնում պահպանողականությամբ, որոշ հարցերում՝ նաև սկզբունքային դիրքորոշմամբ, ինչը հաճախ հակասությունների տեղիք է տալիս հրեական սփյուռքի հոգևոր ղեկավարության շրջանակներում, որոնց կրոնական հայացքներն առավել ազատական են: Եվ կրոնական հենքի վրա առաջացած նոր հակասությունները վերը հիշատակված երկու հիմնական կրոնական հայացքները ներկայացնող հոգևորականության հոգևոր-գաղափարական տարակարծությունների հերթական դրսևորումներից են: Մասնավորապես, խոսքն այն մասին է, որ վերջին շրջանում Իսրայելի հասարակական-քաղաքական շրջանակներում, սփյուռքի տարբեր համայնքներում ընթանում են լուրջ քննարկումներ, հնչում հակասական տեսակետներ՝ Երուսաղեմ քաղաքի «Լացի պատ»-ի մոտակայքում ոչ ուղղափառ-ռեֆորմիստական դավանական ուղղությունների ներկայացուցիչների աղոթքի համար հավելյալ հատված ստեղծելու նախագծի շուրջ: 2017թ. հունիսի վերջին, սակայն, Իսրայելի կառավարությունը որոշում կայացրեց սառեցնել այդ հավելյալ հատվածի ստեղծման նախագիծը: Ինչպես նշում են որոշ իսրայելական լրատվա-

[1] Նույն տեղում:

միջոցներ, որոշման պատճառներից մեկն այն է, որ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն գտնվում է երկրի իշխող կոալիցիայի մաս կազմող ուլտրակրոնական կուսակցությունների մշտական ճնշումների ներքո: Տեղեկատվական աղբյուրների համաձայն, այդ քայլով զգալի վնաս կարող է հասցվել պետություն-սփյուռք հարաբերություններին, մասնավորապես, ԱՄՆ հրեական համայնքների հետ Իսրայել պետության համագործակցությանը, քանի որ ԱՄՆ հրեական 6 մլն-անոց համայնքի միայն 15%-ն է հարում ուլտրաուղղափառ ուղղությանը[1]: Ինչպես և ակնկալվում էր, ԱՄՆ հրեական համայնքի լիբերալ հատվածն այս որոշումը խիստ բացասաբար ընդունեց:

Ոչ ուղղափառ-ռեֆորմիստական դավանական ուղղությունների ներկայացուցիչների աղոթքի համար «Լացի պատ»-ի մոտ հավելյալ հատվածի ստեղծման նախագծի սառեցման որոշմանը դեմ էր նաև «Սոխնուտ» հրեական գործակալության ղեկավար Նաթան Շարանսկին, որը 4 տարի շարունակ ակտիվ մասնակցություն է ունեցել այդ նախագծի մշակմանը: Աղբյուրի փոխանցմամբ, վերջինս մասնակցել է նախագծի մշակման աշխատանքներին անձամբ Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուի խնդրանքով: Նշենք, որ 2016թ. հունվարին նախագիծը հավանության էր արժանացել:

Բացի այդ, Իսրայելի Քնեսեթի միջնախարարական հանձնաժողովը որոշում է կայացրել հավանություն տալ «գիյուր»-ի[2] (ազգությամբ ոչ հրեաների այսպես կոչված «հրեականացման» կամ «հուդայականացման» ընթացակարգը, երբ նրանց բերում

[1] «СМИ: выступив «харедим», Нетаниягу испортил отношения с евреями США», http://newsru.co.il/israel/26jun2017/net_105.html

[2] Гиюр, https://ru.wikipedia.org

են հուդայական հավատքի) ոլորտում մասնավոր ռաբբիական դատարաններին լիազորություններից զրկելուն՝ դրանով իսկ մենիշխան իրավասություններ տալով երկրի գլխավոր ռաբբի-նաթին՝ կենտրոնական հոգևորական դասին: Երկրի իշխանությանն ընդդիմադիր ուժերը դեմ են արտահայտվել այս փոփոխություններին, քանի որ կսահմանափակվի այն մարդկանց թիվը, ովքեր ցանկանում են դառնալ հուդայական, անցնել «գիյուր»-ի ընթացակարգը՝ դրանով իսկ հասկացնելով, որ կրոնական սիոնիզմի ռաբբիները երկրորդական կարգի են[1]:

2014թ. սկսած՝ ակտիվացել են քաղաքական-հասարակական բանավեճերն ու քննարկումներն Իսրայել պետության հրեական բնույթը սահմանող օրենսդրական նախաձեռնությունների շուրջ: Խոսքն այն մասին է, որ Իսրայել պետության քաղաքական-հասարակական առավել պահպանողական շրջանակները հանդես են եկել նախաձեռնությամբ, որով փորձում են իրավական տեսանկյունից ամրագրել Իսրայել պետության հրեական լինելու հանգամանքը: 2017թ. մայիսի 7-ին Իսրայելի օրենսդրական հարցերով միջնախարարական հանձնաժողովը հաստատեց «Հիմնական օրենք. Իսրայելը որպես հրեա ժողովրդի ազգային պետություն» օրինագիծը, որով Իսրայել պետությունը սահմանվում էր հրեա ժողովրդի պետություն[2]: Օրինագծի համաձայն, Իսրայել պետության մայրաքաղաքը Երուսաղեմն է, պաշտոնական լեզուն՝ եբրայերենը, իսկ արաբերենին նախատեսվում է տալ հատուկ կարգավիճակ: Օրինա-

[1] «СМИ: выступив «харедим», Нетаниягу испортил отношения с евреями США», http://newsru.co.il/israel/26jun2017/net_105.html

[2] «Министры утвердили законопроект о еврейском характере государства Израиль», http://newsru.co.il/israel/07may2017/zakon_707.html

գծում ասվում է, որ Իսրայելը հրեա ժողովրդի ազգային օջախն է, որն Իսրայել պետությունում ազգային ինքնորոշման բացառիկ իրավասություն ունի[1]: Դեռևս հստակ չէ, թե սույն օրինագիծը, որը Քնեսեթ է ներկայացվել է Իսրայելի «Լիքուդ» ազգային-լիբերալ կուսակցության պատգամավորների կողմից, արդյոք կհաստատվի Իսրայել պետության կառավարության կողմից[2]: 2017թ. հուլիսի վերջին Քնեսեթի հատուկ հանձնաժողովը սկսեց այդ օրինագծի քննարկումը, որին երկրի վարչապետ Բ.Նեթանյահուն այդպես էլ չմասնակցեց: Ի դեպ, սա հանձնաժողովի առաջին նիստն էր, որտեղ նախատեսվում էր մշակել օրինագծի տեքստը՝ առաջին ընթերցմամբ հաստատելու նպատակով:

Հիշեցնենք, որ 2015թ. ձևավորվել էր հատուկ հանձնաժողով, որը պետք է մշակեր Իսրայել պետության կառավարության կոալիցիայում ներառված բոլոր խորհրդարանական խմբակցությունների համար ընդունելի օրինագիծ, սակայն այդ հանձնաժողովի աշխատանքներն արդյունք չտվեցին:

Իսրայել պետության հրեական բնույթն ամրագրող օրենսդրական նախաձեռնությունները միանշանակ չեն ընկալվում նաև Իսրայել պետության հրեա բնակչության կողմից: Իսրայելի հրեա բնակչության դիրքորոշումները պարզելու նպատակով 2014թ. դեկտեմբերի 1-3-ը Իսրայելի ժողովրդավարության ինստիտուտն իրականացրել է սոցիոլոգիական հարցում, որին մասնակցել է 18 տարեկանը լրացած 602 մարդ: Սոցհարցման արդյունքները ցույց են տվել. հարցման մասնակիցների 40%-ը

[1] Նույն տեղում:
[2] «В Израиле вернулись к закону о еврейском характере государства», https://lenta.ru/news/2017/05/10/israel/

գտնում է, որ օրինագիծը կվնասի Իսրայել պետության շահերին, հարցվածների 31%-ը կողմ է արտահայտվել օրինագծին՝ համարելով, որ այն համապատասխանում է երկրի շահերին[1]: Հարցվածների 61.3%-ը կարծում է, որ Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն աջակցում է այդ օրինագծին: Հարցվածների 88%-ը գտնում է, որ իրենց համար կարևոր է, որպեսզի Իսրայելը լինի ժողովրդավարական երկիր[2]:

Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ թեև հրեությունում պետություն-սփյուռք գործակցության և կառավարման հարցերում ներքուստ առկա են որոշակի գաղափարական, կրոնական, քաղաքական և այլ հակասություններ, այնուհանդերձ, դրանք, որպես կանոն, չեն բերում ինստիտուցիոնալ կամ համակարգային-խորքային պառակտումների հրեական համայնքների և Իսրայել պետության միջև համագործակցության հարցում, իսկ շատ դեպքերում նման տարակարծությունները դիտվում են որպես բազմակարծություն և հետևապես՝ հնարավորություն գաղափարական և այլ հարցերում միմյանց լրացնելու առումով:

Պետություն-սփյուռք գործակցության գիտակրթական հարցեր

Իսրայել պետությունը զգալի ուշադրություն է դարձնում երկրում կրթության և գիտության զարգացմանը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2010թ. տվյալներով, գիտության և հետազոտությունների ծախ-

[1] «Закон о еврейском характере Израиля разделил общество», http://ieshua.org/zakon-o-evrejskom-xaraktere-izrailya-razdelil-obshhestvo.htm
[2] Նույն տեղում:

սերի ծավալով Իսրայելն աշխարհում առաջատարն էր (երկրի ՀՆԱ 4.4%)[1]:

Հայտնի է, որ «*start-up*»-երի քանակով Իսրայելը զբաղեցնում է աշխարհում երկրորդ հորիզոնականը:

Պետություն-սփյուռք կապերի զարգացման համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում հրեա ժողովրդի գիտակրթական պոտենցիալի համախմբման և զարգացման հարցերին: Իսրայել պետության տարբեր ժամանակաշրջանների ղեկավարները համապատասխան հնարավորությունների և պայմանների ստեղծմամբ ձգտել են հրեության մարդկային-մտավոր կապիտալը համախմբել և կուտակել Իսրայելում: Իսրայել պետությունում կրթության, գիտության զարգացման, նորարարությունների և տեխնոլոգիական առաջընթացի գործում հրեական սփյուռքի մտավոր կապիտալի ներգրավվածությունն ապահովելու հիմնահարցը հրեությունում պետություն-սփյուռք փոխգործակցության գերակայություններից է: Երկրի կրթական ոլորտի պատասխանատուներն անում են հնարավորինը, որպեսզի Իսրայելը դառնա կրթության, մասնագիտացման ձեռքբերման համար գրավիչ պետություն: Իսրայելի բուհական կրթությունը գրավիչ է տեղի և արտերկրի երիտասարդության համար առաջին հերթին տեխնոլոգիական նորարարությունների և բժշկության ոլորտներով: Հրեական սփյուռքի ակտիվ մասնակցությամբ և աջակցությամբ Իսրայելում իրականացվում են կրտսեր և ավագ դպրոցականների, երիտասարդության համար նախատեսված բազմաթիվ կրթական-ուսումնական, մասնագի-

[1] «Рейтинг стран мира по уровню расходов на НИОКР», http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info

տական-հետազոտական ծրագրեր: Իրականացվում են սփյուռքի ներկայացուցիչների ճանաչողական այցելություններ Իսրայել, շատերը ցանկություն են հայտնում կրթությունը շարունակել, իսկ հետագայում նաև հայրենադարձվել Իսրայել պետություն:

Մեծ տեղ է հատկացվում նաև հեռահար կրթության համակարգի ձևավորմանը և զարգացմանը: Հեռահար ուսուցման փորձառությամբ հայտնի է Իսրայելի բաց համալսարանը, որը հիմնադրվել է 1975թ.: Համալսարանում ուսումնառությունը կազմակերպվում է հեռահար ուսուցման միջոցով՝ դրան զուգակցելով կրթության ավանդական մեթոդները: Հեռահար ուսուցման մեթոդի շնորհիվ բարձրակարգ կրթություն ստանալու հնարավորություններ են բացվում հրեական համայնքների ներկայացուցիչների համար՝ ուսումնառության ընթացքում ֆիզիկապես Իսրայելում չգտնվելու պայմաններում: Հետագայում, ինչպես փորձն է ցույց տալիս, հեռահար ուսուցմամբ բարձրագույն կրթություն ստացած հրեաներից շատերը ցանկություն են հայտնում հայրենադարձվել Իսրայել և մասնագիտացումը շարունակել երկրի առաջատար բուհերում, հետազոտական ինստիտուտներում:

Սկզբնական փուլում Իսրայելի հասարակական-քաղաքական լայն շրջանակներում թերահավատություն կար հեռահար ուսուցման արդյունավետության, օգտակարության վերաբերյալ: Եվ ավելի շատ խոսվում էր այն մասին, որ հեռահար ուսուցում ստանալով՝ հրեական սփյուռքի շատ ներկայացուցիչներ կարող են իրենց մասնագիտական, մտավոր կարողություններն ու պոտենցիալը կիրառել բնակության երկրներում՝ դրանով իսկ հետին պլան մղելով հետագայում Իսրայել հայրենադարձվելու հնարավորությունը: Սակայն փորձը հակառակն արձանագրեց:

Իհարկե, սա միանշանակ չպետք է ընդունել այն առումով, որ միշտ էլ կարող են գտնվել մարդիկ, ովքեր նպատակահարմար կհամարեն հեռահար ուսուցման արդյունքում կուտակած գիտելիքները կիրառել իրենց մշտական բնակության վայրում, հետևաբար իրենց կյանքը կապել այդ պետությունների հետ, այնուհանդերձ, գրանցված ընդհանուր միտումը վերջինի օգտին չի խոսում:

Ինչպես նշվեց, պետություն-սփյուռք փոխգործակցության ամրապնդման, Իսրայել պետության հասարակական-քաղաքական կյանքում ոչ հայրենաբնակ հրեության մասնակցության ապահովման և հրեության ազգային ինքնության պահպանման տեսանկյունից կարևոր դեր ունեն հրեական սփյուռքում և Իսրայել պետությունում գործող հասարակական-կրթական, կամավորական և բարեգործական կազմակերպությունները: Անդրադառնանք դրանցից մի քանիսի գործունեությանը:

«Սոխնուտ» հրեական գործակալության շրջանակներում գործում է հայտնի *«Partnership2gether Peoplehood Platform»* ծրագիրը, որի նպատակն է Իսրայելի քաղաքների և շրջանների, բնակավայրերի և աշխարհասփյուռ հրեական համայնքների միջև հարաբերությունների զարգացումը: Ներկայում *«Partnership2gether Peoplehood Platform»* ծրագիրը միավորում է Իսրայելի և արտերկրի հրեական համայնքների 50 քաղաքներ, շրջանների ու բնակավայրերի 500 իսրայելական և արտերկրի հրեական համայնքներ՝ յուրաքանչյուր տարի ներգրավելով ավելի քան 350 հազ. մասնակցի[1]:

[1] The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/p2g-eng, http://www.jewishagency.org/onward-israel

Մեծ հեղինակություն են վայելում նաև *«Taglit»*, *«Masa»* և *«Onward Israel»* նախագծերը[1]: *«Masa»* նախագիծն Իսրայելի կառավարության և «Սոխնուտ» հրեական գործակալության համատեղ նախաձեռնությունն է, որի նպատակն է հնարավորություն տալ արտերկրի հրեա 18-30 տարեկան 20 հազ. երիտասարդի Իսրայելում ուսանել, վերապատրաստվել՝ մեկ ուսումնական կիսամյակից մինչև 1 տարի ժամկետով, տարբեր երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում: Նախագիծը նախատեսում է տարբեր ծրագրեր՝ ակադեմիական, ուսանողական, որոնք սերտորեն համագործակցում են Իսրայելի համալսարանների հետ: Կրթական այս նախագիծն իրականացնում է նաև կամավորական, կրոնական ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս իսրայելական խոշոր կազմակերպություններում վերապատրաստվելու համար[2]: Երիտասարդները ստանում են $4.200-ից մինչև $8.400 դրամաշնորհ[3]: Ներկայում *«Masa»*-ն ընդգրկում է 250 ծրագիր, որոնցից յուրաքանչյուրն, ուսման իր մասնագիտական-թեմատիկ ուղղվածությունից զատ, ենթադրում է եբրայերենի ուսուցում, Իսրայելի և սիոնիզմի պատմության ուսուցում, իսրայելցի երիտասարդության հետ համատեղ նախագծերի իրականացում, շրջագայություն Իսրայելում, կամավորական ծրագրերին մասնակցություն և այլն[4]:

[1] «Диаспора – в гостях на Родине», http://www.isrageo.com/2017/03/06/diaspora/

[2] The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/ru/masa

[3] Masa-Israel journey, http://www.masaisrael.org/ru

[4] «Masa» նախագծի կրթական ծրագրերի ցուցակին և այլ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ էլեկտրոնային հասցեից՝ http://images.join.masaisrael.org/Web/MASA/%7B309775ec-51b4-45b4-bed0-ae888bb04827%7D_Masa-Catalogue-ru-2017-internet.pdf?_ga=2.22855487.545107719.1506662148-1174081454.1506662128

«Taglit» ճանաչողական-կրթական նախագիծը (եբր. թարգմ.՝ «բացահայտում») հնարավորություն է տալիս ԱՊՀ տարածքում բնակվող 18-26 ամյա երիտասարդ հրեաներին 10 օրով, անվճար հիմունքներով այցելել Իսրայել, ծանոթանալ երկրին և բնակչությանը, երիտասարդությանը և զինվորականությանը, զարգացնել կապը հրեական արմատների հետ[1]: Նախագիծը հիմնադրվել է 1999թ., համագործակցում է «Սոխնուտ» հրեական գործակալության, հրեական և իսրայելական հիմնադրամների և կազմակերպությունների հետ[2]: 1999թ. սկսած՝ *«Taglit»* կրթական նախագծի շրջանակներում Իսրայել է այցելել 18-26 տարեկան ավելի քան 400 հազ. հրեա երիտասարդ 66 երկրներից: Նախագծի կազմակերպիչների գնահատմամբ, նախագծի յուրաքանչյուր մասնակից Իսրայել պետության զբոսաշրջության ոլորտում ներդրում է կատարում միջինը $2.500: Նախագծի կարևոր ձեռքբերումներից է նաև այն, որ սփյուռքի հրեա երիտասարդների այցելությունների արդյունքում նրանցից շատերը հայրենադարձվել են Իսրայել: Նախագիծը ներառում է նաև կրթական բաղադրիչ, որը հնարավորություն է տալիս հրեա երիտասարդներին ծանոթանալ հրեության պատմությանը, հրեական արժեքներին, գիտելիքներ ստանալ հուդայականության վերաբերյալ և այլն:

«Taglit» նախագիծն իրականացնում է նաև սփյուռքի հրեա երիտասարդների այցելությունների գնահատման սոցիոլոգիական հետազոտություններ: 2012թ. իրականացված «*Taglit* նախագծի ազդեցությունը» սոցիոլոգիական հետազոտության ար-

[1] The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/ru/tglt

[2] «Таглит – Израиля по праву рождения», http://taglitww.birthrightisrael.com/sites/FSU/go/ru/fsu-default.html

դյունքների համաձայն, նախագծի մասնակիցների 42%-ն ավելի շատ է զգում իր կապն Իսրայել պետության հետ՝ ծրագրին չմասնակցածների համեմատ: Նախագծի մասնակիցների շրջանում 45%-ով ավելի են այն մասնակիցները, որոնք հետագայում գերադասում են ամուսնանալ հրեայի հետ: Հետազոտության արդյունքների համաձայն, հարցվածների զուգընկերները, որոնք, որպես կանոն, չեն մեծացել հրեական միջավայրում, երեք անգամ ավելի հաճախ են ընդունում հուդայականությունը, քան նախագծին չմասնակցածների զուգընկերները[1]:

Նախագծի հետ համագործակցում է նաև Իսրայելի պաշտպանության բանակը՝ հրեական սփյուռքի երիտասարդության կապն Իսրայելի զինված ուժերի հետ ամրապնդելու նպատակով: Նախագծին մասնակցել են Իսրայելի պաշտպանության բանակի (այսուհետ՝ ԻՊԲ) բազմաթիվ զինվորականներ: 2006թ. հոկտեմբերին ԻՊԲ հրամանատարությունը ԻՊԲ Վարքականոնային գիտությունների[2] դեպարտամենտին (*IDF Behavioral Sciences department*) պատվիրեց սոցիոլոգիական հետազոտու-

[1] «Таглит – Израиля по праву рождения», http://taglitww.birthrightisrael.com/sites/FSU/TaglitBirthrightIsraelStory/Research/Pages/Jewish-Futures-Project-Oct_2012.aspx, Jewish Futures Project The Impact of Taglit-Birthright Israel: 2010, http://taglitww.birthrightisrael.com/TaglitBirthrightIsraelStory/Research/Documents/Jewish.Futures.02.08.11.pdf.

[2] «Վարքականոնային գիտություն» եզրն ընդգրկում է տարբեր դիսցիպլիններ և փոխազդեցություններ կենդանական աշխարհում: Այն ներառում է մարդկանց և կենդանիների վարքի կանոնավոր վերլուծությունը՝ անցյալի, ներկայի վերահսկելի և բնականոն դիտարկման, գիտական դիսցիպլինավորված փորձարկման հետազոտման միջոցով: Վարքականոնային գիտության օրինակներ ներառում են հոգեբանությունը, հոգեկենսաբանությունը, ճանաչողական գիտությունը (*cognitive science*): Այդ գիտությունը ներառում է երկու լայն կատեգորիա՝ տեղեկատվական գիտություններ (*neural*) և հարաբերություններն ուսումնասիրող գիտություններ (*social*): Լայն առումով, վարքականոնային գիտությունն ուսումնասիրում է մարդու վարքը, գործողությունները, սովորությունները և մտադրությունները:

թյուն, որն Իսրայել պետության զինված ուժերի տեսանկյունից կգնահատեր *«Taglit»* նախագծի արդյունավետությունը[1]: Զեկույցի արդյունքներով՝ նախագծին տարեկան մասնակցում է 4.000 զինվորական: 2000-2006թթ. նախագծին մասնակցել է շուրջ 20 հազ. 138 իսրայելցի, որոնցից 13 հազ. 855-ը (70%)՝ զինվորական: Նախագծի շրջանակներում հրեական սփյուռքի ներկայացուցիչներն այցելել են ԻՊԲ տարբեր զորամասեր, ինչը նպաստում է հրեական սփյուռքի երիտասարդության և ԻՊԲ կապերի ամրապնդմանը, նրանց մեջ ձևավորվում է Իսրայելի և ԻՊԲ մասը կազմելու զգացումը:

«Սոխնուտ» հրեական գործակալությունը և *«Israel Experience»* միջազգային կազմակերպությունը ձեռնարկել են համատեղ նախաձեռնություն, որը հնարավորություն է տալիս հրեական սփյուռքի 17-21 տարեկան երիտասարդներին կրթություն ստանալ Իսրայելում: Նախաձեռնությունը հայտնի է *«Sela-Mir»* անվանմամբ, որի նպատակն է հրեա երիտասարդների պատրաստումն Իսրայելի քոլեջներ և բուհեր ընդունվելու համար: Վերապատրաստման ծրագիրը ենթադրում է մի քանի ուղղություններ՝ եբրայերենի ուսուցում, անգլերենի, մաթեմատիկայի դասընթացներ, իսրայելական բուհեր ընդունվելու համար հոգեչափական թեստի հանձնման նախապատրաստական դասընթաց և այլն: Ծրագրի մասնակիցները բնակվում են Հրեական գործակալության Երիտասարդական կենտրոնում[2]:

[1] «Таглит – Израиля по праву рождения», http://taglitww.birthrightisrael.com/sites/FSU/TaglitBirthrightIsraelStory/Research/Pages/Taglit-and-the-IDF.aspx

[2] The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/ru/israel-experience/program/7754

Պետություն-սփյուռք կապերի ամրապնդման գործում զգալի է Եվրասիական հրեական կոնգրեսի դերը, որն իրականացնում է մի շարք ծրագրեր։ Եվրասիական հրեական կոնգրեսը հիմնադրվել է 2002թ.՝ Ղազախստանի հրեական կոնգրեսի, Ռուսաստանի հրեական կազմակերպությունների դաշնության և համայնքների, Ուկրաինայի հրեական կազմակերպությունների ասոցիացիայի և համայնքների ղեկավարների նախաձեռնությամբ։ Եվրասիական հրեական կոնգրեսի առաքելությունն է աջակցել հրեա ժողովրդի միասնականության ապահովմանը, նպաստել Իսրայել պետության և պետություն-սփյուռք համագործակցության զարգացմանը, հրեության նյութական և հոգևոր ժառանգության պահպանմանը։ Նշենք կոնգրեսի շրջանակներում գործող «Իսրայելի հետ համերաշխություն» ծրագիրը, որի առաքելությունն է հայրենիքի հետ ոչ հայրենաբնակ հրեության գործակցության և կապերի ամրապնդումը։ Ծրագրի շրջանակներում Իսրայել պետությունում իրականացվում են կրթական, բարեգործական մի շարք նախագծեր։ «Իսրայելի հետ համերաշխություն» ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվում եվրասիական տարածաշրջանից Իսրայել հայրենադարձության կազմակերպման հարցերին։ Ծրագրի շրջանակներում կոնգրեսն ակտիվորեն մասնակցում է նաև ԻՊԲ զինվորների և սպաների աջակցությանը[1]։

Եվրասիական հրեական կոնգրեսի կարևոր ծրագրերից է «Հոգևոր վերածնունդ» նախագիծը, որի առաքելությունը հրեական սփյուռքի համայնքներում հրեական հոգևոր դաստիարակության, ազգային ինքնության ու ինքնագիտակցության պահ-

[1] Евроазиатский Еврейский Конгресс, http://eajc.org/

պանման և զարգացման ապահովումն է: Այս նպատակների իրագործման համար կոնգրեսի ենթակայության ներքո ձևավորվել է Ռաբբիների խորհուրդ, որը կոնգրեսի ղեկավարությանը ներկայացնում է խորհրդատվություններ և առաջարկություններ[1]:

Եվրասիական հրեական կոնգրեսի գործունեության շրջանակներում իրականացվում է «Իսրայելի բացահայտումը» ծրագիրը, որի նպատակն է եվրասիական տարածաշրջանում գործող օտարերկրացի խմբագիրների և լրագրողների համար Իսրայելում կազմակերպել գիտաժողովներ, կլոր սեղաններ: Այս նախաձեռնությունը կարևորվում է ինչպես Իսրայել պետության և եվրասիական տարածքի հրեական սփյուռքի միջազգային հեղինակության ու վարկանիշի բարձրացման, այնպես էլ տեղի հրեական համայնքների գիտակրթական դաշտի հետ այլազգի լրագրողների կապերի ամրապնդման առումներով:

Իսրայել-Հունաստան-Կիպրոս գործակցային ձևաչափը. երկխոսության հնարավորություն սփյուռքի համայնքների միջև

Ներկայում նոր միտումներ են նկատվում հրեական սփյուռքի և այլ երկրների սփյուռքի միջև ավանդական համագործակցության շրջանակների ընդլայնման, այդ համագործակցությունում որոշակի վերադասավորումներ իրականացնելու հարցերում: Խոսքը վերջին ամիսներին Իսրայելի, Հունաստանի և Կիպրոսի սփյուռքերի միջև համագործակցության հաստատման մասին է, ինչը նոր երևույթ է հրեական սփյուռքի ռազմավարությունում:

[1] Նույն տեղում:

Նշենք, որ հրեական սփյուռքը Միացյալ Նահանգների օրինակով հակադիր բևեռում է գտնվել հունական կամ կիպրոսյան սփյուռքի հետ, ուստի եղել են ավելի շատ հակասություններ, քան ընդհանրություններ, որոնք կարող են հանգեցնել համագործակցության հաստատման:

2017թ. մարտի սկզբին «Սոխնուտ» հրեական գործակալության ղեկավար Նաթան Շարանսկին, Կիպրոսի նախագահի՝ սփյուռքի հարցերով լիազոր Ֆոթիս Ֆոթիուն և Հունաստանի փոխարտգործնախարար Թերենս Նիկոլաոս Քվիկը Երուսաղեմում անցկացրին առաջին եռակողմ նիստը Իսրայելի, Կիպրոսի և Հունաստանի սփյուռքերի կոորդինացման հարցերի շուրջ[1]: Հանդիպումը տեղի ունեցավ 2016թ. դեկտեմբերի 8-ին Երուսաղեմում երեք երկրների ղեկավարների երկրորդ հանդիպման ժամանակ ընդունված եռակողմ հռչակագրի հիման վրա: Երեք երկրների սփյուռքերի միջև կապերի կոորդինացման հարցերի քննարկմանը նվիրված եռակողմ հանդիպմանը կողմերը եկել են ընդհանուր հայտարարի արտերկրի ազգային սփյուռքի միջև համագործակցության և համատեղ ծրագրերի մշակման շուրջ:

2016թ. հունվարի վերջին Նիկոսիայում տեղի ունեցավ Իսրայելի, Կիպրոսի և Հունաստանի ղեկավարների գագաթաժողովը՝ Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսի, Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասի և Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի մասնակցությամբ: Կողմերը պայմանավորվեցին ստեղծել դեպի Եվրոպա գազատարի կա-

[1] «Израиль, Греция и Кипр будут дружить диаспорами», http://www.isrageo.com/2017/03/06/trimeet/

ռուցման տնտեսական նպատակահարմարությունն ուսումնասիրող եռակողմ հանձնաժողով ձևավորելու վերաբերյալ[1]:

2016թ. մարտի սկզբին Իսրայելի, Կիպրոսի և Հունաստանի խորհրդարանական պատվիրակությունները Նիկոսիայում ստորագրեցին երեք երկրների արտերկրի և պաշտպանության հարցերով խորհրդարանական հանձնաժողովների միջև ռազմավարական երկխոսության զարգացման հուշագիր: Ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա նախատեսվում էր համագործակցությունը զարգացնել կիբեռանվտանգության, գործարարության, տեխնոլոգիական նորարարությունների և այլ ոլորտներում[2]:

2017թ. հունիսի կեսին կայացած եռակողմ հանդիպման շրջանակներում Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն, Հունաստանի վարչապետ Ա.Ցիպրասը և Կիպրոսի նախագահ Ն.Անաստասիադիսը ստորագրեցին համատեղ հռչակագրեր, որոնք վերաբերում են կողմերի միջև հարաբերությունների հետագա ամրապնդման հարցերին[3]: Քննարկվեցին նաև էներգետիկ համագործակցության և ուսանողության փոխանակման հարցերը[4]:

Որոշ փորձագետների կարծիքով՝ Իսրայել - Կիպրոս, Իսրայել - Հունաստան համագործակցության նոր միտումը պայմանավորված է Իսրայելի մերձավորարևելյան քաղաքականու-

[1] «Кипр-Греция-Израиль: исторический саммит в Никосии», https://www.cyprus.kp.ru/daily/26486/3355755/,
«Трехсторонняя встреча глав государств Кипра, Греции и Израиля», http://businessgreece.gr/greece-news/greece-politics/item/485-vstrecha-glav-gosudarstv-kipra-gretsii-i-izrailya

[2] http://itbusinessweek.com/israel-greece-cyprus/

[3] «Израиль, Греция и Кипр подписали совместные декларации», http://mkisrael.co.il/articles/2017/06/18/izrail-greciya-i-kipr-podpisali-sovmestnye-deklaracii.html

[4] Նույն տեղում:

թյան որոշակի վերադասավորումներով և գերակայությունների վերիմաստավորմամբ, խոսքը, մասնավորապես, Թուրքիայի հետ հարաբերությունների վերանայման մասին է: ԱՊՀ և մերձավորարևելյան տարածքի հանդեպ քաղաքականության այդ նոր միտումների նախագծի հեղինակներն են Շիմոն Պերեսը և Ավիգդոր Լիբերմանը: Նրանք կարողացան զարգացնել համագործակցությունը Հունաստանի և Կիպրոսի, Ադրբեջանի և Ղազախստանի հետ, որոնք, համապատասխանաբար, Թուրքիայի ավանդական հակառակորդ և դաշնակից երկրներ են հանդիսանում[1]:

Նշենք, որ կողմերի միջև համագործակցությունն ամրապնդվում է նաև էներգետիկ ոլորտում: 2016թ. սկզբին Կիպրոսը, Հունաստանը և Իսրայելը հանդես եկան Իսրայելից Կիպրոսի շելֆով դեպի Եվրոպայի ափեր *EastMed* գազատարի գործարկման հայտարարությամբ: Այն հնարավորություն կտա միջերկրածովյան գազն արտահանել Եվրոպա[2]: 2011թ. մարտին Ավիգդոր Լիբերմանը հարցազրույցներից մեկում հայտարարել է, որ նպատակ ունի ստեղծել Իսրայելի արտաքին քաղաքական բլոկ, որը ներառելու է Կիպրոսը, Հունաստանը, Բալկանները, Արևելյան Եվրոպան և Ռուսաստանը[3]: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, վերջին տարիներին Իսրայելն ու Կիպրոսը ակտիվորեն համագործակցում են նաև ռազմական ոլորտում: 2011թ. նոյեմբերին, կիպրոսյան որոշ լրատվամիջոցների հաղորդմամբ, Իս-

[1] «Кипр и Израиль форсируют отношения в пику Турции», https://newdaynews.ru/inworld/383095.html
[2] «Кипр, Греция и Израиль договорились строить газопровод EastMed», https://teknoblog.ru/2016/01/29/54789
[3] Նույն տեղում:

րայելն ու Կիպրոսն իրականացրել են համատեղ ռազմաօդային զորավարժություններ[1], համագործակցել են ռազմական հետախուզության գծով տեղեկատվության փոխանակման հարցերում:

Նշենք, որ Իսրայելին ադրբեջանական գազի մատակարարման ապագան կասկածի տակ դրվեց այն ժամանակ, երբ 2009-2010թթ. Միջերկրական ծովի իսրայելական շելֆի առանձին հատվածներում հայտնաբերվեցին բնական գազի խոշոր պաշարներ: Դա մեծ ազդեցություն ունեցավ Իսրայել բնական գազի արտահանումների նախկին նախագծերի և ձեռք բերված պայմանավորվածությունների վրա: Միջերկրական ծովում, Հայֆա քաղաքից ոչ հեռու, բնական գազի խոշոր հանքավայրերի հայտնաբերումը մեծ վնաս հասցրեց առաջին հերթին Ռուսաստանից և Ադրբեջանից Իսրայել բնական գազի մատակարարումներին: Արդյունքում՝ Իսրայելը ոչ միայն զգալի չափով լուծեց իր էներգետիկ անվտանգության հարցը, այլև փորձեց նոր հայտնաբերված հանքավայրերի բնական գազն այլ երկրներ արտահանելու նոր ուղիներ գտնել: Մասնավորապես, շատ էր խոսվում իսրայելական Լևիաֆան և Թամար հանքավայրերում հայտնաբերված բնական գազի զգալի պաշարների մասին: Լևիաֆանը գտնվում է Միջերկրական ծովի իսրայելական շելֆում, Լիբանանի հետ Իսրայելի ծովային սահմանի մոտ, Հայֆա քաղաքից 135 կմ դեպի արևմուտք: Վերջինս նախնական տվյալներով ունի 453 մլրդ մ^3 գազի ապացուցված պաշարներ: 2011թ. մայիսին հեղինակավոր *Oil and Gas Investor* ամսագիրն իսրայելական Լևիաֆան հանքավայրը որակեց 2010թ. արդյունքներով

[1] Նույն տեղում:

բնական գազի լավագույն հանքավայրն աշխարհում[1]: Լևանտի ավազանի բնական գազի ընդհանուր ապացուցված և հնարավոր պաշարներն Իսրայելի և Կիպրոսի սահմաններում կազմում են 1,18 տրլն մ^3, որից 127 մլրդ մ^3՝ Կիպրոսի շելֆում և ավելի քան 1 տրլն մ^3՝ Իսրայելի հատվածում: Իսրայելի բնական գազի պաշարների 88%-ը կենտրոնացված է վերը հիշատակված 2 հանքավայրերում. ավելի քան 60%-ը գտնվում է Լևիաֆանում, 27%-ը՝ Թամար հանքավայրում[2]:

Կրկին վերադառնալով հրեական, հունական և կիպրական սփյուռքի տարբեր համայնքների միջև երկխոսության նոր հնարավորություններին և հեռանկարներին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այս ամենի համատեքստում նշյալ զարգացումներին հայկական կողմի մասնակցությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական սփյուռքն ավանդաբար ջերմ հարաբերություններ է ունեցել և ունի հունական-կիպրոսյան սփյուռքերի աշխարհագրորեն տարբեր հատվածների հետ, հայկական սփյուռքը կարող է երկխոսության զարգացման կամուրջ հանդիսանալ հրեական, հունական և կիպրական սփյուռքի միջև: Սա հատկապես վերաբերում է ԱՄՆ-ում և եվրոպական մի շարք երկրներում նշյալ երկրները ներկայացնող սփյուռքի համայնքների միջև համագործակցությանը, որտեղ վերջիններս ունեն համեմատաբար խոշոր մարդկային-մտավոր, ֆինանսական պոտենցիալ: Ավելին, հայկական կողմի համար սա հնարավորություն է՝ ուղղակի կերպով գործակցություն հաստատել հրեական սփյուռքի հետ, ըստ այդմ՝ չեզոքացնել թուրք-ադրբեջանական

[1] *Կ. Վերանյան*, «Իսրայելի նավթագազային սեկտորը», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15163&sphrase_id=62390

[2] Նույն տեղում:

լոբբիստական տանդեմը: Ավելին, վերջին շրջանում նկատվում է ԱՄՆ-ում հրեական և ադրբեջանական լոբբիստական խմբերի և կազմակերպությունների համագործակցության խորացման միտում: Մասնավորապես, ադրբեջանական լոբբիստական խմբերն ակտիվ աշխատանքներ են իրականացնում Միացյալ Նահանգներում հրեական ազգային, կրոնական միջոցառումների ֆինանսավորման ուղղությամբ:

Իսրայելի պաշտպանության բանակը՝ պետություն-սփյուռք գործակցության և հայրենադարձների ինտեգրման կարևոր ինստիտուտ

Անդրադառնանք նաև զինված ուժեր-ազգ փոխգործակցության հրեական փորձին՝ ուշադրություն դարձնելով հիմնականում Իսրայելի պաշտպանության բանակին հրեական սփյուռքի ներգրավվածությանը: ԻՊԲ-ն կարևոր նշանակություն ունի հայրենադարձներին Իսրայելի սոցիալ-հասարակական կյանքում ինտեգրելու հարցերում: Ինչպես հաստատում են երկրի զինված ուժերում ծառայություն անցած հայրենադարձ զինվորականներից շատերը, «Իսրայելի պաշտպանության բանակում զինծառայությունն իրենց տվել է երկրի ճակատագրին մասնակցության զգացում: Իսրայելի պաշտպանության բանակը լավագույն միջոցն է հայրենադարձներին երկրի հասարակական կյանքում ինտեգրելու հարցերում»:

Նշենք, որ մինչև Իսրայել պետության հիմնադրումը, 20-րդ դարի առաջին տասնամյակներին հրեական պետականության վերականգնմանն ուղղված հրեության ընդհատակյա զինված պայքարը ձևավորվեց մեծ մասամբ հենց հրեա կամավորական-

ների շնորհիվ, որոնց նպատակն առաջին հերթին «հոգևոր ազգային օջախի» կամ «հոգևոր հայրենիքի» վերականգնումն էր։ Իսրայել պետության հիմնադրման գաղափարը նրանց համար նախևառաջ հոգևոր պայքարի դրսևորում էր։

Հայրենադարձվածներից շատերը պատերազմել են Իսրայելի զինված ուժերում 1948թ. պատերազմում, սրտի ու խղճի թելադրանքով, դեր են խաղացել նաև Հոլոքոսթը և դրա կրկնվելու անթույլատրելիության համոզմունքը (հայրենադարձների շրջանում լայն կիրառություն ունի «*Never again*»՝ «Այլևս երբե՛ք» հայտնի ձևակերպումը)։

Հրեական համայնքներից ԻՊԲ շարքերը կամավորականներով համալրելու հոգևոր-բարոյական մոտիվացիայի հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երկհազարամյա պետականության բացակայությունից հետո, Տիրոջ կամոք, հրեա ժողովրդին հնարավորություն է ընձեռվել ստեղծել հրեական ազգային օջախ, որը կապահովի յուրաքանչյուր հրեայի անվտանգությունը, ուստի յուրաքանչյուր հրեա պետք է իր մասնակցությունն ու ներդրումն ունենա Իսրայել պետության անվտանգության ապահովման գործին, հայտնի իր համերաշխությունը «ՑԱՀԱԼ»-ին[1]։

ԻՊԲ շարքերը հրեա կամավորականներով համալրելու գործընթացն առավել ինստիտուցիոնալ և համակարգված բնույթ ստացավ, երբ 1983թ. ստեղծվեց «Իսրայելի համար կամավորականների ազգային նախագիծը», որը հայտնի է որպես «*Sar-El*» (թարգմ.՝ «Ծառայություն Իսրայելին»)։

[1] Իսրայելի զինված ուժերը միջազգայնորեն հայտնի է նաև «ՑԱՀԱԼ» անվամբ, եբրայերենից թարգմ.՝ Իսրայելի պաշտպանության բանակ։

Կամավորականների ներգրավման միջազգային այս նախագիծն առայսօր ընդունել է ավելի քան 140 հազ. կամավորականի, որոնցից շատերը հետագայում վերջնականապես հայրենադարձվել են Իսրայել: Նախագիծը հնարավորություն է տալիս կամավորականներին մասնակցել զինված ուժերում զինծառայությանը, բայց եթե կամավորականի առողջական-ֆիզիկական կամ տարիքային սահմանափակման խնդիրներից ելնելով՝ նա չի կարողանում անցնել զինծառայության, գործում են մի շարք ծրագրեր, որոնց միջոցով կամավորականը կարող է աջակցություն ցուցաբերել ԻՊԲ-ին:

«ՑԱՀԱԼ»-ում ծառայությունից հետո կամավորականները պարտավորվում են Իսրայելի հետ համագործակցել և հասարակական գործունություն ծավալել ևս 1 տարի ժամկետով իրենց բնակության երկրում (հրեական համայնքի տարբեր հումանիտար ծրագրեր):

Իսրայել պետության հիմնադրումից հետո անցած ժամանակաշրջանում երկրի քաղաքական ընտրանին զգալի ուշադրություն է դարձնում Իսրայելի հասարակությունում և արտերկրի հրեական համայնքներում Հոլոքոստի հետևանքների հաղթահարման խնդրին: Սկզբում հրեությունում բարոյահոգեբանական բնույթի լրջագույն խնդիրներ էին գոյացել Հոլոքոստի հաղթահարման հարցերում, գերիշխող էր զոհի կերպարը: Հրեությունը Հոլոքոստը դիտում էր որպես մարդկային մեծ ողբերգություն: Բայց հետագա տասնամյակներում հրեաները հասան այն բանին, որ Հոլոքոստը դարձավ հաղթանակ հրեա ժողովրդի համար, քանի որ, չնայած այդ ողբերգությանը, նրանք շարունակում են պահպանել իրենց գոյությունը, ինքնությունը և շարունակում են զարգանալ:

Հրեության հավաքական հիշողությունում Հոլոքոստից հաղթանակ անցման գործընթացն իր ազդեցությունն է թողել նաև ԻՊԲ զինվորականության հոգևոր դաստիարակության վրա։ «ՑԱՀԱԼ»-ը, Իսրայել պետության, նրա բնակչության և համայն հրեության անվտանգության ապահովման երաշխավորը լինելով, պետք է հաղթահարեր զոհի կերպարը և ներկայանալ որպես հաղթող ազգի հաղթական բանակ։ Միևնույն ժամանակ, համակարգված է նաև հասարակության շրջանում ԻՊԲ հեղինակության բարձրացման աշխատանքը (հեռուստատեսային գովազդներ, տեսանյութեր, տարբեր սոցիալական-հասարակական գովազդային միջոցառումներ և այլն), որտեղ առաջ է մղվում «ՑԱՀԱԼ»-ի՝ որպես հաղթական բանակի, գաղափարը։

Ինչպես նշվեց, Իսրայելում պետական մակարդակով աջակցություն է ցուցաբերվում երկրի ներքաղաքական, հասարակական կյանքին արտերկրի հրեական համայնքների քաղաքականապես ակտիվ ներկայացուցիչների մասնակցության ընդլայնմանը։ Սա, իր հերթին, ըստ Իսրայելի քաղաքական ղեկավարների, կնպաստի նաև ԻՊԲ մարտունակության բարձրացմանը հրեական համայնքների ներգրավվածության ակտիվացման խնդրին։

ԻՊԲ զինծառայության կարևոր հարցերից մեկը վերաբերում է անձնակազմի հոգևոր-բարոյական արժեքներին։ Իսրայելի քաղաքական-պետական ղեկավարությունն առանձնակի ուշադրություն է դարձնում «ՑԱՀԱԼ»-ի կրթության չափանիշների բարձրացմանը։ Իսրայելի ռազմական հրամանատարությունն առաջնորդվում է այն մոտեցմամբ, որ երկրի զինված ուժերում կրթական բարեփոխումները նաև նման բարեփոխումների

կատալիզատոր կարող են դառնալ արդեն հասարակության լայն շրջանակներում: Ուրեմն, ԻՊԲ-ն նաև կրթական, սոցիալական ինստիտուտ է, որն առանցքային դերակատարություն ունի հասարակության կրթական չափանիշների բարձրացման հարցում: Սա կարևոր խթան է այդ թվում և հրեական համայնքների ներկայացուցիչների համար՝ Իսրայելի զինված ուժերում զինծառայության անցնելու միջոցով ստանալ հրեական ազգային-հոգևոր դաստիարակություն, այդպիսով վերականգնել, վերիմաստավորել հրեական արմատների հետ իրենց պատմական կապը: Այս տեսանկյունից պետություն-սփյուռք կապերի զարգացման, Իսրայելում հրեական սփյուռքի ներկայացուցիչների ինտեգրման խնդրում անգնահատելի է Իսրայելում, ԻՊԲ շրջանակներում, հրեական սփյուռքի մի շարք կազմակերպություններում հրեություն-բանակ ձևաչափով նախաձեռնվող կրթաուսումնական նախագծերի և ծրագրերի նշանակությունը:

ԻՊԲ-ում գործում են երիտասարդական գումարտակ-ակումբներ, որտեղ պատանիները և դեռահաս աղջիկները (12-18 տարեկան), մինչև զորակոչային տարիքը, անցնում են ընդհանուր կրթական և ռազմական պատրաստություն՝ ծովային, ցամաքային, դեսանտային և այլ զորքերում: Սա կրթաուսումնական հարթակ է, որտեղ ամրապնդվում և զարգանում են դպրոց-զինված ուժեր ինստիտուցիոնալ հարաբերությունները: Դպրոց-բանակ ձևաչափը թույլ է տալիս պատանիներին և աղջիկներին առավել հեշտ ինտեգրվել ԻՊԲ-ում ժամկետային պարտադիր զինծառայության առօրյային և պայմաններին:

Այս կազմակերպություն-ակումբներից կարելի է առանձնացնել Իսրայելի «Գաղնա» երիտասարդական, կամավորական

կազմակերպությունը (եբր. թարգմ.՝ «երիտասարդական ջոկատներ»): «Գադնա» կազմակերպությունը մասնագիտացած է հիմնականում Իսրայելի և արտերկրի հրեական համայնքների 13-18 տարեկաններին ԻՊԲ-ում զինծառայության նախապատրաստման բնագավառում: Կազմակերպությունը գործում և ղեկավարվում է «ՑԱՀԱԼ»-ի հրամանատարության ներքո, աշխատանքները կոորդինացնում և համագործակցում է Իսրայելի կրթության, մշակույթի և սպորտի, այլ նախարարությունների, պետական գերատեսչությունների և մասնավոր սեկտորը ներկայացնող կազմակերպությունների հետ: «Գադնա»-ի ջոկատները գործում են դպրոցներում և երիտասարդական ակումբներում:

«Գադնա»-ի նախապատրաստական դասընթացներում անչափահասներն ստանում են ֆիզիկական պատրաստվածություն, ծանոթանում զենքի հետ աշխատանքին, կրակի և հետախուզության վարման կանոններին ու հմտություններին, մասնակցում զորավարժությունների: Կազմակերպությունում հատուկ նշանակություն է տրվում ընկերասիրության, փոխօգնության դաստիարակության հարցերին:

«Գադնա»-ում գործում են նաև հատուկ մասնագիտացված ծովային և ռազմաօդային ստորաբաժանումներ: Կազմակերպության որոշ ուսումնական ճամբարներում մասնակիցները զինվորական պատրաստվածության դասընթացը համատեղում են հարակից բնակավայրերում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքների հետ: Երկրում արտակարգ դրության դեպքում «Գադնա» կազմակերպության ջոկատներն Իսրայելի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի կարգադրությամբ բերվում են մարտական պատրաստվածության վիճակի:

Մինչև զորակոչային տարիքը անչափահասների շրջանում զինվորական պատրաստվածության գործում զգալի է իսրայելական «Ցոֆիմ» երիտասարդական կազմակերպության ավանդը: Այն հիմնադրվել է 1919թ. Թել Ավիվ և Հայֆա քաղաքներում: «Ցոֆիմ»-ը պատանիների և դեռահաս աղջիկների շրջանում քաղաքացիական ուղղվածության դաստիարակչական, հասարակական-կամավորական գործունեությանը զուգահեռ՝ մասնագիտանում է նաև նրանց ԻՊԲ-ում զինծառայության նախապատրաստելու նախագծերի մշակման և իրականացման ոլորտում:

Իսրայելում ճկուն է ԻՊԲ-ում հայրենադարձ զինծառայողներին, նրանց ընտանիքներին ցուցաբերվող սոցիալական, կրթական, առողջապահական և այլ բնույթի աջակցության համակարգը: ԻՊԲ-ն այս հարցերում գործակցում է Իսրայել պետության գրեթե բոլոր պետական գերատեսչությունների, հասարակական, կամավորական և բարեգործական կազմակերպությունների, անհատների հետ: Հայրենադարձ զինծառայողներին և նրանց ընտանիքներին ցուցաբերվող աջակցության համակարգը ենթադրում է արտոնությունների ընձեռման հնարավորություն:

Իսրայելի և հրեական համայնքների ավելի քան 30 մասնագիտացած կազմակերպությունների համատեղ ջանքերով հետևողական աշխատանքներ են տարվում միայնակ զինվորականների (ԻՊԲ շարքերը համալրած հայրենադարձներ, որոնց ընտանիքի անդամները բնակվում են արտերկրում) աջակցման ուղղությամբ: Այս հարցում աչքի է ընկնում ԻՊԲ փոխգնդապետ, ներկայում պահեստային Ցվիկա Լևիի (ի դեպ, Լևիի հայրը

Բաքվի հրեա էր) հիմնադրած և նրա նախաձեռնությամբ գործող համահրեական անկախ ծրագիրը։

Նախաձեռնության շնորհիվ հետխորհրդային հանրապետությունների և այլ երկրների հարյուրավոր կամավորներ եկել են Իսրայել, անդամագրվել երկրի ԶՈՒ-ին։ Տարբեր տվյալներով՝ ներկայում Իսրայելի ԶՈՒ-ում ծառայում է ավելի քան 5 հազար միայնակ զինվորական, որոնց մեջ քիչ չեն կանայք։ Ի դեպ, նրանց մի մասն այլազգիներ են, սակայն բարձր տոկոս են կազմում քրիստոնյա և իսլամադավան զինվորականները, որոնք ցանկություն են հայտնել ընդունել հուդայականություն և դառնալ հրեա (անցնում են «Գիյուր»-ի դասընթացներ, երբ ազգությամբ ոչ հրեան հարում է հուդայականությանը)։

Զինծառայության ընթացքում միայնակ զինվորականներից շատերն անցնում են հատուկ մարտական պատրաստվածություն։ Նրանց շարքերում քիչ չեն Իսրայելի մարտական գործողություններին (լիբանանյան պատերազմ, իսրայելա-պաղեստինյան բախումներ և այլն) ակտիվորեն մասնակցածները։

Միայնակ զինվորականների նյութական և հոգևոր աջակցության հարցում ակտիվ են նաև «Սոխնուտ» հրեական գործակալությունը, «Հերցլիա» միջդիսցիպլինար կենտրոնը, «Զինվորականների օգնության ասոցիացիա»-ն, 2010թ. հիմնադրված Մայքլ Լևինի հիշատակի կենտրոնը։ Վերջիններս կազմակերպում են միջազգային գիտաժողովներ, իրականացնում միջոցառումներ՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, ֆինանսական միջոցների հավաքման նպատակով։

Կազմակերպությունները ֆինանսապես աջակցում են նաև միայնակ զինվորականներին, որոնք ցանկություն են

հայտնում զինծառայությունից հետո զբաղվել գիտակրթական կամ պետական գործունեությամբ:

Իսրայելի բնակչությունը և հրեական համայնքները ներգրավված են ԻՊԲ մարտունակության բարձրացման գործում: Նշենք հրեական և իսրայելական կազմակերպություններ և նախագծեր, որոնց գործունեությունն ուղղված է Իսրայել պետություն - հրեական սփյուռք կապերի ամրապնդմանը, Իսրայելի զինված ուժերի զարգացմանը համայն հրեության մասնակցության ապահովմանը:

1981թ. հիմնադրված «Իսրայելի պաշտպանության ուժերի ընկերներ» կենտրոնի նպատակն է Իսրայելի ԶՈՒ երիտասարդ զինվորականների (կին և տղամարդ) համար նախատեսված սոցիալական, կրթական, մշակութային ծրագրերի ապահովումը՝ ի շահ Իսրայել պետության անվտանգության: Կենտրոնն աջակցում է զոհված և կարիքավոր հրեա զինվորների ընտանիքներին, մարտական գործողությունների մասնակից պահեստայիններին: Կազմակերպությունը գործում է 15 մասնաճյուղերի միջոցով, որոնք տեղակայված են հրեական առավել խոշոր համայնքներում, նրա ներկայացուցիչներն ու հովանավորները կանոնավոր այցելում են Իսրայելի ԶՈՒ զորամասեր, հանդիպում զինվորականության հետ, տեղում ծանոթանում նրանց խնդիրներին: Կազմակերպությունն իր էլեկտրոնային կայքի և հասարակական լայն կապերի միջոցով ակտիվ աշխատանքներ է տանում նվիրատվությունների հավաքման ուղղությամբ: «Իսրայելի պաշտպանության ուժերի ընկերներ»-ի կարգախոսն է՝ «Հրեա զինվորականության գործը Իսրայել պետության պաշտպանությունն է, մեր գործը՝ հրեա զինվորականության պաշտպանությունը»:

Հրեա զինվորականության աջակցման գործում զգալի է Իսրայելի նախկին վարչապետ Մենահեմ Բեգինի նախաձեռնությամբ 1980թ. հիմնադրված «Լիբի»՝ Իսրայելի պաշտպանության հզորացման հիմնադրամի (անգլ.՝ *Libi - The Fund For Strenghening Israel's Defense*, https://www.libi-fund.org.il/index.php) ավանդը, որը հետևողական է զինվորներին կրթական, բժշկական, սոցիալ-հասարակական օգնություն ցուցաբերելու հարցում: «Լիբի»-ն առաջնորդվում է հրեական ազգային հոգևոր-բարոյական հիմնարար սկզբունքներով՝ Իսրայել պետության և հրեության պաշտպանության բարձրագույն առաքելության գիտակցում, սեր և նվիրվածություն առ հայրենիք: Հիմնադրամն ակտիվ է հրեության և այլազգիների շրջանում ուղիղ կապով նվիրատվական ակցիաների կազմակերպման հարցերում: «Լիբի»-ն ներկայացուցչություն ունի նաև ԱՄՆ-ում՝ «Լիբիի ամերիկացի ընկերներ» կազմակերպություն (http://www.friendsoflibi.org), որը բժշկական, սոցիալ-հոգեբանական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերում հրեա զինվորականությանը:

1897թ. հիմնադրված «Ամերիկայի սիոնիստական կազմակերպության» (անգլ.՝ «*Zionist organization of America*») շրջանակներում իրականացվող «ԱՄՆ սիոնիստական կազմակերպության համալսարանական նախաձեռնությունների համացանցը» (http://www.zoa.org) իրականացնում է նոր գործընկերային նախաձեռնություն, որի նպատակն է Իսրայելի պաշտպանության բանակի զինվորականության հետ հրեա ուսանողության կապերի հաստատումն ու զարգացումը (էլեկտրոնային հասցեների փոխանակում, հանդիպումների կազմակերպում, նվիրատվությունների հավաքում):

Իսրայելում զինծառայությանն իսրայելցիների և հրեական համայնքների ներկայացուցիչների ներգրավման ոլորտում մեծ հեղինակություն է վայելում ԻՊԲ «Մահալ» կամավորական կազմակերպությունը (http://www.mahal-idf-volunteers.org)։ Այն ակտիվ գործունեություն է ծավալում Իսրայելի ԶՈՒ-ում կամավորականների ընդգրկման և վերապատրաստման գործում։ Կազմակերպության ծրագրերը նպատակ ունեն աջակցել Իսրայել պետության պաշտպանության ուժեղացմանը, հրեական համայնքների համար պատրաստել երիտասարդ և փորձառու առաջնորդներ։ «Մահալ»-ի՝ այսպես կոչված «Իսրայելի պաշտպանության բանակի ծրագիրը» նախատեսված է ազգությամբ հրեա, 24 տարեկանից ցածր արական և 21 տարեկանից ցածր իգական սեռի բոլոր ներկայացուցիչների համար և բաղկացած է 18-ամսյա դասընթացից։ Առանձին ծրագիր է գործում նաև երկրից դուրս բնակվող կրոնավոր-ավանդապաշտ ընտանիքներից սերող հրեաների զինծառայությունը կազմակերպելու համար։

«Մահալ»-ի ծրագրերի միջոցով ավելի քան 40 երկրների շուրջ 1000 երիտասարդ կամավոր անդամակցել է Իսրայելի ԶՈՒ-ին։ Կազմակերպությունն իրականացնում է նաև նորակոչիկների համար եբրայերենի ուսուցման դասընթացներ, որոնք նպաստում են երկրի ԶՈՒ-ին և նրա անձնակազմին հրեության տարբեր համայնքների ներկայացուցիչների ինտեգրմանը։

Կազմակերպությունն իր էլեկտրոնային կայքի միջոցով աշխատանքներ է տանում Իսրայելում և արտերկրի հրեական համայնքներում ծրագրերի տեղեկատվական շրջանառության և հասանելիության ապահովման ուղղությամբ։ Այդ ծրագրերից մեկն էլ նվիրված է երկրի զինվորականների և հրեա երեխանե-

րի միջև նամակագրական կապի հաստատմանը: Կազմակերպության կայքում գործում է այդ խնդիրներին նվիրված առանձին բաժին, որտեղ զետեղված են երեխաների շնորհակալական նամակները հրեա զինվորներին՝ Իսրայելին մատուցած ծառայությունների համար:

Ողորտում ունեցած ավանդով աչքի է ընկնում «Իսրայելի սկաութների ընկերներ» կազմակերպության 1991թ. հիմնադրած «Գարին ցաբար» կամավորական ծրագիրը, որը քաջալերում է իսրայելցի և հրեական համայնքների երիտասարդների զինծառայությունը հայրենիքում: Ծրագիրը ֆինանսավորվում է ինչպես երկրի կառավարությունից, այնպես էլ հրեական խոշոր կազմակերպություններից (օր.՝ «Հրեական գործակալություն»), անհատ հովանավորներից և բարեգործներից: Այն նախատեսում է զինծառայության հատուկ մշակված միջոցառումներ, որոնց շրջանակներում հիմնականում ԱՄՆ-ում և Իսրայելում ամեն տարի կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ՝ նպաստելու համար հրեա երիտասարդների զինծառայությանը հայրենիքում:

ԻՊԲ շրջանակներում գործող «Մարվա» կամավորական ծրագիրը հիմնվել է 1982թ. և իրականացվում է Հարավային Նեգևում տեղակայված Գաղնա ռազմակայանում: 7-8 շաբաթ տևող ծրագրին ընդգրկված ուսանողները դասընթացներ են անցնում ԶՈՒ զորամասերում՝ ստանալով ֆիզիկական և հոգևոր-մտավոր պատրաստվածություն: «Մարվա»-ին կարող են մասնակցել աշխարհի տարբեր մասերում բնակվող 18-28 տարեկան, եբրայերենին քիչ թե շատ տիրապետող բոլոր հրեա երիտասարդները:

Իսրայելի պաշտպանության ուժերի համակարգում 1982 թվականից գործող մյուս՝ «Սար-էլ» կամավորական ծրագրի (թարգմ.՝ «Ծառայություն Իսրայելին», http://www.sar-el.org) շրջանակներում ամեն տարի 5000 հրեա կամավոր է ժամանում Իսրայել՝ հայրենիքում զինծառայության 2-3 շաբաթյա դասընթացներ անցնելու նպատակով: Կամավորականներն իրականացնում են տեխնիկական, բժշկական և այլ ծառայություններ: «Սար-էլ» ծրագիրը ներկայացված է աշխարհի 30 երկրներում, իսկ կամավորների մեծ հոսքեր լինում են հատկապես ԱՄՆ, Կանադայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ինչպես նաև Բելառուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի կամավորական մասնաճյուղերից:

Հրեությունում գործում են նաև այլ բարեգործական կենտրոններ, որոնք իրենց էլեկտրոնային կայքերի միջոցով աջակցում են հրեա զինվորներին սննդի, հագուստի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների սպասարկման ոլորտում: Հրեությունում մեծ հեղինակություն են վայելում «Համբուրգերներ Իսրայելի զինվորականության համար» (http://burgeridf.org), 2002թ. հիմնադրված «Պիցցա Իսրայելի պաշտպանության ուժերի համար» (http://pizzaidf.org) էլեկտրոնային առցանց ծրագրերը:

Որոշ զինվորական զորամասերում գործում է հայրենադարձության հարցերով լիազորված-խորհրդատվական վարչություն, որը պատասխանատու է հայրենադարձված զինվորներին տարբեր ստորաբաժանումներում զինծառայությանն աջակցելու, սոցիալական-հասարակական ինտեգրման հարցերի համար, իրականացնում է եբրայերենի ուսուցման և ծառայության պայմանների վերաբերյալ խորհրդատվություն:

Իսրայելի սփյուռքի հարցերով նախարարությունը զինծառայության ողջ ընթացքում տարբեր ոլորտներում աջակցում է հայրենադարձ զինծառայողներին, տրվում են տարբեր արտոնություններ և իրավունքներ՝ ընդհուպ մինչև զինծառայության ավարտը:

Հարկ է նշել, որ հայրենադարձներին ու նրանց ընտանիքների անդամներին, որոնք ենթակա են զինծառայության ԻՊԲ-ում, հնարավորություն է տրվում 12 ամսվա ընթացքում ինտեգրվել երկրի սոցիալ-հասարակական կյանքին, որից հետո են միայն նրանք զորակոչվում ծառայության:

Այլ երկրում զինծառայության պարագայում ԻՊԲ-ն կրճատում է տվյալ հայրենադարձի զինծառայության ժամկետը: Նա, ով մինչև Իսրայել գալը ծառայել է այլ երկրի զինված ուժերում ոչ պակաս, քան 18 ամիս, և այդ ծառայությունը ճանաչվում է Իսրայելի կողմից, զորակոչվում է պահեստազոր՝ մինչև 6 ամիս ժամկետով ծառայության: Երեխա ունեցող արական սեռի հայրենադարձները, որպես կանոն, չեն զորակոչվում:

Ամփոփում

Սույն հետազոտությունում փորձ է արվում ներկայացնել հրեությունում պետություն-սփյուռք փոխգործակցության կառավարման-կառուցվածքային, հոգևոր-գաղափարական հայեցակարգային բաղադրիչները, վերհանել առկա խնդիրներն ու հնարավորությունները: Թեև ուսումնասիրության շրջանակներում հնարավոր չէ ընդգրկել հետազոտական թեմայի ողջ սպեկտրը, այնուհանդերձ, կատարված աշխատանքը, թերևս, հնարավորություն է տալիս անդրադառնալ հրեությունում պետություն-

սփյուռք փոխգործակցության մի շարք կարևոր հիմնահարցերի, տալ համապատասխան փորձագիտական գնահատականներ:

Հարկ է նշել, որ պետություն-սփյուռք երկխոսության, փոխգործակցության իսրայելական փորձն ընդհանուր առմամբ արդյունավետ է, հաջողված: Թեև հրեությունում նույնպես այսօր առկա են գաղափարական-կրոնական, կազմակերպչական, քաղաքական և այլ բնույթի հակասություններ՝ ինչպես հրեական համայնքների ներսում, այնպես էլ Իսրայել-սփյուռք փոխհարաբերություններում, այնուամենայնիվ, փաստենք, որ դրանք չունեն հատուկ ընդգծված խորքայնություն և լուծելի են:

Հատկանշական է, որ թեև Իսրայելում և համայն հրեությունում շարունակում են կարևորել հրեության զարգացման ցանցակենտրոն հայեցակարգը, այդուհանդերձ, ելնելով հրեությանն սպառնացող մարտահրավերներից և ռիսկերից՝ Իսրայել պետության ղեկավարությունը հրեության զարգացման տեսլականը պայմանավորում է հրեության մարդկային-մտավոր և ֆինանսական կապիտալն Իսրայել պետությունում կուտակելով: Այս ռազմավարական մոտեցումն աստիճանաբար ավելի է արմատավորվում և դառնում ընկալելի այդ թվում և հրեական խոշոր համայնքների ղեկավար շրջանակներում:

Նշենք, որ նման գիտական հետազոտությունների իրականացումը կարևորվում է նախևառաջ միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից: Հարցն իսկապես ակտուալ է հայաստանյան իրականությունում, քանի որ հնարավորություն է տալիս գնահատել միջազգային փորձի ուսանելիության նպատակահարմարությունը հայության շրջանում պետություն-սփյուռք փոխհարաբերությունների համատեքստում: Խոսքը

բնավ միջազգային փորձի ուսումնասիրության և անհրաժեշտության պարագայում՝ այդ փորձի մեխանիկական կիրառման մասին չէ, այլ հասկացվում է, կրկին շեշտենք, փորձի ուսանելիության նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով տվյալ հասարակության ազգային ինքնության, հոգևոր-գաղափարական և այլ առանձնահատկությունները։

Աղբյուրներ և գրականություն

1. Ծառայություն հանուն Իսրայելի կայք՝ http://www.sar-el.org
2. *Կ. Վերանյան*, «Իսրայելի նավթագազային սեկտորը», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15163&sphrase_id=62390
3. Համաշխարհային հրեական կոնգրես (World Jewish Congress), http://www.worldjewishcongress.org/ru/about
4. В Израиле стартовала неделя евреев мира, http://jewishnews.com.ua/ru/publication/b_izraile_startovala_nedelya_evreev_mira
5. Впервые в Израиле отмечается неделя, посвященная связям с еврейством диаспоры, http://www.vaadua.org/news/vpervye-v-izraile-otmechaetsya-nedelya-posvyashchennaya-svyazyam-s-evreystvom-diaspory
6. В Израиле вернулись к закону о еврейском характере государства, https://lenta.ru/news/2017/05/10/israel/
7. Гиюр, https://ru.wikipedia.org.
8. Диаспора – в гостях на Родине, http://www.isrageo.com/2017/03/06/diaspora/
9. Евроазиатский Еврейский Конгресс, http://eajc.org/
10. *Ежеменцев Сергей*, «Государство Израиль и израильская диаспора за рубежом в XXI веке: реалии и перспективы взаимодействия», https://refdb.ru/look/2833756.html,
11. Закон о еврейском характере Израиля разделил общество, http://ieshua.org/zakon-o-evrejskom-xaraktere-izrailya-razdelil-obshhestvo.htm

12. Израиль – диаспора: трещина углубляется, http://ndi.org.il//израиль_-_диаспора_трещина_углубляет/, http://mnenia.zahav.ru/Articles/4028/israel_diaspora
13. Израиль, Греция и Кипр будут дружить диаспорами, http://www.isrageo.com/2017/03/06/trimeet/
14. Израиль подписывает декларацию о межпарламентском стратегическом диалоге с Грецией и Кипром, http://itbusinessweek.com/israel-greece-cyprus/
15. Израиль, Греция и Кипр подписали совместные декларации, http://mkisrael.co.il/articles/2017/06/18/izrail-greciya-i-kipr-podpisali-sovmestnye-deklaracii.html
16. Кипр-Греция-Израиль: исторический саммит в Никосии», https://www.cyprus.kp.ru/daily/26486/3355755/,
17. Кипр и Израиль форсируют отношения в пику Турции, https://newdaynews.ru/inworld/383095.html
18. Кипр, Греция и Израиль договорились строить газопровод EastMed, https://teknoblog.ru/2016/01/29/54789
19. Министры утвердили законопроект о еврейском характере государства Израиль, http://newsru.co.il/israel/07may2017/zakon_707.html
20. Новая концепция взаимоотношений Израиль-Диаспора, http://www.vaadua.org/news/novaya-koncepciya-vzaimootnosheniy-izrail-diaspora
21. Рейтинг стран мира по уровню расходов на НИОКР, http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info
22. С 1948 года Израиль принял более 3 млн репатриантов, http://iland.tv/news/5400/С_1948_года_Израиль_принял_более_3_млн_репатриантов
23. СМИ: выступив «харедим», Нетаниягу испортил отношения с евреями США, http://newsru.co.il/israel/26jun2017/net_105.html
24. Таглит – Израиля по праву рождения, http://taglitww.birthrightisrael.com/sites/FSU/go/ru/fsu-default.html
25. Таглит – Израиля по праву рождения, http://taglitww.birthrightisrael.com/sites/FSU/TaglitBirthrightIsraelStory/Research/Pages/Jewish-Futures-Project-Oct_2012.aspx
26. Трехсторонняя встреча глав государств Кипра, Греции и Израиля», http://businessgreece.gr/greece-news/greece-politics/item/485-vstrecha-glav-gosudarstv-kipra-gretsii-i-izrailya

27. *Шимон Бриман*, «Министр Обороны Израиля Авигдор Либерман о единстве народа и страны», http://www.forumdaily.com/ministr-oborony-izrailya-o-edinstve-naroda-i-strany/
28. Электронная еврейская энциклопедия, «Галаха», http://www.eleven.co.il/article/11019
29. *Я.Файтельсон*, «Еврейское население в Израиле и диаспоре», http://evreimir.com/114710/16-02-07-faytel_jews/
30. http://www.jewish.ru/israel/days/2014/02/news994323205.php
31. Jewish Futures Project:The Impact of Taglit-Birthright Israel:2010 Update, http://taglitww.birthrightisrael.com/TaglitBirthrightIsraelStory/Research/Documents/Jewish.Futures.02.08.11.pdf
32. Libi_The Fund For Strenghening Israel's Defense https://www.libi-fund.org.il/index.php
33. Masa-Israel journey, http://www.masaisrael.org/ru
34. The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/ru/masa
35. The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/ru/tglt
36. The Jewish Agency for Israel, http://www.jewishagency.org/p2g-eng, http://www.jewishagency.org/onward-israel
37. Zionist organization of America» http://www.zoa.org

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Իրանական սփյուռքի ընդհանուր նկարագիրը

Իրանական սփյուռք հասկացության շրջանակները

Իրանական սփյուռքը կարելի է դիտարկել երկու իմաստով՝ լայն և նեղ։ *Լայն* իմաստով այն իրանական ծագմամբ և իրանալեզու այն բոլոր ժողովուրդների և անհատների ամբողջությունն է, որոնք բնակվում են ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության սահմաններից դուրս։ Այս տեսակետից սփյուռք են համարվում ոչ միայն արտասահմանյան հեռավոր երկրներում հաստատված իրանցիները, այլև Իրանի հարևան երկրներում և տարածաշրջաններում կոմպակտ (համախումբ) բնակվող իրանալեզու ընդհանրությունները (իրանական ժողովուրդները), ինչպիսիք են փուշտուններն Աֆղանստանում և Պակիստանում, թալիշները և թաթերն Ադրբեջանում, տաջիկները Տաջիկստանում և այլն։

Լայն իմաստով իրանական սփյուռքի թվաքանակը հասնում է չափազանց մեծ չափերի։ Համաձայն որոշ հաշվարկների՝ իրանալեզու ընդհանրությունների ընդհանուր թվաքանակը, ներառյալ՝ Իրանի Իսլամական Հանրապետության բնակչությունը, կազմում է 150-200 մլն։ Եթե այս թվից հանենք Իրանի Իսլամական Հանրապետության բնակչության թվաքանակը

(ավելի քան 80 մլն), ապա լայն իմաստով իրանական սփյուռքի թվաքանակը կկազմի 70-120 մլն։

Նեղ իմաստով իրանական սփյուռքը արտագաղթի հետևանքով այդ երկրին մոտ կամ հեռավոր երկրներում հաստատված իրանցիների՝ ԻԻՀ-ից դուրս եկածների և նրանց սերունդների ամբողջությունն է։ Այս դեպքում իրանական սփյուռքի թվաքանակը տարբեր հաշվարկներով կազմում է 4-5 մլն[1]։ Կան նաև ավելի համեստ տվյալներ՝ 2-4 մլն[2]։

Վերոհիշյալ երկու մոտեցումներից ո՞րն է առավել բնութագրական իրանական սփյուռքի համար։ Մենք հակված ենք դիտարկելու իրանական սփյուռքը նեղ իմաստով՝ դրանից դուրս թողնելով Իրանի հարևան երկրներում և տարածաշրջաններում կոմպակտ բնակվող իրանալեզու կամ իրանական ծագմամբ ընդհանրությունները։ Այս մոտեցման հիմքում ընկած են հետևյալ հանգամանքները.

Իրանի հարևան երկրներում կամ տարածաշրջանում կոմպակտ բնակվող իրանալեզու կամ իրանական ծագմամբ ընդհանրություններն, ըստ էության, ապրում են իրենց հայրենիքներում։ Կամ նվազագույնը՝ կարելի է ասել, որ այն տարածքները, որտեղ համախումբ կերպով բնակվում են հիշյալ ընդհանրությունները, վաղուց ի վեր՝ դարեր շարունակ բնակեցված են եղել նրանցով։ Եվ եթե նրանք անգամ բնիկ չեն, ապա դարեր շարունակ այդ շրջաններում բնակվելու հանգամանքն այդ երկրամասերին հայրենիքի արժեք է տալիս նրանց համար՝ վերածելով դրանք պատմական բնատարածքի։ Մի խոսքով՝ այդ ընդհան-

[1] Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora

[2] *Shirin Hakimzadeh*, Iran: A Vast Diaspora Abroad and Millions of Refugees at Home, www.migrationpolicy.org/article/iran-vast-diaspora-abroad-and-millions-refugees-home

րությունները համախումբ կերպով բնակվում են իրենց պատմական բնատարածքում: Մինչդեռ սփյուռք երևույթը բնորոշում է պատմական բնատարածքից կամ հայրենիքից դուրս գտնվելու հանգամանքը:

Որքան էլ այդ ընդհանրություններից շատերը լինեն պետականազուրկ կարգավիճակում (նկատի ունենք այլ պետությունների կազմում ազգային փոքրամասնության կարգավիճակով լինելու հանգամանքը), միևնույն է, սեփական պատմական բնատարածքում կոմպակտ բնակվելու հանգամանքը թույլ չի տալիս նրանց համարել սփյուռք՝ գոնե դասական իմաստով: Նույն տրամաբանությամբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Լեհաստանի կամ Դանիայի սահմաններում հայտնված գերմանացիները (գերմանախոսները) սփյուռք չեն Գերմանիայի համար, Մակեդոնիայի տարածքում ապրող ալբանացիները՝ Ալբանիայի համար և այլն:

Համեմատություն անցկացնելով հայ իրականության հետ՝ կարելի է ասել, որ Հայաստանը նույնպես ունի իր «լայն առումով» սփյուռքը, որի մեջ մտնում են Ջավախքի հայերը, Արևմտյան Հայաստանի տարածքում պահպանված ծպտյալ և իսլամացված հայության բեկորները: Թեև ջավախահայերը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի ծպտյալ և կրոնափոխ հայերը դասական առումով չեն հանդիսանում սփյուռք, այնուամենայնիվ, ՀՀ-ն, ի մասնավորի՝ Սփյուռքի նախարարությունը, իր գործունեության ծիրում ընդգրկում է նաև նրանց: Որոշակիորեն «լայն իմաստով» սփյուռք հասկացության մեջ են դիտարկվում նաև Իրանի հյուսիսային շրջանների՝ Խոյի, Սալմաստի և այլ շրջանների հայերը (նրանց հավաքական կերպով երբեմն անվանում

են նաև ուրմիացի հայեր՝ Ուրմիա լճի անունով), քանի որ այդ շրջանները մաս են կազմում պատմական Հայաստանին՝ Արևելյան Հայաստանի մի մասն են։ Այնուամենայնիվ, վերջիններս, մեծ մասամբ դիտվելով ընդհանուր Իրանի հայ համայնքի համատեքստում, համարվում են որպես նեղ իմաստով հայկական սփյուռքի մաս։

Վերոհիշյալ հանրույթներից շատերի պարագայում սփյուռքացումը տեղի է ունեցել աշխարհաքաղաքական գործընթացների արդյունքում. իրանական պետության սահմանների փոփոխության արդյունքում նրանք հայտնվել են Իրանի սահմաններից դուրս և այդ կերպ «սփյուռքացել»։ Ժամանակի ընթացքում ընդլայնվելով և փոքրանալով՝ իրանական պետությունը նախ որոշակի ժողովրդագրական յուրացման է ենթարկել իր սահմաններում հայտնված տարածքները, իսկ այնուհետև տարածքային կորուստների հետևանքով այդ տարածքներում հայտնված իրանական ժողովուրդը հայտնվել է սփյուռքի կարգավիճակում։ Իրանական պետության սահմանների փոփոխությունների արդյունքում ձևավորված իրանական սփյուռքը կազմում են ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության հարևան երկրների (Աֆղանստան, Տաջիկստան, Ադրբեջան և այլն) իրանական ծագում ունեցող ժողովուրդները։ Օրինակ՝ թալիշները, թաթերն Ադրբեջանում, փուշտունները՝ Աֆղանստանում և այլն։ Նրանք երբեմն հանդիսանում են ավտոխտոն՝ բնիկ ժողովուրդներ։ Տաջիկները նույնպես ունեն իրանական ծագում և դասվում են իրանական ժողովուրդների շարքին։

Առհասարակ, կայսրությունների փլուզումները կամ տարածքային կորուստները հանդիսանում են սփյուռքի առաջաց-

ման հիմք: Այդպես է առաջացել թուրքական սփյուռքը Մերձավոր Արևելքում, Բալկաններում և Արևելյան Եվրոպայի այլ երկրներում (օրինակ՝ Բուլղարիայում), ռուսական սփյուռքը հետխորհրդային երկրներում, երբ նախկինում միևնույն կայսրության սահմաններում բնակվող թուրքերը կամ ռուսներն Օսմանյան կայսրության և ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվեցին իրենց պետությունների սահմաններից դուրս՝ սփյուռքի կարգավիճակում: Ընդ որում, հետխորհրդային երկրների ռուսները (մոտ 25 մլն մարդ) կազմում են ընդհանրապես ռուսական սփյուռքի (մոտ 30 մլն մարդ) գերակշիռ մեծամասնությունը:

Իսկ Իրանն այն երկիրն է, որտեղ միշտ էլ թարմ են պատմական հիշողությունը և նախկին սահմանները վերականգնելու ձգտումը, ինչը ենթադրում է ներկայում որպես սփյուռք դիտվող հանրություններից շատերի միավորում Իրանին և այդ կերպ նրանց սփյուռքի կարգավիճակի դադարեցում: Մինչդեռ սփյուռքը տարածքային առումով իրենց միավորելու քաղաքականություն պետությունների կողմից սովորաբար չի տարվում:

Այդ ընդհանրությունների մի մասն ունի իր պետականությունը՝ ի դեմս ազգային պետության, որը գտնվում է իրենց կոմպակտ բնակության տարածքում և կրում է իրենց անվանումը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է տաջիկներին, որոնց պետությունը Տաջիկստանն է: Իսկ սեփական պետություն ունեցող ընդհանրությունն ինքնին չի կարող սփյուռք համարվել: Այնպես, ինչպես միջնադարում Կիլիկիայի հայոց թագավորությունը չէր կարող դիտվել որպես հայկական սփյուռք (Կիլիկիայի հայությունը հետագայում էլ չընկալվեց որպես սփյուռք): Կամ անգլիացիների համար սփյուռք չեն կարող համարվել ԱՄՆ-

ում, Կանադայում, Նոր Զելանդիայում, Ավստրալիայում բնակվող անգլոսաքսերը, քանի որ այդ պետությունները նրանց պետություններն են: Նույնը կարելի է ասել Քվեբեկի ֆրանսիացիների մասին և այլն: Նույն տրամաբանությամբ ավստրիացիները կամ Շվեյցարիայի համադաշնության գերմանախոսները չեն դիտվում որպես գերմանական սփյուռք: Այլապես արաբական պետությունները պետք է միմյանց դիտեին որպես սփյուռք: Նույնը վերաբերում է իսպանախոսներին. այդ նույն տրամաբանությամբ Մեքսիկան, Լատինական (Հարավային) Ամերիկայի իսպանախոս պետությունները պետք է սփյուռք համարվեին Իսպանիայի համար: Վերջապես, այդ նույն տրամաբանությամբ հայկական սփյուռքի մեջ պետք է ընդգրկված լիներ նաև ԼՂՀ-ում բնակվող արցախահայությունը:

Մեր հետազոտություններում սփյուռքը դիտվում է որպես ռեսուրս, որը կոչված է մեծացնելու ազգային ներուժը: Այդ առումով սփյուռքը որպես ներուժ ընկալվում է երեք հարթության մեջ՝ քաղաքական (նկատի ունենք առաջին հերթին լոբբիստական գործունեության միջոցով հայրենի պետության արտաքին քաղաքականությանը նպաստելը), տնտեսական և գիտական: Մինչդեռ Իրանի համար հարևան երկրներում և տարածաշրջաններում կոմպակտ բնակվող ազգակից ընդհանրությունները մեծ հաշվով չունեն այդպիսի ներուժ: Նրանք, գտնվելով պետականազուրկ հանրությունների կարգավիճակում, ենթարկվելով ազգային (կրոնական) հալածանքների իրենց պետության տիտղոսակիր ազգի կողմից (ինչպես, օրինակ, Ադրբեջանի թալիշների և թաթերի պարագայում), գտնվելով իրավազուրկ դրության մեջ և ապրելով աղքատության ու հետամնացու-

թյան պայմաններում, իրենք առաջին հերթին ունեն աջակցության կարիք։ Ինչ վերաբերում է Տաջիկստանին, ապա Իրանն իր քաղաքակրթական զարգացածության աստիճանով, ռազմական, տնտեսական, գիտական ներուժով, քաղաքական ազդեցության մակարդակով շատ ավելի բարձր է նրանից։

Մի խոսքով, Իրանի հարևան երկրների և տարածաշրջանների ազգակից ընդհանրությունները ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ գիտական առումով ռեսուրս չեն դիտվում։ Նրանք կարող են համարվել միայն որպես ժողովրդագրական գործոն այդ երկրի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում։

Այսպիսով, սույն հետազոտության մեջ իրանական սփյուռքը դիտարկվելու է նեղ իմաստով՝ որպես հիմնականում արտագաղթի հետևանքով Իրանից հեռու կամ մոտ գտնվող երկրներում հայտնված իրանցիների ամբողջություն։

Իրանական սփյուռքի ձևավորման գործընթացը

Չնայած դարեր շարունակ Իրանը եղել է մեծաքանակ երկկողմ միգրացիայի (ներգաղթի և արտագաղթի) թատերաբեմ, այնուամենայնիվ, ժամանակակից իրանական սփյուռքի ձևավորումը մեծ հաշվով պայմանավորված է 20-րդ դարի կեսից այդ երկրից ծավալված արտագաղթով դեպի Ամերիկա և Եվրոպա։ Հետազոտող Շիրին Հաքիմզադեն առանձնացնում է 20-րդ դարի կեսից մինչ օրս ծավալվող արտագաղթի երեք ալիք։

Առաջինն ընդգրկում է 1950 թվականից մինչև իսլամական հեղափոխությունն (1979թ.) ընկած ժամանակաշրջանը։ Այս փուլում արտագաղթողները հիմնականում ուսանողներն ու

ասպիրանտներն են, որոնք տասնյակ, անգամ հարյուր հազարներով մեկնում էին ԱՄՆ, Կանադա, եվրոպական երկրներ (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Շվեդիա և այլն)՝ այդ երկրների բուհերում ուսանելու նպատակով: Բացի միջուկային և հրթիռաշինական ծրագրերից, ինչի մասին մանրամասն կխոսվի ստորև՝ գիտական սփյուռքին նվիրված մասում, ուսանողների այս հսկայական տեղաշարժը պայմանավորված էր շահական վարչակարգի օրոք Իրանում սոցիալ-տնտեսական ոչ բավարար մակարդակով և դրանից բխող՝ թույլ կրթական համակարգով: Պատահական չէ, որ արտերկիր սովորելու մեկնած ուսանողների մեծ մասն ուսումն ավարտելուց հետո հաստատվում էր տվյալ երկրում՝ հետագայում այնտեղ հրավիրելով նաև իր ընտանիքի անդամներին:

Երկրորդ ալիքը սկսվում է 1979թ.՝ իսլամական հեղափոխությունից հետո և տևում մինչև 1995թ.: Այս փուլում արտագաղթն Իրանից ուներ քաղաքական դրդապատճառներ, պայմանավորված էր հիմնականում քաղաքական սահմանափակումներով ու հալածանքներով: Իսլամական հեղափոխությունից հետո Իրանը լքում էին շահական ընտանիքի անդամները, շահական վարչակարգի կողմնակիցները, այդ թվում՝ զինվորականության մի որոշ հատվածը, ազատական և սոցիալիստական քաղաքական ուժերի և հայացքների ներկայացուցիչները:

Այս փուլում մեծ էր նաև մտավորականների արտագաղթը: Համաձայն այդ երկրի մշակույթի և բարձրագույն կրթության նախարարության տվյալների՝ իսլամական հեղափոխության նախօրեին Իրանի բուհերում աշխատող պրոֆեսորների ընդհանուր թիվը կազմում էր 16 հազ. 222: Հեղափոխությունից հետո այդ թի-

վը կրճատվեց գրեթե կիսով չափ՝ հասնելով 9 հազ. 42-ի (1982թ. դրությամբ)[1]։ Ճիշտ է, հեղափոխությունից հետո՝ 1980թ., Իրանում տեղի ունեցավ բոլոր համալսարանների փակում և ապա վերաբացում (1982թ.)[2], ինչը ենթադրում է, որ պրոֆեսորների մի մասը կարող էր աշխատանքի չվերցվել համալսարանների վերաբացումից հետո կամ այդ ընթացքում փոխել գործունեության ոլորտը, այնուամենայնիվ, նրանց թվաքանակի նման կտրուկ անկումը կարող է բացատրվել հիմնականում արտագաղթով։ Իսկ արտագաղթի հիմնական պատճառներից մեկն էլ ամենայն հավանականությամբ նոր վարչակարգի անընդունելիությունն է եղել նրանց համար (կարծում ենք, համալսարանների փակման հետևանքով առաջացած գործազրկության խնդրի հաղթահարումը փոքր, եթե չասենք աննշան կամ լիովին զրոյական դեր է խաղացել այս հարցում)։ Մեծ է հավանականությունը, որ այդ պրոֆեսորները (կամ նրանց մի մասը) նախկինում արևմտյան երկրներում կրթություն ստացածներն էին։

Հետհեղափոխական Իրանում արտագաղթողների ալիքի մեջ մեծ տեղ ունեին կանայք, որոնց համար անընդունելի էին կրոնական գաղափարախոսությամբ և նորմերով թելադրվող սահմանափակումները։ Ընդհանրապես համարվում է, որ դուստր ունենալը արտագաղթի լուրջ դրդապատճառ է իրանական ընտանիքի համար։

Արտագաղթի երկրորդ ալիքը ամենամասշտաբայինն էր և ընդգրկում էր իրանական հասարակության գրեթե բոլոր շերտերը։ «Իսլամական հանրապետության հաստատումը և Իրաքի ներխուժումն Իրան ավելի պակաս, քան մեկ տարի անց՝ 1980թ.,

[1] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.։
[2] Նույն տեղում։

միասնաբար սկիզբ դրեցին երկրից արդի մեծ արտագաղթին: Այս շրջանի էմիգրանտների մեջ էր նախահեղափոխական իրանական հասարակության բոլոր դասերի համաձուլվածքը՝ աշխարհիկ իրանցիները և լիբերալները, կոմունիստները, ընդդիմադիր խմբերը և հասարակ իրանցիները, որոնք պարզապես հայտնվել էին աննպաստ դրության մեջ Իրանի նկարագրի փոփոխության արդյունքում (քաղաքացիական իրավունքների սահմանափակումներ, գենդերային անհավասարություն, հիջաբ պարտադրող օրենքներ և այլն) և ձգտում էին ավելի խոստումնալից ապագայի իրենց և իրենց երեխաների համար»[1]:

Այն, որ Իրանից արտագաղթն առավել մեծ չափեր է ընդունել 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո, երևում է ԱՄՆ իրանական համայնքի օրինակով՝ վերջինիս թվաքանակի աճի դինամիկայից: 1965թ. այն եղել է փոքրաթիվ համայնք, որի թվաքանակը կազմում էր մոտ 15 հազ.: Մինչև 1980թ. այդ թիվն աճելով հասել է 121 հազ.-ի: 1990թ. ԱՄՆ իրանական համայնքի թվաքանակը հաշվում էր 800 հազ.-ից մինչև 1.1 մլն[2]:

Մարդկային կապիտալի արտահոսքն իր հետ բերում էր նաև ֆինանսական կապիտալի արտահոսք: Ըստ փորձագիտական գնահատականների՝ հեղափոխական շրջանում Իրանից դուրս բերված կապիտալը կազմել է $30-40 մլրդ[3]:

Կա ևս մեկ հետաքրքրաշարժ հանգամանք: Արտագաղթի երկրորդ ալիքի ընթացքում մեկնածները, ըստ իրենց ինքնըն-

[1] *Sam Sasan Shoamanesh*, Iran is a riddle, wrapped in a mystery, inside an enigma. But what of the over three million Iranians outside Iran?, http://globalbrief.ca/blog/2009/11/01/on-the-iranian-diaspora/
[2] The Persian Diaspora, http://www.farsinet.com/pwo/diaspora.html
[3] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:

կալման, Իրանը չեն լքել ընդմիշտ: Նրանց մեծ մասը պահպանել է այնտեղ իր շարժական և անշարժ գույքը, ինչը նշանակում է, որ նրանք ժամանակավոր են հեռացել իրենց երկրից՝ վերադառնալու հույսով: Այս ընկալումն իրանցի միգրանտներին բնորոշ էր հատկապես սկզբնական շրջանում: Ինչպես նշում է Լոս Անջելեսում առաջին իրանական հեռուստաընկերության հիմնադիր Ալի Լիմոնադին, «Այդ ժամանակ մենք կարծում էինք, որ կվերադառնանք Իրան վեց ամսից: Մենք կարծում էինք, որ իրավիճակը կկարգավորվի, և մարդիկ կկարողանան վերադառնալով շարունակել իրենց կյանքը տանը: Մեզնից ոմանք նույնիսկ լիովին չէին բեռնաթափել պայուսակները»[1]:

Այս երևույթը դրսևորվում էր նաև ԱՄՆ-ում այդ ժամանակ նոր հիմնված իրանական լրատվամիջոցների տեղեկատվական քաղաքականությամբ: Իրանական հեռուստաընկերություններից մեկով հարցազրույցի ժամանակ մի իրանցի հոգեբան հայրենակիցներին կոչ է անում. «Հիշե՛ք տանը երեխաների հետ խոսել պարսկերեն: Մի՛ խոսեք անգլերեն նրանց հետ, քանի որ նրանք կունենան շատ հնարավորություններ դրա համար դպրոցում և տնից դուրս, քանի դեռ Ամերիկայում են: Սա կարևոր է, որպեսզի, երբ մենք վերադառնանք Իրան, նրանց վրա (անգլերենի, ամերիկյան մշակույթի- *Վ.Հ.*) ազդեցությունը պակաս լինի»[2]:

Այս երևույթն առհասարակ բնորոշ է բոլոր միգրանտներին՝ անկախ երկրից: Այնուամենայնիվ, այն ևս մեկ անգամ ցույց

[1] *Amir Bagherpour*, The Iranian Diaspora in America: 30 Years in the Making, http://www.pbs.org/wgbh/pages/frontline/tehranbureau/2010/09/the-iranian-diaspora-in-america-30-years-in-the-making.html

[2] Նույն տեղում:

է տալիս, որ հետհեղափոխական Իրանում արտագաղթն ուներ առաջին հերթին քաղաքական դրդապատճառներ։

Ինչևէ, Իրանից արտագաղթի յուրահատուկ դրդապատճառներն էլ, ըստ էության, մեծապես պայմանավորել են իրանական սփյուռքի նկարագիրը։ Այն զգալիորեն բաղկացած է տվյալ երկրի լեզվին տիրապետող, կրթական բարձր մակարդակ և մասնագիտական բարձր որակներ ունեցող մարդկանցից։ Իրանից արտագաղթողները ոչ թե օտար լեզու չիմացող, ցածր կրթական և մասնագիտական որակներ ունեցող մարդկանց ամբողջություն էին, այլ հիմնականում հակառակը՝ վերը հիշատակված հատկությունների կրողներ։

Այդ է պատճառը, որ իրանական սփյուռքի ներկայացուցիչներն ամենատարբեր ոլորտներում (քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլն) բարձր դիրքերի են հասնում իրենց բնակության երկրներում։ Նրանք հանդես են գալիս որպես բարձրաստիճան պետական ծառայողներ կամ միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ, լրագրողներ, գիտնականներ, համալսարանների դասախոսներ, արվեստի և մշակույթի գործիչներ, հաջողակ գործարարներ։ Սփյուռքում հայտնված իրանցիների մեջ զգալի թիվ էին կազմում նաև ձեռնարկատիրական ձիրք ունեցողները, որոնք արտասահմանում հանդես էին գալիս որպես հաջողակ գործարարներ։ Ինչպես նշվում է, օրինակ, ԱՄՆ իրանական սփյուռքի վերաբերյալ, «Շատերը գալիս են Միացյալ Նահանգներ փողով, արդեն անգլերենը սովորած, տիրապետում են լավ կրթության և ունեն ուժեղ հիմքեր բիզնեսում»[1]։

[1] The Persian Diaspora, http://www.farsinet.com/pwo/diaspora.html

Կրթական նկարագրի առումով, օրինակ, համաձայն Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի Իրանական հետազոտությունների խմբի (*Iranian Studies Group*) տվյալների, որոնք հաստատվում են 2000թ. ԱՄՆ մարդահամարի տվյալներով, ԱՄՆ-ում բնակվող 25 տարին լրացած իրանցիների ավելի քան մեկ քառորդն ուներ նվազագույնը բակալավրի աստիճան, ինչը ամենաբարձր ցուցանիշն էր այդ երկրի 67 էթնիկ խմբերի մեջ[1]: ԱՄՆ 1990թ. մարդահամարի տվյալներն ավելի տպավորիչ թվեր են ներկայացնում: Համաձայն այդ տվյալների՝ ամերիկյան իրանցիների 84%-ը գերազանց տիրապետում էր անգլերենին (չնայած ոչ անգլիախոս երկրից գալու հանգամանքին), իսկ 46%-ն ուներ բարձրագուն կրթություն (բակալավրի աստիճան և ավելի բարձր)[2]:

Կառավարչական և գործարարության առումներով, համաձայն 1990թ. մարդահամարի տվյալների՝ ամերիկյան իրանցիների 43%-ը զբաղեցնում էր պրոֆեսիոնալ և կառավարչական, իսկ 35%-ը՝ տեխնիկական և վարչական պաշտոններ, 22%-ն ուներ սեփական բիզնես[3]:

Բարեկեցության ցուցանիշով, օրինակ, ԱՄՆ իրանական համայնքի՝ մեկ շնչին ընկնող միջին եկամուտը 50%-ով գերազանցում էր այդ երկրի ընդհանուր բնակչության նույն ցուցանիշը (2000թ. մարդահամարի տվյալներով)[4]: 1990թ. մարդահամարի

[1] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.; *Holly Dagres*, Diaspora Blues: Why the Iranian Diaspora in the United States Disappoints Me, http://www.huffingtonpost.com/holly-dagres/iranian-americans_b_2219651.html; A Closer Look at the Iranian Diaspora, http://www.iranandbeyond.com/a-closer-look-at-the-iranian-diaspora.html

[2] The Persian Diaspora, http://www.farsinet.com/pwo/diaspora.html

[3] Նույն տեղում:

[4] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.; *Holly Dagres*, նշվ. աշխ.; A Closer Look at the Iranian Diaspora, http://www.iranandbeyond.com/a-closer-look-at-the-iranian-diaspora.html

տվյալներով՝ ամերիկյան իրանցիների միջին ընտանեկան եկամուտը կազմում էր $55 հազ. 501, այն դեպքում, երբ ընտանեկան եկամտի ազգային միջինը ԱՄՆ-ում կազմում էր $35 հազ. 492[1]:

Երրորդ ալիքը սկսվում է 1995-ից և շարունակվում մինչև մեր օրերը: Այս փուլին բնորոշ է այն, որ, բացի պրոֆեսիոնալ բարձր կարողություններ ունեցողներից, արտագաղթում են նաև մեծ քանակությամբ հասարակ մարդիկ՝ ունակ հիմնականում ֆիզիկական աշխատանքի: Այսինքն, եթե առաջին երկու փուլերում արտագաղթն Իրանից ուներ կրթական և քաղաքական դրդապատճառներ, ապա երրորդ փուլում դրանց ավելանում է նաև սոցիալ-տնտեսականը (գործազրկություն, ցածր կենսամակարդակ և այլն):

Ներկայում տարբեր ոլորտներում հաջողությունների և բարձր դիրքերի հասած իրանական սփյուռքի ներկայացուցիչներից կարելի է հիշատակել *CNN* հեռուստաընկերության լրագրող Քրիստիան Ամանփուրին[2] (*Christiane Amanpour*)՝ Էմմիի մրցանակակիր, տիեզերքի առաջին կին մասնավոր հետազոտող Անուշեհ Անսարիին (*Anousheh Ansari*), *NASA*-ի ականավոր ճարտարագետ Բոբակ Ֆերդովսիին (*Bobak Ferdowsi*), *eBay*-ի համահիմնադիր Պիեր Օմիդյարին (*Pierre Omidyar*), Ջոն Հոփքինսի համալսարանի Արդի միջազգային հետազոտությունների դպրոցի դեկան, Բարաք Օբամայի վարչակազմում քաղաքական խորհրդական Վալի Նասրին (*Vali Nasr*) և ուրիշների[3]: Նշանավոր են նաև ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան դիվա-

[1] The Persian Diaspora, http://www.farsinet.com/pwo/diaspora.html;
տե՛ս նաև *Holly Dagres*, նշվ. աշխ.:
[2] A List of Just Some of the High Profile Iranians Outside Iran,
http://www.iranandbeyond.com/high-profile-iranians-outside-of-iran.html
[3] *Holly Dagres*, նշվ. աշխ.:

նագետ, գեներալ Դեյվիդ Փեթրիուսի (*General David Petraeus*) նախկին քաղաքական խորհրդական Ռամին Ասգարդը (*Ramin Asgard*)[1] և հայտնի լրագրող Հուման Մաջդը (*Hooman Majd*), որը հոդվածներ է հեղինակում ամերիկյան այնպիսի գլխավոր պարբերականում, ինչպիսին է, օրինակ, «*Vanity Fair*»-ը: Լրագրության ոլորտում ԱՄՆ իրանական սփյուռքի նշանավոր ներկայացուցիչ է նաև *BBC* հեռուստաընկերության Վաշինգտոնի մասնաճյուղի Պարսկական ծառայության թղթակից Մուհամեդ Թաբարը:

Բազմաթիվ իրանցիներ հաստիքային աշխատողի կարգավիճակով ամենատարբեր գիտակարգեր են դասավանդում ԱՄՆ հեղինակավոր բուհերում, ինչպիսիք են Բերքլիի, Հարվարդի, Ելի, Փրինսթոնի, Սթենֆորդի, Կոլումբիայի համալսարանները, ինչպես նաև Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը[2]:

Չնայած իրանական սփյուռքի ամենամեծ համայնքը ԱՄՆ-ում է և, հետևաբար, այստեղ է կենտրոնացված նրա հիմնական մտավոր, քաղաքական, տնտեսական ներուժը, այնուամենայնիվ, այլ երկրներում նույնպես իրանական սփյուռքն ունի հնարավորություններ: Օրինակ, Եվրոպայում՝ Մեծ Բրիտանիայում, լրագրության ոլորտում իրանական սփյուռքի հայտնի ներկայացուցիչ է «Եվրոնյուզ» հեռուստաընկերության (Լոնդոնի) թղթակից Ալի Խերադփիրը:

Համեմատություն անցկացնելով՝ նշենք, որ ձևավորման տեսանկյունից հայկական և իրանական սփյուռքերի միջև կա էական տարբերություն: Չնայած նախքան ցեղասպանությունը հայկական գաղթօջախների առկայությանն աշխարհի տարբեր

[1] *Amir Bagherpour*, նշվ. աշխ.:
[2] *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.:

երկրներում, ինչպես նաև հետխորհրդային շրջանում Հայաստանից սկիզբ առած արտագաղթին, այնուամենայնիվ, որպես հայկական սփյուռքի ձևավորման հիմնական գործոն գիտական գրականության մեջ համարվում է Հայոց ցեղասպանությունը: Բացի այդ, Հայկական սփյուռքն աչքի է ընկնում նաև ներքին տեղաշարժերով: 20-րդ դարի կեսից սկսած՝ նկատվում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից (այդ թվում՝ Իրանից), ինչպես նաև Արևելյան Եվրոպայից հայերի գաղթ դեպի արևմտյան աշխարհ՝ Արևմտյան Եվրոպայի երկրներ, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, ինչը շարունակվում է առ այսօր: Այդ պատճառով էլ արևմտյան աշխարհի, մասնավորապես՝ ԱՄՆ հայկական սփյուռքը բաժանվում է բազմաթիվ ենթամշակույթների՝ պոլսահայության, լիբանանահայության, իրանահայության և այլն:

Աշխարհագրական սփռվածությունը

Իրանական սփյուռքը տարածված է հիմնականում Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Ավստրալիայում, Ծոցի երկրներում, Մերձավոր և Միջին Արևելքում, Միջին Ասիայում: Համեմատություն անցկացնելով հայկական սփյուռքի սփռվածության հետ՝ նշենք, որ վերջինս նույնպես տարածված է Հյուսիսային Ամերիկայում (ԱՄՆ, Կանադա) և Եվրոպայում: Հայկական համայնքներ կան նաև Ավստրալիայում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում (այս տարածաշրջանը հանդիսանում է հայկական դասական սփյուռքի տարածման գոտի), ինչպես նաև Միջին Ասիայում:

Սակայն, ի տարբերություն իրանական սփյուռքի՝ հայկականը նոր է ձևավորվում Ծոցի երկրներում: Այստեղ իրանական

սփյուռքն առավելություն ունի հայկականի նկատմամբ: Իրանական սփյուռքը, սակայն, փոքրաթիվ է հետխորհրդային տարածաշրջանում՝ չհաշված միջինասիական երկրները: Այստեղի իրանական համայնքների ձևավորումը հիմնականում պայմանավորված է իրանցի ուսանողների և ասպիրանտների՝ այս երկրներում սովորելու հանգամանքով: Մինչդեռ հետխորհրդային երկրներում հայերն ունեն խոշոր համայնքներ: Միայն Ռուսաստանի հայությունը թվաքանակով առաջին տեղում է Սփյուռքի համայնքների շրջանում: Իրանական համայնքներ չկան նաև Լատինական կամ Հարավային Ամերիկայի երկրներում: Մինչդեռ այս տարածաշրջանի որոշ երկրներում (Չիլի, Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա) առկա են շոշափելի հայ համայնքներ:

Իրանական սփյուռքի ամենամեծ համայնքը ԱՄՆ-ում է: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ ԱՄՆ իրանական համայնքի թվաքանակը կազմում է մոտ 330 հազ.: Մինչդեռ ոչ պաշտոնական տվյալներն ավելի մեծ թվեր են մատնանշում՝ 691 հազարից մինչև 1.2 մլն[1]: ԱՄՆ իրանական համայնքի թվաքանակը երբեմն հասցվում է անգամ 1.5 մլն-ի): Հայկական սփյուռքի պարագայում էլ ԱՄՆ հայկական համայնքը դասվում է ամենախոշոր համայնքների թվին: Քանակապես այն զիջում է միայն Ռուսաստանի հայ համայնքին (ոչ պաշտոնական տվյալներով՝ մոտ 2.5 մլն)՝ զբաղեցնելով երկրորդ տեղը: Ինչպես ԱՄՆ հայկական սփյուռքի պարագայում, իրանական սփյուռքը նույնպես կենտրոնացած է Կալիֆորնիայում: Այստեղ իրանցիների թվաքանակը գերազանցում է ԱՄՆ մյուս բնակավայրերի

[1] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.; A Closer Look at the Iranian Diaspora, http://www.iranandbeyond.com/a-closer-look-at-the-iranian-diaspora.html

իրանցիների թվաքանակը՝ միասին վերցրած: Կալիֆորնիայում իրանական սփյուռքը նույնպես, հայկականի նման, հիմնականում կենտրոնացած է Լոս Անջելեսում: Հոլիվուդում Փոքր Հայաստան (*Little Armenia*) թաղամասի նման կա նաև իրանական թաղամաս, որը կոչվում է Փոքր Պարսկաստան (*Little Persia*)[1]:

Վերն արդեն որոշակիորեն խոսվել է ԱՄՆ իրանական համայնքի ներկայացուցիչների անհատական որակների մասին, որն ընդհանուր առմամբ թույլ է տալիս պատկերացում կազմել այդ առնչությամբ: Ստորև մի փոքր կխոսենք կազմակերպչական կառույցների վերաբերյալ:

Այսպես, Լոս Անջելեսում են կենտրոնացած մեծ թվով իրանական կազմակերպչական կառույցներ: Վերջիններիս թվում նշանավոր են հատկապես տեղեկատվական հաստատությունները: Այստեղ գործում է պարսկալեզու քսան հեռուստա- և հինգ ռադիոկայան, որոնք իրենց հեռարձակումները սփռում են ԱՄՆ, Եվրոպայի և անգամ Իրանի տարածքում, չնայած Իրանի տարածքում նման հեռարձակումներն անօրինական են[2]: Առաջին իրանական հեռուստատեսությունն ԱՄՆ-ում (Լոս Անջելեսում) սկսել է հեռարձակումները 1981թ. մարտի 15-ից: Այն կոչվում էր Իրանական հեռուստատեսություն (կրճատ՝ *IRTV, Iranian Television*)[3]:

Պակաս նշանավոր չեն նաև քաղաքական մասնակցության գործառույթ կատարող (դրա համար ստեղծված կամ նախատեսված) հաստատությունները՝ լոբբիստական կազմակերպությունները: Վերջիններից նշանավոր են Ամերիկայի իրանա-

[1] The Persian Diaspora, http://www.farsinet.com/pwo/diaspora.html
[2] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:
[3] *Amir Bagherpour*, նշվ. աշխ.:

կան ազգային խորհուրդը (*National Iranian American Council - NIAC*), Իրանյան ամերիկացիների հանրային գործերի դաշինքը (*The Public Affairs Alliance of Iranian Americans – PAAIA*), Իրանական դաշինքներ առանց սահմանների (*Iranian Alliances Across Borders – IAAB*) կազմակերպությունը:

Ինչպես արդեն նշվել է, Իրանից արտագաղթի հիմնական ուղղություններն արևմտյան երկրներն են՝ ԱՄՆ-ը, Կանադան, եվրոպական երկրները: Սակայն վերջին շրջանում որպես նոր ուղղություն հանդես են գալիս Ծոցի երկրները, մասնավորապես՝ ԱՄԷ-ն: Ուստի, պատահական չէ, որ իրանական սփյուռքի մեծությամբ երկրորդ համայնքը Արաբական Միացյալ Էմիրություններում է, որտեղ իրանցիների թվաքանակը հասնում է մինչև 200 հազարի: Սույն հանգամանքը պայմանավորված է ԱՄԷ-ի՝ Իրանին մոտ լինելու հանգամանքով, որը միևնույն ժամանակ նպաստավոր տարածք է գործարարության և տուրիզմի համար: Ուստի, պատահական չէ, որ այստեղ արտագաղթում են առավելապես գործարար իրանցիները՝ փնտրելով տնտեսական ավելի բարենպաստ միջավայր և օրենսդրական ավելի ազատական պայմաններ իրենց բիզնեսի համար:

ԱՄԷ-ում առաջին հերթին կենտրոնացված է լուրջ տնտեսական ներուժ: Իրանական կապիտալն այստեղ հայտնվել է նախքան իսլամական հեղափոխությունը: Ներկայում ԱՄԷ-ում առկա են խոշոր կապիտալի ներկայացուցիչ մի շարք իրանական ընտանիքներ: Վերջիններից ամենահարուստը Ալ-Խուրի ընտանիքն է, որի կարողությունը հասնում է մոտ $300 մլն-ի: Նրան հաջորդում է Ալ-Անսարի ընտանիքը, որի կապիտալը գնահատվում է ավելի քան $200 մլն: Հիշյալ ընտանիքներից

բացի, ԱՄԷ-ում նշանակալի են նաև Ալ-Մազուրի, Լարի, Ալ-Համմադի, Հարբաշ ընտանիքները։

ԱՄԷ-ում իրանական կապիտալը հիմնականում գործունեություն է ծավալում առևտրի և սպասարկման (ծառայությունների) ոլորտներում։ Բիզնեսի հիմնական ճյուղերն են բանկային գործը, արտարժույթի շուկան, պարենային և լայն սպառման ապրանքների առևտուրը, անշարժ գույքի շուկան, նավթամթերքի առևտուրը և այլն։ Օրինակ՝ Ալ-Անսարի ընտանիքը Դուբայի իսլամական բանկի խոշոր բաժնետեր է։

Ծառայությունների ոլորտում իրանական կապիտալի գործունեության հիմնական բնագավառներն են առևտրային միջնորդությունը և բեռնափոխադրումները (հիմնականում՝ ծովային)։

Ի տարբերություն առևտրի և սպասարկման ոլորտի՝ համեմատաբար թույլ է զարգացած արդյունաբերական ճյուղը։ Որպես ամենանշանակալի արդյունաբերական ուղղություն հանդես է գալիս ձկնարդյունաբերությունը (ձկնորսությունը և ծովամթերքի առևտուրը)։ Որոշակիորեն զարգացած են նաև ոսկերչությունը և կահույքագործությունը (ոսկյա իրերի, կահույքի արտադրությունն ու առևտուրը)։

ԱՄԷ-ում իրանական կապիտալի գործունեության հիմնական կենտրոններն են այդ երկրի խոշոր քաղաքներ Դուբայը և Աբու Դաբին։ Իրանական գործարար ընտանիքները, որպես կանոն, սերտ հարաբերություններ ունեն ԱՄԷ-ի իշխանական ներկայացուցիչների (շեյխերի) և նրանց ընտանիքների հետ։ Որոշ ընտանիքներ անգամ գերակա դիրք ունեն տնտեսության այս կամ այն ճյուղում։ Օրինակ՝ Լարի ընտանիքը վերահսկում է ձկնորսության և ծովամթերքի առևտրի ոլորտները[1]։

[1] Иранская диаспора в ОАЭ, http://www.emirat.ru/wiki/Иранская_диаспора_в_ОАЭ

ԱՄԷ-ի իրանական համայնքում նույնպես, բացի գործարար շերտից, կա այնպիսի շերտ, որն այս երկրում է հայտնվել իսլամական հեղափոխությունից հետո և դրա հետևանքով գտնվում է որոշակիորեն աննպաստ պայմաններում: Այդ շերտը բաղկացած է հոգևորականների կողմից հալածվող ոչ բարեկեցիկ մտավորականությունից, իրան-իրաքյան պատերազմի տարիներին զինծառայությունից խուսափած երիտասարդներից և սնանկացած գյուղացիությունից[1]:

Կապիտալի արտահոսքի հետ մեկտեղ մեծանում է նաև Ծոցի երկրներում սովորող իրանցի ուսանողների թիվը: 2006թ. տվյալներով՝ Դուբայում սովորող իրանցի ուսանողների թիվը կազմում էր մոտ 9 հազար[2]:

ԱՄԷ-ում իրանական համայնքի մի շերտն էլ կազմում են անլեգալ աշխատանքային միգրանտները: Վերջիններիս հոսքն այստեղ մեծ է եղել հատկապես 1980-90-ական թթ.: Նրանք հիմնականում որևէ մասնագիտություն, անգամ միջնակարգ կրթություն չունեցող, աղքատ զանգված են և հանդես են գալիս որպես էժան աշխատուժ: Աշխատանքային միգրանտները դուրս են եկել հիմնականում իրանյան Քրդստանից, Բելուջստանից և Իրանի չզարգացած ագրարային տարածաշրջաններից[3]:

Իրանական սփյուռքի՝ մեծությամբ երրորդ համայնքը Կանադայում է: Այն կազմում է մոտ 150 հազ.: Վերջինիս հաջորդում են Կատարն ու Գերմանիան՝ մոտ 100 հազարական ցուցանիշով: Այնուհետև գալիս են Շվեդիան և Մեծ Բրիտանիան՝ համա-

[1] Նույն տեղում:
[2] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:
[3] Иранская диаспора в ОАЭ, http://www.emirat.ru/wiki/Иранская_диаспора_в_ОАЭ

պատասխանաբար 54 հազ. և 58 հազ. ցուցանիշներով[1]: Համեմատության համար նշենք, որ ԱՄԷ-ում և Կատարում (Ծոցի երկրներ) հայ համայնքների թվաքանակը կազմում է համապատասխանաբար՝ մոտ 20 հազ. և 10 հազ., Կանադայում՝ 90 հազ., Գերմանիայում, Շվեդիայում և Մեծ Բրիտանիայում՝ համապատասխանաբար 50 հազ., 20 հազ. և 40 հազ.:

Ինչպես արդեն նշվել է վերը, իրանական սփյուռքը քանակապես փոքրաթիվ՝ գրեթե չնչին է հետխորհրդային երկրներում, չհաշված միջինասիական երկրները: Այդ սակավաթվությունն էլ թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել նրա բնույթի մասին: Այստեղի իրանական համայնքները հիմնականում բաղկացած են «հատուկ առաքելությամբ» իրանցիներից: Օրինակ, Մոսկվայի իրանական համայնքը (համաձայն 2002թ. մարդահամարի տվյալների՝ Մոսկվայում բնակվում էր ընդամենը 653 իրանցի, իսկ քաղաքից դուրս՝ Մոսկվայի մարզում, ընդամենը 120: Այն էլ՝ բացառված չէ, որ վերջինների մի մասը կարող էր լինել սամարղանդյան պարսիկ Ուզբեկստանից[2]), ՌԴ-ում ԻԻՀ-ի դեսպանատան և Իրանական մշակույթի կենտրոնի (Մոսկվա) աշխատակից, լրագրող, ինչպես նաև Ռուսաստանում որակավորումը բարձրացնելու կամ ուսումը շարունակելու եկած իրանցի ասպիրանտ: Վերջիններս այստեղ են գտնվում իրենց ընտանիքներով[3]:

Իրավական կարգավիճակի առումով իրանական սփյուռքը ևս, ինչպես գրեթե յուրաքանչյուր սփյուռք, բաժանվում է երկու հատվածի՝ տվյալ պետության քաղաքացի հանդիսացող-

[1] *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.:
[2] Иранская община в Москве, http://islamist.ru/иранская-община-в-москве/
[3] Նույն տեղում:

ներ և առանց քաղաքացիության փաստացի բնակվողներ (հաճախ՝ անօրինական)։ Բացի այդ, առհասարակ այս կամ այն երկրի որևէ համայնքի թվաքանակի վերաբերյալ տվյալների մասին խոսելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ երկու օրինաչափությունները.

ա) Գրեթե միշտ պաշտոնական վիճակագրությունն ավելի համեստ ցուցանիշներ է արձանագրում, քան ոչ պաշտոնական աղբյուրները, ինչը պայմանավորված է առաջին հերթին վերոհիշյալ քաղաքացիության և փաստացի բնակության գործոններով. պաշտոնական վիճակագրությունը մատնանշում է միայն քաղաքացիություն ունեցողներին՝ տվյալ երկրի հպատակներին, իսկ ոչ պաշտոնական աղբյուրները՝ նաև առանց քաղաքացիության փաստացի բնակվողներին։

բ) Տվյալ երկրի պաշտոնական վիճակագրությունը սովորաբար հակված է արհեստականորեն փոքրացնել օտարերկրացիների թվաքանակի վերաբերյալ տվյալները, մինչդեռ ոչ պաշտոնական (հատկապես տվյալ համայնքի կամ նրա հայրենի պետության) աղբյուրները, հակառակը՝ հակված են արհեստականորեն մեծացնել կամ ուռճացնել դրանք։

Այդ է պատճառը, որ այս կամ այն համայնքի թվաքանակի վերաբերյալ իրանական սփյուռքի պարագայում ևս կա կտրուկ տարբերություն պաշտոնական վիճակագրության և ոչ պաշտոնական տվյալների, տվյալ երկրի և իրանական աղբյուրների միջև։ Այս երևույթն ակնհայտ երևաց վերը՝ ԱՄՆ իրանական համայնքի օրինակով։ Նույն երևույթն առկա է նաև ԱՄԷ իրանական համայնքի պարագայում։ Այսպես, ԱՄԷ քաղաքացիություն ունեցող իրանցիների թվաքանակը, համաձայն այդ երկրի

պաշտոնական վիճակագրության, կազմում է մոտ 10 հազ., մինչդեռ ԱՄԷ-ում անօրինական գտնվող իրանցիներինը՝ 40 հազ.: Իսկ, համաձայն այդ երկրում ԻԻՀ դեսպանության տվյալների՝ իրանական համայնքի թվաքանակը կազմում է մոտ 100 հազ., մինչդեռ ոչ պաշտոնական իրանական տվյալները մատնանշում են 110-200 հազ.[1]:

Էթնիկ և կրոնական նկարագիրը

Ինչպես բնորոշ է բազմէթնիկ խոշոր երկրներին ընդհանրապես, իրանական սփյուռքը նույնպես բազմէթնիկ է: Այսինքն՝ նկատի է առնվում այդ երկրի տարածքում բնակվող բնիկ ժողովուրդների՝ արտերկրում հաստատված ներկայացուցիչների ամբողջությունը: Այսպես, իրանական սփյուռքի մեջ ընդգրկված են նախնառաջ այդ երկրի հիմնական էթնիկ խմբերի՝ պարսիկների (կազմում են Իրանի բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ 51%), թյուրքախոս իրանցիների՝ ազերիների (24%), գիլակիների և մազանդարանցիների (*Gilaki and Mazandaranis*) (8%), քրդերի (7%), արաբների (3%), լուրերի (2%), բելուջների (2%), թուրքմենների (2%)[2] արտասահմանյան ներկայացուցիչները[3]:

Այստեղ բացառություն չեն անգամ այն էթնիկ խմբերը, որոնք ունեն իրենց պետականությունը: Երբեմն իրանական սփյուռքի ներկայացուցիչ են դիտվում նաև տեղի հայ համայնքի՝ արտերկրում հաստատված ներկայացուցիչները: Օրինակ՝ ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ Հրանտ Մարգարյանը: ԱՄՆ հայ

[1] Иранская диаспора в ОАЭ, http://www.emirat.ru/wiki/Иранская_диаспора_в_ОАЭ

[2] Իրանի բնակչության հիմնական էթնիկ խմբերի վերաբերյալ սույն տվյալները վերցված են՝ *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:

[3] Այս էթնիկ խմբերը, լինելով հոգևոր-քաղաքակրթական առումով միմյանց մոտ և ընդհանուր հիմք ունեցող, համարվում են իրանական ժողովուրդներ:

համայնքի այնպիսի կարկառուն ներկայացուցիչներ, ինչպիսիք են Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի նախագահ Վարդան Գրեգորյանը, աշխարհահռչակ թենիսիստ Անդրե Աղասին, գործարար, *Y&S Nazarian Family Foundation*-ի հիմնադիր Դավիթ Նազարյանը, հագուստի դիզայներ, Էմմիի մրցանակակիր (Գորգեն) Ռայ Աղայանը (մահացել է 2011թ.), Կալիֆորնիայի Օրանժ շրջանի գերագույն դատարանի դատավոր Անդրե Մանսուրյանը իրանցիների կողմից համարվում են որպես իրենց՝ իրանական սփյուռքի ներկայացուցիչներ[1], ինչի պատճառն այն է, որ նրանք ծագումով այդ երկրից (այնտեղի հայ համայնքից) են։

Երկակի կարգավիճակ ունեն նաև թյուրքալեզու իրանցիների՝ արտասահմանում բնակվող ներկայացուցիչները։ Նրանք դիտվում են ինչպես իրանական (Իրանի կողմից), այնպես էլ ադրբեջանական (Ադրբեջանի կողմից) սփյուռքի մաս։ Օրինակ՝ ԱՄՆ-ում հայտնի ֆիզիկոս, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի գիտաշխատող, գյուտարար, գազային լազերի ստեղծող Ալի Ջավանը, շնորհիվ այն բանի, որ ծնվել է Թեհրանում, սակայն՝ թավրիզցի թյուրքալեզու ծնողների ընտանիքում, թե՛ իրանցիների և թե՛ ադրբեջանցիների կողմից դիտվում է որպես համապատասխանաբար՝ սեփական սփյուռքի ներկայացուցիչ[2]։

Իրանցիների կողմից սփյուռք են դիտվում անգամ Իրանից Իսրայել հայրենադարձված հրեաները, որոնց թվաքանակը

[1] Տե՛ս A List of Just Some of the High Profile Iranians Outside Iran, http://www.iranandbeyond.com/high-profile-iranians-outside-of-iran.html; *Amir Bagherpour*, նշվ. աշխ.։

[2] Տե՛ս *Ali Javan*, https://en.wikipedia.org/wiki/Ali_Javan#cite_note-4; Ali Javan with Betty Blair, Scientists Who Made A Difference: *Ali Javan*, The Gas Laser and Beyond, Azerbaijan International, Vol. 4:2, (Summer 1996), pp. 14-18, http://azer.com/aiweb/categories/magazine/42_folder/42_articles/42_javan.html

կազմում է մոտ 135 հազ.[1]: Բևերլի Հիլզի քաղաքապետ, էթնիկ հրեա Ջիմի Դելշադը նույնպես համարվում է ԱՄՆ իրանական համայնքի ներկայացուցիչ[2]:

Մեկ այլ էթնիկ տարր՝ քրդերը, թեև չունեն իրենց անկախ պետությունը, բայց՝ ա) արդեն ունեն պետականություն՝ ի դեմս իրաքյան Քրդստանի, որն ինքնավարություն է Հյուսիսային Իրաքում և բ) գտնվում են անկախ պետության ստեղծման ճանապարհին: Բացի այդ, քրդերի մեծ մասը բնակվում է Իրանի սահմաններից դուրս: Ու թեև նրանք ունեն առանձին սփյուռք, որը կապ չունի իրանական սփյուռքի հետ, այնուամենայնիվ, Իրանի քրդերի արտասահմանյան ներկայացուցիչները նույնպես դիտվում են որպես իրանական սփյուռքի մաս:

Այս հարցում միակ բացառությունը արաբներն են, որոնք մեծ թվաքանակով և համախումբ կերպով բնակվում են Իրանի Խուզիստան նահանգում: Վերջիններս չեն դիտվում որպես իրանական սփյուռքի «մատակարար»: Դրա հիմնական պատճառն այն է, որ արաբներն արդի աշխարհի ամենամեծ թվով պետություններ ունեցող ժողովուրդներից են, և հետևաբար՝ այլ երկրներում բնակվող արաբները (տվյալ պարագայում՝ Իրանի արաբները) իրենք են հանդիսանում արաբական սփյուռք:

Ի տարբերություն Իրանի՝ Հայաստանը հիմնականում մոնոէթնիկ երկիր է, որտեղ բնակչության ջախջախիչ մեծամասնությունը՝ ավելի քան 95%-ը, կազմում են հայերը: Ու թեև Հայաստանում էլ կան էթնիկ փոքրամասնություններ (նրանց մեջ՝ ինչպես պետականություն ունեցող ժողովուրդներ, օրինակ՝ ռուսներ,

[1] *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.:
[2] Տե՛ս *Amir Bagherpour*, նշվ. աշխ.:

հույներ, հրեաներ, այնպես էլ պետականազուրկ ժողովուրդներ, օրինակ՝ եզդիներ, քրդեր, ասորիներ), սակայն նրանց ներկայացուցիչները՝ անգամ Հայաստանից դուրս եկած, հիմնականում չեն դիտվում որպես հայկական սփյուռքի մաս, չնայած այդ ժողովուրդների հետ առկա որոշակի համագործակցությանը սփյուռքում: Հայաստանի ազգային փոքրամասնություններն իրենք են դիտվում որպես սփյուռք իրենց ժողովուրդների համար:

Իրանական սփյուռքը, բազմէթնիկությունից բացի, որոշ չափով աչքի է ընկնում նաև բազմակրոնությամբ: Թեև նրա գերակշիռ մասը կազմում են շիա իսլամ դավանողները, սակայն կան նաև սուննի իսլամի հետևորդներ: Այս տարաբաժանումը որոշակիորեն համընկնում է էթնիկ շերտավորվածությանը: Բանն այն է, որ սուննի իսլամի հետևորդներ են հանդիսանում քրդերը և բելուջները, ինչն արտահայտվում է նաև սփյուռքում: Օրինակ՝ Ռուսաստանի իրանական համայնքի սուննիադավան հատվածին են պատկանում հիմնականում քրդերը և բելուջները[1]:

Բացի իսլամից, իրանական սփյուռքի ներկայացուցիչների մեջ կան նաև զրադաշտականներ և բահայիականներ: Սրանք տարածված կրոններ են Իրանում, և արտագաղթածների մի մասն էլ, բնականաբար, այս կրոնների հետևորդ է: Իրանական սփյուռքի տարակրոն շերտերին են դասվում նաև այդ երկրից արտագաղթած հայերը (քրիստոնյաներ) և հրեաները (հուդայականներ):

Իրանական սփյուռքի պարագայում կա ևս մեկ հետաքրքիր երևույթ: Վերջինիս մի մասն ընդունում է քրիստոնեություն: Իրանական սփյուռքի ներկայացուցիչների որոշ մասի քրիստոնեացման պատճառները տարբեր են: Որպես այդպիսին

[1] Иранская община в Москве, http://islamist.ru/иранская-община-в-москве/

կարող է լինել պարզ գաղափարական փոփոխությունը (անկեղծ կրոնադարձությունը)։ Սակայն հաճախ լինում են այլ դրդապատճառներ ևս։ Օրինակ՝ արտաքսումից խուսափելու նպատակով իրանական սփյուռքի ներկայացուցիչներն ընդունում են քրիստոնեություն՝ փաստարկելով, որ Իրանում կրոնափոխության համար սահմանված է մահապատիժ, և այդ կերպ խուսափելով իրենց երկիր վերադարձից։

Բազմադավանության հարցում հայկական սփյուռքը որոշակի նմանություն ունի իրանականի հետ։ Այն նույնպես աչքի է ընկնում դավանական շերտավորվածությամբ՝ ի դեմս առաքելականների, կաթողիկեների և ավետարանականների։

Ինքնակազմակերպման խնդիրը

Իրանական սփյուռքը հայկականի համեմատ ավելի երիտասարդ է։ Սրանով է պայմանավորված նրա ինքնակազմակերպման և մասնակցության համեմատաբար ցածր աստիճանը։ Այն դեպքում, երբ հայկական սփյուռքն ունի ավելի քան հարյուրամյա կառույցներ, իրանական սփյուռքի պարագայում դրանք համեմատաբար երիտասարդ են։

Իրանական սփյուռքը սկսել է ինքնակազմակերպվել 1979թ. հեղափոխությունից հետո արտագաղթածների երկրորդ սերնդից սկսած։ Մինչ այդ՝ առաջին սերնդի ներկայացուցիչները հիմնականում զբաղված էին իրենց անհատական-ընտանեկան հարցերի կարգավորմամբ, և համայնքային ինքնակազմակերպման խնդիրը հրատապ չէր։ Երբ անհատական-ընտանեկան խնդիրները կարգավորվեցին, արդեն երկրորդ սերնդից սկսած՝ իրանական սփյուռքը քայլեր ձեռնարկեց նաև համայն-

քային ինքնակազմակերպման ուղղությամբ, և սկսեցին ձևավորվել նրա կազմակերպչական կառույցները։

Նույն կերպ երկար ժամանակ թույլ է եղել նաև իրանական սփյուռքի մասնակցությունը այս կամ այն երկրի քաղաքական կյանքին, մասնավորապես՝ ընտրություններին։ Միայն 1979թ. հեղափոխությունից հետո արտագաղթածների երկրորդ սերնդի ներկայացուցիչներն են սկսում մասնակցություն ցուցաբերել ընտրություններին և իրենց երկրների հասարակական-քաղաքական կյանքի այլ գործընթացներին։

Բացի անհատական-ընտանեկան հարցերի գերակշռությունից, երկրորդ սերնդի մակարդակով ինքնակազմակերպման և մասնակցության պատճառներից մեկն էլ, ամենայն հավանականությամբ, քաղաքացիության հարցն էր։ Առաջին սերնդի ներկայացուցիչները, չունենալով իրենց երկրների քաղաքացիություն, ինքնակազմակերպման և մասնակցության հարցում բախվելու էին անհաղթահարելի իրավական խոչընդոտների։ Երկրորդ սերնդի ներկայացուցիչների պարագայում, որոնք արդեն օժտված էին իրենց երկրների քաղաքացիությամբ, իրավական անհաղթահարելի խոչընդոտներ չկային։ 2009թ. հրապարակված մի հետազոտության համաձայն՝ ամերիկյան իրանցիների երեք քառորդը արդեն գրանցված էր ընտրացուցակներում որպես ընտրող, մոտ 30%-ը ներդրում (*contribution*) էր կատարում քաղաքական արշավներում և մոտավորապես նույնքանն էլ գրել էր առնվազն 1 նամակ ընտրված պաշտոնյաներին[1]։

Իրանական սփյուռքի թույլ ինքնակազմակերպվածությունը և մասնակցության ցածր աստիճանը դառնում են նաև վերջի-

[1] *Amir Bagherpour*, նշվ. աշխ.։

նիս կողմից ինքնաքննադատության պատճառ: Ամերիկայի իրանական ազգային խորհրդի (*National Iranian American Council - NIAC*) նախագահ Թրիթա Փարսիի գնահատմամբ՝ ամերիկյան ժողովրդավարությունում որևէ խմբի ազդեցությունն ուղիղ համեմատական է նրա մասնակցության չափին և ինտենսիվությանը քաղաքական համակարգի բոլոր ասպեկտներում՝ սկսած հանրային քննարկումներում ընդգրկվածությունից մինչև կամավորական աշխատանք, քվեարկություն, քաղաքական դրամահավաք և մրցապայքար պաշտոնի համար: Համակարգը պարգևատրում է ինտենսիվ մասնակցությունը և պատժում ինքնամարգինալացումն ու անտարբերությունը[1]:

Իրանական սփյուռքի քաղաքական պասիվությունը բացատրվում է նաև իրանցիների հոգեկերտվածքով: Իրենց հայրենիքում երկար ժամանակ ապրելով ավտորիտար (ոչ մասնակցային) քաղաքական համակարգի պայմաններում՝ նրանք աշխատել են զերծ մնալ ակտիվ քաղաքականությամբ զբաղվելուց: Եվ այդ մտայնությունն իներցիայի ուժով շարունակվում է նաև սփյուռքում: Քննադատելով սույն վարքագիծը՝ «Հաֆինգթոն փոսթում» իրանցի վերլուծաբան Հոլի Դագրեսը գրում է. «Անցել են այն օրերը, երբ ռեժիմի գործակալներն ընկնում էին դռնեդուռ և փնտրում այլախոհների»[2]: Նշելով, որ իրանցիները սփյուռքում ունեն արտահայտման ազատություն, հեղինակը վերջիններիս ավելի ակտիվ գործողությունների կոչ է անում:

Հայկական սփյուռքի պարագան, չնայած որոշակի նմանություններին, հիմնականում այլ է եղել: Խնդիրն այն է, որ հայկա-

[1] *Holly Dagres*, նշվ. աշխ.:
[2] Նույն տեղում:

կան կազմակերպչական կառույցներ Հայաստանի սահմաններից դուրս ստեղծվել են նաև նախքան ցեղասպանությունը: Ասել է թե՝ նախքան իր ձևավորումը հայկական սփյուռքն արդեն ունեցել է իր ինքնակազմակերպման կառույցները՝ ի դեմս հայկական կուսակցությունների, եկեղեցիների, բարեգործական կազմակերպությունների և այլն: Դրա շնորհիվ էր, որ, չնայած սկզբնական շրջանի խիստ անբարենպաստ հանգամանքներին, արտերկրում հայկական հասարակական-քաղաքական կյանքը, այնուամենայնիվ, միշտ էլ ունեցել է որոշակի ակտիվություն, և հայությունը միշտ էլ եղել է գործոն արտերկրում:

Հայկական սփյուռքի պարագայում նույնպես ցեղասպանությունից փրկվածների առաջին սերնդի ներկայացուցիչները, չունենալով իրենց երկրների քաղաքացիություն, լինելով ընչազուրկ, իրավազուրկ և հաճախ ծնողազուրկ (նրանցից շատերը որբ էին) կարգավիճակում, նույնպես առավելաբար զբաղված էին իրենց անձնական-ընտանեկան խնդիրների լուծման հոգսերով: Այս հարցում իրենք մեծ օգնության կարիք ունեին ինչպես հայկական բարեգործական, այնպես էլ միջազգային մարդասիրական կազմակերպություններից: Հարկ է նշել, որ այն ժամանակ ծանր էր նաև Սփյուռքի որոշ կազմակերպչական կառույցների վիճակը: Մասնավորապես, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, որը 1922թ. ստիպված եղավ լքել իր պատմական նստավայր Սիսը, երկարատև դեգերումներից հետո միայն 1930թ. կարողացավ հաստատվել Անթիլիասում (Լիբանան)՝ որպես կաթողիկոսական նստավայր: Հետևաբար, ցեղասպանությունից փրկվածների առաջին սերնդից հասարակական-քաղաքական մեծ ակտիվություն ակնկալելն իրատեսական չէր լինի:

Չնայած այս ամենին՝ շնորհիվ ինքնակազմակերպման այլ կառույցների (երեք ավանդական կուսակցություններ, ՀԲԸՄ և այլն) գործունեության, անգամ 1920-30-ական թթ. հայկական սփյուռքում եղել է որոշակի ակտիվ հասարակական-քաղաքական կյանք: Այնուամենայնիվ, հայկական սփյուռքի երկրորդ և հաջորդ սերունդների պարագայում, երբ մի կողմից հաղթահարված էին սոցիալ-կենցաղային խնդիրներ, մյուս կողմից՝ քաղաքացիության հարցը, այն ավելի ակտիվ հասարակական-քաղաքական գործոնի վերածվեց ինչպես միջազգային մակարդակով, այնպես էլ տվյալ երկրի կյանքում:

Իրան-սփյուռք փոխհարաբերությունները

Իրանի նկատմամբ սփյուռքի վերաբերմունքի դինամիկան

Ժամանակի ընթացքում իրանական սփյուռքի վերաբերմունքը հայրենի երկրի նկատմամբ ենթարկվել է որոշակի փոփոխության: Խոսքը, հատկապես, վերաբերում է իսլամական հեղափոխությունից հետո այդ երկրից հեռացած իրանցիներին, որոնց «սփյուռքացումը», ինչպես արդեն նշվեց, պայմանավորված էր քաղաքական դրդապատճառներով:

Սկզբնական շրջանի մերժողական վերաբերմունքը ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխվեց ավելի հանդուրժողականի: Սկզբնական շրջանում իսլամական վարչակարգի հանդեպ բացասական վերաբերմունքը նմանատիպ վերաբերմունք էր առաջացնում նաև իրանական պետության և հասարակության նկատմամբ ընդհանրապես: Դա մղում էր իրանական սփյուռքի ներկայացուցիչներին եթե ոչ հակադիր դիրքերից հանդես գալ Իրանի նկատմամբ, ապա, նվազագույնը, հեռու

մնալ նրա և այնտեղ հաստատված իսլամական վարչակարգի հետ որևէ համագործակցությունից:

Սույն երևույթի դրսևորումները որոշ չափով պահպանվում են նաև ներկայում: Չնայած Իրանի նկատմամբ սփյուռքի վերաբերմունքի մեջ տեղի ունեցած որոշակի դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ, նրա մի հատվածը շարունակում է պահպանել նախկին դիրքորոշումը և արտերկրից անգամ ծավալում ակտիվ հակահիրանական գործունեություն:

Իրանում իսլամական վարչակարգի նկատմամբ բացասական վերաբերմունքը պահպանվել է հատկապես շահական ընտանիքի ներկայացուցիչների շրջանում: Այս առումով հատկապես աչքի է ընկնում հանգուցյալ շահ Մուհամեդ Ռեզա Փեհլևիի որդին՝ Մուհամեդ Ռեզա Փեհլևի կրտսերը, որն անխնա քննադատության է ենթարկում Իրանում հեղափոխության արդյունքում հաստատված իսլամական վարչակարգը, այն համարում կոռուպցիայի, ժողովրդի թալանի ու հարստահարման աղբյուր և չարիք իրանական հասարակության համար: Հստակ տարբերակում դնելով հանդերձ իրանական հասարակության (ժողովրդի) և իսլամական վարչակարգի միջև՝ նա Արևմուտքին կոչ է անում անզիջում պայքար մղել վերջինիս դեմ և հասնել նրա տապալմանը:

Իրանի նկատմամբ բացասական վերաբերմունքը պահպանվում է նաև միջազգային (համաշխարհային) լրատվամիջոցներում աշխատող իրանական ծագմամբ լրագրողների և քրիստոնեություն ընդունած իրանցիների շրջանում:

Համաշխարհային լրատվամիջոցներում աշխատող իրանցի լրագրողները (օրինակ՝ *CNN*-ի հաղորդավար Քրիստիան

Ամանփուրը), արևմտյան «ուղեղային կենտրոններում» աշխատող իրանցի փորձագետներից շատերն Իրան-Արևմուտք հակասության մեջ ներկայացնում են արևմտյան տեսակետը՝ հանդես գալով իսլամական վարչակարգի քննադատությամբ: Սա վկայում է արևմտյան հասարակությունների մեջ նրանց ինտեգրվածության բարձր աստիճանի մասին:

Ինքնին հասկանալի է, որ *BBC* կամ *CNN* հեռուստաընկերություններում աշխատող իրանցի լրագրողը չի կարող ներկայացնել իրանական կողմի տեսակետներն իրանա-ամերիկյան հակամարտությունում: Նա կոչված է պաշտպանելու արևմտյան դիրքորոշումը: Հետևաբար, լրագրության ոլորտի այդ ներկայացուցիչները խիստ պայմանականորեն կարող են համարվել սփյուռքի ներուժ իրանցիների համար: Նրանք ավելի շուտ իրանական պետության դեմ գործունեություն ծավալող, վերջինիս հակադրվող սփյուռքյան ներկայացուցիչների շարքին են դասվում:

Ինչ վերաբերում է կրոնադարձներին, ապա վերջիններս ակտիվորեն ներգրավվում են Իրանում քրիստոնեություն տարածող միսիոներական կառույցների գործունեության մեջ, հաճախ իրենք են հիմնում այդպիսի կազմակերպություններ և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների (արբանյակային հեռուստատեսություն, համացանց), հրատարակչության (Աստվածաշնչի հրատարակություն և տարածում Իրանում) միջոցով փորձում են նպաստել Իրանում քրիստոնեության, մասնավորապես՝ բողոքականության տարածմանը: Հաճախ առկա է նաև անմիջական միսիոներական գործունեություն Իրանում: Չխորանալով այս խնդրում՝ հպանցիկ նշենք, որ այստեղ գուցե առկա է որոշա-

կի համագործակցություն իրանական սփյուռքի ներկայացուցիչների և արևմտյան հատուկ ծառայությունների միջև:

Իհարկե, միսիոներությունն Իրանում դիտվում է որպես սպառնալիք ազգային անվտանգությանը և բախվում պետության կոշտ հակազդեցությանը: Ձերբակալվում և մահապատժի են ենթարկվում ինչպես միսիոներները, այնպես էլ կրոնադարձները, պետության կողմից առգրավվում է կրոնական գրականությունը, սահմանափակվում են արբանյակային հեռարձակման հնարավորությունները, վերահսկվում է համացանցը: Սակայն, չնայած այս ամենին, միսիոներությունն Իրանում շարունակվում է և տալիս որոշակի արդյունքներ: Երբեմն խոսքը Իրանում մի քանի միլիոնի հասնող ծպտյալ քրիստոնյաների մասին է լինում: Սակայն, թե որքանով է այս տեղեկատվությունը հավաստի՝ միանշանակ դժվար է ասել:

Համեմատություն անցկացնելով՝ կարող ենք նշել, որ ներկայում հայկական սփյուռքի բոլոր համազգային կառույցները (երեք կուսակցությունները, երեք եկեղեցիները, բարեգործական և այլ կառույցները) մեծ հաշվով լոյալություն են դրսևորում ՀՀ-ի և նրա իշխանությունների նկատմամբ, չնայած երբեմն լինում են տարակարծություններ տարբեր հարցերի վերաբերյալ: Այդպիսի տարակարծություններից մեկն առաջացավ 2008-2010թթ.՝ կապված Հայաստանի իշխանությունների նախաձեռնած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի և դրա արդյունք հանդիսացող հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման հետ: Սփյուռքը չընդունեց նման քաղաքականությունը և ըմբոստացավ դրա դեմ: Սակայն շուտով, երբ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման

գործընթացը մտավ փակուղի, սփյուռքի ըմբոստացումն ինքնաբերաբար մարեց: Դրանից հետո Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները կրկին մտան բնականոն հուն:

Ինչևէ, ժամանակի ընթացքում, ինչպես արդեն նշվեց, սփյուռքի մեծ մասի մոտեցումը Իրանի նկատմամբ որոշակի փոփոխության ենթարկվեց: Սկսեց տարբերակում դրվել իրանական պետության և հասարակության՝ որպես հայրենիքի և հայրենակիցների, և իսլամական վարչակարգի միջև: Իրանական սփյուռքի ներկայացուցիչների շրջանում սկսեց տիրապետող դառնալ այն մոտեցումը, որ իրենք, դեմ լինելով իսլամական վարչակարգին, այնուամենայնիվ, կարող են օգտակար լինել կարիքի մեջ հայտնված հայրենիքին և հայրենակիցներին: Այլ կերպ ասած՝ հայրենիքը (Իրանը) և հայրենակիցներին (իրանցիներին) չպետք է նույնացնել այնտեղ տիրապետող իսլամական վարչակարգի հետ: Վերաբերմունքի այս փոփոխության պատճառներն էին՝ ա) իսլամական վարչակարգի մոտալուտ անկման ակնկալիքների ի դերև ելնելը, բ) որոշակի հիասթափությունն Արևմուտքից և նրա վարած քաղաքականությունից և գ) սերնդափոխությունը:

Հատկապես վճռական եղավ սերնդափոխության դերը հայրենիքի նկատմամբ իրանական սփյուռքի վերաբերմունքի փոփոխության հարցում: Նոր սերնդի մեջ, որի ներկայացուցիչները ծնվել, մեծացել, կրթություն են ստացել և կայացել արտասահմանում, այլևս չկա այն բացասական վերաբերմունքը հայրենի Իրանում հաստատված վարչակարգի նկատմամբ, ինչն ընդգծված կերպով առկա է եղել առաջին սերնդի ներկայացուցիչների պարագայում: Ինչպես նշում է *BBC*-ի Վաշինգ-

տոնի Պարսկական ծառայության թղթակից Մուհամեդ Թաբաբը, «Հեղափոխությունից անմիջապես հետո այստեղ եկած իրանցիները նկատելիորեն ծերացել են և դարձել պակաս ակտիվ: Նրանց երեխաներն ու թոռներն արդեն նոր սերունդ են, որն այլ կերպ է մտածում: ...Նրանք, իհարկե, կոչ չեն անում Ամերիկային «սիրավեպ» սկսել իսլամական հանրապետության հետ, բայց համոզված են, որ գոնե ինչ-որ երկխոսություն վարել Թեհրանի հետ պետք է»[1]:

Համեմատություն անցկացնելով հայկական սփյուռքի հետ՝ նշենք, որ իրանական սփյուռքի վերաբերմունքի փոփոխությունը հայրենի երկրի նկատմամբ նման է հայկական սփյուռքի կառույցների, մասնավորապես՝ կուսակցությունների (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ) վերաբերմունքի փոխակերպմանը Հայաստանի նկատմամբ այստեղ խորհրդային վարչակարգի հաստատումից հետո: Սկզբնական շրջանի մերժողականությունը հայ սփյուռքի իրականության մեջ նույնպես աստիճանաբար փոխարինվեց հանդուրժողականությամբ և ավելի իրատեսական մոտեցմամբ: Սփյուռքի կուսակցությունները, դեմ լինելով հայրենիքում հաստատված կոմունիստական վարչակարգին և նրա գաղափարախոսությանը, այնուամենայնիվ, պատրաստակամություն հայտնեցին նպաստել Խորհրդային Հայաստանի՝ որպես հայության միակ ազգային պետության, կենսունակ ազգային օջախի զարգացմանն ու ամրապնդմանը և այդ նպատակով անգամ գնացին խորհրդային վարչակարգի հետ համագործակցության ճանապարհով:

[1] *Е.Шилов*, Кто влияет на отношение США к Ирану, http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_5039000/5039274.stm

Հայրենիքի և հայրենակիցների նկատմամբ վերաբերմունքի այս փոփոխության արդյունքում իրանական սփյուռքի ներկայացուցիչները սկսեցին նպաստել Իրանի զարգացմանը և իրանական հասարակության խնդիրների լուծմանը: Դա արվում է տարբեր ոլորտներում և տարբեր եղանակներով: Սույն հետազոտության մեջ առանձնացվել են Իրան-սփյուռք համագործակցության մի քանի ոլորտներ՝ կազմակերպչական, քաղաքական, տեղեկատվական, տնտեսական, գիտական և այլն:

Սփյուռքի կազմակերպման հիմնախնդիրները

Իրանը չափազանց կարևոր նշանակություն է տալիս սփյուռքի համայնքների կազմակերպման խնդրին: Անկախ տվյալ համայնքի թվաքանակից, այն ձեռնամուխ է լինում այնտեղ տարատեսակ կազմակերպչական կառույցների ստեղծմանը՝ որպես համայնքային ինքնակազմակերպման և ազգային ինքնության պահպանման գործիքներ: Այդ կառույցները կարող են լինել մշակութային, կրթական հաստատություններ, լրատվամիջոցներ և այլն:

Կազմակերպչական կառույցների ստեղծումից զատ, սփյուռքի հետ աշխատանքի բնագավառում Իրանը կարևոր տեղ է հատկացնում նաև կրոնական գործոնին: Շիականությունը կարևոր դեր է խաղում սփյուռքում ինչպես իրանական ազգային ինքնության պահպանման, այնպես էլ համայնքի համախմբման գործում: Մեծ է նրա դերն իրանական սփյուռքի համայնքային կյանքի կազմակերպման և աշխուժացման գործում: Ընդհանրապես, իրանական պետության նկարագիրը, որպես շիական աշխարհի առաջատար պետություն, իր արտացոլումը գտնում է նաև սփյուռքում այն առումով, որ կրոնի միջո-

ցով փորձ է արվում համախմբել ոչ միայն արտերկրի իրանցիներին, այլև իսլամի այդ ուղղության բոլոր հետևորդներին՝ անկախ էթնիկ պատկանելությունից, և տարածել իրանական ազդեցությունը վերջիններիս վրա։

Ինքնին հասկանալի է, որ կազմակերպչական հարցերում իրանական քաղաքականությունը սփյուռքի համայնքների նկատմամբ տարբերակված է ըստ տարածաշրջանների։ Ինչպես կազմակերպչական կառույցների ստեղծման, այնպես էլ կրոնական գործոնի օգտագործման առումներով Իրանն ակտիվ քաղաքականություն է վարում այն երկրներում, որոնց հետ առկա են բնականոն հարաբերություններ, ինչպիսիք են Ռուսաստանը, Ծոցի երկրները և այլն։ Մինչդեռ արևմտյան երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, իրանական պետության հնարավորությունները սահմանափակ են հետևյալ պատճառներով.

ա) Լարված հարաբերություններն ԱՄՆ-ի հետ, դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը սահմանափակում կամ գրեթե անհնար են դարձնում իրանական պետության ակտիվ նախաձեռնողական քաղաքականությունն այդ երկրի համայնքի հետ։ Իրանը չի կարող այստեղ օրինական ճանապարհով ազատորեն ձեռնամուխ լինել իր համայնքի հետ աշխատանքներին, այդ թվում նաև՝ կազմակերպչական կառույցների ստեղծմանը կամ դրան նպաստելուն։ Եվրոպական երկրների պարագայում, թեև վիճակն այնքան սուր չէ, որքան ԱՄՆ-ի պարագայում (համենայն դեպս Իրանի և եվրոպական երկրների միջև առկա են դիվանագիտական հարաբերություններ), այնուամենայնիվ, այստեղ էլ Իրանը չունի լայն հնարավորություններ անմիջականորեն աշխատելու իր սփյուռքի հետ։

բ) ԱՄՆ-ում հաստատված իրանցիները համեմատաբար ազատամիտ հայացքների կրողներ են: Նրանց զգալի, եթե ոչ մեծ մասն արտագաղթել է հենց իսլամական հեղափոխությունից հետո՝ խույս տալով կրոնական սահմանափակումներից: Հետևաբար, այդ երկրի իրանական համայնքի ներկայացուցիչները մեծ տեղ չեն հատկացնում կրոնական ակտիվությանը իրենց գործունեության մեջ և համեմատաբար անհաղորդ են այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին:

Հաշվի առնելով սույն հանգամանքները՝ կարող ենք ասել, որ արևմտյան երկրների և մասնավորապես՝ ԱՄՆ իրանական համայնքն անհամեմատ ավելի անկախ է հայրենի պետությունից: Հետևաբար, այս համայնքի նկատմամբ վարվող քաղաքականության հարցում Իրանը ստիպված է ավելի շատ ապավինել վերջինիս ինքնակազմակերպման հնարավորություններին և հնարավոր համագործակցության միջոցով փորձել առավելագույն օգուտներ քաղել:

Իսկ այն երկրներում, որոնց հետ Իրանն ունի բարեկամական հարաբերություններ (Ռուսաստան, Ծոցի երկրներ և այլն), ինչպես արդեն նշվեց, առկա են նաև լայն հնարավորություններ սփյուռքի հետ աշխատելու տեսանկյունից, ինչից էլ օգտվում է իրանական պետությունը: Դրա վկայությունն է թեկուզ այն, որ չնայած Ռուսաստանում իրանցիների խիստ սահմանափակ թվաքանակին, այնուամենայնիվ, այստեղ գործում է Իրանական մշակույթի կենտրոն՝ որպես համայնքային ինքնակազմակերպման, ազգային ինքնության պահպանման և իրանական մշակույթի ու քաղաքակրթության տարածման կառույց:

Մոսկվայում մեկ այլ իրանական կառույց է դեսպանատանը կից գործող դպրոցը, որտեղ ուսուցումն իրականացվում է

իրանական ծրագրերով: Դպրոցում կրթություն են ստանում նաև տաջիկ երեխաները[1], ինչը ևս մեկ ապացույց է, որ իրանական քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ միտված է իր ծիրում ներառելու ոչ միայն բուն իրանական, այլև իրանալեզու, իրանական ծագում ունեցող և շիադավան բոլոր համայնքները:

Ինչպես Ռուսաստանի պարագայում, ԱՄԷ-ում նույնպես Իրանը կարևորում է իր համայնքի համար կազմակերպչական կառույցների ձևավորումը և դրանց գործունեությանն աջակցությունը, այդ թվում՝ ֆինանսապես: ԱՄԷ երկու խոշոր քաղաքներում՝ Դուբայում և Աբու Դաբիում, որտեղ հիմնականում կենտրոնացված է այս երկրի իրանական համայնքը, գործում են չորս իրանական դպրոց և երկու մշակութային կենտրոն: ԱՄԷ-ում գործում է նաև երկու իրանական հանրահայտ հիվանդանոց, որտեղ բժշկական ծառայությունները, շնորհիվ Իրանի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության, 3-4 անգամ ավելի մատչելի են, քան երկրի համանման այլ հաստատություններում[2]:

Վերոհիշյալ երկու մշակութային կենտրոնները պատկանում են ԱՄԷ-ում գործող իրանական պետական հաստատությունների թվին, ինչպիսիք են երկու իրանական խոշոր բանկերը՝ Իրանի արտահանման բանկը և Իրանի ազգային բանկը, շաբաթական 35 կանոնավոր չվերթ իրականացնող երեք խոշոր ավիաընկերությունները, Իրանա-էմիրաթական ծովային տրանսպորտային ընկերությունը[3]:

Սփյուռքում մշակութային հաստատությունների ստեղծման միջոցով համայնքային կյանքի կազմակերպմանն ու աշ-

[1] Иранская община в Москве, http://islamist.ru/иранская-община-в-москве/
[2] Иранская диаспора в ОАЭ, http://www.emirat.ru/wiki/Иранская_диаспора_в_ОАЭ
[3] Նույն տեղում:

խուժությանը նպաստելու դրսևորում է նաև Ուզբեկստանում այդ երկրի իրանական համայնքի պատմության թանգարանի ստեղծումը 2009թ.: Այս դեպքում նույնպես իրանական սփյուռքը փոքրաթիվ է. ընդգրկում է ընդամենը մեկ գյուղ՝ Ակ Դարբանդը, և ունի մոտ 1.2 հազ. բնակչություն: Այն, որ սփյուռքում իրանական մշակութային հաստատությունները կոչված են ոչ միայն նպաստելու համայնքային կյանքի կազմակերպմանը, այլև իրանական մշակույթի ու քաղաքակրթության տարածմանն աշխարհում, երևում է նաև սույն թանգարանի օրինակով: «Երբեմն մեր գյուղ են այցելում հյուրեր այլ շրջաններից, մարզերից և նույնիսկ հարևան երկրներից: Մեծ մասամբ ծանոթացնում ենք նրանց մեր թանգարանին, կազմակերպում հանդիպումներ տարեցների հետ»,- նշում է Ուզբեկստանի իրանական սփյուռքի ակտիվ ներկայացուցիչներից մեկը[1]:

Ինչ վերաբերում է իրանական սփյուռքում կրոնի բարձր դերին, ապա այդ մասին է վկայում, օրինակ, այն, որ Մոսկվայում իրանցիները նվազագույնը 1 անգամ երկու շաբաթվա ընթացքում կազմակերպում են կրոնական հավաքներ, որոնց ընթացքում նշվում են նաև շիականության պատմության հիշարժան իրադարձությունները, իսլամական հեղափոխությունն Իրանում[2]:

Սփյուռքի նկատմամբ տարվող քաղաքականության մեջ կրոնական գործոնի կարևորմամբ է, թերևս, պայմանավորված այն, որ իրանական համայնքները որոշ արտասահմանյան երկրներում (օրինակ՝ Ռուսաստանում) աչքի են ընկնում բարձր կրոնականացվածությամբ: Շիականության միջոցով ազգային ինք-

[1] Иранская диаспора Узбекистана обзавелась собственным музеем истории, http://regnum.ru/news/polit/1177510.html
[2] Иранская община в Москве, http://islamist.ru/иранская-община-в-москве/

նության պահպանումից բացի, ինչը բավական արդյունավետ է (դրա շնորհիվ է, որ ռուսաստանաբնակ իրանցիները, չնայած սերտ հարաբերություններին ռուսների հետ, այնուամենայնիվ, չեն ձուլվում նրանց մեջ), իրանական համայնքի կրոնականացվածության մեկ այլ դրսևորում է սեփական կրոնական հայացքների ու գաղափարների (շիականության) լայն քարոզչությունն ու տարածումը: Այս հարցում իրանցիներն առաջ են անցնում իրենց մրցակից թուրքական և արաբական համայնքներից[1]:

Ինչ վերաբերում է կրոնի միջոցով ոչ միայն իրանցիներին, այլև շիա հավատքի բոլոր ներկայացուցիչներին համախմբելուն, ապա դրա վկայությունն է այն, որ Իրանի կողմից Մոսկվայում ստեղծվել է Լենքորանի այաթոլլայի ներկայացուցչությունը, որի գործառույթներից մեկն է Ռուսաստանի շիաների հետ կապի ապահովումը[2]:

Համագործակցությունը քաղաքական ոլորտում

Քաղաքական ոլորտում հայրենի երկրին աջակցության տեսակետից իրանական սփյուռքի օրակարգում են երեք փոխկապակցված խնդիրներ. ա) աջակցությունն իրանական միջուկային ծրագրին, բ) Իրանի դեմ տնտեսական պատժամիջոցների վերացումը (Իրանի միջազգային մեկուսացման հաղթահարումը) և գ) Իրանի դեմ հնարավոր պատերազմի կանխումը: Այստեղ Իրանին աջակցության հարցում կան ինչպես չափավոր, այնպես էլ արմատական դրսևորումներ:

Չափավոր մոտեցումները հանգում են Արևմուտքին ուղղված կոչերին և խորհուրդներին՝ զերծ մնալ Իրանի նկատմամբ ու-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ժի դիմելու քաղաքականությունից, մեղմել դիրքորոշումը և հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով: Հայրենի պետությանն աջակցության այս դրսևորումները հիմնականում տեղ են գտնում տեղեկատվական-վերլուծական ասպարեզում: Օրինակ՝ Ջոն Հոփքինսի համալսարանի Մերձավոր Արևելքի գծով փորձագետ, ամերիկյան իրանցիներին միավորող խոշոր կազմակերպության՝ Իրանա-ամերիկյան խորհրդի (Վաշինգտոն) ղեկավար Թրիթա Փարսին դեռևս Ջ.Բուշի վարչակազմին խորհուրդ էր տալիս փոխել Իրանի նկատմամբ կարծր դիրքորոշումը՝ նշելով, որ հակառակ պարագայում հետևանքներն ավելի տխուր կլինեն ինչպես աշխարհի, այնպես էլ ԱՄՆ-ի համար: Ըստ փորձագետի, եթե ԱՄՆ-ը չփոխի քաղաքականությունն Իրանի նկատմամբ, ապա իրադարձությունները կզարգանան երկու սցենարով՝ հյուսիսկորեական կամ իրաքյան: Առաջինի դեպքում աշխարհում կհայտնվի մի նոր միջուկային տերություն՝ ի դեմս Իրանի, ինչն աշխարհում որևէ մեկը չի կարող կանխել և որի հետ հարաբերություններում նույնպես անհնարին կլինի որևէ դրական արդյունքի հասնել, երկրորդ դեպքում ԱՄՆ-ը կներխուժի Իրան, որից հետո ամբողջ աշխարհը կզոջա դրա համար[1]: Ինչի հնարավոր կլինի հասնել բանակցությունների արդյունքում՝ փորձագետը չի նշում, բայց վստահ է, որ կոշտ քաղաքականության շարունակման դեպքում հիշյալ երկու սցենարներն էլ չեն բխում ԱՄՆ շահերից:

Այսպիսով, չափավոր մոտեցման կողմնակիցները փորձ են անում տեղեկատվական-վերլուծական ասպարեզում համադրել Իրանի և Արևմուտքի շահերը՝ ձգտելով համոզել արևմտյան աշխարհի որոշում ընդունողներին, որ Իրանի նկատ-

[1] *Е.Шилов*, նշվ. աշխ.:

մամբ բանակցային քաղաքականությունը (բանակցությունների միջոցով Իրանի հետ փոխհամաձայնության հանգելը) բխում է հենց Արևմուտքի և գլոբալ անվտանգության շահերից։

Սփյուռքի վերոհիշյալ մոտեցումն ամրապնդվում է միջուկային ծրագրի վերաբերյալ Իրանի վարած տեղեկատվական քաղաքականությամբ կամ, կարելի է ասել, հիմնվում է վերջինիս վրա։ Իրանում պարբերաբար հնչում են հայտարարություններ Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրից դուրս գալու անհրաժեշտության մասին, ինչը, համաձայն փորձագիտական գնահատականի, կրում է զուտ պրոպագանդիստական բնույթ։ Դրանք կոչված են ընդամենը ցույց տալու արտաքին աշխարհին, որ Իրանում կան ուժեր, որոնք պատրաստ են դուրս բերել երկիրը միջուկային զենքի չտարածման միջազգային-իրավական կարգավորման ոլորտից։ Իսկ դա նշանակում է, որ համաշխարհային հանրությունը, որդեգրելով «ապակառուցողական» դիրքորոշում իրանական միջուկային ծրագրի նկատմամբ, կարող է ստիպել վերջինիս գնալ կորեական ճանապարհով։ Եվ նման մոտեցումը երբեմն ազդեցություն է ունենում միջազգային հանրության դիրքորոշման վրա[1]։

Այսպիսով, տեղեկատվական ասպարեզում ձևավորվում է Իրան-սփյուռք յուրահատուկ համագործակցություն, որը կամա թե ակամա ստանում է համակարգված տեսք։ Իրանի կողմից բաց թողնվող կոշտ տեղեկատվական հոսքերի վրա հիմնվելով՝ սփյուռքը փորձում է մեղմորեն համոզել Արևմուտքին՝ փոխել այդ երկրի նկատմամբ տարվող քաղաքականությունը։

[1] *Саруханян С.Н.*, Россия и Иран. 10 лет ядерного сотрудничества, Ер., «Гаспринт», 2006, с. 61.

Արմատական մոտեցման կողմնակիցները, ի տարբերություն չափավորների, որոնք հակված են «փափուկ» միջոցներով (կոչեր անելով, հորդորելով, համոզելով) օգտակար լինել իրենց հայրենի երկրին, կիրառում են ավելի կոշտ մեթոդներ, օրինակ՝ ցույցեր, բողոքի ակցիաներ և այլն։ Օրինակ՝ 2006թ. հունիսին Բրյուսելում Եվրոպայի տարբեր երկրների իրանական համայնքների ներկայացուցիչներն ի պաշտպանություն Իրանի միջուկային ծրագրի կազմակերպել էին բողոքի ցույց՝ այդ կերպ իրենց վրդովմունքն արտահայտելով Արևմուտքի կողմից Իրանի նկատմամբ վարվող կոշտ քաղաքականության հանդեպ և պահանջելով արևմտյան երկրներից խնդիրները կարգավորելու նպատակով անմիջապես բանակցությունների սեղանի շուրջ նստել Իրանի հետ[1]։

Բացի այդ, իրանական սփյուռքի որակական բարձր հատկանիշներն օգնում են այդ երկրի և հասարակության ավելի ադեկվատ ընկալմանը միջազգային հասարակայնության կողմից։ Իրանցիների կողմից հիմնականում օտար լեզուներին (տվյալ երկրի լեզվին) տիրապետումը, բարձր պրոֆեսիոնալիզմը մասնագիտական աշխատանքում, տվյալ երկրի հասարակության մեջ ինտեգրման բարձր աստիճանը, գործարար ակտիվությունը բարերար դեր են խաղում արտերկրում Իրանի կերպարի ստեղծման գործում՝ որոշակիորեն հակակշռելով արևմտյան ԶԼՄ-ի կողմից Իրանի բացասական (դեմոնացված) կերպարի ստեղծմանը։

Իրանական սփյուռքի ներկայացուցիչների վերոհիշյալ հատկանիշների շնորհիվ արտասահմանյան հասարակայնու-

[1] Տե՛ս Иранская диаспора в Европе провела в Брюсселе митинг в защиту права ИРИ на мирный атом, http://www.iran.ru/news/politics/40436/Iranskaya_diaspora_v_Evrope_provela_v_Bryussele_miting_v_zashchitu_ prava_IRI_na_mirnyy_atom

թյունը նվազագույնը տարբերակում է դնում իրանցի ժողովրդի (հասարակության) և Իրանում հաստատված վարչակարգի միջև՝ համարելով, որ, չնայած այնտեղ հաստատված իսլամական վարչակարգը բացասական երևույթ է, սակայն վերջինիս բացասական բնույթը չի կարելի վերագրել նաև իրանցի ժողովրդին, որը դրական արժանիքների կրող է: Իսկ նվազագույնից ավելի՝ իրանական սփյուռքն իր դրական արժանիքների շնորհիվ որոշակիորեն նպաստում է նաև Իրանի վերաբերյալ միջազգային լայն հասարակայնության կարծիքի փոփոխությանը՝ դրական իմաստով, այն է՝ նպաստում է Իրանի միջազգային կերպարի բարելավմանը:

Վերջին շրջանում իրանական սփյուռքից ակնկալվում է ավելի մեծ չափով նպատել իրանական փափուկ ուժի քաղաքականությանն արտերկրում: Դրա հիմնական միջոցը պետք է լինի իրանական լեզվի, մշակույթի և քաղաքակրթության տարածումն արտերկրում, որի միջոցով էլ պետք է ձևավորվի Իրանի (իրանական քաղաքակրթության) գրավչությունն օտարերկրացիների մեջ: Այս հարցում ակնկալվում է սերտ համագործակցություն իրանական սփյուռքի գիտական և գործարար շրջանակների միջև: «Իրանցիները և իրանական գիտնականները սփյուռքում,- գրում է հետազոտող Սամ Սասան Շոամանեշը,- աջակցություն ստանալով իրանական բիզնեսի կողմից, կարող են համագործակցել աշխարհի լավագույն համալսարանների հետ՝ հիմնելու ծրագրեր, որոնք կմասնագիտանան իրանական պատմության, քաղաքականության և լեզուների (ներառյալ՝ նախա-, հին և միջին իրանական լեզուները) մեջ, հետևելով Կոլումբիայի և Սորբոնի պես առաջատար դպրոցների նման ծրագրերին»[1]:

[1] *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.:

Չի բացառվում, որ իրանական սփյուռքի սույն ակնկալիքը վերցված է նաև հայկական սփյուռքի օրինակից, քանի որ վերջինիս կողմից նույնպես արտերկրում, այդ թվում նաև աշխարհի առաջատար համալսարաններում ու գիտական հաստատություններում ստեղծվել ու գործառում են հայոց լեզվի, մշակույթի, պատմության և քաղաքակրթության բնագավառներում մասնագիտացած բազմաթիվ հայագիտական կենտրոններ (ամբիոններ, ծրագրեր և այլն)[1]: Վերջիններիս ավանդական գործառույթներին (հայապահպանություն և այլն) ավելանում են արդի աշխարհին համահունչ այնպիսի նոր գործառույթներ, ինչպիսիք են հայոց լեզվի, մշակույթի և քաղաքակրթության տարածումն աշխարհում և այլն[2], որոնց հանրագումարն արդի տերմիններով կոչվում է «փափուկ ուժի քաղաքականություն»[3]:

[1] Տե՛ս *Միմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.*, Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Ե., «Գասպրինտ», 2014:

[2] Մանրամասն տե՛ս *Հովյան Վ.*, Արտերկրի հայագիտական կենտրոնների դերակատարությունը, 21-րդ ԴԱՐ, թիվ 6, 2014, էջ 49-55:

[3] Աշխարհի գերտերությունները՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան և այլն, որոնք տիրապետում են հսկայական ֆինանսական և այլ ռեսուրսների, փափուկ ուժի քաղաքականությունն իրականացնում են արտասահմանյան երկրներում համալսարանական ցանցեր ստեղծելու միջոցով (ստեղծվում են կամ նոր համալսարաններ, կամ էլ արդեն գործող համալսարանների արտասահմանյան մասնաճյուղեր): Միայն Հայաստանում գործում են մի շարք արտասահմանյան համալսարաններ, որոնցից առավել նշանավորներն են Հայաստանի ամերիկյան համալսարանը, Ֆրանսիական համալսարանը, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը, Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղը: Փոքր երկրները, որոնց ֆինանսական և այլ հնարավորությունները համեմատելի չեն գերտերությունների համապատասխան հնարավորությունների հետ, այս հարցում ստիպված են ապավինել իրենց սփյուռքին՝ վերջինիս միջոցով ստեղծելով եթե ոչ համալսարաններ և այլ խոշոր գիտակրթական կենտրոններ, ապա գոնե համալսարանական ամբիոններ և ծրագրեր, այսինքն՝ ներհամալսարանական կառույցներ օտարերկրյա բուհերի և գիտական հաստատությունների կառուցվածքներում:

Համագործակցությունը տեղեկատվական ոլորտում

Տեղեկատվական ոլորտում իրանական սփյուռքի՝ հայրենի երկրին աջակցության ձևերն են իրանական և միջազգային լրատվամիջոցներով. ա) *իրանամետ և հակաարևմտյան հրապարակումները,* որոնցում հիմնավորվում է Իրանի՝ միջուկային ծրագիր ունենալու իրավունքը, քննադատվում Արևմուտքի կոշտ քաղաքականությունը վերջինիս նկատմամբ: Իրանի նկատմամբ Արևմուտքի կոշտ քաղաքականությանը հակադարձելու հարցում առավել ակտիվ են իրանական սփյուռքի գիտական և փորձագիտական հանրությունների ներկայացուցիչները: Օրինակ՝ ԱՄՆ-ում աշխատող իրանցի գիտնական Ա.Թարզին դեռևս 2000-ականների սկզբին գտնում էր, որ Իրանն ունի բավարար պատճառներ միջուկային զենք ունենալու համար[1], բ) *կոչերը իրանական սփյուռքին՝ օգնելու հայրենիքին:* Այս հարցում նշանակալի է, օրինակ, 2012թ. հեղինակավոր «Հաֆինգթոն փոսթ» պարբերականում իրանցի վերլուծաբան Հոլի Դագրեսի հրապարակած հոդվածը, որում ԱՄՆ իրանական համայնքը քննադատվում է ինչպես ինքնակազմակերպվածության թույլ մակարդակի, քաղաքական մասնակցության (ընտրություններ) գործում պասիվության, այնպես էլ հայրենի երկրին օգնելու հարցում թերացման մեջ: Հեղինակը քննադատում է ԱՄՆ իրանական համայնքին միայն ԱՄՆ-ից Իրանի ժողովրդին սնունդ, դեղորայք և այլ մարդասիրական օգնություն տրամադրելու հարցի վրա կենտրոնանալու համար և կոչ է անում աշխատանքներ տանել նաև այլ կարևոր ուղղություններով, մասնա-

[1] *Сажин В.И.,* 2004. Война против Ирака и проблема нераспространения ядерного оружия, http://www.iimes.ru/?p=353

վորապես՝ Իրանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության փոփոխության ուղղությամբ: Որպես օրինակ վկայակոչելով ԱՄՆ հրեական համայնքը՝ հեղինակն իրանական սփյուռքին կոչ է անում ավելի ակտիվ գործողությունների[1]:

Համագործակցությունը տնտեսական դրդրտում

Դատելով տեղեկատվական դաշտում առկա հրապարակային նյութերից՝ կարող ենք նշել, որ իրանական սփյուռքը տիրապետում է հսկայական տնտեսական ներուժի: 2006թ. դրությամբ արտերկրի իրանական կապիտալը գնահատվում էր մոտ $1.3 տրիլիոն[2]: Համաձայն նախագահ Հասան Ռոհանիի՝ այն հասնում է $2-ի[3]:

Սակայն այդ հնարավորությունն Իրանի տնտեսության մեջ ներդնելու և այդ կերպ երկրի տնտեսական զարգացմանը նպաստելու հարցում կան մի շարք լուրջ խոչընդոտներ, որոնցից արժե հիշատակել հատկապես հետևյալները.

ա) Արևմուտքի կողմից վարվող պատժամիջոցների քաղաքականությունը, որն օրենսդրորեն սահմանափակում է արտերկրից, այդ թվում նաև՝ արտերկրի իրանցիների կողմից ֆինանսների, կապիտալի և տեխնոլոգիաների ներհոսքը Իրան: Պատժամիջոցների հետևանքով կանխվում են հատկապես արևմտյան երկրների իրանական սփյուռքից ուղղակի ներդրումները այդ երկրի տնտեսության մեջ: Օրինակ՝ 1997թ. ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի հրամանագիրը, որով արգելվում էին ներդրումներն

[1] Տե՛ս *Holly Dagres*, նշվ. աշխ.:
[2] Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora;
Sam Sasan Shoamanesh, նշվ. աշխ.:
[3] Иран попросил денег у зарубежных соотечественников, https://pronedra.ru/globaleconomics/2015/10/10/iran-poprosil-deneg-u-sootechestvennikov/

Իրանում[1], անհնարին է դարձնում ամերիկաբնակ իրանցի գործարարների կողմից ներդրումներն իրենց հայրենիքում:

բ) ԻԻՀ կոշտ քաղաքականությունը Արևմուտքի նկատմամբ, ինչը նույնպես որոշակի խոչընդոտ է հանդիսանում սփյուռքի կողմից հայրենիքին աջակցելու հարցում,

գ) պետության կողմից մասնավոր սեփականության և այլ ակտիվների բռնագրավումը ազգայնացման քաղաքականության համատեքստում,

դ) երկրի կայունության խաթարման հետ կապված սպառնալիքները[2]: Վերջիններիցս հիշատակելի են ներքաղաքական ցնցումներն այդ երկրում 2009թ. նախագահական ընտրություններից հետո, ահաբեկչական գործողությունը Իրանի մեջլիսում և այաթոլլա Խոմեյնիի դամբարանի մոտ 2017թ. և այլն:

Այս է պատճառը, որ արտերկրի իրանական գործարար համայնքը ներդրումներ է կատարում ոչ թե հայրենի, այլ ուրիշ երկրներում: Իրանի մամուլի ծառայության 2000թ. մի հաղորդման համաձայն՝ իրանական սփյուռքի ներդրումներն ԱՄՆ-ում, Եվրոպայում և Չինաստանում կազմել են $200-400 մլրդ: Մինչդեռ Իրանի տնտեսության մեջ սփյուռքի ներդրումները գրեթե բացակայում էին: 2006թ. դրությամբ իրանական սփյուռքն Արաբական Միացյալ Էմիրություններում կատարել էր մոտ $200 մլրդ-ի ներդրում[3]:

Վերոհիշյալ հանգամանքներում իրանական սփյուռքի ներկայացուցիչները փորձում են այլ, երբեմն զարտուղի ճանա-

[1] *Shirin Hakimzadeh,* նշվ. աշխ.:
[2] Նույն տեղում:
[3] Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora;
Shirin Hakimzadeh, նշվ. աշխ.; *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.:

պարհներով բերել իրենց նպաստը հայրենի պետության և հասարակության զարգացմանը: Վերն արդեն նշվել է այն մասին, որ ներդրումները տնտեսության մեջ փոխարինվում են կարիքավորներին օգնելուն ուղղված բարեգործական ծրագրերով: Սոցիալ-տնտեսական ոլորտում հայրենիքին իրանական սփյուռքի աջակցության հիմնական ձևը մնում են արտերկիր արտագնա աշխատանքի մեկնածների դրամական փոխանցումներն իրենց հարազատներին, որոնք 2006թ. դրությամբ կազմում էին մոտ $2 մլրդ[1]: Այս ցուցանիշը տարիների ընթացքում ենթարկվել է տատանումների: Այսպես, 2000թ. այն կազմել է $536 մլն, 2003թ.՝ $1.2 մլրդ, իսկ 2004թ.՝ մոտ $1 մլրդ[2]:

Այնուամենայնիվ, Իրանի իշխանությունները գնում են որոշակի քայլերի սփյուռքի կապիտալն այդ երկիր բերելու և այդ կերպ սփյուռքից ուղղակի ներդրումներ ներգրավելու ուղղությամբ: Քայլերը բազմազան են՝ սկսած հայրենասիրական կոչերից՝ ուղղված սփյուռքի գործարարներին, մինչև ինստիտուցիոնալ կառույցների ստեղծումը: 2013թ. նախագահական ընտրություններից հետո, երբ նոր նախագահ Հասան Ռոհանիի օրոք Իրանին հաջողվեց համաձայնության գալ Արևմուտքի հետ միջուկային ծրագրի հարցում (2015թ. ժնևյան համաձայնությունը), և դրանով որոշակիորեն մեղմացվեցին Իրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցները (չեղարկվեց դրանց մի մասը), անձամբ նախագահ Հասան Ռոհանին կոչով դիմեց իրանական սփյուռքի ներկայացուցիչներին՝ հրավիրելով նրանց օգտվել ընձեռված հնարավորությունից և իրենց կապիտալն ուղղել

[1] Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora
[2] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:

Իրանի տնտեսություն: Հասան Ռոհանին ակնկալում է ներդրումների տեսքով երկիր բերել սփյուռքի կապիտալի 10%-ը[1]:

Բացի հայրենասիրական կոչերից, Իրանի իշխանությունների գործնական քայլերը սփյուռքից ներդրումներ ներգրավելու ուղղությամբ հանգում են գործունեության ծավալման երկու հիմնական ոլորտներում՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ:

Օրենսդրական ասպարեզում հիմնական խնդիրն է համապատասխան նորմատիվ-իրավական դաշտի ստեղծումը կամ բարելավումը՝ դեպի Իրան արտերկրի կապիտալի մուտքը հեշտացնելու նպատակով: Այս տեսակետից կարևոր էր 2002թ. ընդունված Արտաքին ներդրումների խթանման և պաշտպանության ակտը (*Foreign Investment Promotion and Protection Act - FIPPA*), որի նպատակն էր խրախուսել արտաքին ուղղակի ներդրումներն Իրանի տնտեսության մեջ: Սույն օրենսդրական ակտը՝ ա) առավելագույնս ազատականացնում էր Իրանի տնտեսությունն արտաքին ներդրումների համար՝ վերացնելով որևէ սահմանափակում, բ) միաժամանակ արտաքին ներդրողներին վերցնում պետության իրավական պաշտպանության տակ՝ այդ առումով հավասարեցնելով նրանց ներքին ներդրողներին: Օրենսդրականից բացի, արտաքին ներդրումների պաշտպանության համար ենթադրվում էին նաև արտաօրենսդրական երաշխիքներ[2]:

Ինստիտուցիոնալ ոլորտում իրանական պետության քայլերն ուղղված են գործարար սփյուռքի հետ համագործակցության նպատակով հատուկ կառույցների ստեղծմանը: Վերջիններիի շարքին են դասվում պետության և սփյուռքի մասնակցու-

[1] Иран попросил денег у зарубежных соотечественников, https://pronedra.ru/globaleconomics/2015/10/10/iran-poprosil-deneg-u-sootechestvennikov/
[2] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:

թյամբ տնտեսական հաստատությունները, որոնց նպատակն է Իրան ուղղել արտերկրի իրանական կապիտալը, ինչպես նաև օգտագործել սփյուռքի գործարարների փորձառությունն արտաքին տնտեսական ներդրումների ներգրավման գործում: Սկզբնական շրջանում խոսքը $5 մլրդ կանոնադրական կապիտալով միասնական ներդրումային հիմնադրամի, ինչպես նաև Իրան-սփյուռք տնտեսական միության ձևավորման մասին էր, որը պետք է ծառայեր արտերկրի իրանցի գործարարներին: Հետագայում՝ 2010թ., Իրանի կառավարությունը հայտարարեց 8 մլն եվրո կանոնադրական կապիտալով ազգային հիմնադրամի ձևավորման գործընթաց սկսելու մասին, որը հետագայում պետք է վերաճեր բանկի:

Հիմնադրամի գործընկերն է Իրանի ներդրումային, տնտեսական և տեխնիկական աջակցության կազմակերպությունը, որը պետք է աջակցի սփյուռքի ներդրողներին: Պետությունը երաշխավորված կերպով վճարում է ներդրված գումարի 10%-ը: Յուրաքանչյուր մասնաբաժնի արժեքը հիմնադրամում կազմում է հազար եվրո: Մասնաբաժինների նվազագույն քանակը կազմում է հարյուր հազար, իսկ առավելագույնը՝ հինգ հարյուր հազար եվրո[1]:

Հարկ է նշել, որ Իրանը լուրջ ուշադրություն է դարձնում դեպի հարևան Ծոցի երկրներ, հատկապես ԱՄԷ աշխատուժի արտահանման խնդրին: Վերջինիս կողմից կա ձգտում ցածրորակ աշխատուժի անլեգալ արտահանումը փոխարինել որակյալ և բարձր վարձատրվող կադրերի օրինական արտահանմամբ, որոնք ի վիճակի են ապահովել արտարժույթի ներհոսք

[1] Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora

դեպի Իրան: Այս մասին իրանական իշխանությունները բանակցում են ԱՄԷ իշխանությունների հետ: Այնուամենայնիվ, պետական մակարդակով այս հարցը չի լուծվում, և Իրանից որակյալ մասնագետների արտահանման գործը դեպի ԱՄԷ դեռևս իրականացվում է մասնավոր սեկտորի, այն է՝ առևտրային կազմակերպությունների կողմից[1]:

Հարկ է նշել, որ երբեմն իրանական սփյուռքը հայրենի պետությանն աջակցելու հարցում միջոցների մեջ խտրականություն չի դնում: Այդ դեպքերում սփյուռքի աջակցությունը, հատկապես արևմտյան երկրներում, դուրս է գալիս օրինականության սահմաններից՝ կրելով քրեական բնույթ: Այդպիսի օրինակ է իրանցի գործարարներ Ռեզա Զարապի և Բաբեք Զենջանիի կողմից Թուրքիայում և ԱՄՆ-ում բանկային փաստաթղթերի կեղծումը և ապօրինի ճանապարհով դեպի Իրան հսկայական գումարների փոխանցումը: Նրանք, «համագործակցելով» թուրքական համապատասխան ոլորտի պաշտոնյաների հետ, «...ամերիկեան ելմտական համակարգը գործածելով, կեղծ փաստաթուղթեր պատրաստած են ու իրենց բուն նպատակը գաղտնի պահելով միլիոնաւոր տոլարներու փոխանցում ապահոված են Իրանին ու իրանեան ելմտական հաստատութիւններուն»[2]: Դա արվել է Իրանի դեմ Արևմուտքի կողմից սահմանված տնտեսական պատժամիջոցների համատեքստում:

[1] Иранская диаспора в ОАЭ, http://www.emirat.ru/wiki/Иранская_диаспора_в_ОАЭ

[2] «Հալքպանք» դրամատան փոխտնօրէն Մէհմէտ-Հաքան Աթիլլա ձերբակալուեցաւ Ամերիկայի մէջ. ան կը մեղադրուի Ռըզա Զարրաբի գործով, Նոր Մարմարա, 29 մարտի, 2017: Խնդրի մասին մանրամասն տե՛ս նաև՝ Ի՞նչեր կ'անցնին կը դառնան Ռէզա Զարապի դէմ բացուած դատի ծալքերէն ներս. նախկին նախարար Չաղլաեանի անունով ստեղծուած զգայացունց զարգացում – մինչ Էրտողան կը պաշտպանէր Զարապը, Քըլըճտարօղլու շատ ծանր պնդումներ հրապարակ քշեց, Նոր Մարմարա, 11 սեպտեմբերի, 2017:

Նման «խիզախումների» համար իրանական սփյուռքի ներկայացուցիչները, հայտնաբերվելու դեպքում (նրանց հանցանքի բացահայտման դեպքում), կրում են խիստ պատիժներ՝ երբեմն անգամ հատուցելով իրենց կյանքով։ Վերոհիշյալ Բաբեք Զենջանին, օրինակ, դատապարտվել է մահապատժի, իսկ Ռեզա Զարապը ձերբակալված է. նրա դատավարությունը շարունակվում է[1]։

Համագործակցությունը գիտության ոլորտում

Իրանական գիտական սփյուռքի ձևավորումը պայմանավորված է եղել երկու հիմնական գործոնով.

1. Միջուկային և հրթիռաշինական ծրագրեր։ Իրանական գիտական սփյուռքի ձևավորումն անմիջականորեն կապված է այդ երկրի միջուկային և հրթիռաշինական ծրագրերի հետ։ Այդ գործընթացը սկիզբ է առնում շահական ժամանակներից։ Ավելի կոնկրետ՝ իրանական գիտական սփյուռքի ձևավորումը կարելի է վերագրել 1950-ական թթ., երբ շահական վարչակարգը ձեռնամուխ եղավ երկրի համապարփակ արդիականացմանը, որի անկապտելի բաղադրիչներն էին միջուկային[2] և հրթիռաշինական ուղղությունները։

Այս ժամանակահատվածում Իրանը հանդիսանում էր Արևմուտքի՝ ԱՄՆ գլխավորությամբ, հիմնական դաշնակիցներից մեկը (եթե ոչ ամենահիմնականը) Մերձավոր Արևելքում։

[1] «Հալքպանք» դրամատան փոխտնօրէն Մէհմէտ-Հաքան Աթիլլա ձերբակալուեցաւ Ամերիկայի մէջ. ան կը մեղադրուի Ըզգա Զարրապի գործով, Նոր Մարմարա, 29 մարտի, 2017։

[2] Միջուկային ծրագրի տակ հասկացվում է ատոմային էներգետիկայի զարգացումը, թեև հետազոտողների գնահատմամբ՝ այն գաղտնի կերպով պարունակել է նաև ռազմական բաղադրիչ՝ հետապնդելով միջուկային զենքի ստեղծման նպատակ։

Հետևաբար, վերջինս շահագրգռված էր Իրանի՝ որպես դեպի Մերձավոր Արևելք Խորհրդային Միության էքսպանսիայի զսպման ունակ ուժի արդիականացմամբ և հզորացմամբ: Եվ պատահական չէ, որ Իրանում ինչպես միջուկային, այնպես էլ բազմաթիվ այլ գիտատար ուղղությունների հիմնադրման հետևում կանգնած էր հենց ԱՄՆ-ը:

Միջուկային, հրթիռաշինական և այլ գիտատար ուղղությունների զարգացումը անխուսափելիորեն ենթադրում էր համապատասխան կադրերի պատրաստում, որի միակ ճանապարհն այդ ուղղությունները սպասարկող գիտակարգերում (ֆիզիկա, ճարտարագիտություն և այլն) իրանցի երիտասարդների ուսումնառությունն էր արևմտյան (ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և այլն) բուհերում: Հետևաբար, «Միջուկային ծրագրի իրականացման համար իրանական ղեկավարությունը մեծ նշանակություն տվեց միջուկային ֆիզիկայի և միջուկային օբյեկտների կառավարման տեխնիկայի ոլորտում իրանցի մասնագետների պատրաստմանը»[1]: Եվ ահա, 1950-ական թվականներից, Իրանի և Արևմուտքի համագործակցությամբ, սկիզբ դրվեց իրանցի ուսանողների զանգվածային ուսումնառությանն արևմտյան լավագույն համալսարաններում: «Ապագա իրանցի մասնագետների պատրաստումն իրականացրին ԱՄՆ-ը, Բելգիան, Մեծ Բրիտանիան, ԳՖՀ-ն, Իտալիան, Շվեյցարիան և Ֆրանսիան»[2]:

1977թ. 30-40 հազար իրանցի (ԱՄՆ պետդեպարտամենտի գնահատականներով) սովորում էր ամերիկյան քոլեջներում[3],

[1] *Саруханян С.Հ.,* նշվ. աշխ., էջ 42:
[2] Նույն տեղում:
[3] *Sober S.,* The US and Iran, an Increasing Partnership, www.sedona.net (հղումը՝ ըստ *Саруханян С.Հ.,* նշվ. աշխ., էջ 42:)

ընդ որում՝ նրանց մի մասը սովորում էր միջուկային ֆիզիկայի և հրթիռաշինության հետ կապված մասնագիտություններով։ 1970-77թթ. ամերիկյան չորս առաջատար միջուկային արտադրանք թողարկող ընկերություններում պատրաստվել է 35 իրանցի մասնագետ[1]։

1977-78թթ. ուսումնական տարում արտասահմանում սովորող իրանցի ուսանողների թիվը հասնում էր մոտ 100 հազարի, որից 36 հազ. 220-ը սովորում էր ԱՄՆ-ում։ Մնացյալն ուսումը ստանում էր հիմնականում Մեծ Բրիտանիայի, Արևմտյան Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իտալիայի բուհերում։ Հաջորդ տարի՝ 1978-79 ուստարում, ԱՄՆ-ում սովորող իրանցի ուսանողների թվաքանակը հասավ 45 հազ. 340-ի և գագաթնակետին հասավ հաջորդ տարի՝ 1979-80 ուստարում (51 հազ. 310)։ Համաձայն Կրթության միջազգային ինստիտուտի տվյալների՝ այս ժամանակահատվածում իրանցիներն ԱՄՆ-ում սովորող արտասահմանյան ուսանողների մեջ թվաքանակով առաջին տեղում էին[2]։ 1979թ. իսլամական հեղափոխության նախօրեին մոտ 100 հազ. իրանցի ուսանող էր սովորում աշխարհի (հիմնականում՝ ԱՄՆ) լավագույն համալսարաններում[3]։

Միաժամանակ, լուրջ ուշադրություն էր դարձվում նաև ռազմական կրթությանը՝ արտասահմանում Իրանի բանակի համար սպայական կադրերի պատրաստմանը։ ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների ռազմաուսումնական հաստատություններում պատրաստվել է Իրանի ԶՈՒ սպայակազմի

[1] *Новиков В.Е.,* Состояние и перспективы развития ядерных и ракетных технологий в Иране // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003, с. 146. (հղումը՝ ըստ *Саруханян С.Հ.,* նշվ. աշխ., էջ 42։)
[2] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.։
[3] *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.։

նշանակալի մասը: 1976թ., օրինակ, ԱՄՆ-ում ուսում էր ստանում գրեթե 3 հազար իրանցի զինծառայող[1]:

Իսլամական հեղափոխությունից հետո արտասահմանում սովորող ուսանողների այս հսկայական զանգվածի գերակշիռ մասը չվերադարձավ Իրան՝ կազմելով իրանական գիտական սփյուռքը: «Արևմուտքում պատրաստված մասնագետների մեծ մասը,- նշում է փորձագետը,- իսլամական հեղափոխությունից հետո արտագաղթեց, իսկ ուսանողները, որոնք դեռևս շարունակում էին ուսումն Արևմուտքում, կրկին մեծ մասամբ չվերադարձան հայրենիք»[2]: Բացի նոր հաստատված իսլամական վարչակարգի անընդունելիությունից, մասնագետների արտագաղթի պատճառ էր նաև միջուկային ծրագրերի ժամանակավոր կասեցումը: Նույն փորձագետի դիտարկմամբ՝ իսլամական հեղափոխությունից հետո աշխատանքները Բուշեհրում գործնականում դադարեցին, իրանցի մասնագետների մեծ մասը հեռացավ, աշխատանքների և շինությունների պահպանման ֆինանսավորումը գործնականում դադարեցվեց[3]:

Հետագայում, վերսկսելով միջուկային ծրագրերը՝ համապատասխան կադրերի ապահովման խնդիրը լուծելու համար ԻԻՀ ղեկավարությունը ի թիվս այլ ուղղությունների փորձեց շեշտադրում կատարել նաև հետևյալ ուղղությունների վրա՝ ա) արտասահմանում գտնվող իրանցի մասնագետների հայրենադարձություն, բ) վերջիններիս հետ բացահայտ կամ քողարկված

[1] *Ермаков С.М.,* Перспективы развития вооруженных сил Ирана // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003, с. 92. (հղումը՝ ըստ *Саруханян С.Н.,* նշվ. աշխ., էջ 42):
[2] *Саруханян С.Н.,* նշվ. աշխ., էջ 42:
[3] Նույն տեղում, էջ 46:

համագործակցություն և գ) երիտասարդ իրանցիների մասնագիտական պատրաստում արտերկրում[1]:

1979թ. իսլամական հեղափոխությունից հետո, երբ դադարեցվեց միջուկային և գիտատեխնիկական այլ ոլորտներում Արևմուտք-Իրան համագործակցությունը, որոշ ժամանակ անց Իրանը սկսեց նոր գործընկերներ փնտրել միջուկային ծրագրերի իրականացման համար: Երկարատև փնտրտուքից և տարբեր երկրների (եվրոպական երկրներ, Ճապոնիա և այլն) հետ բանակցություններից հետո ընտրությունը կանգ առավ սկզբնական շրջանում Չինաստանի, ապա Ռուսաստանի վրա, քանի որ ի դեմս վերջինների՝ Իրանը տեսավ իրական գործընկեր իր միջուկային ծրագրերի իրականացման հարցում:

Թե՛ Չինաստանի, թե՛ Ռուսաստանի հետ միջուկային ոլորտում համագործակցությունը ենթադրում էր վերջիններիս կողմից այդ բնագավառի իրանցի մասնագետների պատրաստում[2]: Ինչպես նշում է փորձագետը. «Մեր կողմից Միջուկային վառելիքի հետազոտության և արտադրության Սպահանի կենտրոն այցելությունը, որի գործունեությունը ԱԷՄԳ-ն խնդրում է Իրանին կասեցնել, ցույց տվեց, որ կենտրոնի սարքավորումների նշանակալի մասը չինական ծագման է: Կոնկրետ սարքավորումների աշխատանքը վերահսկում են երիտասարդ իրանցի մասնագետները, որոնք հեշտությամբ և պրոֆեսիոնալ կերպով հաս-

[1] *Задонский С.М.,* Ядерная программа Ирана и российско-иранские отношения, М.: ИИИБВ, «АСТИ-ИЗДАТ», 2002, с. 6-7.

[2] Առհասարակ, ատոմակայանի կառուցումը և շահագործումը սոսկ որևէ գործարանի կամ ձեռնարկության կառուցում և շահագործում չէ: Այն ենթադրում է տնտեսության և գիտության մի հսկայական ճյուղի՝ միջուկային էներգետիկայի հիմնում, ինչի կարևորագույն բաղադրիչն է անհրաժեշտ քանակությամբ այդ ոլորտի պրոֆեսիոնալ կադրերի առկայությունը:

կանում են սարքավորումների՝ չինարեն գրված հրահանգները: Չինարենին տիրապետող իրանցի երիտասարդ ֆիզիկոսների և մեխանիկների առկայությունը կարող է խոսել այն մասին, որ իրանցի կադրերը հնարավորություն են ունեցել անցնել որոշակի, թեկուզ կարճաժամկետ պատրաստություն ՉԺՀ-ում»[1]:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ համագործակցությանը, ապա այն նույնպես ենթադրում էր ոչ միայն սարքավորումների ու տեխնոլոգիաների տրամադրում, այլև համապատասխան կադրերի պատրաստում դրանք շահագործելու համար: Այսպես, «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մասին» 1992թ. օգոստոսի 25-ի ռուս-իրանական համաձայնությամբ ի թիվս այլ բաների նախատեսվում էր՝ ա) միջուկային հետազոտական և էներգետիկ ռեակտորների նախագծում, կառուցում և շահագործում, բ) միջուկային ռեակտորներում և դրանց վառելիքային ցիկլերում օգտագործման համար անհրաժեշտ բաղադրիչների և նյութերի արդյունաբերական արտադրություն, գ) նախագծում և ***ուսուցում*** (ընդգծումը մերն է- Վ.Հ.)[2]: Ըստ նույն համաձայնության՝ Ռուսաստանում միջուկային ֆիզիկայի ոլորտում տարեկան պատրաստում պետք է անցներ ԻԻՀ մինչև 100 քաղաքացի[3]: Ռուսական մամուլում 2003թ. հրապարակված մի տեղեկատվության համաձայն՝ 1999-2003թթ. Նովովորոնեժյան ուսումնամարզումային կենտրոնում ուսուցում էր ստացել արդեն 707 մարդ[4]:

[1] *Саруханян С.Н.,* նշվ. աշխ., էջ 56:
[2] *Михайлов В.Н.,* Домыслы и факты о сотрудничестве России и Ирана в области мирного использования атомной энергии // www.iss.niiit.ru (հղումը՝ ըստ *Саруханян С.Н.,* նշվ. աշխ., էջ 89:)
[3] *Саруханян С.Н.,* նշվ. աշխ., էջ 94:
[4] Стажеров тренируют на настоящей АЭС, https://www.vesti.ru/doc.html?id=103287

Չնայած Իրանից ուսման նպատակով երիտասարդների արտահոսքն արտասահմանյան երկրներ տեղի է ունենում հիմնականում այդ երկրի միջուկային և հրթիռաշինական ծրագրերի շրջանակներում, այնուամենայնիվ, պետությունը խրախուսում է նաև այլ ոլորտներում իրանցի երիտասարդների ուսուցումն արտերկրում: Այդ ոլորտներից կարելի է առանձնացնել մասնավորապես ռազմագիտությունը (ռազմական կադրերի պատրաստումը), բժշկությունը և այլն: Այս ոլորտներում էլ պետությունը ոչ միայն խրախուսում, այլև ինքն է նախաձեռնում և իրականացնում իրանցի երիտասարդների արտասահմանյան կրթությունը՝ ելնելով պետական գերակայություններից: Օրինակ՝ 2000-ական թվականներից, պայմանավորված գիտատեխնիկական ոլորտում ռուս-իրանական համագործակցության ակտիվացմամբ, Ռուսաստանի գիտակրթական հաստատություններում սովորող իրանցի ասպիրանտների թվաքանակը մեծացավ: Վերջիններս խորացնում են իրենց մասնագիտական գիտելիքները հիմնականում կիրառական հիմնարար բնագիտական գիտակարգերում և բժշկագիտության մեջ[1]:

Չնայած իսլամական հեղափոխությունից հետո Արևմուտքի երկրների հետ Իրանի հարաբերությունների վատթարացմանը և գիտատեխնիկական (հատկապես միջուկային) ոլորտում համագործակցության դադարեցմանը, իրանցի ուսանողների կրթությունն արևմտյան բուհերում շարունակվեց դրանից հետո նույնպես: Ներկայում էլ քիչ չեն արտասահմանյան բուհերում սովորող իրանցի ուսանողները: Վերջիններիս հսկայական թվաքանակը նույնպես թույլ է տալիս պատկերացում կազմել իրանական սփյուռքի գիտական ներուժի մասին:

[1] Иранская община в Москве, http://islamist.ru/иранская-община-в-москве/

Այսպես, Իրանի կառավարության տվյալներով՝ 2013թ. արտասահմանյան բուհերում կրթություն ստացող իրանցի ուսանողների թվաքանակը կազմում էր 55 հազ. 686։ Ըստ երկրների՝ այն ուներ հետևյալ պատկերը։ Առաջին տեղում Մալայզիան էր, որտեղ սովորում էր 8 հազ. 883 իրանցի ուսանող, հաջորդում էին Միացյալ Նահանգները (7 հազ. 341 ուսանող), Կանադան (5 հազ. 638 ուսանող), Գերմանիան (3 հազ. 504 ուսանող), Թուրքիան (3 հազ. 364 ուսանող), Մեծ Բրիտանիան (3 հազ. 228 ուսանող)։ Մնացած հատվածը սովորում էր այլ երկրներում[1]։

Ինչպես երևում է սույն վիճակագրությունից, թեև արտասահմանում սովորող իրանցի ուսանողների թվաքանակով առաջին տեղում Մալայզիան էր, այնուամենայնիվ, նրանց մեծամասնությունն ուսումը ստանում էր արևմտյան զարգացած երկրների՝ ԱՄՆ, Կանադայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի բուհերում։ Այս չորս երկրներում սովորող իրանցի ուսանողների հավաքական թվաքանակը կազմում էր 19 հազ. 711։

Իսկ համաձայն Իրանի կրթության նախարարության գնահատականների՝ 2014թ. դրությամբ արտասահմանում կրթություն ստացած իրանցիների թվաքանակը կազմում էր 350-500 հազ.[2]։

2. «Ուղեղների արտահոսք»։ Իրանական գիտական սփյուռքի ձևավորման մյուս պատճառն ուղեղների արտահոսքն է։ Այն բնորոշ է եղել արտագաղթի վերոհիշյալ երեք ալիքներին էլ, չնայած ժամանակի ընթացքում դրա ցուցանիշների որոշակի վերելքներին ու վայրէջքներին։ Համաձայն Արժույթի միջազգային

[1] Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora
[2] Նույն տեղում։

հիմնադրամի 2006թ. տվյալների՝ տարեկան 150-180 հազ. կրթված մարդկանց արտագաղթի ցուցանիշով Իրանը 91 զարգացող և զարգացած երկրների մեջ զբաղեցնում է առաջին տեղը[1]: Համաձայն մի փորձագիտական գնահատականի՝ միջազգային գիտական օլիմպիադաներում մրցանակներ շահած իրանցիների 80%-ը նախընտրում է մեկնել ԱՄՆ, Կանադա և Եվրոպա[2]:

Պատկերացում կազմելու համար, թե ինչ ծավալներ ունի ուղեղների արտահոսքն Իրանից և ինչ տեսակարար կշիռ ունի այն այդ երկրից ընդհանուր արտագաղթի մեջ, հարկ է ուշադրություն դարձնել ևս մեկ ցուցանիշի վրա: Համաձայն Իրանի գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության (*Ministry of Science, Research and Technology*) գնահատականների՝ մարդկային կապիտալի արտահոսքն այդ երկրի կառավարության վրա տարեկան արժենում է $38 մլրդ, ինչը երկու անգամ գերազանցում է նավթի վաճառքից ստացվող եկամուտը[3]:

Կարող ենք ասել, որ միջուկային, հրթիռաշինական և գիտատար այլ ոլորտներում արտասահմանյան երկրներում կադրերի պատրաստման, ինչպես նաև առկա կադրերի հայրենադարձության քաղաքականությունը տվել է որոշակի արդյունքներ: Օրինակ՝ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության առաջին նախագահ Ա.Էթեմադը կրթություն է ստացել Ֆրանսիայում՝ Սակլեի Միջուկային հետազոտությունների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտում, և Շվեյցարիայում՝ Լոզանի պոլիտեխնիկական համալսարանում ու Միջուկային հետազոտությունների դաշնային ինստիտուտում: Նրա հաջորդ

[1] *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում; *Sam Sasan Shoamanesh*, նշվ. աշխ.:

Ռ.Ամրոլահին «միջուկային ֆիզիկա» մասնագիտությամբ կրթություն է ստացել Թեքսասի համալսարանում, իսկ հետո պրակտիկա անցել Միջուկային հետազոտությունների բելգիական կենտրոնում[1]: Այդ արդյունքների մասին է վկայում նաև փորձագիտական գնահատականն առ այն, որ այսօր Իրանում միջուկային ոլորտում աշխատող կադրերը հենց արտասահմանյան (ԱՄՆ, եվրոպական և այլն) երկրներում կրթություն ստացած մասնագետներն են. «...հնարավոր է, որ այսօր իրանական ռումբը ստեղծում են ԱՄՆ-ում դիպլոմավորված իրանցի գիտնականները»[2]:

Հայրենադարձության խնդիրը

Տարբեր են Հայաստանի և Իրանի մոտեցումները հայրենադարձության խնդրին: Իրանական պետության օրակարգում չկա զանգվածային հայրենադարձության խնդիր, քանզի չկա դրա կարիքը:

Զանգվածային հայրենադարձությունը հրատապ խնդիր է այն երկրներում, որտեղ առկա է ժողովրդագրական ճգնաժամ, այսինքն՝ կա թերբնակեցվածության խնդիր: Իրանի պարագայում նման խնդիր չկա: Այդ երկրի բնակչությունը կազմում է ավելի քան 80 մլն, այն դասվում է աշխարհի խոշոր բնակչություն ունեցող երկրների թվին: Բացի այդ, ինչպես բնորոշ է իսլամական երկրներին ընդհանրապես, Իրանում բավական բարձր են ծնելիության ցուցանիշները, հետևաբար՝ բնակչության աճի տեմպերը: Ուստի, այնտեղ չկա թերբնակեցվածության հաղթահարման կամ ազգային համախմբման խնդիր: Այդ պատճառով էլ

[1] *Хлопков А.,* Иранская ядерная программа в российско-американских отношениях // Научные записки ПИР-Центра, 2001, № 18, с. 40.
[2] *Саруханян С.Н.,* նշվ. աշխ., էջ 95:

զանգվածային հայրենադարձությունը որպես այդպիսին ոչ միայն չկա Իրանի արտաքին և ներքին քաղաքականության օրակարգում, այլև որոշ չափով խրախուսվում է հակառակ գործընթացը՝ իրանցիների արտահոսքը երկրից և հաստատումն այլ երկրներում: Այն դիտվում է ոչ միայն ժողովրդագրական էքսպանսիայի, այլև արտերկրում իրանական ներկայության ամրապնդման և, հետևաբար, նաև իրանական ազդեցության մեծացման գործիք: Պատահական չէ, որ ԱՄՆ նոր նախագահ Դոնալդ Թրամփի ներգաղթի քաղաքականության (մուսուլմանական 6-7 երկրներից, որոնց թվում էր Իրանը, ԱՄՆ մարդկանց ներգաղթի արգելման) հիմնական քննադատողներից մեկը եղան Իրանի բարձրագույն իշխանությունները: Զանգվածային ներգաղթի փոխարեն Իրանում շեշտը դրվում է ուղեղների (գիտնականների) և կապիտալի (սփյուռքի գործարարների կողմից Իրանում ներդրումների) հայրենադարձության վրա: Այլ կերպ ասած՝ Իրանում հայրենադարձության խնդիրը կարևորվում է առավելապես գիտական և տնտեսական տեսանկյուններից:

Այլ է իրավիճակը Հայաստանում: Վերջինս, նույնպես կարևորելով գիտական և գործարար սփյուռքի հետ աշխատանքը, այդ թվում նաև «ուղեղների» ու կապիտալի հայրենադարձությունը, միևնույն ժամանակ մեծ կարևորություն է տալիս զանգվածային հայրենադարձության խնդրին: Այդպիսի քաղաքականություն վարվել է հիմնականում խորհրդային տարիներին, որի գագաթնակետը եղավ 1946-48թթ. Մեծ հայրենադարձությունը[1]:

[1] Արժե նշել, որ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին նույնպես իշխանությունների կողմից որոշակի քայլեր ձեռնարկվել են զանգվածային հայրենադարձության ուղղությամբ: Տե՛ս, օրինակ, *Խատիսեան Ալ.,* Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային», 1968, էջ 226-227:

Հայաստանի անկախացումից հետո, եթե անգամ պետությունը մինչև հիմա պաշտոնապես չի վարել զանգվածային հայրենադարձության քաղաքականություն, այն է՝ չի իրականացրել այդպիսի ծրագրեր, ապա, միևնույն է, այդ խնդիրը միշտ էլ առկա է հայ (ինչպես հայաստանյան, այնպես էլ սփյուռքյան) հասարակական-քաղաքական դիսկուրսում։

Դրա պատճառները բավական հիմնավոր են։ Նախ՝ Հայաստանը, ի տարբերություն Իրանի, ունի ժողովրդագրական խնդիր։ Անկախությունից ի վեր ծայր առած արտագաղթը, ծնելիության ցածր և մահացության բարձր ցուցանիշները երկիրը կանգնեցրել են ժողովրդագրական լուրջ ճգնաժամի՝ ամայացման (հայաթափման) և այլ ժողովուրդների կողմից ժողովրդագրական յուրացման սպառնալիքի առջև։ Հայաստանն այն դեպքը չէ, երբ բնակչության արտահոսքն ինչ-որ տեղ կարելի է դիտել դրական գործընթաց՝ արտերկրում հայկական ներկայության և ազդեցության մեծացման իմաստով։

Հայաստանից բնակչության արտահոսքը, իհարկե, որոշակի թարմ ուժ է հաղորդում սփյուռքին, մեծացնում վերջինիս ներուժը։ Սակայն դա տեղի է ունենում պետության ներուժի հաշվին՝ թուլացնելով այն։ Իսկ Սփյուռքն առանց (ուժեղ) հայրենիքի, որքան էլ մեծ ներուժ ունենա, միևնույն է, կրկին կհայտնվի ծանր կացության մեջ՝ ենթարկվելով ընդհուպ մինչև անհետացման սպառնալիքի։ Այս մասին դեռևս ժամանակին ահազանգել է Գարեգին Նժդեհը. «Կասկածէ դուրս է եւ այն, որ հայութեան տարագիր կէսի համար – եթէ օր առաջ չհոգեփոխուեց – սակաւաթիւ տարիներ են պէտք, որպէսզի նրա կեանքում մահուան տրագիզմը տեղի տայ հոգեւոր ինքնասպանու-

թեան առջեւ, որպէսզի հայ *homo*-ն դառնայ homunculus եւ մեռնի ապազգայնացմամբ։ Գիտենք եւ այն, որ տարաբնակ կէսի կապոյտ կոտորածը խնդրական պիտի դարձնի գոյութիւնը հայութեան երկրորդ կէսի, որ կառչած կը մնայ Արարատի փէշերին»[1]։

Հետեւաբար, Հայաստանից բնակչության որոշակի արտահոսքը կարող է դրականորեն ընկալվել (Սփյուռքի հզորացման իմաստով) միայն այն ժամանակ, երբ երկրում հաղթահարված կլինի ժողովրդագրական ճգնաժամը, այսինքն՝ Հայաստանի բնակչության թվաքանակը կհասնի այն նվազագույն աստիճանին, որի դեպքում ազգային անվտանգության առումով սպառնալիքներ չեն լինի, երաշխավորված կլինի ՀՀ ազգային անվտանգությունը ժողովրդագրական տեսանկյունից։ Իսկ թե որն է այդ ժողովրդագրական ցուցանիշը, այսինքն՝ որքա՞ն պետք է լինի Հայաստանի բնակչության թվաքանակն ազգային անվտանգության առումով խնդիրներ չունենալու համար՝ այլ հետազոտության նյութ է։

Իսկ այն, որ ժողովրդագրական խնդիրները կարող են աղետալի հետևանքներ ունենալ ազգային անվտանգության տեսակետից, ապացուցվում է թե՛ պատմության փորձով և թե՛ արդի գործընթացներով։ Խորհրդային, հատկապես հետպատերազմյան մի քանի տարիներին Հայաստանի թերբնակեցումը սպառնում էր նրան պետականության կարգավիճակի կամ մակարդակի իջեցմամբ՝ միութենական հանրապետությունից մինչև ինքնավարություն Վրաստանի (կամ Ադրբեջանի) կազմում։ Այդ մասին են վկայում խորհրդային շրջանի զանգվածային հայրե-

[1] *Գարեգին Նժդեհ,* Բաց նամակ Մայքլ Արլէնին, Հատընտիր, Եր., Ամարաս, 2006, էջ 464։

նադարձությանը նվիրված հետազոտությունները։ Օրինակ, ինչպես փաստում է հետազոտողը, «Պատերազմի տարիների Հայաստանը մարդկային մեծ կորուստներ էր ունեցել, և բնակչությունը նվազել էր մեկ միլիոնից, որը Հայաստանի կարգավիճակի փոփոխությամբ էր սպառնում»[1]։ Եվ Մեծ հայրենադարձությունն ընկալվում էր նաև այդ սպառնալիքի չեզոքացման տեսանկյունից։ Պատահական չէ, որ հետազոտողի համոզմամբ՝ զանգվածային հայրենադարձության «Հնարաւոր դրդապատճառ է նաեւ Հայաստանի բնակչութեան թուի հարցը, որ այդ օրերին մէկ միլիոնից պակաս լինելով, վտանգի տակ էր դնում նրա Սովետական «անկախ» հանրապետութեան իրավիճակը։ Սպառնալիք էր Հայաստանը Վրաստանին կցուելը եւ որպէս ինքնավար հանրապետութիւն ճանաչուելը»[2]։

Ներկայում նույնպես ժողովրդագրական ճգնաժամից բխող ազգային անվտանգության մարտահրավերների չեզոքացումը հայ հասարակական-քաղաքական դիսկուրսում կապվում է զանգվածային հայրենադարձության կամ ներգաղթի հետ։ Բացի այդ, Հայաստանը, ստվարաթիվ համայնքներ ունենալով աշխարհի թեժ կետերում (Մերձավոր և Միջին Արևելք, Ուկրաինա և այլն), այսպես թե այնպես, անկախ իր ցանկությունից, պարբերաբար բախվում է տարերային (ոչ ծրագրված) հայրենադարձության խնդրին, ինչպես տեղի ունեցավ իրաքյան

[1] *Ստեփանյան Արմենուհի*, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 153։

[2] *Փիրումյան Ռ.*, Հայրենադարձության որոշ հիմնահարցերի շուրջ, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 197։

պատերազմի (2003թ.), սիրիական ճգնաժամի (2011-ից առ այսօր) տարիներին, երբ տեղի ունեցավ զգալի քանակությամբ իրաքահայերի և սիրիահայերի ներհոսք Հայաստան: Հետևաբար, Հայաստանը մշտապես պետք է պատրաստ լինի նման հայրենադարձության ալիքների:

Հարկ է նշել, որ Իրանը նույնպես որոշակի տարբերությամբ բախվում է այս խնդրին: Գտնվելով պայթյունավտանգ տարածաշրջանում՝ այն նույնպես ենթարկվում է հարևան երկրներից ու տարածաշրջաններից (որտեղ տեղի են ունենում փոթորկահույզ իրադարձություններ)՝ Աֆղանստանից, Իրաքից և այլն, մեծ քանակությամբ փախստականների ներհոսքի, որոնց զգալի մասը, ինչպես արդեն նշվեց վերը, իրանական ծագմամբ (իրանալեզու) էթնիկ ընդհանրությունների ներկայացուցիչներ են: 1979-89թթ. խորհրդային ներխուժումն Աֆղանստան, 1980-88թթ. իրաք-իրանյան պատերազմը պատճառ դարձան Աֆղանստանից ու Իրաքից միլիոնավոր փախստականների հայտնվելուն Իրանում[1]: Հետագայում նույնպես այս երկրներում ու տարածաշրջանում՝ ընդհանրապես, փոթորկահույզ իրադարձությունները շարունակեցին հաջորդել միմյանց (ամերիկյան ներխուժում Աֆղանստան 2001թ., Իրաք՝ 2003թ., սիրիական ճգնաժամ՝ 2011-ից ի վեր, ԻՊ գործունեությունը Սիրիայում և Իրաքում՝ 2014-ից ի վեր)՝ պատճառ դառնալով փախստականների խնդրի սրմանը, այդ թվում նաև Իրանի համար:

[1] Տե՛ս *Shirin Hakimzadeh*, նշվ. աշխ.:

Առաջարկություններ

Ամփոփելով սույն հետազոտությունը՝ հարկ ենք համարում ի մի բերել դրա հիմնական արդյունքները ստորև ներկայացված առաջարկությունների տեսքով: Ընդհանուր առմամբ, սփյուռքի հետ աշխատանքի իրանական փորձից հայ իրականության համար կիրառելի և տեղայնացման ենթակա տարրերը կարելի է բաժանել մի քանի ոլորտների՝ տեղեկատվական, քաղաքական, տնտեսական և գիտական:

1. Տեղեկատվական ոլորտում իրանական փորձից հայկական սփյուռքի համար ուսանելի է տեղեկատվական-վերլուծական ասպարեզում վերջինիս աշխատանքն ի նպաստ Իրանի: Խոսքը վերաբերում է միջազգային լրատվամիջոցներում և ուղեղային կենտրոններում աշխատող հայ լրագրողներին և վերլուծաբաններին: Այս ասպարեզում գործունեության հիմնական ուղենիշները պետք է լինեն հայկական խնդիրների (օրինակ՝ Արցախյան հակամարտության) ակտուալացումը և հայկական ու տվյալ երկրի (դիցուք՝ ԱՄՆ) շահերի ներդաշնակության գաղափարի առաջմղումը:

Ինչպես ցույց տրվեց վերը, ԱՄՆ խոշոր լրատվամիջոցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող իրանցիներն իրենց վերլուծություններում փորձում են ներդաշնակեցնել ԱՄՆ և Իրանի շահերը և այդ կերպ տեղեկատվական-վերլուծական ասպարեզում օգտակար լինել իրենց երկրի հետ կապված վերոհիշյալ երեք փոխկապակցված քաղաքական խնդիրների լուծմանը:

Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե Արցախյան հիմնահարցը ԱՄՆ-ի համար ունի այն նույն նշանակությունը, ինչ

Իրանի միջուկային ծրագիրը: Բացի նշանակությունից, Իրանի միջուկային թնջուկում ԱՄՆ-ը ներքաշված է անմիջականորեն՝ որպես համաշխարհային գերտերություն: Խնդիրը գտնվում է ԱՄՆ - Իրան հարաբերությունների ծիրում, ինչը չենք կարող ասել Արցախյան հիմնահարցի մասին: Այլ կերպ ասած՝ Իրանի միջուկային ծրագիրն աշխարհաքաղաքական խնդիր է, իսկ Արցախյան հակամարտությունը՝ տեղական կամ լավագույն դեպքում՝ տարածաշրջանային խնդիր: Հետևաբար, Արցախյան հիմնահարցը ԱՄՆ քաղաքական կյանքում (թե՛ ներքին և թե՛ արտաքին) չունի այն հրատապությունը, ինչ Իրանի միջուկային ծրագիրը:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այդ երկրի քաղաքական իսթեբլիշմենթի գրեթե անտեղյակությունն Արցախյան հիմնահարցից պայմանավորված է նաև տեղի հայ համայնքի ոչ բավարար աշխատանքով: Անգամ ԱՄՆ նախագահի թեկնածուները կամ նույնիսկ ընտրված նախագահները (սկզբնական շրջանում) պատկերացում չեն ունենում Արցախյան հիմնահարցի մասին: Այդ մասին է խոսում ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի Իրավունքի և դիվանագիտության դպրոցի գիտաշխատող, միջազգայնագետ Ս.Սարգսյանի վկայությունն այն մասին, որ երբ իրենք (ԱՄՆ հայ համայնքի ներկայացուցիչները) հարցրել են ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփին, թե ինչպիսին է նրա դիրքորոշումը Արցախյան հիմնահարցի կապակցությամբ, վերջինս պատասխանել է, թե գաղափար չունի այդ մասին ընդհանրապես (չգիտի, թե դա ինչ խնդիր է)[1]: Եվ սա՝ այն դեպքում,

[1] Այս դիտարկումը Սուրեն Սարգսյանն արել է «Նորավանք» ԳԿՀ սեմինարի ժամանակ: Տե՛ս Թրամփի վարչակազմը և Հայաստանը, http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=1541

երբ ԱՄՆ-ը Արցախյան հիմնահարցով զբաղվող միակ միջազգային ատյանի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահ երկրներից մեկն է (Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ միասին)։

Հետևաբար, ԱՄՆ հայ համայնքից, հատկապես խոշոր լրատվամիջոցներում և «ուղեղային կենտրոններում» աշխատող հայ լրագրողներից ու փորձագետներից որպես առաջին խնդիր պահանջվում է, նախ՝ բարձրացնել ԱՄՆ հասարակական-քաղաքական շրջանակների, մասնավորապես՝ քաղաքական իսթեբլիշմենթի իրազեկվածությունն Արցախյան հիմնահարցի վերաբերյալ։ Իսկ դրա համար հարկ է սեփական հրապարակումներում ավելի մեծ տեղ տալ այդ հիմնահարցին՝ բարձրացնելով դրա հրատապությունն ԱՄՆ հասարակական-քաղաքական շրջանակներում, հատկապես գործադիր իշխանություն իրականացնող բարձրագույն պաշտոնյաների (նախագահ, պետքարտուղար և այլն) շրջանում։

ԱՄՆ հասարակական-քաղաքական շրջանակներում Արցախյան հիմնահարցի հրատապության մակարդակի բարձրացումից հետո որպես հաջորդ քայլ (կամ միաժամանակ) անհրաժեշտ է որոշակի սրբագրումներ կատարել հիմնահարցի մատուցման մեջ։ Հարկավոր է ոչ միայն դժգոհել ադրբեջանական ագրեսիայից, դատապարտել այն, աշխարհին արդարության կոչ անել, այլև Արցախյան հիմնահարցը ներդաշնակ դիտարկել ԱՄՆ արտաքին քաղաքական շահերի համատեքստում։ Մասնավորապես, անհրաժեշտ է առաջ մղել այն գաղափարը, որ Արցախի անկախության միջազգային ճանաչումը բխում է ԱՄՆ՝ որպես աշխարհում ժողովրդավարություն տարածող կամ ժողովրդավարության տարածման համար մտահոգ պետության շահերից։

Այս հարցում լայնորեն կարելի է կիրառել արևմտյան քաղաքագիտության թեզերը ժողովրդավարացման և ժողովրդավարության մասին և դրանք պրոյեկտել Արցախյան հիմնահարցի վրա։ Ըստ արևմտյան մոտեցման՝ անկախ ազգային պետությունն անհրաժեշտ նախապայման է ժողովրդավարության համար։ Որևէ էթնիկ խումբ չի կարող լինել ժողովրդավարական ավտորիտար կամ տոտալիտար պետության կազմում։ Հետևաբար, այդ հասարակության ժողովրդավարացման համար անհրաժեշտ է, որ կամ ժողովրդավարանա այն պետությունը, որի կազմում գտնվում է տվյալ էթնիկ խումբը, կամ էլ, եթե դա անհնար է, այն դուրս գա տվյալ պետության կազմից՝ կառուցելով իր անկախ ժողովրդավարական պետությունը։ Այս տեսակետից, քանի որ Ադրբեջանի ժողովրդավարացման հեռանկարները խիստ մշուշոտ են, Արցախում ժողովրդավարության անշրջելիության միակ ուղին մնում է նրա միջազգային ճանաչումը։ Հետևաբար, Արցախի անկախության միջազգային ճանաչումը բխում է աշխարհում և, մասնավորապես, Հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարության տարածմանը նպաստելու ԱՄՆ և արևմտյան այլ տերությունների արտաքին քաղաքական նպատակներից և համընկնում է վերջիններիս շահերի հետ։ Ընդհանրական ձևով ներկայացված այս թեզերը կարելի է ավելի խորացված և մանրամասն ներկայացնել արևմտյան հասարակություններին և քաղաքական շրջանակներին։

2. Քաղաքական ոլորտում իրանական սփյուռքի ինքնաքննադատությունն ԱՄՆ և առհասարակ հյուրընկալ երկրների քաղաքական կյանքին մասնակցության առումով որոշակիորեն տեղին է և ուսանելի նաև հայկական սփյուռքի, մասնավորա-

պես՝ ԱՄՆ հայ համայնքի պարագայում, հաշվի առնելով այդ երկրի հայկական լոբբիստական կառույցների լուսանցքային դերը վերջին երկու՝ 2012թ. և 2016թ. նախագահական ընտրություններում: Գրեթե զրոյականի հասցնելով իրենց մասնակցությունն այդ երկու համապետական կարևոր քաղաքական գործընթացներին՝ հայկական լոբբիստական կառույցներն այնուհետև զրկվեցին ԱՄՆ գործադիր իշխանության հետ փոխազդեցության գործուն հնարավորություններից: Սույն հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել հաջորդ նախագահական ընտրություններում և ակտիվացնել սեփական մասնակցությունն այդ գործընթացին ու ընդլայնել ԱՄՆ ապագա գործադիր իշխանության հետ քննարկվող՝ հայ համայնքին հուզող հարցերի շրջանակը (բացի Ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրից՝ այդ շրջանակի մեջ ներառելով նաև հայությանը հուզող այլ հիմնահարցեր՝ Արցախյան խնդիրը, ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակումը, հայ-ամերիկյան տնտեսական, քաղաքական և այլ հարաբերությունների զարգացումն ու խորացումը, Մերձավոր Արևելքի հայ համայնքների դրությունը և այլն)[1]:

3. Գիտության ոլորտում իրանական քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, թերևս, ամենաուսանելին է մեզ համար: Բանն այն է, որ Իրանն այս հարցում վարում է առավել թիրախավորված քաղաքականություն, ինչն էլ, իր հերթին, տալիս է դրական արդյունքներ: Վերն արդեն նշվել է, որ իրանական գիտական սփյուռքի ձևավորումն անմիջականորեն կապված է նրա միջուկային և հրթիռաշինական ծրագրերի հետ: Այս

[1] Ավելի մանրամասն տե՛ս *Վ.Հովյան,* ԱՄՆ հայ համայնքի հիմնական խնդիրները, Գլոբուս, թիվ 4, 2017, էջ 43-45:

ոլորտներում համապատասխան կադրերի անհրաժեշտությունը մղեց Իրանին այդ բնագավառներին առնչվող մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում ուսանելու գործուղել մեծ թվով իրանցի երիտասարդների։ Վերջիններս էլ ձևավորեցին իրանական գիտական սփյուռքի կորիզը։ Միևնույն ժամանակ, միջուկային և հրթիռաշինական ոլորտներում իրանցի կադրերի հայրենադարձությունը լիովին իրատեսական ու իրականանալի էր, քանի որ երկրում զարգացվում էին հենց այդ ոլորտները՝ որպես հիմնական ուղղություններ։ Այսինքն՝ Իրանում կար հայրենադարձված գիտնականների մեծ պահանջարկ, և հետևաբար՝ լայն գործունեության ասպարեզ վերջիններիս համար։

Հայաստանը նույնպես վերջին տարիներին սկսել է վարել տաղանդավոր երիտասարդների ուսուցումն արտասահմանյան հեղինակավոր բուհերում հովանավորելու քաղաքականություն։ Այդ նպատակով 2009թ. ստեղծվել է «Լույս» հիմնադրամը, որը ֆինանսավորում է վարկանիշով առաջին տասնյակում գտնվող աշխարհի լավագույն բուհերում հայաստանցի երիտասարդների ուսումը։ Հիմնադրամի կողմից վճարվում է նրանց ուսման վարձի 50%-ը։

Սակայն, ի տարբերություն իրանական փորձի, ՀՀ քաղաքականությունն այս հարցում երկար ժամանակ թիրախավորված չի եղել։ Որպես հիմնական սկզբունք ընդունվել է, ինչպես արդեն նշվեց, բուհի վարկանիշը (առաջին տասնյակ աշխարհում)։ Անտեսվել է մասնագիտությունների հարցը։ Մասնավորապես, այն հարցը, թե պետության հաշվին տվյալ մասնագիտությունը ստացող ՀՀ քաղաքացին հետագայում ինչ հնարավո-

րություններ է ունենալու՝ իր մասնագիտական գիտելիքները կիրառել հայրենիքում և հայրենադարձվել: Թերևս, այս է եղել հիմնական պատճառը, որ «Լույս» հիմնադրամն իր շահառուների առջև իրավական պարտավորություն չի դրել ուսումն ավարտելուց հետո գոնե որոշ ժամանակ համապատասխան մասնագիտությամբ աշխատել Հայաստանում:

Կարծում ենք, նման ընդհանրական քաղաքականության փոխարեն նպատակահարմար է որոշակիորեն տեղայնացնել գիտական սփյուռքի հետ տարվող քաղաքականությունում իրանական առավել թիրախավորված փորձը: Այսինքն՝ արտասահմանում հայաստանցի երիտասարդների ուսումը հովանավորելու հարցում շեշտադրումը կատարել այն մասնագիտությունների վրա, որոնք առավել են համապատասխանում ՀՀ տնտեսության առաջնահերթություններին: Դրա համար անհրաժեշտ է. ա) հստակ որոշել տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության ոլորտի գերակա ուղղությունները (*IT* ոլորտ և այլն), բ) ֆինանսավորել միայն այն մասնագիտություններով հայաստանցի երիտասարդների ուսուցումն արտասահմանյան լավագույն բուհերում, որոնք առավել են համապատասխանում Հայաստանի տնտեսության և, մասնավորապես, գիտատար արդյունաբերության գերակայություններին:

Այս դեպքում արդեն կարելի է անգամ որոշակիորեն նվազեցնել համաշխարհային լավագույն բուհերի վարկանիշային շեմը՝ լավագույն տասնյակից հասցնելով, օրինակ, լավագույն հարյուրյակի: Կարծում ենք, ավելի նպատակահարմար է, որ հայաստանցի երիտասարդը սովորի մի փոքր ավելի ցածր վարկանիշ ունեցող համաշխարհային բուհում, սակայն այնպիսի

մասնագիտությամբ, որը հնարավորություն կտա հետագայում իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կիրառել Հայաստանում, քան ավելի բարձր վարկանիշ ունեցող բուհում, սակայն այնպիսի մասնագիտությամբ, որը հետագայում լայն հնարավորություններ չի տա նրան իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կիրառել Հայաստանում։

Կարծում ենք, որ նման մոտեցումը փոխշահավետ է թե՛ պետության և թե՛ անհատ գիտնականի համար։ Մի կողմից՝ տաղանդավոր երիտասարդը հնարավորություն է ստանում պետության աջակցությամբ բարձրակարգ կրթություն ստանալ արտասահմանյան հեղինակավոր բուհերում, այնուհետև իր մասնագիտությամբ աշխատանք գտնել իր երկրում[1], մյուս կողմից՝ պետությունը կարողանում է լուծել իր համար գերակա ոլորտներում բարձրակարգ կադրերի ապահովման, մասնագիտական հայրենադարձության խնդիրը։

Այլ կերպ ասած, եթե պետությունն իրավականորեն չի պարտավորեցնում իր հարկատուների միջոցներով արտասահմանում կրթություն ստացած երիտասարդներին վերադառնալ հայրենիք և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կիրառել ի շահ վերջինիս զարգացման, ապա այն նվազագույնը պարտավոր է գոնե անհրաժեշտ պայմաններ կամ նախադրյալներ ստեղծել դրա համար։ Իսկ դրա լավագույն ճանապարհը, ինչպես ցույց է տվել նաև իրանական փորձը, ըստ երկրի տնտեսության և, մասնավորապես, գիտատար արդյունաբերության

[1] Քանի որ այդ աշխատանքը պետք է լինի երկրի տնտեսության համար գերակայություն համարվող ոլորտներում, ապա ենթադրվում է, որ այն պետք է լինի նաև գոնե համեմատաբար բարձր վարձատրվող։

գերակա ուղղությունների, թիրախավորված քաղաքականությունն է արտասահմանում բարձրակարգ կադրեր պատրաստելու գործում:

Հարկ է նշել, որ «Լույս» հիմնադրամի գործունեության մեջ բոլորովին վերջերս նկատվում է ընդհանրական քաղաքականությունից ավելի թիրախավորվածին անցնելու միտում: Այս համատեքստում հատկապես կարևորվում է երկու քայլ: Նախ՝ այսուհետև ֆինանսավորվելու է ոչ թե բոլոր մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում հայ երիտասարդների ուսումը, այլ այն մասնագիտություններով, որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում: Եվ երկրորդ՝ այսուհետև հիմնադրամի շահառուները պարտավորվում են ուսումն ավարտելուց հետո երեք տարի ախատել Հայաստանում:

Այնուամենայնիվ, հասկանալի է, որ պետության գերակա ուղղությունն էլ միանշանակ հասկացություն չէ: Այն, թերևս, բազմաշերտ և բազմաբովանդակ է: Մասնավորապես, կարող են գոյություն ունենալ գերակայության տարբեր աստիճաններ՝ առաջին աստիճանի գերակայություն, երկրորդ, երրորդ և այլն: Այդ դեպքում կարելի է արտասահմանյան կրթության համար հատկացվող ֆինանսավորման չափերը համապատասխանեցնել այդ գերակայության աստիճաններին: Այլ կերպ ասած՝ արտասահմանում կրթություն ստանալու համար հատկացվող ֆինանսավորման չափերը կարելի է պայմանավորել ըստ Հայաստանի տնտեսության և, մասնավորապես, գիտատար արդյունաբերության ուղղությունների գերակայության աստիճանների:

Դա պայմանականորեն կարող է ստանալ մոտավորապես հետևյալ տեսքը.

- Առաջին աստիճանի գերակայություն հանդիսացող ուղղությունները (ենթադրվում է, որ դրանք պետք է լինեն *IT* ոլորտը, մեքենաշինությունը, ռազմական արդյունաբերությունը, էներգետիկան և այլն) սպասարկող մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում կրթություն ստացողները ստանում են 80-100% ֆինանսավորում:
- Երկրորդ աստիճանի գերակայություն ունեցող ուղղությունները (առողջապահություն, գյուղատնտեսություն, բնապահպանություն և այլն) սպասարկող մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում կրթություն ստանալու մեկնող երիտասարդները ստանում են 50% ֆինանսավորում:
- Երրորդ աստիճանի գերակայություն ունեցող ուղղությունները (տուրիզմ և այլն) սպասարկող մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում ուսում ստանալու մեկնող երիտասարդները ստանում են 20% ֆինանսավորում:

4. Տնտեսության ոլորտում առաջարկություններով հանդես գալը, թերևս, ամենաանշնորհակալ գործն է, հատկապես մասնագիտությամբ ոչ տնտեսագետի համար: Այս ոլորտի լավագույն գիտակները, թերևս, իրենք՝ գործարարներն են: Որքան էլ խոսենք կամ գրենք այդ մասին, միևնույն է, կապիտալն իր գործն անում է և հարթում իր ճանապարհը:

Այնուամենայնիվ, սփյուռքի հետ աշխատանքի իրանական փորձում առկա է մի երևույթ, որն առկա չէ հայ իրականության մեջ: Կարծում ենք, այդ մասին արժե հիշատակել, տեղյակ պահել հայ հանրությանը՝ հետագա որոշումների ընդունումը թողնելով իրենց՝ գործարարներին: Խոսքը վերաբերում է սփյուռքի հետ համատեղ ձեռնարկություններին: Հայ իրականության մեջ առկա է միայն սփյուռքի ձեռնարկատերերի կողմից Հայաստանում ներդրումներ կատարելու, այստեղ ձեռնարկություններ հիմնելու, ենթակառուցվածքները զարգացնելու, բարեգործական ծրագրեր իրականացնելու երևույթը: Հայտնի չէ Հայաստանի և Սփյուռքի ձեռնարկատերերի կողմից կամ ՀՀ (որպես պետության) և Սփյուռքի ընկերությունների կողմից Հայաստանում համատեղ տնտեսվարող սուբյեկտներ (ձեռնարկություններ, ընկերություններ) հիմնելու որևէ դեպք: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է այնպիսի ընկերությունների կամ ձեռնարկությունների ստեղծմանը, որոնց բաժնետոմսերի մի մասը կպատկանի Սփյուռքի, մյուս մասը՝ Հայաստանի գործարարներին, կամ նաև պետության (ՀՀ) մասնակցությամբ այնպիսի ձեռնարկություններին կամ ընկերություններին, որոնցում բաժնետեր կլինեն նաև սփյուռքահայ գործարարները:

Կարծում ենք, համագործակցության նման ձևաչափը կարող է փոխշահավետ լինել՝ հետևյալ նկատառումներով: Հաջող բիզնես հիմնելու համար անհրաժեշտ են մի քանի նախադրյալներ՝ նախնական կապիտալ, տեղեկացվածություն (ոչ միայն տվյալ երկրի գործարար օրենսդրության, հարկային և մաքսային օրենքների, այլև տվյալ երկրի բիզնես միջավայրի մասին առհասարակ, շուկայի հնարավորությունների, առա-

ջարկի և պահանջարկի հարաբերակցության, տնտեսության գերակա ուղղությունների, մրցակցության և այլնի մասին), կապեր՝ որոշ խնդիրներ ոչ ֆորմալ եղանակներով լուծելու համար (այս արտահայտությունն այստեղ կիրառվում է բառի դրական իմաստով) և այլն։

Համատեղ ձեռնարկությունների ստեղծման պարագայում նախնական անհրաժեշտ կապիտալը կամ դրա այն մասը, որը պակասում է, կարող են ապահովել սփյուռքի գործարարները։ Մինչդեռ ՀՀ գործարար միջավայրի վերաբերյալ տեղեկացվածությունը, ինչպես նաև համապատասխան կապերը կարող են ապահովել տեղի գործարարները։ Իսկ պետությունն էլ, բաժնետեր լինելու պարագայում, կարող է ապահովել երկրի օրենսդրությանը լավագույն տիրապետումը, ինչը նույնպես անհրաժեշտ նախապայման է գործարարության ոլորտում հաջողությունների հասնելու համար։ Անհրաժեշտության դեպքում պետությունը կարող է գնալ նաև օրենսդրական փոփոխությունների՝ համատեղ բիզնեսի առջև ծառացած խոչընդոտները հաղթահարելու կամ նրա զարգացումը խթանելու նպատակով։

Աղբյուրներ և գրականություն

1. Ի՞նչեր կ'անցնին կը դառնան Ըէզա Զարապի դէմ բացուած դատի ծալքերէն ներս. նախկին նախարար Չաղլաեանի անունով ստեղծուած զգայացունց զարգացում – մինչ Էրտողան կը պաշտպանէր Զարապը, Քըլըճտարօղլու շատ ծանր պնդումներ հրապարակ քշեց, Նոր Մարմարա, 11 սեպտեմբերի, 2017։
2. *Խատիսեան Ալ.,* Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային», 1968։
3. «Հալքպանք» դրամատան փոխտնօրէն Մէհմէտ-Հաքան Աթիլլա ձերբակալուեցաւ Ամերիկայի մէջ. ան կը մեղադրուի Ըզգա Զարրապի գործով, Նոր Մարմարա, 29 մարտի, 2017։

4. *Հովյան Վ.,* ԱՄՆ հայ համայնքի հիմնական խնդիրները, Գլոբուս, թիվ 4, 2017:
5. *Հովյան Վ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնների դերակատարությունը, 21-րդ ԴԱՐ, թիվ 4, 2014:
6. *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Ե., «Գասպրինտ», 2014:
7. *Ստեփանյան Արմենուհի*, 1946-1948թթ. հայրենադարձության ինտեգրման և ադապտացման խնդիրները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., Լիմուշ, 2009:
8. *Փիրումյան Ռ.,* Հայրենադարձության որոշ հիմնահարցերի շուրջ, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., Լիմուշ, 2009:
9. *Գարեգին Նժդեհ,* Բաց նամակ Մայքլ Արլէնին, Հատընտիր, Եր., Ամարաս, 2006:
10. *Ермаков С.М.,* Перспективы развития вооруженных сил Ирана // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003.
11. *Задонский С.М.,* Ядерная программа Ирана и российско-иранские отношения, М.: ИИИБВ, «АСТИ-ИЗДАТ», 2002, с. 6-7.
12. *Новиков В.Е.,* Состояние и перспективы развития ядерных и ракетных технологий в Иране // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003.
13. *Сажин В.И.,* 2004. Война против Ирака и проблема нераспространения ядерного оружия. Армия, ВТС, ОМП на Ближнем Востоке, М., ИИИБВ, 2004.
14. *Саруханян С.Н.,* Россия и Иран. 10 лет ядерного сотрудничества, Ер., «Гаспринт», 2006.
15. *Хлопков А.,* Иранская ядерная программа в российско-американских отношениях // Научные записки ПИР-Центра, 2001, № 18.
16. *Ali Javan with Betty Blair*, Scientists Who Made A Difference: Ali Javan, The Gas Laser and Beyond, Azerbaijan International, Vol. 4:2 (Summer 1996).

Էլեկտրոնային աղբյուրներ

1. *Егор Шилов*, Кто влияет на отношение США к Ирану, http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_5039000/5039274.stm

2. Иран попросил денег у зарубежных соотечественников, https://pronedra.ru/globaleconomics/2015/10/10/iran-poprosil-deneg-u-sootechestvennikov/
3. Иранская диаспора в Европе провела в Брюсселе митинг в защиту права ИРИ на мирный атом, Иранская диаспора в ОАЭ, http://www.emirat.ru/wiki/Иранская_диаспора_в_ОАЭ
4. Иранская диаспора Узбекистана обзавелась собственным музеем истории, http://regnum.ru/news/polit/1177510.html
5. Иранская община в Москве, http://islamist.ru/иранская-община-в-москве/
6. Стажеров тренируют на настоящей АЭС, https://www.vesti.ru/doc.html?id=103287
7. *Михайлов В.Н.,* Домыслы и факты о сотрудничестве России и Ирана в области мирного использования атомной энергии, www.iss.niiit.ru
8. A Closer Look at the Iranian Diaspora, http://www.iranandbeyond.com/a-closer-look-at-the-iranian-diaspora.html
9. A List of Just Some of the High Profile Iranians Outside Iran, http://www.iranandbeyond.com/high-profile-iranians-outside-of-iran.html
10. *Ali Javan*, https://en.wikipedia.org/wiki/Ali_Javan#cite_note-4
11. *Amir Bagherpour*, The Iranian Diaspora in America: 30 Years in the Making, http://www.pbs.org/wgbh/pages/frontline/tehranbureau/2010/09/the-iranian-diaspora-in-america-30-years-in-the-making.html
12. *Holly Dagres*, Diaspora Blues: Why the Iranian Diaspora in the United States Disappoints Me, http://www.huffingtonpost.com/holly-dagres/iranian-americans_b_2219651.html
13. Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora; http://www.iran.ru/news/politics/40436/Iranskaya_diaspora_v_Evrope_provela_v_Bryussele_miting_v_zashchitu_prava_IRI_na_mirnyy_atom
14. *Sam Sasan Shoamanesh*, Iran is a riddle, wrapped in a mystery, inside an enigma. But what of the over three million Iranians outside Iran?, http://globalbrief.ca/blog/2009/11/01/on-the-iranian-diaspora/
15. *Shirin Hakimzadeh*, Iran: A Vast Diaspora Abroad and Millions of Refugees at Home, http://www.migrationpolicy.org/article/iran-vast-diaspora-abroad-and-millions-refugees-home
16. *Sober S.,* The US and Iran, an Increasing Partnership, www.sedona.net
17. The Persian Diaspora, http://www.farsinet.com/pwo/diaspora.html

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ներկայում, առավել քան երբևէ, սփյուռք ունեցող տարբեր երկրներ աստիճանաբար ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում արտերկրում բնակվող իրենց հայրենակիցների խնդիրներին: Այս տեսանկյունից բացառություն չէ նաև Թուրքիան: Թուրքական սփյուռքը կարելի է դիտարկել երկու մակարդակով՝ սփյուռքի ձևավորում և պետություն-սփյուռք հարաբերություններ (փոխգործակցության ոլորտներ):

Թուրքիայի Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի զեկույցի համաձայն, այսօր թուրքական սփյուռքը հաշվվում է մոտ 5,5 մլն, որից մոտ 4,6 մլն-ը բնակվում է Եվրոպայի, մնացածը՝ այլ տարածաշրջանների (Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Մերձավոր Արևելք, Ասիա) երկրներում[1]: Ակադեմիական գնահատականներով՝ 2011թ. թուրքական սփյուռքը եվրոպական երկրներում կազմել է մոտ 4 մլն և վերջին հինգ տարիներին թվաքանակի առումով արմատական փոփոխությունների չի ենթարկվել[2]:

[1] Dünya Türk Iş Konseyi, Dünya Türk Girişimciler Kurultayı, Sonuç Raporu, 26-27 Mart, 2016, Istanbul, s. 12.
[2] *M.Murat Erdoğan*, Avrupa'da Türkiye Kökenli Göçmenler ve 'Euro-Turks-Barometre' Araştırmaları, Göç Araştırmaları Dergisi, Cilt: 1, Sayı: 1, Ocak-Haziran, 2015, s. 115.

Հաշվի առնելով թուրքական սփյուռքի ձևավորման առանձնահատկությունները՝ նշենք, որ այն առաջացել է անցյալ դարի 1950-1990թթ. միգրացիոն հոսքերի արդյունքում, հետևյալ աշխարհագրական ուղղություններով. ա) աշխատանքային միգրացիա դեպի Եվրոպա և Ավստրալիա՝ 1960-ականների կեսերից մինչև 1970-ականներ, բ) քաղաքական միգրացիա՝ 1980-1990թթ., գ) 1990-ական թվականներից ժամանակավոր աշխատանքային միգրացիա դեպի Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա, հետխորհրդային երկրներ, դ) 1990-ականներից՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների և ուսանողների միգրացիա դեպի Եվրոպա, ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա[1]:

Թուրքիայից օրենսդրորեն ազատ ելքը նրա քաղաքացիների համար ապահովված էր միայն 1961թ. սահմանադրության ընդունմամբ, ինչից հետո մուտքը երկիր և ելքը երկրից դարձան յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը՝ միջազգային հարաբերությունների նորմերին համապատասխան: Թուրք քաղաքացիների միգրացիան եվրոպական երկրներ սկսվեց արդյունաբերապես զարգացած երկրների «հրավերով»: Արտագաղթի գաղաթնակետը համընկավ Թուրքիայի տնտեսական զարգացման պլանների ընդունման հետ: Այդ ժամանակ քաղաքական գործիչների տեսակետն այն էր, որ որակյալ աշխատողների «արտահանումը» կարող է նպաստել նոր գիտելիքներ և որակավորում ստանալուն և երկրի արդյունաբերականացմանը: Սպասվում էր, որ միգրանտների արտարժութային փոխանցումները

[1] *Aksel, D., Kins*, Distant Workers, Diasporas: Constructing Turkey's National Members Abroad, Turkish Studies, Volume 15, 2014, Issue 2, p. 195–219.

կօգնեն հավասարեցնել վճարային հաշվեկշիռը և համալրել պետական պահուստներն արտարժույթով[1]:

Թուրքիան իր քաղաքացիներին աշխատանքի տեղավորելու նպատակով երկկողմանի պայմանագրեր ստորագրեց ԳՖՀ (1961թ.), Ավստրիայի, Նիդերլանդների և Բելգիայի (1964թ.), Ֆրանսիայի (1965թ.), Շվեդիայի և Ավստրալիայի (1967թ.) հետ: Այդ համաձայնագրերի կետերը չէին ենթադրում, որ միգրանտները պետք է մնային այնտեղ երկար ժամանակով[2]: Այնպես որ, շատ թուրքեր (ներառյալ Թուրքիայի քուրդ և ասորի քաղաքացիները) մեկնեցին մի շարք երկրներ (հիմնականում ԵՄ)՝ որպես ժամանակավոր աշխատանքային միգրանտներ, որից հետո զանգվածային արտագաղթը շարունակվեց արդեն ի հաշիվ միգրանտների ընտանիքների, որոնք ցանկանում էին վերամիավորվել արտագնա աշխատանքի մեկնած հարազատների հետ:

Այսպիսով, միջպետական համաձայնագրերն իրավաբանորեն կանոնակարգեցին թուրք միգրանտների ներկայությունն այդ երկրներում: Նրանց տրվեցին առողջապահության, կրթության, աշխատանքի և այլ ոլորտներից օգտվելու իրավունքներ: Թուրքական համայնքները եվրոպական երկրների սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրելու նպատակով մշակվեցին նաև նրանց կրթությունն ապահովող հայեցակարգեր: Հետագայում ընդունված նոր օրենքներով Գերմանիայում, Բելգիայում, Նիդերլանդներում, Ֆրանսիայում բնակվող թուրք ներգաղթյալ-

[1] *N.Abadan-Unat*, "Turkish Migration to Europe". In "The Cambridge Survey of World Migration", Cambridge University Press. 1995, տե՛ս նաև *Հ.Էրդեր*, Новые тенденции международной миграции населения и опыт Турции, "Международная миграция населения: Россия и современный мир", М., 2000, выпуск 4, с. 21-34.

[2] Տե՛ս *A.İçduygu*, International Migrants Remittances in Turkey, European University Institute, RSCAS, 2006.

ներն ավելի պարզ մեխանիզմներով կարողացան ստանալ եվրոպական քաղաքացիություն[1]:

Ընդհանուր առմամբ, 1960-2002թթ. այս ուղղությամբ պետական քաղաքականությունը դրսևորվում էր հետևյալ կերպ.

- *1960-1970թթ.* սփյուռքի հանդեպ պետական մակարդակով որևէ քաղաքականություն չէր իրականացվում: Համագործակցությունը սահմանափակվում էր միայն միգրանտներին իրենց կեցության, իրավունքների մասին տեղեկատվության տրամադրմամբ: Դա գլխավորապես իրականացվում էր Թուրքիայի Ազգային զբաղվածության ծառայությանը կից ստեղծված՝ արտասահմանում աշխատանքի տեղավորման պետական միջնորդական գործակալությունների ցանցի միջոցով: Այդ կազմակերպությունները կարգավորում էին մեկնողների թվաքանակը, ապահովում միգրանտների բուժզննումը, ձևակերպում անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ կնքում էին պայմանագրեր օտարերկրյա գործատուների և թուրք աշխատողների միջև[2]:
- 1970-ական թթ. կեսերից նկատվեցին որոշակի տեղաշարժեր. պետությունն ընդունեց, որ միգրացիան կրում է շարունակական բնույթ, փորձեց կանխել թուրքերի մշակութային ձուլումը: Նախ՝ պետության և արտերկրի համայնքների միջև կապերը պահպանելու և ամրապնդելու նպատակով, առանց սահմանափակումների հնարավորություն էր տրվում միգրանտներին վաստակած դրամական մի-

[1] *Е.Чулковская*, Турецкая диаспора Германии: Между Анкарой и Берлином, Москва, 2014, с. 10-11.
[2] *Н.Ксендзык*, Турецкая трудовая иммиграция в странах Западной Европы (70-80-е гг.) / АН УССР, Ин-т социал. и экон. пробл. зарубеж. стран, Киев, Наук. думка, 1991, с. 108.

ջոցները փոխանցել Թուրքիա և որպես ներդրում օգտագործել խնայողությունները երկրի զարգացման մեջ[1]: Երկրորդ՝ 1979թ. թուրքական իշխանությունները եվրոպական երկրներ գործուղեցին թուրքերենի ուսուցիչների և հոգևոր սպասավորների: Վերջին դեպքում այդ գործը ստանձնեց Թուրքիայի Կրոնի գործերով վարչությունը՝ «*Diyanet*»-ը: Նրա կողմից արտասահման գործուղված իմամները սկսեցին ապահովել միգրանտներին կրոնական կրթությամբ[2]:

- *1980-1990թթ.* 1980թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը և դրան հաջորդած քաղաքականությունը ստիպեցին շատ ակտիվիստների (քուրդ և ձախակողմյան) տարագրվել եվրոպական երկրներ: Պատահական չէ, որ այս ժամանակաշրջանում թուրքական կառավարությունը ձեռնարկեց առաջին փորձերը՝ ձևավորելու սփյուռքյան էթնիկ և կրոնական հաստատություններ, քանի որ միգրանտների կազմակերպությունների հիմնումը դարձավ ծայրահեղ քաղաքականացված: Թուրքիայում արգելված կամ ճնշված որոշ շարժումներ իրենց գործունեությունը տարածեցին Եվրոպայում՝ հիմնելով հասարակական կազմակերպություններ կամ ընդհատակյա խմբեր, որոնք գործում էին միգրանտների անվան տակ: Թուրքական պետության պատասխանը նման գործողություններին մշտադիտարկման ակտիվացումն ու միևնույն ժամանակ հատվածավորված ինտեգրացիայի խրախուսումն էր՝ առանց ասիմիլյացիայի: 1980-ականներին նկատելի էր

[1] Emigration and Diaspora Policies in the Age of Mobility, Florence, 2017, 224.

[2] Kuruluş ve Tarihi Gelişim, https://www.diyanet.gov.tr/tr-TR/Kurumsal/Detay//1/diyanet-isleri-baskanligi-kurulus-ve-tarihcesi

միգրանտների տնտեսական ներուժի զարգացմանը միտված քաղաքականություն, բայց նշաններ չկային, թե պետությունը միգրանտների համայնքները դիտում է որպես հնարավորություն՝ նպաստելու արտաքին քաղաքական նպատակների իրականացմանը կամ վերազգային քաղաքականությանն ընդհանրապես[1]:

- *1990-2002թթ.* 1990-ականներին ակտուալացավ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցը: Սրանից ելնելով՝ փոխվեցին նաև թուրք քաղաքական գործիչների նախկին ընկալումները միգրանտների վերաբերյալ: Պետությունը նրանց սկսեց դիտել որպես Թուրքիայի դրական իմիջի ձևավորմանն ու հանրային դիվանագիտությանը նպաստող ռեսուրս Եվրոպայում: Այս ընթացքում էր, որ պետություն-սփյուռք հարաբերություններն ակտիվացնելու նպատակով 1998թ., Թուրքիայի կառավարության որոշմամբ, վարչապետի վերահսկողության ներքո ստեղծվեցին Արտասահմանում ապրող թուրք քաղաքացիների խորհրդատվական և Արտասահմանում ապրող թուրք քաղաքացիների գերագույն կոմիտեները: Համաձայն տվյալ ինստիտուցիոնալ կառույցների հիմնադրման մասին հրապարակված արձանագրությունների՝ դրանք պետք է զբաղվեին միգրանտների սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ խնդիրների մշտադիտարկմամբ, տարբեր միջոցառումների կազմակերպմամբ և, վերջապես, պետք է պետական մարմիններին միգրանտների խնդիրների լուծման առաջարկություններ

[1] *B.Başer*, Turkey's diaspora engagement policy under the Justice and Development Party (24.04.2017), https://www.imi.ox.ac.uk/blog/turkey2019s-diaspora-engagement-policy-under-the-justice-and-development-party

ներկայացնեին[1]: Մինչդեռ, «այս ամբողջ գործունեությունը որևէ կերպ համակարգված չէր, գտնվում էր հաճախ իրար հետ ոչ մի կապ չունեցող հաստատությունների իրավասության ներքո, ինչը նվազեցնում էր իրականացվող ծրագրերի արդյունավետությունը»[2]:

Հարկ է նկատել, որ արդեն 1990-ական թթ. կեսերին արտերկրում բնակվող հայրենակիցների սոցիալ-մշակութային, կրթական, միգրանտների իրավունքների հետ կապված հարցերը որպես աշխատանքային ուղղություններ ներառվեցին Թուրքիայի կառավարության ծրագրերում: Միևնույն ժամանակ, Թուրքիան անվտանգության հետ կապված մտահոգություններ ուներ, այդ պատճառով թուրքական իշխանություններն ու հատուկ ծառայությունները մշտապես հետևում էին եվրոպական համայնքներում, մասնավորապես Գերմանիայում գործող թուրքական այլախոհական կազմակերպությունների գործունեությանը և այն կառույցներին, որոնք կամավոր աջակցում էին «թուրքական շահերին»[3]:

Այսպիսով, եվրոպական մի շարք երկրների հետ պայմանագրերի ստորագրումով Թուրքիան սկզբից ևեթ նպաստեց նման հարաբերությունների զարգացմանը և պետական մակարդակով

[1] Տե՛ս Թուրքիայի Ազգային մեծ ժողովում այդ կառույցների հիմնադրման և նրանց գործունեության ուղղությունների մասին ընդունված որոշումների արձանագրությունները, https://www.tbmm.gov.tr/develop/owa/Tutanak_B_SD.birlesim_baslangic?P4=304&P5=B&page1=53&page2=53, https://www.tbmm.gov.tr/develop/owa/tutanak_b_sd.birlesim_baslangic?P4=10992&P5=B&page1=47&page2=47

[2] Տե՛ս *Ն.Պողոսյան, Ս.Կարապետյան*, Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, 2016, էջ 26-27:

[3] *B.Başer*, նշվ. աշխ., *Е.Чулковсакая*, նշվ. աշխ., с. 15.

սկսեց կարգավորել ու վերահսկել աշխատուժի արտահանման գործընթացը: Թուրքական իշխանությունների համար միգրանտները տնտեսականից հետզհետե վերածվեցին քաղաքական գործոնի, ինչն ակնհայտ դրսևորվեց «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) իշխանության տարիներին:

Սփյուռքյան քաղաքականությունը ԱԶԿ իշխանության տարիներին

ԱԶԿ իշխանության գալուց հետո (2002թ.) երկրում տեղի ունեցան քաղաքական, տնտեսական և գաղափարական փոփոխություններ: Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները պետք է կապել փորձագիտական հանրության շրջանակներից դուրս եկած նախկին արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի հետ: Վերջինս կարողացավ բարեփոխել և թարմ մտածողություն հաղորդել Թուրքիայի արտաքին քաղաքականությանը: Նա գտնում էր, որ Թուրքիան, առանց համակարգված և երկարաժամկետ քաղաքական նախաձեռնությունների, հեռու կլինի արտաքին քաղաքականության իր նպատակների և շահերի ընձեռվող հնարավորության օգտագործումից[1]: Թուրքիայի նոր իշխանություններն իրենց արտաքին քաղաքական նպատակներում կարևորեցին նաև սփյուռքի դերը՝ որպես հանրային դիվանագիտությանն աջակցող «փափուկ ուժ»:

Հարկ է նկատել, որ թեև արտերկրի համայնքների խնդիրները պետության ուշադրության կենտրոնում էին դեռևս 1970-

[1] *A.Davutoğlu*, Stratejik Derinlik, Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Küre Yayınları, Altmışdördüncü Basım, Istanbul, 2011, s. 554.

ական թվականներից, այդուհանդերձ, Թուրքիայի իշխող կուսակցությանը՝ ԱԶԿ-ին մոտ կանգնած «Քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամի» Եվրոպական ուսումնասիրությունների ստորաբաժանման տնօրեն Է.Բայրաքլրի խոսքերով, «*Թուրքիան երկար ժամանակաշրջան արտերկրում բնակվող թուրքերի խնդիրների հանդեպ անտարբեր է եղել և որևէ քաղաքականություն (ռազմավարություն) չի զարգացրել սփյուռքի նկատմամբ*»[1]:

Գալով իշխանության՝ կուսակցությունը սկսեց իրականացնել առաջին քայլերն այս ուղղությամբ: 2003թ. ստեղծվեց խորհրդարանական հանձնաժողով՝ ուսումնասիրելու արտասահմանում ապրող թուրքերի խնդիրները: Ղեկավարվելով Կրոնի գործերով վարչության՝ «*Diyanet*»-ի նախկին առաջնորդի և ԱԶԿ խորհրդարանական անդամներից մեկի կողմից՝ այն առաջարկեց ստեղծել Թուրքիայի՝ արտասահմանում ապրող քաղաքացիների հետ աշխատանքի հատուկ մարմին՝ կապերի ուժեղացման և արդեն առկա քաղաքական ու տնտեսական նվիրվածությունը կապիտալիզացիայի ենթարկելու նպատակով: Մի քանի տարի աշխատելուց հետո հանձնաժողովը Թուրքիայի Ազգային մեծ ժողովին ներկայացրեց ուսումնասիրությունների հիման վրա կատարված եզրակացություններ և որոշ առաջարկություններ, սակայն որևէ քայլ այդ ուղղությամբ չկատարվեց[2]:

2006թ. սկսած՝ սփյուռքյան քաղաքականության մեջ տեղի ունեցան էական փոփոխություններ: Թուրքական կառավարու-

[1] *E.Bayraklı*, Diaspora Politikamız (07.06. 2016), https://www.setav.org/diaspora-politikamiz/

[2] *L.Mügge*, Managing Transnationalism: Continuity and Change in Turkish State Policy, International Migration, Vol. 50 (1), 2012, p. 27, https://www.academia.edu/19476347/Managing_Transnationalism_Continuity_and_Change_in_Turkish_State_Policy

թյունը սկսեց իրականացնել տարատեսակ միջոցառումներ, որոնք կնպաստեին սփյուռքի հետ կայուն կապերի հաստատմանը, զարգացմանն ու ամրապնդմանը: Հստակեցվեցին և ընդլայնվեցին համագործակցության ուղղությունները, ստեղծվեցին սփյուռքյան համայնքների հանդեպ քաղաքականություն իրականացնող ինստիտուցիոնալ կառույցներ: Աշխատանքներն իրագործվեցին հետևյալ ուղղություններով.

- *Թյուրքական աշխարհ:* Ակտիվացան կապերն ադրբեջանական և թուրքական սփյուռքյան կառույցների միջև, մշակվեց համատեղ գործողություններին ուղղված ռազմավարություն, ստեղծվեցին թյուրքախոս երկրների (Ղազախստան, Ղրղզստան) և թուրք-ադրբեջանական սփյուռքյան համայնքների գործունեությունը համակարգող միություններ[1]:
- *Մեդիա-քաղաքականություն:* Արբանյակային համակարգի միջոցով Թուրքիայի պետական «*TRT*» հեռուստառադիոկորպորացիայի ալիքներով սփյուռքի համար սկսեցին հեռարձակել հաղորդումներ: Թուրքիայի հեռուստաալիքներից միգրանտների շրջանում առավել մեծ ժողովրդականություն են վայելում յոթերորդ և հինգերորդ ալիքները, որոնցով հեռարձակվում են Թուրքիայի ներքին կյանքին և սփյուռքի հիմնահարցերին առնչվող հաղորդումներ: Վերջին շրջանում հեռարձակվում են նաև կրոնական, ազգային տոներին և կրթական թեմաներին վերաբերող հաղորդումներ[2]:

[1] Այս մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ» բաժնում, էջ 223-233:
[2] *О.Бибикова*, Турецкие иммигранты в Германии: проблемы и перспективы, «Ислам на Ближнем и Среднем Востоке», М., н. 8, 2014, с. 362.

- *Սփյուռքյան կազմակերպչական կառույցներ:* Պետական մակարդակով խրախուսվեց թուրքական միությունների ստեղծումը արտերկրի համայնքներում: Թուրքիայի ԱԳՆ տվյալներով՝ 2016թ. դրությամբ արտերկում գործում էր թուրքական 4439 միություն[1]: Հարկ է նկատել, որ առաջին անգամ ստեղծվեցին արտերկրի թուրք գիտնականներին միավորող կառույցներ, ինչպես, օրինակ, «*Turkish American Scientists and Scholars Association*» (*TASSA*), հիմն. 2004թ.), նաև լոբբիստական կառույցներ՝ «Թուրք-ամերիկյան սփյուռքի խորհուրդը» (*Türk Amerikan Diasporası Konseyi*, հիմն. 2012թ.)[2]: Միությունների մեծ մասն ունի կրոնական ուղղվածություն, դրանց հաջորդում են գործարարներին, մտավորականներին, լրագրողներին և սոցիալական տարբեր շերտերի մեկ հարկի տակ միավորող հաստատությունները:

Պետությունը խրախուսեց նաև քաղաքացիական հասարակության նոր կազմակերպությունների ստեղծումը, որոնք պետք է լոբբինգի ենթարկեին թուրքական շահերը սփյուռքի երկրներում: Հանրային դիվանագիտությունը նոր պարտականություն էր, որ տրվել էր սփյուռքի ընտրյալ խմբերին: Այս զարգացումներն օգուտ բերեցին սփյուռքի այն խմբերին, որոնց կարելի է բնութագրել որպես կառավարամետ: Մինչ սփյուռքի աջ-կենտրոնամետ պահպանողական կազմակերպություններն օգտվում են բարգա-

[1] Dünya Türk Iş Konseyi, Dünya Türk Girişimciler Kurultayı, Sonuç Raporu, 26-27 Martö 2016, Istanbul, s. 12

[2] http://www.turkamerikandiasporakonseyi.us/

վաճելու հնարավորություններից, մյուս՝ ընդդիմադիր կազմակերպությունները չունեն այդ հնարավորությունը[1]։

- *Դիվանագիտական նախաձեռնություն։* Պետություն-սփյուռք կապերն ակտիվացնելու նպատակով թուրքական համայնքներում բացեցին հյուպատոսություններ։ Այսօր արդեն տարբեր աշխարհամասերում ստեղծվել է 80 հյուպատոսություն, ըստ կառավարության 2016թ. ծրագրի՝ նախատեսվում է առաջիկա հինգ տարիներին ավելացնել դրանց քանակը։
- *Քաղաքացիության մասին օրենսդրության ազատականացում։* Թուրքիայի կառավարության կողմից իրականացվեցին օրենսդրական փոփոխություններ, որոնց շնորհիվ թուրքական քաղաքացիություն չունեցող թուրք միգրանտներին հնարավորություն տրվեց ձեռք բերել «կապույտ քարտեր»։ Դրանք հնարավորություն էին տալիս միգրանտներին օգտվել տրված գրեթե բոլոր իրավունքներից՝ ինչպես Թուրքիայի քաղաքացիները։ «Կապույտ քարտ» ծրագրի հիմքում ընկած են մի շարք դրույթներ. տրամադրվում են արտոնություններ գիտական աստիճան ունեցողներին, ուսանողներին տրվում է աշխատելու իրավունք, ձեռնարկատերերին՝ ծառայողական թույլտվություն, աշխատանքի իրավունք Թուրքիայում բիզնեսի իրագործման ժամանակահատվածում և այլն։ Միակ սահմանափակումը վերաբերում էր պետական ծառայությունում աշխատանքի ընդունվելուն[2]։ 2012թ. օրենքի ուղղումից հետո արտասահմանում

[1] *B.Başer*, նշվ. աշխ.։
[2] *Е. Чулковская*, նշվ. աշխ., с. 48.

բնակվող թուրք քաղաքացիներն իրավունք ստացան մասնակցելու քվեարկություններին բնակության երկրների՝ թուրքական դեսպանատների կողմից սահմանված վայրերում[1]: Թուրք փորձագետները գտնում են, որ արտաքին քվեարկությունն ազդեցիկ մեխանիզմներից մեկն էր, որ ուժեղացրեց կապերը սփյուռքակերտման նախագծի շրջանակներում, քանի որ այն հանգեցրեց քաղաքական կուսակցությունների ծրագրերի վերազգայնացմանը: Որոշ ընտրարշավներ նախագծված էին հատուկ սփյուռքի համար, որտեղ յուրաքանչյուր կուսակցություն իր ծրագրում արտահայտել է սփյուռքի կարիքներն ու ակնկալիքները[2]: Օրենսդրական փոփոխություններն ի վերջո ավելացրին արտասահմանում բնակվող թուրքերի՝ երկրի ներքին ընտրություններին մասնակցելու հնարավորությունները, նաև, ըստ որոշ գնահատականների՝ դրանով բարձրացվեց Թուրքիայի հետ նրանց կապվածության գիտակցումը: 2016թ. հուլիսին հրապարակվեց նաև արտերկրի աշխատուժի վերաբերյալ նոր օրենքը, որը հնարավորություն է ընձեռում մասնագիտական բարձր որակավորում ունեցող այլազգի քաղաքացիներին և սփյուռքում բնակվող թուրքերին, որակավորման քննություններ հանձնելուց հետո, աշխատանքի անցնել Թուրքիայում՝ գիտության և տեխնոլոգիաների, բժշկության, սպորտի, մշակույթի, տնտեսական տարբեր ոլորտներում: Աշխատանքի պայմաններին բավարարող մասնագետների համար Թուրքիայի Հանրապետության

[1] Mavi Kart sahiplerine tanınan haklar nelerdir?, http://euturkhaber.com/mavi-kart-tarihcesi/
[2] *B.Başer*, նշվ. աշխ.:

կողմից շրջանառության մեջ են դրվել «Փիրուզագույն քարտեր» (*Turquoise Cards*)[1]: Սրանով նաև փորձ է արվում սփյուռքի ինտելեկտուալ շրջանակներում խթանել մասնագիտական հայրենադարձությունը:

- *Մշակութային և սոցիալական ծրագրեր:* Արտերկրի համայնքների հետ կապերը զարգացնելու նպատակով Աբդուլլահ Գյուլի նախաձեռնությամբ 2007թ. ստեղծվեց Յունուս Էմրեի անվան ինստիտուտը, որը 2009 թվականից իրականացնում է մշակութային և սոցիալական նախագծեր սփյուռքում: 2017թ. դրությամբ ինստիտուտն ունի ներկայացուցչություններ մոտ 40 երկրներում[2]: Մշակութային և սոցիալական խնդիրների տիրույթում գործունեություն ծավալելուց բացի, ինստիտուտը «Թուրքական կրթաթոշակներ» նախագծի շրջանակներում տրամադրում է կրթաթոշակներ օտարազգի ուսանողներին՝ Թուրքիայի համալսարաններում բարձրագույն կրթություն ստանալու համար: Միևնույն ժամանակ, կազմակերպում է գիտաժողովներ և սեմինարներ միջազգային փորձագետների ներգրավվածությամբ և թուրքերենի կուրսեր՝ ամառային դպրոցներ (*Türkçe Yaz Okulu*)[3]: Գերմանիայի թուրքական համայնքների մասնագետ Ե.Չուլկովսկայան, հղում անելով Ստամբուլի Բիլգիի համալսարանի հետազոտողներ Ա.Քայային և Ա.Թեջմենին, նշում է, որ թուրքական ղեկավարության

[1] Бирюзовая карта - разрешение на работу для отдельной категории иностранцев, http://www.trt.net.tr/russian/pamiatka-dlia-inostrantsa/2016/10/10/biriuzovaia-karta-razrieshieniie-na-rabotu-dlia-otdiel-noi-katieghorii-inostrantsiev-586478,
Бирюзовая карта в Турции, https://www.antalyahomes.ru/biryuzovaya-karta-v-turtsii
[2] Yunus Emre Enstitüsü, http://www.yee.org.tr/tr/yunusemreenstitusu.
[3] Türkçe Eğitim Müdürlüğü, http://www.yee.org.tr/tr/turkceegitimmudurlugu.

նպատակն է ինստիտուտի միջոցով միջազգային հանրությունում Թուրքիան ներկայացնել որպես «քաղաքակրթության օրրան», իսկ թուրքերենի ու մշակույթի տարածմամբ՝ առաջ մղել «նեոօսմանական» իդեաները[1]:

- *Սփյուռքի գործունեությունը համակարգող մարմնի ստեղծում:* Թուրքական կառավարության 2009թ. դեկտեմբերի 21-ի որոշմամբ 2010թ. ստեղծվեց սփյուռքի գործերով պետական մարմին՝ Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը (*Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı-YTB*), որը, սփյուռքյան համայնքների խնդիրները լուծելուց և համակարգելուց զատ, նաև նպատակ էր դրել հակազդել հայկական լոբբիին: Կառույցի ստեղծման օրվանից ակտիվացան այցելությունները Եվրոպայի թուրքական համայնքներ՝ վարչության ներկայացուցիչների ու պետական գործիչների կողմից: Քաղաքական և լոբբիստական նպատակներ հետապնդող պատվիրակությունները սփյուռքի ներկայացուցիչների հետ համատեղ ստեղծեցին խորհրդատվական մարմիններ, որից հետո խորհրդատվական միություններն ընդլայնվեցին, ձեռք բերվեցին հատուկ համաձայնություններ ինստիտուցիոնալ շրջանակներում: Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության հովանու ներքո ստեղծվեց խորհրդատվական մարմին (Արտասահմանյան հայրենակիցների խորհրդակցական խորհուրդ), որը բաղկացած է տարբեր աշխարհամասերի թուրքական սփյուռքի համայնքների ընտրյալ անդամներից[2]:

[1] *Е. Чулковская*, նշվ. աշխ., с. 51.
[2] *B.Başer*, նշվ. աշխ.:

ԱԶԿ-ն իր սփյուռքյան քաղաքականությունում առաջին անգամ սկսեց կիրառել «բարեկամ հասարակություններ» տերմինը, որը տեղ էր գտել դեռևս Մեսութ Յըլմազի կառավարության ծրագրում (1996թ.)[1]: *YTB*-ի՝ Սոցիալական և մշակութային կապերի վարչության կայքում նշված է, որ այն տնտեսական, մշակութային, գիտական կապերի ամրապնդման նպատակով պետք է զարգացնի հարաբերությունները էթնիկ և բարեկամ հասարակությունների հետ[2]: Համաձայն *YTB*-ի նախկին ղեկավար Քեմալ Յուրթնաչի՝ «բարեկամ հասարակությունների» թվաքանակը գերազանցում է 200 միլիոնը[3]: Ոչ վերջինիս զեկույցում, ոչ էլ վարչության կայքում չի հստակեցվում, թե անդրազգային այդ որ հանրույթն է, որ ընկալվում է որպես «բարեկամ հասարակություն»: Որոշ հեղինակներ գտնում են, որ այս երկիմաստ ձևակերպումները Թուրքիայի գիտակցված ընտրությունն են, որն ունի մի քանի պատճառներ.

- Թուրքիայի պետական գործիչներն ընդունում են, որ անդրսահմանային բնակչության ներգրավումը (ովքեր չեն հանդիսանում Թուրքիայի քաղաքացիներ կամ Թուրքիայի միգրանտներ) միջպետական լարվածություն առաջացնելու մեծ պոտենցիալ ունի: Հետևաբար, նման անորոշությունը պայմանավորված է Թուրքիայի և ընդունող պետությունների միջև լարվածությունից խուսափելու ձգտմամբ:

[1] II. Yılmaz Hükümeti Programı, https://www.tbmm.gov.tr/hukumetler/HP53.htm.
[2] Kültürel ve Sosyal İlişkiler Daire Başkanlığı, https://www.ytb.gov.tr/kulturel_sosyal_db.php.
[3] *K. Yurtnaç*, Turkey's New Horizon: Turks Abroad and Related Communities, Center for Strategic Research of the Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey, SAM Papers, Oct. 2012, no. 3, p. 9, http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/10/SAM_paper_ing_03.pdf.

- Նման մոտեցումը Թուրքիային քաղաքական ճկունության և մանևրելու հնարավորություններ է ընձեռում[1]:

Այդուհանդերձ, տվյալ ուղղությամբ իրականացվող նախագծերը թույլ են տալիս ասել, որ թյուրքախոս հանրապետություններից զատ, վարչության աշխատանքները կապված են Բալկանների, Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի և աֆրիկյան տարածաշրջանների մի քանի երկրների իսլամադավան ազգաբնակչության հետ[2]: Հատկանշական է, որ երկկողմ ռազմավարական փոխգործակցության զարգացման գործում էական դերակատարում ունեն Թուրքիայի և տվյալ տարածաշրջանի «ուղեղային կենտրոնները»: Այդ ձևաչափով աշխատանքները ներկայում էլ շարունակական բնույթ ունեն:

YTB-ն իրականացնում է նաև մի շարք կրթամշակութային նախագծեր սփյուռքի տարբեր տարիքային խմբերի համար, որոնք են.

- *«Երկլեզու կրթություն»:* Նախադպրոցական տարիքի (3-6 տ.) երեխաների համար ինը ամիս տևողությամբ ծրագիր է, որն իրականացվում է ԱՄՆ, Ավստրալիայի և Եվրոպայի համայնքներում,
- *«Շաբաթվա ավարտը»* դպրոցական ծրագիր: Նախատեսված է 6-18 տարեկանների խմբերի համար՝ տասնամյա

[1] *Я.Волкова*, Турция как родственное государство: формирование связей с родственным населением в постбиполярный период, Наукові записки Міжнародного гуманітарного університету: [збірник], Одеса: Фенікс, 2016, вип. 25, с. 129.

[2] Մասնագետների գնահատականներով՝ Բալկանների, Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի ներառումը սփյուռքյան քաղաքականությունում անմիջականորեն առնչվում է Դավութօղլուի արտաքին քաղաքականության դոկտրինի հետ, տե՛ս Emigration and Diaspora Policies in the Age of Mobility, Florence, 2017, p. 235.

տևողությամբ (դասավանդվում են թուրքերեն, պատմություն, կրոնական մշակույթ, մշակույթ-արվեստ),

- *«Էվլիյա Չելեբի»* երիտասարդական ծրագիր: Նպատակն է զարգացնել կապերը Թուրքիայի և սփյուռքի երիտասարդների միջև, նրանց ծանոթացնել երկրի պատմական, մշակութային արժեքներին, անցկացնել սեմինարներ: Կազմակերպում է պատանիների և երիտասարդության ամառային հանգիստը Թուրքիայում[1]:

YTB-ը Սաքարիայի համալսարանի հետ ձեռք բերված համաձայնությամբ իրականացնում է հատուկ նախագիծ, ըստ որի՝ սփյուռքի համար պատրաստում են թուրքերենի ուսուցիչներ: Նախատեսվում է, որ ծրագիրն ավարտած ուսուցիչներն աշխատանքի են տեղավորվելու արտերկրի համայնքների կրթական հաստատություններում և վարչության՝ սփյուռքի նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված կրթական ծրագրերում[2]:

- *«Memleketim» պորտալ:* Թուրքիայի ԱԳՆ-ն, այլ նախարարությունների հետ խորհրդակցության արդյունքում, 2015թ. ստեղծեց իր ենթակայության տակ գործող «Իմ հայրենիք» սփյուռքի համար նախատեսված հաղորդակցային պորտալը (www.memleketim.gov.tr): Հարկ է նշել, որ մինչ գործարկումը՝ արտգործնախարար Մ.Չավուշօղլուն նախագիծը ներկայացրեց սփյուռքի թուրքական համայնքներում[3]: ԱԳՆ հովանու ներքո

[1] Proje destekleri, https://www.ytb.gov.tr/proje_destek.php.
[2] Türk Diasporası için Türkçe öğreticiler yetiştiriliyor, http://sonhaber.eu/gundem/turk-diasporasi-icin-turkce-ogreticiler-yetistiriliyor/ և https://www.ytb.gov.tr/sakarya/.
[3] Dışişleri Bakanı Çavuşoğlu Münih'te, http://www.mfa.gov.tr/disisleri-bakani-cavusoglu-munih_te.tr.mfa.

ստեղծված պորտալի աշխատանքներում ներգրավված են Թուրքիայի մի քանի գերատեսչական կառույցներ՝ Ազգային կրթության, Սպորտի և երիտասարդության, Ընտանիքի և սոցիալական քաղաքականության նախարարությունները, Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը, Թուրքիայի պետական ռադիոհեռուստատեսությունը, Թուրքիայի պալատների և բորսաների միությունը, դեսպանատներն ու հյուպատոսությունները, տարբեր հարցերի շուրջ համագործակցող և խորհրդատվական աշխատանքներ իրականացնող կառույցները: Կայքի աշխատանքները ցույց են տալիս, որ որպես պետություն-սփյուռք հարաբերություններում օգտագործվող մեխանիզմ՝ պորտալն ունի կարևոր նշանակություն և դերակատարում, որի հնարավորություններն, ըստ էության, թույլ են տալիս պետական հաստատություններին աշխատել հնարավորինս համակարգված և ինտերակտիվ: Միևնույն ժամանակ, այն օգտագործվում է նաև հակահայկական նպատակներով: Էլեկտրոնային գրադարան բաժնում տեղադրված է Հայոց ցեղասպանությանը վերաբերող տասնյակից ավելի գրականություն: Պորտալը բաղկացած է մի քանի բաժիններից[1], որոնցից արժե հիշատակել հետևյալները.

- *Էլեկտրոնային գրադարան և վիդեոտեսադարան բաժին:* Այստեղ տեղադրված են Թուրքիայի արտաքին քաղաքականության, թուրքերենի և գրականության, մշակույթի, պատմության, Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրականություն և տեսանյութեր:

[1] Dışişleri'nden "Türk diasporası" atağı (07.05.2015), http://www.milliyet.com.tr/disislerinden-turk-diasporasi-/siyaset/detay/2055610/default.htm.

- *Տեղեկատվական և հարցումների բազա:* Այս բաժինը հնարավորություն է տալիս սփյուռքի անդամներին ծանոթանալ այն պետական օրենքներին և որոշումներին, որոնք վերաբերում են անձնագրերին, վիզաների, «կապույտ քարտերի» տրամադրման պայմաններին, կազմակերպչական հարցերին և այլն:
- «*Memleketim FM» ռադիո:* «*TRT*»-ի և արտգործնախարարության միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում 2015-ից գործում է նաև «*Memleketim FM*» համացանցային ռադիոն, որը թողարկումներ է հեռարձակում հատուկ սփյուռքի համար:
- *«Երիտասարդական կամուրջ»:* Ճամբարային ծրագիր է, որի շրջանակներում սփյուռքի ներկայացուցիչները, Թուրքիայում արշավների մասնակցելուց բացի, մասնակցում են թուրքերենի և մշակույթի վերաբերյալ հատուկ դասընթացների: Իրագործվում է Թուրքիայի երիտասարդության և սպորտի նախարարության կողմից:
- *«Վիրտուալ դպրոց»:* Այս բաժինը հեռավար ուսուցման ծրագրեր է կազմակերպում սփյուռքի նախադպրոցական տարիքի երեխաների, պատանիների և երիտասարդների համար, որն իրականացվում է Թուրքիայի պետական հեռուստառադիոկորպորացիայի՝ «*TRT*-դպրոց» և «*TRT*-մանուկներ» հաղորդումների միջոցով՝ Թուրքիայի ազգային կրթության նախարարության հեռավար ուսուցման համար նախատեսված ծրագրերով: Ավելորդ չէ նշել, որ կայքի այս բաժնում տեղադրվում են նաև անվճար և որակյալ

կրթություն ապահովող «*Khan Academy*»[1] կազմակերպության օնլայն դասընթացների թուրքերեն տարբերակները: Միևնույն ժամանակ, կայքում զետեղվում են ինչպես Թուրքիայի, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների բուհական-ակադեմիական համակարգում գործող թյուրքագիտական բաժինների, տվյալ բնագավառում ուսումնասիրություններ իրականացնող գիտավերլուծական, հետազոտական հաստատությունների վերաբերյալ տեղեկություններ:

- *Տնտեսական նախաձեռնություն:* 2007թ. Թուրքիայի Արտաքին տնտեսական կապերի խորհուրդը (*DEİK*)[2], նպատակ ունենալով ակտիվացնել բնակության երկրներում թուրքական սփյուռքի մասնակցությունը քաղաքական և տնտեսական ասպարեզներում, իր հովանու ներքո հիմնադրեց Աշխարհի թուրքերի գործարար խորհուրդը (*DTİK*): *DTİK*-ը կազմված է Թուրքիայի տարածքից դուրս գտնվող թուրքական ձեռնարկություններից, գործարար միություններից, որոնք ստեղծվել են սփյուռ-

[1] Այսօր «*Khan Academy*»-ն ամենատարածված և ամենամեծ լսարան ունեցող հարթակներից է ամբողջ աշխարհում: Հարթակն ունի 500 հազ. գրանցված ուսուցիչ տարբեր երկրներից: Տեսանյութեր կան 28 լեզուներով, այդ թվում՝ հայերեն, տե՛ս *Տ.Քարաուղլանյան*, Զանգվածային բաց առցանց դասընթացների շուրջ (04.06.2015), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13519.

[2] Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունների խորհուրդը հիմնադրվել է 1986թ., ունի 99 հիմնադիր հաստատություն (օրինակ՝ Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միությունը, Արդյունաբերողների և անհատ առևտրականների միությունը և այլն): Կորպորատիվ համագործակցություն հաստատում է երեք տարբեր գործարար խորհուրդների միջոցով. Երկրների հետ բիզնես խորհուրդ (օրինակ՝ թուրք-ամերիկյան, թուրք-եվրասիական և այլն), Սեկտորալ խորհուրդ և Հատուկ նշանակության խորհուրդ: 2013թ. տվյալներով՝ *DEİK*-ը ներառում էր 750 անդամ կազմակերպություն, 148 առևտրի/արդյունաբերության/բորսաների գրասենյակային և արտասահմանյան երեք ներկայացուցչություններ, 42 գործադիր և 115 աշխատանքային խորհուրդ, տե՛ս Perakendecilikte Yurtdışı Açılımı, https://www.deik.org.tr/uploads/10-baslikta-perakendecilikte-yurtdisi-acilimi.pdf.

քի բիզնեսմենների կողմից: 2009թ. այն բիզնես հետաքրքրություններ ունեցող կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպեց «Աշխարհի թուրք գործարարների խորհրդաժողովը», որին ներկա են գտնվել ինչպես երկրի պետական պաշտոնյաները, այնպես էլ 70 երկրներից հրավիրված պատվիրակություններ՝ 2500 թուրք գործարարների մասնակցությամբ: Համաժողովի ավարտից հետո ստորագրվեց համագործակցության հուշագիր, որտեղ թուրքական պաշտոնական ներկայացուցիչները և բիզնեսի ղեկավարները դրական իմաստով (որպես տնտեսական և քաղաքական ներուժ) օգտագործեցին «սփյուռք» բառը: Ինչպես նշում է Արտաքին տնտեսական կապերի և Աշխարհի թուրքերի գործարար խորհուրդների նախկին նախագահ Ռիֆաթ Հիսարջըքլըօղլուն, թուրքերը ոչ միայն աշխատանքային միգրանտներ են, այլև ինտերնացիոնալ կորպորացիաների ղեկավարներ, գլոբալ մակարդակում մեծ հեղինակություն վայելող ինստիտուտների տնօրեններ և հաջողակ ձեռներեցներ տնտեսական տարբեր ճյուղերում, որոնց գործունեությունը ծավալվում է Հելսինկիից մինչև Քեյփթաուն և Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ: Ըստ նրա՝ միայն Արևմտյան Եվրոպայում թուրքերն ունեն 140 հազ. ձեռնարկություն՝ 650 հազ. աշխատակիցներով, և որ սփյուռքի խնդիրը դարձավ ազգային քաղաքականություն հենց *DTİK* աշխատանքների արդյունքում, ինչն էլ շահագրգռեց պետական այրերին ստեղծել սփյուռքի գործունությունը համակարգող մարմին՝ Արտասահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը[1]:

[1] Council mobilizing the Turkish diaspora, http://www.hurriyetdailynews.com/council-mobilizing-the-turkish-diaspora.aspx?pageID=238&nID=30022&NewsCatID=464.

Սփյուռքի գործարարների հետ համագործակցության զարգացմանը նվիրված հաջորդ համաժողովներում (2011թ., 2016թ.) ակնհայտ դարձավ, որ *DTİK* ղեկավարները հետապնդում են ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նպատակներ, մասնավորապես թուրք գործարարների միջոցով ձգտում են ստեղծել ազդեցիկ լոբբի: Որպես կազմակերպման մոդել գործարկվեց «Աշխարհի քաղաքների ցանց» նախագիծը[1]: 2016թ. դրությամբ արդեն 95 երկրներում կազմավորվեց 380 քաղաքային ցանցային կառույց՝ 2550 անդամով[2]: Սփյուռքի գործարարներին համախմբելու նպատակով դեռևս 2000-ականների սկզբին համայնքներում հիմնադրվել էին տարբեր միություններ (օրինակ՝ Ավստրալիայի թուրք արդյունաբերողների և գործարարների միությունը, Նիդերլանդների թուրք գործարարների միությունը և այլն): Այս ուղղությամբ աշխատանքերը *DTİK* ջանքերով նոր թափ ստացան, ինչի արդյունքում ստեղծվեցին նմանօրինակ նոր հաստատություններ (օրինակ՝ Շվեդիայի թուրք գործարարների միությունը և այլն)[3]:

2014թ. Քյոլնում կազմակերպված սփյուռքի թուրք գործարարների համաժողովում Ռիֆաթ Հիսարջըքլըօղլուն հայտարարեց, որ բացի «Աշխարհի քաղաքների ցանց» նախագծից, թուրքական սփյուռքը հզորացնելու նպատակով իրականացվելու են ևս մի քանի նախագծեր: Նախատեսվում էր Թուրքիայի պալատների և բորսաների միությանը *(TOBB)* կից ստեղծել «Աշխարհի թուրք ձեռնարկատերերի հետազոտությունների կենտրոն»,

[1] Türk Diasporası “Dünya Şehir Ağı” kuruyor (06.09.2014), https://www.tobb.org.tr/Sayfalar/Detay.php?rid=19696&lst=MansetListesi .
[2] Dünya Türk Iş Konseyi Dünya Türk Girişimciler Kurultayı, 26. 03.2016, Istanbul, s.12.
[3] İsveç'teki Türk İşadamları Dernek Kurdu, https://www.haberler.com/isvec-teki-turk-isadamlari-dernek-kurdu-2751076-haberi/.

Թուրքիայի «Ազգային Ֆրանչայզինգի միության» *(Ulusal Franchise Derneği-UFRAD)* շրջանակներում՝ «Սփյուռքի Ֆրանչայզինգի պլատֆորմը» *(Diaspora Franchise Platformu)*[1]: Վերջինի վերաբերյալ պետք է նշել, որ առաջարկություններից բացի՝ այն որևէ գործնական քայլ չի իրականացրել:

- *Գիտական սփյուռքին ուղղված քաղաքականություն:* Գիտական սփյուռքի հետ կայուն և արդյունավետ փոխգործակցության կամուրջներ հիմնելը սփյուռք ունեցող մի շարք պետությունների համար դարձել է հրամայական: Հայրենական գիտակրթական համակարգի բարեփոխման, բարձր տեխնոլոգիաների և այլ ոլորտներում նրանց մասնագիտական կարողությունների ներդրման ու համագործակցության խթանման նպատակով մշակված տեսլականներն ամրագրված են տարբեր երկրների պետական ռազմավարական փաստաթղթերում: Հաշվի առնելով խնդրի հանդեպ սփյուռքի տեսակետներն ու մտահոգությունները՝ ուսումնասիրվում են գիտական սփյուռք-պետություն համագործակցության հնարավոր եղանակներն ու մեխանիզմները, այդ հարաբերությունների ստեղծման ճանապարհին ի հայտ եկող խոչընդոտների հաղթահարմանն ուղղված ռազմավարական քայլերի ողջ համալիրը, փոխադարձ ակնկալիքները, միջազգային փորձը, հայրենադարձության և այլ հարցեր:

Բացառություն չէ նաև Թուրքիան, որը վերջին տասնամյակում գիտական սփյուռքը համախմբելու նպատակով իրականացնում է որոշակի աշխատանքներ: 2000-ական թթ. առաջին տասնամյակի վերջից գիտական ոլորտի պատասխանատու

[1] Türk Diasporası "Dünya Şehir Ağı" kuruyor (06.09.2014), https://www.tobb.org.tr/Sayfalar/Detay.php?rid=19696&lst=MansetListesi

գերատեսչությունները սկսեցին իրագործել խոշոր նախագծեր՝ սփյուռքի գիտական ներուժը Թուրքիայի գիտության զարգացման մեջ ներգրավելու ուղղությամբ։

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության ոլորտում առկա է սփյուռքի ինտելեկտուալ ներուժի ինտեգրման երկու միջոց.

- գիտնականների և բարձր որակավորում ունեցող մասնագետների հայրենադարձման նախագծերի իրականացում,
- գիտական սփյուռքի հեռավար համախմբում տեղեկատվական ցանցերի միջոցով և գիտական համագործակցության այլ ձևերով։

Թուրքիայում երկու ձևաչափով էլ ընթանում են աշխատանքներ. ընդ որում՝ վերոնշյալ ձևերի և միջոցների կիրառումը կախված է մի քանի դերակատարներից, որոնք էլ ձևավորում են համագործակցության քաղաքականությունը։ Դրանք են.

1. *Կենտրոնացված մոտեցում. «վերևից ներքև» ռազմավարություն*

Դերակատարներն են՝ Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհուրդը (այսուհետ՝ *TÜBİTAK*), կրթության, գիտության, առողջապահության, տնտեսության ոլորտների զարգացման գործի պատասխանատու մարմինները և սփյուռքի գործերով վարչությունը։ Տեխնիկական միջոցներն են՝ *TÜBİTAK*-ի կողմից ստեղծված «*ARBİS-Y*»՝ արտերկրի հետազոտողների տեղեկատվական համակարգը և սփյուռքի գիտնականների հետ օնլայն կապը՝ «*TAF Network*»-ը՝ Սաքարիայի համալսարանի շրջանակներում[1]։

[1] TAF Network, http://tafnetwork.org/.

2. Ապակենտրոնացված մոտեցում. «ներքևից վերև» ռազմավարություն

Դերակատարն է ԱՄՆ-ում գործող «Թուրք-ամերիկյան գիտնականների միություն»-ը:

Թուրքիան այս ոլորտում ունի շոշափելի ձեռքբերումներ գիտնականներին վերադարձնելու, սփյուռքի գիտական հանրույթին տարբեր կառույցների շուրջ և հաղորդակցային ցանցերի միջոցով համախմբելու գործում:

Նշենք, որ Թուրքիայում տարեցտարի ավելանում է գիտնականների թիվը: Ավելանում են նաև գիտության մեջ արվող ներդրումները: Միայն 2007-10թթ. ԵՄ յոթերորդ շրջանակային ծրագրով Թուրքիան գիտության զարգացման, տեխնոլոգիաների և ինովացիոն գործունեությունը խթանելու նպատակով ստացել է 1,5 մլրդ եվրո: Մարի Կյուրիի հետազոտական գրանտային ծրագրից օգտվող երկրների շարքում, որն աջակցում է «ուղեղների հետադարձ հոսքին», Թուրքիան հայտնվել է երկրորդ տեղում: 2007-09թթ. այն գտնվում էր 5-րդ տեղում: Նույն ծրագրերի շրջանակներում Թուրքիա է վերադարձել համակարգչային ինժեներիայի, աերոնավտիկայի, էներգետիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, քիմիայի և կենսաբանության ոլորտների 120 մասնագետ ԱՄՆ-ից, Կանադայից, Ճապոնիայից: Այս ծրագիրը հիմնականում ֆինանսավորվում էր գիտական հետազոտություններ և տեխնոլոգիական մշակումներ կատարելու համար[1]:

2010 թվականից Թուրքիայի գիտության պատասխանատու պետական մարմիններն ակտիվացրին կապերը սփյուռքի

[1] Türkiye, Avrupa projelerinde fark attı, http://www.dunyabulteni.net/haberler/159725/turkiye-avrupa-projelerinde-fark-atti

գիտնականների հետ: Այսպես, 2010թ. *TÜBİTAK*-ի ղեկավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որ հաստատության նոր ռազմավարության համաձայն՝ սփյուռքի գիտական հանրույթի հետ իրականացվելու են բազմաբովանդակ աշխատանքներ: *TÜBİTAK*-ի աշխատակիցները գիտական սփյուռքի համար ստեղծեցին հատուկ համակարգ՝ *«ARBİS-Y»-ը* («Արտերկրի հետազոտողների տեղեկատվական համակարգ»), որի միջոցով նպատակ է դրված.

- ստեղծել սփյուռքի գիտական հանրույթի վերաբերյալ տեղեկատվական բազաներ՝ քանական և որակական գնահատականներ ստանալու համար,
- համախմբել սփյուռքյան մտավոր ռեսուրսները,
- վերականգնել և ընդլայնել արտերկրի թուրք գործընկերների հետ կապերը,
- ծանոթացնել գիտական սփյուռքին Թուրքիայի գիտության ոլորտի ձեռքբերումներին ու խնդիրներին և այլն:

2012թ. *TÜBİTAK*-ը հրապարակեց աշխարհի տարբեր երկրների բուհական համակարգում և գիտատեխնոլոգիական կորպորացիաներում ընդգրկված 1335 թուրք գիտնականների վերաբերյալ քանակական և որակական տվյալներ *(տե՛ս Գծապատկեր 1)*:

Սույն վիճակագրությունում տվյալներ են պարունակվում նաև գիտնականների վերաբերյալ՝ ըստ իրենց աշխատավայրի (տոկոսային հաշվարկ): Այսպես, աղբյուրի համաձայն՝ հետազոտողների 76%-ը դասավանդում և պաշտոն է զբաղեցնում բուհական համակարգում, 12%-ը ներգրավված է գիտահետա-

Գծապատկեր 1

Թուրքական գիտական հանրության ներկայացվածությունն ըստ երկրների, ընդ. գիտնական



զոտական կենտրոններում, 10%-ը՝ մասնավոր հատվածում: Տեղեկատվական աղբյուրը տվյալներ է ներկայացնում նաև թուրք գիտնականների վերաբերյալ՝ ըստ իրենց մասնագիտացման բնագավառների: Ըստ այդմ, նրանք գլխավորապես ներգրավված են բնագիտության, հասարակական գիտությունների, բժշկության, մարդաբանության, գյուղատնտեսության և այլ գիտական ասպարեզներում[1]:

Արտերկրի թուրք գիտնականների հետ կայուն և բազմակողմանի հարաբերություններ հիմնելու նպատակով 2012թ. առաջին անգամ Թուրքիայի Հանրապետության Գիտության, արդյունաբերության և տեխնոլոգիայի նախարարության ու

[1] Dünya devlerinde çalışan 47 ülkede 1335 Türk bilim adamları!, http://genel-sosyalahtapot.blogspot.am/2012/12/47-ulkede-1335-turk-bilim-insan.html.

TÜBİTAK-ի կողմից կազմակերպվեցին «Արտասահմանում բնակվող թուրք գիտնականները» խորագրով համաժողովներ (երեք համաժողով), գնահատվեցին սփյուռքի գիտական հանրույթի հետ համագործակցության, առկա ներուժի օգտագործման և Թուրքիա վերադառնալու հնարավորությունները: Համաժողովներին մասնակցել է հումանիտար և բնական գիտությունները ներկայացնող 1300 թուրք գիտնական 46 երկրներից: Թուրքիան սփյուռքի գիտական ներուժի հնարավորությունները ցանկանում է ներդնել առավելապես հետևյալ ոլորտներում.

- Տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաներ
- Էներգետիկա (արևային էներգիա և քարածխի տեխնոլոգիա)
- Գյուղատնտեսություն (սերմերի սելեկցիա, օրգանական գյուղատնտեսություն, էկոլոգիապես մաքուր սննդամթերք)
- Բժշկական (վերականգնողական նորագույն տեխնոլոգիաներ, դեղերի և պատվաստման տեխնոլոգիաներ)
- Նանոտեխնոլոգիաներ
- Գործիքաշինական արդյունաբերություն
- Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն
- Մեխատրոնիկա[1] և այլն:

Բացի այս միջոցառումներից, թուրք հետազոտողներին վերադարձնելու նպատակով ռազմարդյունաբերության (մեկնել են հիմնականում ռազմական էլեկտրոնիկայի ոլորտի պաշտո-

[1] Ժամանակակից մեխատրոնային համակարգը ինտելեկտուալ, պերիֆերային սարքերի հավաքածու է: Ներկայում մեխատրոնիկան և մեխատրոնային համակարգերը կիրառվում են ռոբոտաշինության, ավտոմեքենաշինության, ինքնաթիռաշինության, տիեզերական տեխնիկայի, բժշկության, կենցաղային իրերի պատրաստման բնագավառներում, տե՛ս https://hy.wikipedia.org.

նատար անձինք), ավտոմոբիլաշինության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն ծավալող թուրքական հաստատությունների ներկայացուցիչները վերջին տարիներին հանդիպումներ են ունեցել ԱՄՆ-ում ապրող թուրք գիտնականների հետ: Աշխատանքների արդյունքում *TÜBİTAK*-ի միջազգային կապերի վարչության աջակցությամբ 2007-2015թթ. Թուրքիա է վերադարձել 541 մասնագետ, որոնք աշխատանքի են տեղավորվել գիտատեխնիկական և արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում, համալսարաններում, մասնավոր հատվածում[1]: Չնայած նման զարգացումներին, համաձայն *TÜBİTAK*-ի նախկին նախագահ Յուջել Ալթունբաշաքի՝ Թուրքիայի նման երկիրը տարբեր ոլորտների համար ունի 250-300 հազար հետազոտողի պահանջարկ[2]:

Պետություն-սփյուռք գիտական կապերի ոլորտում առանձնահատուկ է 2004թ. հիմնադրված, ԱՄՆ-ում բնակվող թուրք գիտնականներին մեկ հարկի տակ համախմբող «Թուրք-ամերիկյան գիտնականների միության» («*TASSA*») գործունեությունը: Ստեղծման օրվանից հաստատությունը սփյուռքի գիտնականների և Թուրքիայի միջև գիտատեխնիկական ոլորտին առնչվող նախագծերի շրջանակներում իրագործել է համագործակցությանը միտված քաղաքականություն: «*TASSA*»-ն ֆինանսական և կազմակերպական աջակցություն է ստանում թուրքական ռազմարդյունաբերական ձեռնարկությունների, Արտա-

[1] 248 bilim adamı Türkiye'ye geri döndü, http://www.dunyabulteni.net/haberler/258692/248-bilim-adami-turkiyeye-geri-dondu, *B.Çubukçu,* Beyin göçüne bürokrasi pürüzü, http://www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel/beyin-gocune-burokrasi-puruzu.

[2] *A.Uygun*, Yurt Dışındaki Türk Bilim İnsanları Kurultayı' ilk kez İstanbul'da yapıldı, «Telepati», E-dergisi, Ağustos, sayı 203, 2012.

սահմանի թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչության, «*Turkish American Television*»-ի և այլ պետական կառույցների կողմից: Միևնույն ժամանակ, տարբեր հարցերով օժանդակում է արտերկրում կրթություն ստացող երիտասարդ թուրք գիտնականներին, կազմակերպում գիտական սփյուռքի հիմնախնդիրներին նվիրված համաժողովներ[1]:

Չնայած նման զարգացումներին, ոչ բոլոր գիտնականներն են, որ ցանկություն ունեն վերադառնալ Թուրքիա կամ համագործակցել: Առավել ևս 2016թ. Թուրքիայում տեղի ունեցած անհաջող ռազմական հեղաշրջման փորձից հետո, երբ գյուլենականների հետ համագործակցության մեղադրանքով ձերբակալվեցին մեծ թվով գիտնականներ, այդ թվում *TÜBİTAK*-ի նախկին նախագահ Յուջել Ալթունբաշաքը, որն, ի դեպ, շուրջ 25 տարի բնակվելով ԱՄՆ-ում, Թուրքիայից հրավեր էր ստացել գլխավորելու այդ կառույցը: Բացի այդ, հազարավոր գիտնականներ հեռացվեցին աշխատանքից (դա անդրադարձավ նաև *TÜBİTAK*-ի վրա), իսկ անձնակազմի սակավության պայմաններում երկրի շատ գիտահետազոտական հաստատություններ հայտնվեցին կաթվածահար վիճակում[2]:

Այս միտումներն ընդհանուր առմամբ իրենց բացասական հետևանքը կթողնեն ոչ միայն գիտական համակարգի, այլև պետություն-գիտական սփյուռք հարաբերությունների վրա՝

[1] *H.Ünal*, Türk, Bilim İnsanları ve Akademisyenler Birliği (TASSA) Kurultay Sunumu, Yurt Dışındaki Türk Bilim İnsanları Kurultayı, 12-13 Temmuz, 2012, tassausa.org/docs/TheBridge/YTBIK/Kurultay_Unal.ppt

[2] *A.Abbott*, The Turkish paradox: Can scientists thrive in a state of emergency? (15.02.2017), http://www.nature.com/news/the-turkish-paradox-can-scientists-thrive-in-a-state-of-emergency-1.21475.

չբացառելով անգամ այս ուղղությամբ ծրագրերի ֆինանսավորման դադարեցումը: Հավելենք, որ ոլորտում կան մի շարք խնդիրներ, որոնք առնչվում են փաստաթղթային ձևակերպումներին, Թուրքիայի գիտական համակարգում սփյուռքի ներկայացուցիչների ադապտացիային, նյութատեխնիկական հագեցածությանը, ֆինանսավորմանը և այլն:

2016թ. վարչապետ Բինալի Յըլդըրըմը ներկայացրեց կառավարության ծրագիրը, որտեղ Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ սփյուռքի հետ կապված քաղաքականությանը հատկացվել էր 4 էջ: Այստեղ ձևակերպված են այդ քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները, թիրախային ուղղությունները, նպատակները, աշխատանքների իրագործման բնագավառները: Ծրագրի կետերը վերաբերում են ինչպես բուն թուրքական սփյուռքին, այնպես էլ «բարեկամ հասարակություններին»: Նշենք, որ ծրագրի հետ կապված՝ թուրքական սփյուռքի մամուլում եղան որոշ ոչ այնքան դրական արձագանքներ: Հոդվածներից մեկում նշվում էր, որ դրանից «թուրքական սփյուռքի քաղաքականություն դուրս չի գա», քանի որ այն չի արտացոլում եղած խնդիրների բազմազանությունը, բայց և այնպես, կան տեսակետներ, որ այդ քայլով Թուրքիայի իշխանություններն ուղերձ են հղում սփյուռքին՝ ակնկալիքների սպասումով[1]:

Ծրագրի համաձայն՝ առաջիկա տարիներին կառավարությունը նախատեսում է կատարել հետևյալ գործողությունները.

[1] *E.Zehra-Kandemir*, Yeni başlayanlar için diasporanın gücü (03.06.2016), http://www.serbestiyet.com/yazarlar/elif-zehra-kandemir/yeni-baslayanlar-icin-diasporanin-gucu-692769.

- արտասահմանում բնակվող թուրքերի իրավունքների պաշտպանությանն ուղղված քաղաքականություն,
- նյութական աջակցություն սփյուռքյան կառույցներին և ուսուցիչների գործուղում համայնքներ՝ սփյուռքում թուրքերենի և մշակութային ինքնության պահպանման նպատակով,
- արտերկրի համալսարաններում սովորող ուսանողների, սփյուռքի գիտնականների և Թուրքիայի միջև ամուր կապեր հաստատելու նպատակով՝ նրանց վերաբերյալ տեղեկատվական բազաների և հաղորդակցային ցանցերի ստեղծում, քարտացուցակների կազմում,
- թուրքերենը, արվեստը և մշակութային ժառանգությունը ճանաչել տալու նպատակով ակտիվացնել մշակութային կապերն այլ երկրների հետ՝ այդ գործում ներգրավելով Թուրքիայի կողմից տարբեր երկրներում հիմնադրված Յունուս Էմրեի անվան ինստիտուտների մասնաճյուղերը,
- սփյուռքի գործերով վարչության և պետական այլ հաստատությունների միջոցով կազմակերպել համայնքների պատանիների և երիտասարդության ամառային հանգիստը Թուրքիայում,
- պետական աջակցություն բուհական համակարգերում՝ «Սփյուռքի հետազոտական ինստիտուտների» ստեղծման և զարգացման ուղղությամբ,
- Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդին (*TÜBİTAK*), համալսարաններին, վերլուծական կենտրոններին պատվիրել՝ իրականացնել թուրքական սփյուռքի սոցիալական, տնտեսական, մշակութային, քա-

ղաքական, իրավական և այս ոլորտի հետ կապված խնդիրների, օրակարգային հարցերին նվիրված հետազոտություններ[1],

- «Քաղաքացիական հասարակության ակադեմիա», «Լիդերության ակադեմիա», «Մեդիա-ակադեմիա» և այլ նախագծերի շրջանակներում զարգացնել հարաբերությունները «բարեկամ հասարակությունների» հետ,
- Բալկանների, Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի երկրներում գործող «ուղեղային կենտրոնների» և Թուրքիայի նմանատիպ հաստատությունների միջև կապերի ամրապնդում՝ «Ուղեղային կենտրոնների համագործակցություն» նախագծի շրջանակներում:
- «Տեղում կրթաթոշակ» նախագծով կրթաթոշակներ տրամադրել վերոհիշյալ տարածաշրջանների ուսանողներին՝ բարձրագույն կրթություն ստանալու համար: Ծրագիրը ներդրվելու է նաև մեսխեթի թուրքերի, Սիրիայի և Իրաքի թուրքոմանների շրջանում[2]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, իշխանության գալուց հետո ԱԶԿ-ն սփյուռքի հանդեպ գրեթե բոլոր ուղղություններով

[1] Արդեն բուհական համակարգերում հիմնադրվել են մի քանի կենտրոններ, ինչպես, օրինակ, Սաքարիայի համալսարանի Սփյուռքի հետազոտությունների կենտրոնը (*Sakarya Üniversitesi Diaspora Araştırmaları Merkezi-DİAM*, www.diam.sakarya.edu.tr/tr): Մյուս կողմից՝ թուրքական որոշ «ուղեղային կենտրոններում» բացվել են սփյուռքի հիմնահարցերն ուսումնասիրող հետազոտական բաժիններ: Միևնույն ժամանակ, *TÜBİTAK*-ի աջակցությամբ դաշտային հետազոտություններ են սկսվել ԱՄՆ թուրքական համայնքների շրջանում, տե՛ս *Türk Diasporasının İslam Algısı Ve Kimlik İnşası Projesi* (14.02.2017), http://www.milliyet.com.tr/turk-diasporasinin-islam-algisi-ve-kimlik-sakarya-yerelhaber-2164459/.

[2] Տե՛ս 65. *Hükümet Programı*, 24, Mayıs, 2016, s. 137-140, https://www.akparti.org.tr/site/haberler/65.-hukumet-programi/84149#1.

իրականացնում է ազգային-պետական քաղաքականություն: Միգրանտները, որոնք երկար ժամանակ պետության համար դիտվում էին միայն իբրև փողի աղբյուր, ԱԶԿ օրոք վերածվեցին քաղաքական ռեսուրսի՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին ճակատներում: Միևնույն ժամանակ, թուրքական հանրության կողմից միգրանտներին տրված պանդուխտ, գաղթական, «ալմանջը» (հայ.՝ գերմանաբնակ թուրք) անվանումներին փոխարինելու եկան եվրոպացի թուրքեր, արտերկրի հայրենակիցներ, լոբբի, սփյուռք հասկացությունները, որոնք սկսեցին տեղ գտնել գիտական հոդվածներում և պետական փաստաթղթերում: Ընդ որում, ինչպես նշում է Ջ.Յունվերը, արտասահմանում բնակվող թուրքերը երբեք չէին կոչվել «սփյուռք», և եզրույթը սկսեց գործածվել հենց ԱԶԿ իշխանության գալուց հետո[1]: Սակայն, ինչպես նշում է ԱԶԿ պատգամավոր Մուսթաֆա Յեներօղլուն, թուրք հասարակության լայն զանգվածների մեջ դեռևս չի հասունացել սփյուռք ունենալու գիտակցումը՝ որպես հավաքական միավոր[2]:

Ակնհայտ է, որ Թուրքիան ակնկալիքներ ունի եվրոպական համայնքներից՝ կապված ԵՄ անդամակցության գործընթացի, կիպրոսյան և քրդական հարցերի, Հայոց ցեղասպանության հետ: Իսկ այդ աշխատանքները պետական մակարդակով իրականացվում են սփյուռքի կրոնա-մշակութային, քաղաքական (թուրքական) կուսակցությունների և գործարար միություն-

[1] *C.Ünver*, Changing Diaspora Politics of Turkey and Public Diplomacy, http://turkishpolicy.com/Files/ArticlePDF/changing-diaspora-politics-of-turkey-and-public-diplomacy-spring-2013-en.pdf,
Y.Özdemir, Diaspora neresi, biz kimiz?, http://www.yenihayat.de/2015/11/20/diaspora-neresi-biz-kimiz/.
[2] *M.Yeneroğlu*, Türkiye'de göç ve diaspora yönetimi (14.10.2017), http://www.star.com.tr/acik-gorus/turkiyede-goc-ve-diaspora-yonetimi-haber-1264240/.

ների միջոցով: Պատահական չէ, որ իրենց դիրքերն ամրապնդելու, Եվրոպայում քաղաքական հենարան ունենալու նպատակով ԱԶԿ-ն 2004թ. Գերմանիայում հիմնադրեց «Եվրոպայի թուրք դեմոկրատների միություն» (*Union of European Turkish Democrats-UETD*) կազմակերպությունը, որը թուրքերով բնակեցված եվրոպական երկրներում ունի 13 մասնաճյուղ: Կապված չլինելով որևէ կուսակցության հետ՝ այն, այնուամենայնիվ, հանդիսանում է ԱԶԿ աջ ձեռքը Եվրոպայում, նրա մասնաճյուղերի կողմից անցկացվող միջոցառումներին մասնակցում են ԱԶԿ պատգամավորներ և նախարարներ, փորձագետներ:

2016թ. Գերմանիայում ձեռնարկատեր Ռեմզի Արուի (գերմանական ԶԼՄ-ում Էրդողանի առավել հայտնի պաշտպանն է) փաստաբան Ռամազան Ակբաշիի և Հալիլ Էրթեմի կողմից ստեղծվեց «Գերմանացի դեմոկրատների դաշինք» թուրքական կուսակցությունը, որն, ըստ որոշ տվյալների, ստեղծվել էր Էրդողանի նախաձեռնությամբ՝ Գերմանիայի թուրքական սփյուռքի՝ նրան հավատարիմ ներկայացուցիչների մասնակցությամբ և ղեկավարությամբ:

Կենտրոնական Ասիայի և Կովկասի ինստիտուտի հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ս.Քորնելը, խոսելով վերոհիշյալ կազմակերպությունների մասին, նշում է. «Այդ համակարգված խմբերը հանրությանը հայտնի են դարձել վերջերս, սակայն ոչ գլխավորապես սփյուռքի շրջանում նախընտրական արշավի մեկնել ցանկացող նախարարների՝ եվրոպական որոշ երկրներ մուտքի արգելման շուրջ դիվանագիտական շարքերի պատճառով: Փաստացի, այդ շարքերն ավելի շուտ հանդիսանում են հետևանք թուրքական հետախուզության անօրինական

գործողության ավելի խոր և անհանգստացնող մեղադրանքնե-
րի»[1]: Էրդողանին նաև հաջողվեց սերտ հարաբերություններ
հաստատել Գերմանիայում և արևմտյան մի քանի պետություն-
ներում գործող «Ազգային տեսակետ» (*Milli Görüş*)[2] շարժման
ներկայացուցիչների հետ: «Ազգային տեսակետ»-ը Եվրոպայում
ունի 514 հաստատություն (որից 323-ը՝ Գերմանիայում), որոնց
անդամակցում են Եվրոպայի հարյուր հազարից մինչև երեք
հարյուր հազար թուրք քաղաքացիներ[3]:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև Թուր-
քիայից դուրս եկած աջ ծայրահեղական շարժումներից մեկին՝
«Գորշ գայլերին», որոնց անդամները 1980-ական թթ. հաստատ-
վել են Արևմտյան Եվրոպայի երկրներում: Հետազոտողներ
Դ.Պիպերսի և Խ.Դուրանի հավաստիացմամբ, 1993թ. դրությամբ
այդ տարածաշրջանում «Գորշ գայլերի» կառավարման ներքո
գործել են 30 իսլամական մշակութային կենտրոններ, որոնց
ճնշող մեծամասնությունը՝ Գերմանիայում: Ունեն սերտ հարա-
բերություններ Թուրքիայի «Ազգայնական շարժում» կուսակցու-
թյան հետ, որոշ տվյալների համաձայն՝ միայն Գերմանիայում
այս շարժման համախոհների քանակը հասնում է յոթ
հազարի»[4]: Էրդողանի համար ազգայնամոլական այս խմբերը
ևս կարևոր նշանակություն ունեն արտաքին քաղաքական
նպատակների համար, և հավանաբար դա է պատճառը, որ նա

[1] *Svante E. Cornell*, “Weaponizing” the Diaspora: Erdoğan and the Turks in Europe, https://www.turkeyanalyst.org/publications/turkey-analyst-articles/item/579-weaponizing-the-diaspora-erdo%C4%9Fan-and-the-turks-in-europe.html
[2] Milli Görüş in Western Europe, http://www.hum.uu.nl/medewerkers/m.vanbruinessen/conferences/Milli_Gorus_workshop_report.htm.
[3] *Е.Чулковская*, նշվ. աշխ., с. 15.
[4] *D.Pipes, K.Durán*, Muslims in the West: Can Conflict Be Averted?, United States Institute of Peace, August 1993, http://www.danielpipes.org/232/muslims-in-the-west-can-conflict-be-averted

«Ազգայնական շարժում» կուսակցության հիմնադիր Ալփարսլան Թյուրքեշի որդուն՝ Թուղրուլ Թյուրքեշին 2016թ. նշանակեց փոխվարչապետի պաշտոնում, որը պետք է իր լիազորությունների շրջանակներում զբաղվեր կիպրոսյան խնդրով, նաև արտերկրի թուրքական համայնքների և ընդհանրապես սփյուռքի համակարգման աշխատանքներով:

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ թուրքական սփյուռքին հատուկ են գաղափարախոսական պառակտվածությունն ու մասնատվածությունը: Ի տարբերություն այն բանի, որ եվրոպական, հատկապես Գերմանիայի թուրքական կրոնական տարբեր միություններ աջակցում են ԱԶԿ-ին, երկրի քաղաքական-տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքին ինտեգրված թուրք մտավորականության մեծ մասը քննադատում է Էրդողանի քաղաքականությունը՝ կոչ անելով վերջինիս չխառնվել թուրքական սփյուռքի գործերին և զբաղվել սեփական երկրի խնդիրներով: Այստեղ կարելի է հավելել նաև Թուրքիայից տարբեր տարիներին քաղաքական հետապնդումների և ճնշումների հետևանքով Եվրոպա հեռացած ալևիներին և քրդերին, որոնք ևս Թուրքիայի քաղաքականությանը հակադրվող խմբեր են: Ավելին, մի կողմից՝ թուրք-քրդական, մյուս կողմից՝ թուրք-ալևիական հատվածների միջև արտերկրի համայնքներում առկա են լուրջ հակասություններ և կոնֆլիկտներ[1]:

[1] *B.Baser*, Diasporas and Imported Conflicts:Turkish and Kurdish Second-Generation Diasporas in Sweden, Journal of Conflict Transformation & Security, vol. 3 | No. 2, October 2013, pp.104-125, http://cesran.org/Files/JCTS/JCTS_Vol_3_No_2/JCTS_Vol_3_No_2_A_1.pdf, T.Özkan, Transformation of the Alevi Movement in Diaspora: A Case Study in Munich (30.05.2014), http://researchturkey.org/transformation-of-the-alevi-movement-in-diaspora-a-case-study-in-munich/ .

Իշխանափոխության ձախողված փորձից (2016թ. հուլիսի 15) հետո Էրդողանի համար մեկ այլ գխացավանք է դարձել գյուլենական շարժումը: Նա կառավարությանը կարգադրել է իր վերահսկողության տակ գտնվող սփյուռքյան կառույցները հակադրել Ֆեթուլլահ Գյուլենի շարժմանը, որը մեղադրվում է հեղաշրջման փորձի կազմակերպման մեջ: Թուրքական կառավարությունը պահանջում է օտարերկրյա պետություններից փակել գյուլենական դպրոցներն ու նրանց առնչվող կազմակերպությունները, իսկ հետախուզվողներին արտահանձնել Թուրքիային: Մինչդեռ եվրոպական դատական համակարգը հիմքեր չի տալիս օրինական կերպով ստեղծված «գյուլենական օջախների» փակման կամ այլ երկրների քաղաքացիներ հանդիսացող անհատների արտահանձնման համար: Այնպես որ, Թուրքիայի ներկայիս իշխանությունների համար սփյուռքն ընկալվում է ոչ միայն իբրև հնարավորություն, այլև սպառնալիք: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ թուրք վերլուծաբանները կոչ են անում իշխանություններին գյուլենական շարժման դեմ պայքարում վարել «էլ ավելի ակտիվ և ազդեցիկ քաղաքականություն սփյուռքի ուղղությամբ»[1]:

Ընդհանուր առմամբ, վերը հիշատակված գաղափարականացված շարժումներից և իսլամական բնույթի այլ միություններից ու հաստատություններից բացի, Եվրոպայի թուրքաշատ համայնքներում առկա են տարբեր մշակութային-կրոնական, հասարակական-քաղաքական միություններ, որոնք գործում են տարատեսակ միությունների անվան ներքո, նրանցից յուրա-

[1] *F.Altun*, FETÖ'yle Mücadelede "Akıllı Güç" Kullanmak Şart, http://www.setav .org/fetoyle-mucadelede-akilli-guc-kullanmak-sart/.

քանչյուրն ունի սփյուռքի և Թուրքիայի ապագայի վերաբերյալ իր տեսակետը: Այս ամենը ցույց է տալիս թուրքական սփյուռքի քաղաքական-գաղափարախոսական և էթնոկրոնադավանական դաշտի բազմազանությունը: Նկատի ունենալով այս իրողությունները՝ ԱԶԿ պատգամավոր Մ.Յեներօղլուն «Էմիգրանտի ընկալումից դեպի Սփյուռք. արտերկրում բնակվող թուրքերի քաղաքականությունը» խորագիրը կրող հանդիպման ժամանակ նշել է, որ իրենց սփյուռքը էթնիկական, կրոնական, աղանդավորական և տարբեր գաղափարախոսությունների հողի վրա բաժանված սփյուռք է, և որ երկրագնդի վրա այդչափ մասնատված/բաժանված մեկ այլ սփյուռք գոյություն չունի: Այս մասնատվածությունն էլ, ըստ նրա, խանգարում է Թուրքիային՝ օգտագործել սփյուռքի ողջ ներուժը[1]: Սփյուռքի առջև ծառացած դժվարություններն ու մարտահրավերները դիմագրավելու համար վերջինս առաջարկում է օրենսդիր մարմնին առընթեր հիմնել «Միգրացիայի և սփյուռքի հատուկ հանձնաժողով», որի ստեղծումը մինչև 2017թ. ավարտը պետք է դրվի քվեարկության Թուրքիայի Ազգային մեծ ժողովում[2]:

Եթե խնդիրը դիտարկենք պետություն-սփյուռք հարաբերությունների տեսանկյունից, ապա, ըստ մասնագետների, կան.

- շատ զարգացած հարաբերություններ՝ նպատակների համատեղմամբ (ԱՄՆ և Կանադայի թուրքական սփյուռքի համայնքներ),

[1] *A.Serin*, Yurt Dışı Türklerle İlgili Alınacak Daha Çok Mesafe Var (07.02.2017), http://www.dunyabizim.com/etkinlik/25862/yurt-disi-turklerle-ilgili-alinacak-daha-cok-mesafe-var

[2] TBMM'de Göç ve Diaspora İhtisas Komisyonu kurulacak (03.10.2017), http://olaygazete.co.uk/turk-toplumu/tbmmde-goc-ve-diaspora-ihtisas-komisyonu-kurulacak.html.

- հարաբերությունների միջին մակարդակ՝ նպատակների տարբերությամբ (Գերմանիայի, Նիդերլանդների, Բելգիայի թուրքական համայնքներ, որոնք պետության հետ ունեն համագործակցության մի քանի ոլորտներ՝ ԵՄ անդամակցություն և այլն)[1]:

Ի մի բերելով ներկայացվածը՝ կարելի է ասել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունում սփյուռքյան ուղղությունը համեմատաբար նոր է, դրանում ներգրավված գերատեսչական կառույցներն իրագործում են աշխատանքներ իրենց լիազորությունների շրջանակներում, երբեմն նաև դուրս են գալիս այդ շրջանակներից: Ըստ այդմ, տարատեսակ նախագծերով իրականացվում է սփյուռքին ուղղված սոցիալ-մշակութային, գիտակրթական, իրավական, տնտեսական և այլ ոլորտներին միտված քաղաքականություն՝ ձգտելով հասնել այդ հարաբերությունների ռազմավարական խորության:

Աղբյուրներ և գրականություն

1. *Ա.Գրիգորյան*, Թուրքական համայնքները «սփյուռք» հասկացության դասակարգման մեջ, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1-2, 2011:
2. *Ն.Պողոսյան, Ս.Կարապետոսյան*, Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Ե., 2016:
3. *Е.Чулковская*, Турецкая диаспора Германии: Между Анкарой и Берлином, М., 2014.

[1] *Ա.Գրիգորյան*, Թուրքական համայնքները «սփյուռք» հասկացության դասակարգման մեջ, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1-2, 2011, էջ 224-225:

4. *Н.Ксендзык*, Турецкая трудовая иммиграция в странах Западной Европы (70-80-е гг.) / АН УССР, Ин-т социал. и экон. пробл. зарубеж. стран, Киев, Наук. думка, 1991.
5. *О.Бибикова*, Турецкие иммигранты в Германии: проблемы и перспективы, «Ислам на Ближнем и Среднем Востоке», М., н. 8, 2014.
6. *С.Эрдер*, Новые тенденции международной миграции населения и опыт Турции, "Международная миграция населения: Россия и современный мир", выпуск 4, М., 2000.
7. *Я.Волкова*, Турция как родственное государство: формирование связей с родственным населением в постбиполярный период, Наукові записки Міжнародного гуманітарного університету: [збірник], Одеса: Фенікс, Вип. 25, 2016.
8. *Aksel, D.,* Kins, Distant Workers, Diasporas: Constructing Turkey's National Members Abroad, Turkish Studies, Volume 15, 2014, Issue 2.
9. *A.İçduygu*, International Migrants Remittances in Turkey, European University Institute, RSCAS, 2006.
10. *N.Abadan-Unat*, "Turkish Migration to Europe". In "The Cambridge Survey of World Migration", Cambridge University Press, 1995.
11. Emigration and Diaspora Policies in the Age of Mobility, Florence, 2017.
12. *A.Davutoğlu*, Stratejik Derinlik, Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, Küre Yayınları, Altmışdördüncü Basım, Istanbul, 2011.
13. *A.Uygun*, Yurt Dışındaki Türk Bilim İnsanları Kurultayı' ilk kez İstanbul'da yapıldı, «Telepati», E-dergisi, Ağustos, sayı 203, 2012.
14. Dünya Türk Iş Konseyi, Dünya Türk Girişimciler Kurultayı, Sonuç Raporu, 26-27 Mart, Istanbul, 2016.
15. *M.Murat Erdoğan*, Avrupa'da Türkiye Kökenli Göçmenler ve 'Euro-Turks-Barometre' Araştırmaları, Göç Araştırmaları Dergisi, Cilt: 1, Sayı: 1, Ocak-Haziran, 2015

Համացանցային աղբյուրներ

1. *Տ.Քարտուղլանյան*, Զանգվածային բաց առցանց դասընթացների շուրջ (04.06.2015), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13519&sphrase_id=63570
2. Бирюзовая карта - разрешение на работу для отдельной категории иностранцев, http://www.trt.net.tr/russian/pamiatka-dlia-inostrantsa/2016/10/10/biriuzovaia-karta-razrieshieniie-na-rabotu-dlia-

otdiel-noi-katieghorii-inostrantsiev-586478,

3. Бирюзовая Карта в Турции, https://www.antalyahomes.ru/biryuzovaya-karta-v-turtsii
4. *A.Abbott*, The Turkish paradox: Can scientists thrive in a state of emergency? (15.02.2017), http://www.nature.com/news/the-turkish-paradox-can-scientists-thrive-in-a-state-of-emergency-1.21475.
5. *B.Başer*, Turkey's diaspora engagement policy under the Justice and Development Party, (24.04.2017), https://www.imi.ox.ac.uk/blog/turkey2019s-diaspora-engagement-policy-under-the-justice-and-development-party
6. *B.Başer*, Diasporas and Imported Conflicts:Turkish and Kurdish Second-Generation Diasporas in Sweden, Journal of Conflict Transformation & Security, Vol. 3 | No. 2, October 2013, http://cesran.org/Files/JCTS/JCTS_Vol_3_No_2/JCTS_Vol_3_No_2_A_1.pdf
7. Council mobilizing the Turkish diaspora, http://www.hurriyetdailynews.com/council-mobilizing-the-turkish-diaspora.aspx?pageID=238&nID=30022&NewsCatID=464
8. *C.Ünver*, Changing Diaspora Politics of Turkey and Public Diplomacy, http://turkishpolicy.com/Files/ArticlePDF/changing-diaspora-politics-of-turkey-and-public-diplomacy-spring-2013-en.pdf
9. *D.Pipes, K.Durán*, Muslims in the West: Can Conflict Be Averted?, United States Institute of Peace, August ,1993, http://www.danielpipes.org/232/muslims-in-the-west-can-conflict-be-averted
10. *K.Yurtnaç*, Turkey's New Horizon: Turks Abroad and Related Communities, Center for Strategic Research of the Ministry of Foreign Affairs of the Republic of Turkey, SAM Papers, Oct 2012, no.3, p.9, http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/10/SAM_paper_ing_03.pdf
11. *L.Mügge*, Managing Transnationalism: Continuity and Change in Turkish State Policy, International Migration, Vol. 50 (1), 2012 https://www.academia.edu/19476347/Managing_Transnationalism_Continuity_and_Change_in_Turkish_State_Policy
12. Milli Görüş in Western Europe, http://www.hum.uu.nl/medewerkers/m.vanbruinessen/conferences/Milli_Gorus_workshop_report.htm
13. *Svante E. Cornell*, "Weaponizing" the Diaspora: Erdoğan and the Turks in Europe, https://www.turkeyanalyst.org/publications/turkey-analyst-articles/item/579-weaponizing-the-diaspora-erdo%C4%9Fan-and-the-turks-in-europe.html

14. *T.Özkan*, Transformation of the Alevi Movement in Diaspora: A Case Study in Munich (30.05.2014), http://researchturkey.org/transformation-of-the-alevi-movement-in-diaspora-a-case-study-in-munich/
15. *A.Serin*, Yurt Dışı Türklerle İlgili Alınacak Daha Çok Mesafe Var (07.02.2017), http://www.dunyabizim.com/etkinlik/25862/yurt-disi-turklerle-ilgili-alinacak-daha-cok-mesafe-var
16. *B.Çubukçu*, Beyin göçüne bürokrasi pürüzü, http://www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel/beyin-gocune-burokrasi-puruzu
17. Dışişleri Bakanı Çavuşoğlu Münih'te, http://www.mfa.gov.tr/disisleri-bakani-cavusoglu-munih_te.tr.mfa
18. Dışişleri'nden "Türk diasporası" atağı (07.05.2015), http://www.milliyet.com.tr/disisleri-nden-turk-diasporasi-/siyaset/detay/2055610/default.htm
19. Dünya Türk Iş Konseyi, Dünya Türk Girişimciler Kurultayı, Sonuç Raporu, 26-27 Mart, Istanbul, 2016, http://www.turkamerikandiasporakonseyi.us/
20. Dünya devlerinde çalışan 47 ülkede 1335 Türk bilim adamları!, http://genel-sosyalahtapot.blogspot.am/2012/12/47-ulkede-1335-turk-bilim-insan.html
21. *E.Bayraklı*, Diaspora Politikamız (07.06. 2016), https://www.setav.org/diaspora-politikamiz/
22. E-KÜTÜPHANE, http://www.memleketim.gov.tr/elibrary_m/ELibrary
23. *E.Zehra-Kandemir*,Yeni başlayanlar için diasporanın gücü (03.06.2016) http://www.serbestiyet.com/yazarlar/elif-zehra-kandemir/yeni-baslayanlar-icin-diasporanin-gucu-692769
24. *F.Altun*, FETÖ'yle Mücadelede "Akıllı Güç" Kullanmak Şart, http://www.setav .org/fetoyle-mucadelede-akilli-guc-kullanmak-sart/
25. *H.Ünal*, Türk Bilim İnsanları ve Akademisyenler Birliği (TASSA) Kurultay Sunumu, Yurt Dışındaki Türk Bilim İnsanları Kurultayı ,12-13 Temmuz, 2012, tassausa.org/docs/TheBridge/YTBIK/Kurultay_Unal.ppt
26. İsveç'teki Türk İşadamları Dernek Kurdu, https://www.haberler.com/isvec-teki-turk-isadamlari-dernek-kurdu-2751076-haberi/
27. Kültürel ve Sosyal İlişkiler Daire Başkanlığı, https://www.ytb.gov.tr/kulturel_sosyal_db.php
28. Mavi Kart sahiplerine tanınan haklar nelerdir?, http://euturkhaber.com/mavi-kart-tarihcesi/
29. *M.Yeneroğlu*, Türkiye'de göç ve diaspora yönetimi (14.10.2017), http://www.star.com.tr/acik-gorus/turkiyede-goc-ve-diaspora-yonetimi-haber-1264240/

30. Memleketim FM, Yurtdışında yaşayan Türkiye vatandaşlarının yeni radyosu! http://www.trtmemleketimfm.com/?r=site/content&id=32
31. Perakendecilikte Yurtdışı Açılımı, https://www.deik.org.tr/uploads/10-baslikta-perakendecilikte-yurtdisi-acilimi.pdf
32. Proje destekleri, https://www.ytb.gov.tr/proje_destek.php
33. TAF Network, http://tafnetwork.org/
34. TBMM'de Göç ve Diaspora İhtisas Komisyonu kurulacak (03.10.2017), http://olaygazete.co.uk/turk-toplumu/tbmmde-goc-ve-diaspora-ihtisas-komisyonu-kurulacak.html
35. Türkçe Eğitim Müdürlüğü, http://www.yee.org.tr/tr/turkceegitimmudurlugu
36. Türk Diasporası için Türkçe öğreticiler yetiştiriliyor, http://sonhaber.eu/gundem/turk-diasporasi-icin-turkce-ogreticiler-yetistiriliyor/
37. Türk Diasporası "Dünya Şehir Ağı" kuruyor (06.09.2014) https://www.tobb.org.tr/Sayfalar/Detay.php?rid=19696&lst=MansetListesi
38. Türkiye, Avrupa projelerinde fark attı, http://www.dunyabulteni.net/haberler/159725/turkiye-avrupa-projelerinde-fark-atti
39. Türk Diasporasının İslam Algısı Ve Kimlik İnşası Projesi, 14.02. 2017, http://www.milliyet.com.tr/turk-diasporasinin-islam-algisi-ve-kimlik-sakarya-yerelhaber-2164459/
40. Y.Özdemir, Diaspora neresi, biz kimiz?, http://www.yenihayat.de/2015/11/20/diaspora-neresi-biz-kimiz/
41. Yunus Emre Enstitüsü, http://www.yee.org.tr/tr/yunusemreenstitusu
42. II. Yılmaz Hükümeti Programı, https://www.tbmm.gov.tr/hukumetler/HP53.htm
43. 65. Hükümet Programı, 24, Mayıs, 2016, https://www.akparti.org.tr/site/haberler/65.-hukumet-programi/84149#1
44. 248 bilim adamı Türkiye'ye geri döndü, http://www.dunyabulteni.net/haberler/258692/248-bilim-adami-turkiyeye-geri-dondu

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սփյուռքը՝ որպես միջազգային հարաբերություններում ժողովրդական դիվանագիտության մաս, ձեռք է բերել կարևոր նշանակություն՝ վերածվելով յուրօրինակ սուբյեկտի: Գլոբալ հարթությունում աշխարհաքաղաքական/տնտեսական ներկա բարդ իրադրությունը հարկադրում է սփյուռքի հետ հարաբերություններում առավել ակտիվ քաղաքականություն վարել: Լայն իմաստով, սփյուռք ունեցող երկրներում տնտեսական կապիտալից և գիտական ներուժից օգտվելու խնդիրը, օտարերկրյա համայնքների ներքին համախմբման և զարգացման գործը, գոյապահպանական սպառնալիքներն ու համայնքային ինքնակազմակերպման նոր հնարավորությունները և դրանցից ածանցված հիմնահարցերը բարձրացվել են պետական քաղաքականության մակարդակի: Ադրբեջանը ևս, որպես ռազմավարական անհրաժեշտություն, ԽՍՀՄ փլուզումից հետո պետական մակարդակով իրականացրեց սփյուռքակերտման քաղաքականություն՝ սփյուռքը դիտելով ինչպես սեփական երկրի զարգացմանն ուղղված այլընտրանքային ռեսուրս, այնպես էլ արտաքին քաղաքականության կարևոր «գործընկեր»՝ փորձելով վերջինի միջոցով ամրապնդել իր միջազգային հեղինակությունը:

Սփյուռքի հետ Ադրբեջանի ռազմավարական փոխգործակցության հիմքերը դրվել են *«Աշխարհի ադրբեջանցիների համագումար»* անվանումը ստացած միջոցառումների շրջանակներում, որտեղ ուղենշվել են տվյալ ոլորտին վերաբերող գործողությունների «ճանապարհային քարտեզները»[1]: Այն ենթադրում էր բազմաբովանդակ աշխատանքների իրագործում՝ սփյուռքի հետ կայուն կապերի հաստատման, զարգացման և ամրապնդման ուղղությամբ:

Այս ուղղությամբ իրականացված առաջին քայլերին զուգահեռ՝ պետություն-սփյուռք հարաբերություններին նոր լիցք հաղորդելու նպատակով մշակվեցին և զարգացվեցին համագործակցությանը միտված ռազմավարական տարբեր ուղղություններ: Արտերկրում հիմնադրվեցին համայնքների աշխատանքները համակարգող և տարբեր գործառույթներ ունեցող կառույցներ, սփյուռքի կյանք բերվեցին համախմբմանն ուղղված գաղափարախոսություններ, գործադրվեցին որոշակի ջանքեր արտերկրի համայնքներում առկա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ, որում ներգրավվեցին պետական տարբեր գերատեսչություններ, հանրային քաղաքականություն իրականացնող սուբյեկտներ: Փաստորեն, սփյուռքի համախմբման և կայացման գործը համարվեց առաջնահերթ ուղղություններից մեկն արտաքին քաղաքականության ոլորտում:

[1] Սփյուռքի հետ կապված աշխատանքային ուղղությունների վերաբերյալ որոշումներն ամրագրված են ադրբեջանական սփյուռքի հիմնահարցերին վերաբերող չորս համաժողովների (2001թ., 2006թ., 2011թ., 2016թ.,) կողմից ընդունված հռչակագրերում, ինչպես նաև պետական օրենքներում և տարատեսակ միջոցառումների շրջանակներում ընդունված փաստաթղթերում:

«Աշխարհի ադրբեջանցիների համագումարի» անդրանիկ նիստը ներկայացուցչական կազմով տեղի ունեցավ 2001թ. Բաքվում, Հ.Ալիևի նախաձեռնությամբ: Վերջինս համարվում է ադրբեջանական սփյուռքի հետ աշխատանքների կազմակերպման գլխավոր «ճարտարապետը»[1]: Նա գտնում էր, որ սփյուռքը «ազգի թևերն է»[2]: Համաժողովին ներկա էին շուրջ 36 երկրներում գործող համայնքային կազմակերպությունների ղեկավարներ, մտավորականներ, մշակութային գործիչներ և այլք՝ 400 պատվիրակ: Միջոցառման ընթացքում որպես անհրաժեշտություն առաջարկվեց տարբեր մեխանիզմների ներդրմամբ ձեռնարկել քայլեր՝ սփյուռքի և Ադրբեջանի Հանրապետության հետ կապերի ամրապնդման ու զարգացման, աշխարհի տարբեր ծայրերում բնակվող ադրբեջանցիների միջև «լիակատար միասնության» և համերաշխության ապահովման, ադրբեջանական համայնքների գործունեությունը համակարգող ինստիտուցիոնալ կառույցի ստեղծման ուղղություններով: Համայնքների փոխադարձ ճանաչողության մակարդակի բարձրացման, միմյանց խնդիրներին հաղորդակից դարձնելու նպատակով մշակվեցին տեղեկատվության փոխանակման մեխանիզմները: Համագումարում հնչած առանցքային հարցը, որի լուծմամբ պետք է դրվեին սփյուռքյան քաղաքականության ինստիտուցիոնալ հիմքերը, սփյուռքի հետ աշխատող պետական կառույցի ստեղծման գաղափարն էր: ԱՀ այն ժամանակվա նախագահ Հ.Ալիևը 2002թ. հուլիսի 5-ին ստորագրեց հրաման *«Արտաստահ-*

[1] *Н.Шафиев,* Деятельность диаспоры как важный элемент лоббирования интересов, Гілея: науковий вісник, 2014, вип. 87, с. 372.

[2] Двери нашей организации открыты всем нашим соотечественникам (07.08.2015), http://vesti.az/news/258645.

մանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի» (ներկայում՝ «Սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտե») ստեղծման վերաբերյալ[1]:

Սփյուռքի հետ համակարգված աշխատանքներ ծավալելու գործը դրվեց կոմիտեի վրա՝ պաշտոնապես ամրագրելով այդ կառույցի աշխատանքային գործունեությունը կարգավորող հիմնարար իրավունքների, լիազորությունների և պարտականությունների վերաբերյալ որոշումները: Նույն թվականի դեկտեմբերին և 2003թ. փետրվարին ընդունված *«Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ կապված պետական քաղաքականության»* օրենքներով սահմանվեցին պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու իրավական սկզբունքները[2]:

ԱՀ սփյուռքի գործերով պատասխանատու գերատեսչական կառույցի, ԱԳՆ-ի, դեսպանատների, պետական այլ հաստատությունների նյութատեխնիկական և ֆինանսական աջակցությամբ Ամերիկա աշխարհամասի, Եվրոպայի, Ասիայի և հետխորհրդային մի շարք երկրներում իրագործվեցին աշխատանքներ համայնքների կազմակերպչական խնդիրների լուծման ուղղությամբ: Հետևողական և նպատակաուղղված գործողությունների արդյունքում վերոհիշյալ տարածաշրջանների երկրներում ստեղծվեցին ավելի քան 80 նոր համայնքներ: Այն իր հերթին արագացրեց համայնքապատկան կառույցների ստեղծման գործը, և արդեն 2006թ. տարբեր գործառույթներ

[1] Azərbaycan Respublikasinin Diaspor Ilə Iş Üzrə Dövlət Komitəsi, http://www.azerbaijan.az/_StatePower/_CommitteeConcern/_committeeConcern_a.html.

[2] Указ Президента Азербайджанской Республики № 859, Баку, 21 февраля 2003 года, http://lib.aliyevheritage.org/ru/1498491.html.

իրականացնող կառույցների թվաքանակը հասցվեց երեք հարյուրի: Հիմնադրվեցին *«Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես»* (հիմն. 2001թ.), *«Թուրքիայի ադրբեջանական կազմակերպությունների դաշնություն»* (հիմն. 2004թ.[1]), *«Կանադայի ադրբեջանական կազմակերպությունների դաշնություն»* (հիմն. 2005թ.) միասնական կենտրոնները, որոնց գերնպատակն էր տվյալ երկրների սահմաններից ներս հասարակական հիմունքներով գործող առանձին կառույցների աշխատանքի, ինչպես նաև տեղի համայնքների կենսագործունեության համակարգումը: 2004թ. հիմնադրվեց նաև «*Համաեվրոպական ադրբեջանական կոնգրես»* հաստատությունը, որն արդեն համակարգում էր Եվրոպա մայրցամաքում առկա ադրբեջանական բոլոր համայնքները[2]: Այս փուլում *«սփյուռքակերտման նախագծի իրականացման հաջողությունը սկսեց չափվել կազմակերպությունների թվի աճով և նրանց աստիճանական համաստորադաս հիերարխացմամբ»*[3]:

2000-ական թթ. 1-ին տասնամյակի վերջերին սփյուռքի խնդիրների հաղթահարման նպատակով, Ադրբեջանի պետական մարմինները՝ մտավորականության ներգրավվածությամբ, մշակեցին նաև սփյուռքի քաղաքականության դոկտրինը՝ «Աշխարհի ադրբեջանցիների համերաշխության խարտիան»: Այստեղ ներկայացված են սփյուռքի գործունեության հիմնական ուղղություններն ըստ տարածաշրջանային հետաքրքրություն-

[1] Türkiye Azerbaycan Dernekleri Federasyonu, http://tadef.org.tr/1_Sayfa-hakkimizda.aspx.
[2] Азербайджанцы, проживающие за рубежом, будут голосовать за Ильхама Алиева, https://ru.sputnik.az/politics/20081004/42514172.html.
[3] *С.Румянцев,* Диаспорастроительство в постсоветском Азербайджане, Пояснительная записка 12/06, Январь, 2012, http://www.carim-east.eu/media/sociopol_module/Explanatory%20Notes%20AZ2%20-%2006.pdf.

ների, ազգային հարցերի շուրջ աշխարհի տարբեր ծայրամասերում բնակվող ադրբեջանցիների համախմբմանն ուղղված դրույթները, քարոզչական նպատակով վիրտուալ տիրույթի օգտագործման կարևորությունը, այլ սփյուռքերի հետ համագործակցության հնարավորությունները, ադրբեջանական լոբբիի ձևավորման իրական հիմքերի ստեղծումը, ադրբեջանական սփյուռքի պատմությունը և նրա կառուցվածքի պաշտոնական հայեցակարգը[1]: Ռազմավարական այս առաջադրանքների շուրջ էլ ձևավորվեց սփյուռքակերտման տեսլականը, ինչը ենթադրում էր, որ այն համակարգվելու և ուղղորդվելու էր Բաքվի իշխանությունների կողմից:

Ընդհանուր առմամբ, «Խարտիա»-ում ամրագրված գլխավոր նպատակներից մեկը աշխարհի ադրբեջանցիների միավորումն է՝ Ադրբեջանի գաղափարախոսության հիմքերի վրա: Ինչպես նշում է Բեռլինի սոցիալական հետազոտությունների կենտրոնի աշխատակից, ս.գ.թ. Ս.Ռումյանցևը. «*Հիշողության և հետխորհրդային ազգայնականության («ադրբեջանականության») քաղաքականությունը «փոխանցվեց» նաև սփյուռքին: Այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են մարտի 31-ին նշվող «ադրբեջանցիների ցեղասպանության»* (չակերտները՝ Ա.Ս.) *օրը, «Ադրբեջանցիների ազգային փրկության» (հունիսի 15) և «Աշխարհի ադրբեջանցիների համերաշխության» (դեկտեմբերի 31) տոները, որոնք օրացույցում տեղ էին գտել միայն հետխորհրդային շրջանում, ներդրվեցին նաև սփյուռքի կյանքում, որը մինչ այդ կառուց-*

[1] Մանրամասն տե՛ս В скором времени будет готов окончательный вариант хартии солидарности азербайджанцев мира, https://azertag.az/ru/xeber/V_SKOROM_VREMENI_BUDET_GOTOV_OKONCHATELNYI_VARIANT_XARTII_SOLIDARNOSTI_AZERBAIDZHANCEV_MIRA-699305

վում էր «Նովրուզ Բայրամի» տոնակատարության շուրջ»: Սակայն նոր քաղաքականության սկիզբ *«...ինչպես երկրի, այնպես էլ սփյուռքակերտման գործում որոշակի փոփոխությունների համար, դարձավ հենց Հեյդար Ալիևի վախճանը: «Համազգային մեծ առաջնորդի» իդեալականացված կերպարը կենտրոնական տեղ զբաղեցրեց հիշողության քաղաքականությունում թե՛ Ադրբեջանում, թե՛ սփյուռքում»*[1]:

«Աշխարհի ադրբեջանցիների համագումար»-ի երկրորդ համաժողովը տեղի ունեցավ 2006թ., որին մասնակցում էին 44 պետություններից (Եվրոպայից, ԱՊՀ-ից, Կանադայից, Թուրքիայից և այլն) հրավիրված շուրջ 600 պատվիրակներ, ևս 650 հոգի՝ Ադրբեջանից: Աշխարհի ադրբեջանցիների համակարգող խորհրդի (գործում է 2001 թվականից) և նստաշրջանի մասնակից անդամների կողմից չորս տարվա կտրվածքով կատարված աշխատանքները գնահատվեցին արդյունավետ, հատկապես սփյուռքյան կառույցների ստեղծման առումով: «Համաադրբեջանական» երկրորդ հավաքին բուռն քննարկում ծավալվեց համայնքների ներկայացուցիչների կողմից «ախտորոշման» արդյունքում բացահայտված կրիտիկական խնդիրների շուրջ, առաջարկվեց դրանց առարկայական լուծումների համալիր ծրագիր:

Համեմատելով չորս համագումարներում ընդունված հռչակագրերի բովանդակությունը՝ ակնհայտ է դառնում, որ գործողությունների պլանավորման տեսանկյունից դրանք միմյանցից էականորեն տարբերվում էին: Եթե առաջին համաժողովում խնդիր էր դրված կենտրոնանալ սփյուռքի կազմա-

[1] *С.Румянцев,* Диаспорастроительство в постсоветском Азербайджане, Пояснительная записка 12/06, Январь, 2012, http://www.carim-east.eu/media/sociopol_module/Explanatory%20Notes%20AZ2%20-%2006.pdf.

կերպչական (կառուցվածքային) աշխատանքների վրա, ապա հաջորդ երեք համագումարներում, վերանայելով և լրամշակելով այդ քաղաքականությունում տեղ գտած նախկին որոշումները, օրակարգ մտցվեցին գլոբալ առաջադրանքների իրացմանն ուղղված նախագծեր, առաջ քաշվեցին համագործակցության նոր մոդելներ և ուղղություններ: Դրանք, որպես սփյուռքի քաղաքականությունից բխող անքակտելի բաղադրիչներ, ամրագրվեցին ընդունված հռչակագրերում:

Փաստորեն, համաժողովները վերածվեցին սփյուռքի հետ երկխոսությանը միտված հիմնական հարթակների՝ նպաստելով սփյուռքի հանդեպ պետական քաղաքականության ձևավորմանն ու կապերի ակտիվացմանը: Այս ուղղությամբ, բացի համաժողովներից, արտերկրի համայնքներում և Ադրբեջանում կազմակերպվում են նաև այլ ձևաչափերով միջոցառումներ՝ գիտաժողովներ, հավաք-հանդիպումներ, սեմինարներ, կլոր սեղաններ: Օրինակ, 2013 թվականից սկսած՝ պետական կոմիտեն կազմակերպում է «Աշխարհի ադրբեջանցիների օնլայն ֆորում»-ներ: Նման ձևաչափը ներդրվեց նաև համայնքների աշխատանքների կազմակերպման գործում[1]:

Ըստ էության, Բաքուն սկսեց ավելի նպատակային աշխատել համայնքների կազմակերպչական, գիտական ներուժը պետության խնդիրներին ինտեգրելու, թուրքական (թյուրքական) և այլ ազգերի սփյուռքերի հետ համագործակցության, արտերկրում սեփական մեդիաների ստեղծման, համացանցում տեղեկատվական ռեսուրսների հարստացման և այլ ուղղություններով:

[1] Азербайджанцы мира смогут принять онлайн участие на IV Форуме азербайджанцев Украины, http://ru.apa.az/azerbaydjanskaya_diaspora/azerbajdzhancy-mira-smogut-prinyat-onlajn-uchastie-na-iv-forume-azerbajdzhancev-ukrainy-.html

Սփյուռքյան համագործակցությունը թյուրքախոս երկրների միջև

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գործընթացներում կարևոր տեղ են զբաղեցնում գաղափարախոսական-քաղաքական ուղղությունները, որոնց շուրջ ստեղծվում են պետությունների արտաքին և ներքին քաղաքականությունները: Այս համատեքստում կարևոր և հետաքրքրական են Թուրքիայի արտաքին քաղաքականության բաղադրիչներից՝ «թյուրքական աշխարհի» հետ համագործակցելու եզրերը, մասնավորապես նրանց միջև տեղի ունեցող սփյուռքյան համագործակցությունը:

Գաղտնիք չէ, որ թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների մակարդակը ռազմավարական է, նրանց միջև ընթանում է համընդգրկուն համագործակցություն տարբեր բնագավառներում: Բոլոր ճակատներով սերտ համագործակցություն գոյություն ունի նաև նրանց սփյուռքերի միջև, ինչը տեղավորվում է այսպես կոչված «թյուրքական սփյուռքի» ռազմավարական կառավարման տեսլականում[1]:

Այս ձևաչափով փոխգործակցելու, ընդհանուր ռազմավարություն ունենալու գաղափարն առաջ է քաշվել Ի.Ալիևի կողմից 2006թ. Բաքվում կազմակերպված *«Աշխարհի ադրբեջանցիների 2-րդ համագումար»*-ում[2]: Այստեղ հարկ է անդրադառնալ թուրքական և ադրբեջանական սփյուռքերի վերաբերյալ Իլհամ Ալիևի առաջ քաշած տեսակետին, որը բացահայտում է այդ

[1] Մանրամասն տե՛ս Türk Diasporası Vizyonu, Stratejik İletişim ve Yönetişimi, 2016, İstanbul, http://www.tasam.org/Files/Etkinlik/File/VizyonBelgesi/DTF5_Vizyon_TR_pdf_0ba46c0f-5d28-4d14-b18b-83aaf0f1294f.pdf

[2] *R.B. Aliyev,* Joint Activity of Azerbaijani and Turkish Diaspora..,Гилея: научный вестник, н. 102, 2015, с.138-143.

համագործակցության էությունն ու կարևորությունը՝ «*մեկ ազգը երկու սփյուռք չի կարող ունենալ*»[1], ինչը բխեցվում է *«մեկ ազգ՝ երկու պետություն»* կարգախոսից:

2006թ. հունիսի 4-10-ը Անթալիա քաղաքում տեղի ունեցավ «Աշխարհի թուրքական և ադրբեջանական համայնքային կազմակերպությունների» համատեղ նիստը, որտեղ քննարկվեց թուրք-ադրբեջանական լոբբիստական կազմակերպությունների աշխատանքների համադրման ռազմավարությունը[2]: Երկրորդ միջոցառումը՝ «Ադրբեջանական և թուրքական սփյուռքերի կազմակերպությունների ղեկավարների առաջին ֆորումը», անցկացվեց Բաքվում 2007թ. մարտի 9-ին, Ի.Ալիևի, Ռ.Թ. Էրդողանի և այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության նախկին նախագահ Մեհմեթ Ալի Թալաթի բարձր հովանու ներքո և նրանց անմիջական մասնակցությամբ: Ֆորումին ներկա ԱՄՆ և եվրոպական երկրների սփյուռքերի ներկայացուցիչները, համայնքների ղեկավարները քննարկեցին սփյուռքյան կառույցների ֆինանսական, նյութական դրությունը, համագործակցության հնարավոր մեխանիզմները: Քննարկումների արդյունքում պարզվեց, որ տարբեր տարածաշրջաններում գործող սփյուռքյան հաստատությունները ռազմավարության բացակայության պայմաններում վարում են թույլ

[1] *Ç.Gül Yesevi,* Türk Dünyası ve diaspora (02 05.2013), http://www.oncevatan.com.tr/turk-dunyasi-ve-diaspora-makale,29446.html

[2] Միաժամանակ կազմակերպվեցին «Աշխարհի ադրբեջանցիների մտավորականների ֆորումը» և «Թուրքիայի ադրբեջանական կազմակերպությունների համագումարը», տե՛ս *Новрузова Гюнай Курбан кызы,* Роль азербайджанских представителей науки и культуры, проживающих в Европе, в развитии западной культуры, http://dspace.nbuv.gov.ua/bitstream/handle/123456789/56084/26-Novruzova.pdf?sequence=1, *Հ.Նահապետյան,* Ադրբեջանական լոբբինգի ծավալման դինամիկան (10.05.2007), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2266

գործունեություն, ավելին՝ դրանց ճնշող մեծամասնությունը մարգինալացված է, չունի ֆինանսական մեծ կարողություններ և քաղաքական լուրջ ուժ չի ներկայացնում[1]: Նկատի ունենալով արձանագրված խնդիրների բազմազանությունը՝ մշակվեցին դրանց լուծմանն ուղղված քայլեր, երկու երկրների սփյուռքերի գործունեությունը կանոնակարգող ընդհանուր ռազմավարություն: Արտերկրում երկու երկրների սփյուռքերի միությունները, համայնքային տարբեր գործառույթներ իրականացնող հաստատությունները, լոբբիստական կազմակերպությունները սկսեցին փոխհամաձայնեցված աշխատել: Հատկապես ադրբեջանական սփյուռքը, որն այդ տարիներին գտնվում էր ձևավորման փուլում, *«բավական մեծ աջակցություն ստացավ թուրքական սփյուռքի կառույցներից կազմակերպչական, իրավաբանական հարցերի կարգավորման, կապեր հաստատելու խնդիրներում»*[2]:

Հայտնի է, որ Թուրքիան, իր արտաքին քաղաքականության ռազմավարության համաձայն, «Թյուրքպա» (Թյուրքախոս երկրների պառլամենտական ասամբլեա), «Թյուրքական խորհուրդ» (Թյուրքախոս երկրների համագործակցության խորհուրդ) և այլ ինստիտուցիոնալ կառույցների միջոցով է գլխավորապես իրականացնում թյուրքական երկրներին իր առանցքի շուրջը համախմբելու քաղաքականությունը, որոնք ուղղված են ոչ միայն քաղաքական, այլև մշակութային, կրթական, զբոսաշրջության ոլորտներում ընդհանուր օրակարգ ձևավորելուն: Մինչդեռ, վերոհիշյալ ուղղություններից զատ, Թուրքիան (Ադր-

[1] *H.Cabbarlı,* Dünya Azerbaycan ve Türk Diaspora Teşkilatı Başkanlarının I. Formuna Eleştirel Yaklaşım (15.03. 2007), http://atsam.org.az/dunya-azerbaycan-ve-turk-diaspora-teskilati-baskanlarinin-i-formuna-elestirel-yaklasim/?lang=tr.

[2] *Հ.Նահապետյան,* Ադրբեջանական լոբբինգի կայացման գործընթացը. ընդհանուր տվյալներ (19.04.2007թ.), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2270

բեջանի հետ համատեղ) ընդլայնեց և զարգացրեց սփյուռքի հետ կապերի ոլորտը՝ ի դեմս թյուրքախոս ժողովուրդների սփյուռքերի, որի հիմքերը մասամբ դրվեցին 2007թ. Բաքվում անցկացված *«Ադրբեջանական և թուրքական սփյուռքերի կազմակերպությունների ղեկավարների առաջին ֆորում»*-ում: Ընդ որում, նշվում էր, որ «թյուրքական սփյուռքը» ստեղծվում է հայկական սփյուռքին հակակշռելու նպատակով[1]:

Մեկ այլ կառույց՝ «Թյուրքախոս երկրների համագործակցության խորհուրդը», որի անդամներն են Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը և Ղրղզստանը, համատեղ մշակել է «թյուրքական սփյուռքերի» միավորման իր քաղաքականությունը: 2013թ. Բաքվում անցկացվեց «Թյուրքական խորհրդի» անդամ երկրների սփյուռքի գործերով պատասխանատու գերատեսչական կառույցների ղեկավարների անդրանիկ նիստը: Կառույցի շրջանակներում ստեղծվեց խորհուրդ՝ «Սփյուռքի գործերի պատասխանատուների կոնտակտային խումբ», որի գործառույթներն ամրագրվեցին «Թյուրքախոս երկրների սփյուռքերի համատեղ գործունեության ռազմավարություն» փաստաթղթում: Նույն թվականին Բաքվում առաջին անգամ կազմակերպվեց «Թյուրքական խորհրդի սփյուռքի առաջին ֆորումը», որին մասնակցում էր Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքիայի և Ղրղզստանի սփյուռքյան կազմակերպությունների 500 ներկայացուցիչ: Այդ երկրների սփյուռքյան կառույցների և համայնքների աշխատանքները կոորդինացնելու, նրանց միջև կայուն կապեր հիմնելու նպատակով որոշվեց ԱՄՆ-ում, Գերմա-

[1] Ermeni Diasporasına Karşi Türk Diasporası Kuruluyor!... (09.03.2007), http://habervitrini.com/gundem/ermeni-diasporasina-karsi-turk-diasporasi-kuruluyor-655418.

նիայում, Ֆրանսիայում, Ուկրաինայում հիմնել տարածաշրջանային սփյուռքի կենտրոններ: Առայժմ խորհրդին հաջողվել է նման կենտրոն բացել միայն Կիևում (հիմն. 2014թ.), որի կենտրոնական գրասենյակը տեղակայված է «Ուկրաինայի ադրբեջանցիների միություն» հաստատության շենքում[1]: Ինչ վերաբերում է Ուզբեկստանին և Թուրքմենստանին, ապա այս երկրները դեռևս ձեռնպահ են մնում ոչ միայն այս, այլև տարբեր ձևաչափերով աշխատանքներին մասնակցելուց:

Թյուրքախոս երկրների սփյուռքերի՝ միմյանց ինտեգրվելու և տարբեր մակարդակներում նրանց միջև համագործակցության հնարավորությունները գնահատելու նպատակով բավականաչափ աշխատանքներ են կատարվում նաև ռազմավարական մշակումների գծով մասնագիտացված թուրքական հետազոտական հաստատություններում՝ «ուղեղային կենտրոններում»: Վերջին տասնամյակում թյուրքական աշխարհի խնդիրների վերաբերյալ ստեղծվել են հետազոտություններ, կոնֆերանսներ և համաթյուրքական ֆորումներ անցկացնող մի քանի կենտրոններ:

Հատկապես աչքի է ընկնում Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (*TASAM-Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi*): Պատմական, քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, անգամ միջուկային խնդիրներն այս կենտրոնի հետազոտությունների անբաժան մասն են կազմում: Այն բավական մեծ հեղինակություն ունի ոչ

[1] Türk Konseyi, Kiev'de Bölgesel Diaspora Merkezi açtı (25.12.2014), http://ukrturk.net/turk-konseyi-kievde-bolgesel-diaspora-merkezi-acti/, 24 Aralık 2014 tarihinde Kiev'de Türk Keneşi Diaspora Bölgesel Merkezi açılmıştır, http://www.turkkon.org/tr-TR/24-aralik-2014-tarihinde-kiev%E2%80%99de-turk-kenesi-diaspora-bolgesel-merkezi-acilmistir/3/54/1118

միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերում կենտրոնն ուղղորդվում, ինտելեկտուալ և կազմակերպչական աջակցություն է ստանում Թուրքիայի ԱԳՆ-ից, ֆինանսավորվում թուրքական պետական որոշ բանկերի, տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար շրջանակների կողմից:

Տասնհինգամյա գործունեության ընթացքում կառույցին հաջողվել է կապեր հաստատել տարբեր աշխարհամասերի երկրների, նաև Ադրբեջանի, միջինասիական հանրապետությունների առաջատար հետազոտական կենտրոնների հետ, ստեղծել համագործակցության ձևաչափեր: Մասնավորապես, *TASAM*-ն է ստեղծել իսլամական և թյուրքական աշխարհների հետ համագործակցության ձևաչափերը՝ «Իսլամական համագործակցության կազմակերպության երկրների «ուղեղային կենտրոնների» և «Աշխարհի թյուրքերի» ֆորումները:

Բացի փորձագիտական ուսումնասիրություններից, կենտրոնն իրականացնում է նաև նշված տարածաշրջանների թյուրքական երկրների և նրանց սփյուռքյան համայնքների միջև կապերի ամրապնդման քաղաքականություն՝ ֆորումների և գիտաժողովների անցկացման միջոցով: Կենտրոնի նախաձեռնությամբ 2010թ. հոկտեմբերի 20-22-ը «Աշխարհի թյուրքերի ֆորումի» շրջանակներում կազմակերպվեց «Թյուրքական խորհուրդը, թյուրքական սփյուռքն ու սոցիալ-տնտեսական համագործակցությունը» թեմատիկ ուղղությամբ առաջին հավաքը, որին ներկա էին ֆորումի մասնակից երկրների խորհրդարանների պատգամավորներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, ակադեմիական և գիտավերլուծական հանրու-

թյան ներկայացուցիչներ, Թյուրքական խորհրդի և Թյուրքախոս երկրների ասամբլեայի գլխավոր քարտուղարները, սփյուռքյան կառույցների ներկայացուցիչներ:

Աշխարհի թյուրքերին սպառնացող մարտահրավերների շարքում առանձնահատուկ նշանակություն տրվեց հայկական խնդրին, որը քննարկվեց առանձին: Այն կրում էր «Հայոց ցեղասպանությունը և թյուրքական սփյուռքի համագործակցությունը» խորագիրը: Զեկուցումներով և ելույթներով հանդես եկան պատգամավորներ Ադրբեջանից, Թուրքիայից, այդ երկրների սփյուռքյան կազմակերպությունների ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Բելգիայից, Գերմանիայից, Էստոնիայից: Համաժողովից հետո ընդունվեց հռչակագիր, որով կոչ էր արվում Հայոց ցեղասպանության և արցախյան հակամարտության հարցերում հանդես գալ միասնական ճակատով[1]:

Ակնհայտ էր, որ միջոցառման կազմակերպիչները ցանկանում էին տնտղել հայկական հարցերում թյուրքախոս երկրներից և հատկապես նրանց սփյուռքյան համայնքներից հրավիրված մասնակիցների տրամադրությունները, Հայոց ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ՝ նրանց համագործակցելու պատրաստակամությունը: Ելնելով վերոհիշյալից՝ նշենք, որ այս սեկցիային մասնակցելու հավանություն չէին տվել Ղազախստանի, Թուրքմենստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի ներկայացուցիչները, այդ պատճառով թյուրքախոս երկրներին հայկական հարցերի շուրջ համախմբելու Թուրքիայի և Ադրբեջանի բոլոր ջանքերն ապարդյուն անցան, իսկ ընդունված որոշում-

[1] Dünya Türk Forumu, Türk Konseyi, Türk Diasporası ve Sosyoekonomik İş Birliği, http://www.tasam.org/index.php?sagblok=119.

ները տեղ գտան միայն Աշխարհի թյուրքերի ֆորումի ձևական բնույթ կրող «Ստամբուլյան հռչակագրում»։

Նույն «*TASAM*»-ի նախաձեռնությամբ 2014թ. մայիսի 28-30-ը Թուրքիայի Էդիրնե քաղաքում անցկացվեց Աշխարհի թյուրքերի երրորդ ֆորումը, քննարկվեց երկու առանցքային հիմնախնդիր.

- «Թյուրքական հանրապետությունները. մշակութային դիվանագիտություն և տուրիզմ»,
- «Թյուրքական և հայկական սփյուռքեր։ Հանրային դիվանագիտություն. հնարավորություններ և ռիսկեր»։

Ֆորումին ներկա էին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի և մասնակից երկրների խորհրդարանների պատգամավորներ, թուրքական, ադրբեջանական սփյուռքերի ներկայացուցիչներ տարբեր երկրներից, թյուրքախոս երկրների առաջատար քաղաքական ինստիտուտների փորձագետներ, ակադեմիական հաստատությունների գիտաշխատողներ, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ և այլն։ Ինչպես առաջին ֆորումում, երրորդում նույնպես, համաթյուրքական նշանակության խնդիրներից զատ, քննարկվել են Հայաստանին և Հայությանն առնչվող հարցեր։ Ուշագրավ է, որ հայկական հարցերն այնքան են կարևորվել, որ դարձել են համաթյուրքական ֆորումի օրակարգային երկու հիմնական թեմաներից մեկը։ Բայց, ի տարբերություն առաջին ֆորումի, որտեղ մշակվել էին պայքարի ընդհանուր մեթոդներ, այս մեկն առանձնանում էր նոր մոտեցումների հստակեցման և կոնկրետացման առումով։

«Թուրքական և հայկական սփյուռքեր։ Հանրային դիվանագիտություն. հնարավորություններ և ռիսկեր» մասը գլխավորում

էին Հայոց ցեղասպանության հարցում ժխտողականության դիրքերից հանդես եկող արևմտյան երկու «գիտնականներ»՝ Ջասթին Մաքարթին և Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Քրիստոֆեր Գունը: Ջասթին Մաքարթին ներածական խոսքում կրկին հնչեցրել էր Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր հին և քննադատության չդիմացող թեզերը՝ ըստ էության նոր ոչինչ չասելով: Նույնը կարելի է ասել նրա համախոհների մասին:

Համաժողովի ընդունած հռչակագիրն անդրադառնում էր թյուրքական աշխարհում գիտակրթական, մշակութային և զբոսաշրջային փոխհարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի և Սփյուռքի հետ հարաբերությունների խնդիրներին: Հռչակագրի հայկական մասը բաղկացած էր վեց կետից, որոնք կարելի է խտացնել երկու հիմնական ուղղության մեջ.

- *Հայոց ցեղասպանության հարյուրամյակի միջոցառումներ:* 2015թ. Հայոց ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ, տարբեր երկրներում հայկական սփյուռքի գործողությունները չեզոքացնելու նպատակով ընդունվեց որոշում՝ աշխատանքներ իրականացնել երեք հիմնական ուղղություններով. ա) իրավական, բ) գիտավերլուծական, գ) քաղաքական:
- *ՀՀ-Թուրքիա և Ադրբեջան հարաբերություններ:* Այս կետով թուրքական կողմը մատնանշում էր, որ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո հարաբերությունները սառեցվել են հիմնականում երկու պատճառով, և որպեսզի երկկողմ հարաբերություններ հաստատվեն, Հայաստանը պետք է հրաժարվի «ատելության քարոզից» թուրքերի նկատմամբ և վերջ տա Ադրբեջանի «օկուպա-

ցիային»։ ՀՀ-Թուրքիա և Ադրբեջան հարաբերություններում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ որպես միջնորդ առաջարկվեց ներգրավել Ղազախստանին։

Նշված ուղղությամբ ֆորումում առաջարկվեց կենտրոնացնել նաև «թյուրքական սփյուռքի» ռեսուրսները՝ անհրաժեշտ համարելով ադրբեջանա-թուրքական կառույցների հետ վերջինիս համագործակցության ակտիվացումը, որը կարող էր նպաստել հայկական սփյուռքի ազդեցության թուլացմանը[1]։ Անկասկած, թյուրքական աշխարհի հետ հարաբերություններում Թուրքիայի ամենաակտիվ գործընկերն է Ադրբեջանը, որն, ի դեպ, ինչպես և Թուրքիան, արտաքին մարտահրավերները փորձում է միջնորդավորված կերպով արտահայտել համաթյուրքական կազմակերպությունների հավաքների միջոցով։

Հայտնի է, որ Հայության դեմ վարվող քաղաքականության մեջ այս երկու երկրների համագործակցությունն ամենասերտն է, որոնց միավորում են Հայաստանի հետ ունեցած խնդիրները։ Միջին Ասիայի թյուրքախոս երկրներին ավելի շատ հետաքրքրում է հավաքների հումանիտար-մշակութային և տնտեսական կողմը, ինչի արդյունքում Թուրքիան և Ադրբեջանն ընդհանուրի մեջ մասնավոր խնդիրներ լուծելիս միայնակ են մնում։

Միևնույն ժամանակ, չենք բացառում, որ հակահայկական քաղաքականությունում նրանք ևս ակամա կարող են հայտնվել ճնշման տակ և անուղղակիորեն հանդես գալ որպես ադրբեջանա-թուրքական գործողությունների անմիջական մասնակից։ Այսպիսով, թուրք-ադրբեջանական տանդեմը՝ ի դեմս «թյուրքա-

[1] Ըստ թուրքական գնահատականների՝ չնայած «թյուրքական սփյուռքի» մեծաթվությանը, այն իր ազդեցությամբ զիջում է հայկական լոբբիին։

կան սփյուռքի», փորձում է ստեղծել համագործակցության ավելի լայն ձևաչափ՝ նպատակ ունենալով նրանց ներգրավել հակահայկական քաղաքականության մեջ:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ «թյուրքական սփյուռքերի» միջև այլ ոլորտներում համագործակցությունը նույնպես առանձնապես բարձր մակարդակի վրա չէ (բացառությամբ ադրբեջանա-թուրքական համագործակցության), եթե անգամ որոշակի տեղաշարժեր կան տարածաշրջանային կառույցների ստեղծման ուղղությամբ, ակնհայտ է, որ ռազմավարական այս նպատակի իրականացման ճանապարհին դեռևս առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում թյուրքական համայնքների տարանջատվածությունը: Երկրորդ՝ «թյուրքական սփյուռքերի» համար չկան ընդհանուր միավորիչ պատմական սիմվոլներ, արժեքներ, գաղափարախոսություններ, և տարբեր ձևաչափերով անցկացվող միջոցառումներն ուղղված են նաև այդ խնդիրների հաղթահարմանն ու լուծմանը[1]:

Մեդիա-քաղաքականությունը սփյուռքում

Սփյուռքի համայնքներում սեփական մեդիաների ստեղծման, համացանցում տեղեկատվական ռեսուրսների հարստացման գործը ևս կարևոր տեղ է զբաղեցնում Ադրբեջանի սփյուռքյան քաղաքականությունում: Համայնքների և սփյուռքի հետ համագործակցությանը միտված կառույցների առջև խնդիր է դրված

[1] *A.Babiş,* Türk Konseyi: Türk Birliğinin Hazırlığı mı? (Hazırlanması Zorunlu Bir Alan: Ortak Diaspora (26.06.2014),
http://ekoavrasya.net/Duyuru.aspx?did=144&Pid=10&lang=TR&Ara=Ciz,
Перспективы, стратегические коммуникации и совместное управление тюркской диаспоры, «5-ый Всемирный тюркский форум», http://www.tasam.org/Files/Etkinlik/File/VizyonBelgesi/DTF5_Vizyon_RU_pdf_997195b9-c0fb-427e-a21c-d3cb0c0f04a1.pdf

արտերկրում իրականացնել աշխատանքներ թերթերի, ամսագրերի, պարբերականների հրատարակման, ռադիոհեռուստատեսության և տեղեկատվական գործակալությունների հիմնադրման ուղղությամբ: Պատահական չէ, որ սփյուռքին նվիրված համաժողովներում տվյալ ոլորտին վերաբերող հարցերը կազմել են աշխատաժողովի օրակարգի մաս, հետևաբար այս ուղղությամբ համակարգված աշխատանքներ կատարելու համար ընդունվել են կոնկրետ որոշումներ՝ խթանելով տեղեկատվական ոլորտում պետություն-սփյուռք փոխգործակցությանը:

Տիպաբանության և թեմատիկ ուղղվածությունների տեսանկյունից ադրբեջանական սփյուռքի տեղեկատվական ռեսուրսներն աչքի են ընկնում բազմազանությամբ: Ըստ էության, կարելի է ասել, որ տպագիր նյութերի, ռադիոհեռարձակումների և համացանցային ռեսուրսների թեմատիկ բովանդակությունը կախված է դրանց ռազմավարական նպատակներից, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներից, լսարանից, տեղեկատվության հասանելիությունից, մասնագիտական (լրագրողական) ռեսուրսներից և բազմաթիվ այլ գործոններից: Մեր դիտարկումներից ելնելով՝ փաստենք, որ տպագրվող և հեռարձակվող նյութերի բովանդակությունը վերաբերում է.

- Ադրբեջանի Հանրապետության քաղաքականությանն ու սոցիալ-տնտեսական իրադրությանը,
- սփյուռքի կազմակերպչական հիմնախնդիրներին, համայնքապատկան կառույցների գործունեությանը, համայնքային միջոցառումներին (մշակութային, մարզական, կրթական),
- միգրանտների կրթական, առողջապահական և իրավական հարցերին,

- մշակութային ժառանգությանն ու պատմությանը (ներկայացվում են ադրբեջանական տեսակետները),
- արցախյան հակամարտությանը և այլն:

Նման նյութերի տարածմամբ (կախված գտնվելու վայրից՝ ներկայացվում են տարբեր լեզուներով) ադրբեջանական սփյուռքի տեղեկատվական ռեսուրսները միտված են՝ միջազգային հանրության շրջանում զբաղվել Ադրբեջանի *PR*-ով, իրականացնել ճանաչողական բնույթի աշխատանքներ միգրանտների շրջանում (իրավական և այլ), նպաստել համայնքների անդամների ինտեգրմանը տվյալ երկրի սոցիումում, կազմակերպել համայնքի առօրյան, համաշխարհային հանրությանը հասցնել Ադրբեջանի մասին «ճշմարտությունները», մասնավորապես տվյալ երկրի հանրության շրջանում տարածել արցախյան հակամարտության, Խոջալուի դեպքերի վերաբերյալ սեփական թեզերն ու մեկնաբանությունները: Ինչ վերաբերում է տիպաբանությանը, ապա դրանք հետևյալն են.

- Համացանցային ռեսուրսներ - էլեկտրոնային մամուլ, համայնքապատկան կառույցների կայքէջեր, սոցցանցեր,
- տպագիր մամուլ - շաբաթաթերթեր, ամսագրեր, պարբերականներ և այլն,
- հեռուստաընկերություններ - *«İnterAz TV»* (ՌԴ), *BUTOV TV* (Շվեդիա)[1], *«DiasporaTV»*[2] և *«Diaspora Vision»*[3] (Ուկրաինա),

[1] Bütov Azerbaycan Diaspora Televizyonu Yayına Başladı (17.05.2013), http://www.optimushaber.com/butov-azerbaycan-diaspora-televizyonu-yayina-basladi-270241h.htm.
[2] www.diaspora.tv.
[3] https://www.youtube.com/channel/UClX9aLihHu8DQHrrGHAeCBg.

«TEAS TV»[1] (Եվրոպա). վերջին երեքը գործում են առցանց տարբերակով,

- ռադիո - «Ադրբեջան ռադիո» (Գերմանիա, հիմն. 2002թ.), «Ադրբեջանական ռադիո» (Դանիա), «Ադրբեջանի ձայն» ռադիո (Ֆրանսիա, հիմն. 2004թ.), «Ադրբեջանի ձայն» ռադիո (Շվեյցարիա, հիմն. 2004թ.), «Ադրբեջանական ձայն» ռադիո (Նորվեգիա, հիմն. 2006թ.)[2]:

Տվյալ ոլորտում տեղի ունեցող գործընթացների տրամաբանական շարունակությունն էր տեղեկատվական քաղաքականության մշակման հիմնադրամի (համակարգող կենտրոն) ստեղծման գաղափարի առաջադրումը: Գաղափարը հնչել է 2016թ. «Աշխարհի ադրբեջանցիների IV համագումարի» նիստում և արժանացել հավանության: Նախատեսված է, որ այն ունենալու է առանձին բյուջե, ուր մեկտեղվելու են առաջին հերթին արցախյան հակամարտությանը վերաբերող էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները, փաստաթղթերը, գիտական մշակումները, հետազոտությունները, հրատարակությունները, ֆիլմերը և այլն: Նախատեսվում է ներգրավել ադրբեջանական պետական կառույցներին, տեղեկատվական գործակալություններին և գիտական հաստատություններին, ինչպես նաև

[1] https://vimeo.com/198334058.

[2] Ադրբեջանական սփյուռքի մեդիա-ռեսուրսների վերաբերյալ մանրամասն տե՛ս Xaricdə diasporumuzun media fəaliyyətini qənaətbəxş saymaq olar (03.29.2016), http://www.sherg.az/site/id-15009/Az%C9%99rbaycan_h%C9%99qiq%C9%99tl%C9%99ri_d%C3%BCnyaya_yay%C4%B1l%C4%B1r#.WcIaBNJ-rGh
Г.Новрузова, Информационные ресурсы Азербайджанской Диаспоры России (12.23.2013), http://www.novoye-vremya.com/w28475/.../#.WdodMFt-rDc,
R.Mamedov, Problem of Nagorny Karabakh and Azerbaijan Diaspora, Перспективы науки, N. 3 (42), 2013, с. 66-69.

սփյուռքի մարդկային և նյութական ռեսուրսները[1]:

Վերոհիշյալ ուղղությամբ աշխատանքների անհրաժեշտությունը բացատրվում էր նրանով, որ երկրի սահմաններից դուրս տեղեկատվական պատերազմներում Ադրբեջանը տանուլ էր տալիս ՀՀ-ին և հայկական սփյուռքին և ըստ այդմ՝ կարիք կար «ադրբեջանական ձայնն» ավելի լսելի դարձնել միջազգային հանրության շրջանում: Սակայն խորքային առումով ադրբեջանական իշխանությունները միջնաժամկետ հեռանկարում խնդիր են դրել ոչ միայն համակարգել, այլև վերահսկել և ուղղորդել սփյուռքյան մեդիաների աշխատանքային գործունեությունը: Եթե տեղեկատվական ոլորտում պետություն-սփյուռք համագործակցության նպատակով համակարգող մարմնի ստեղծման նախագիծը կյանքի կոչվի (ներկայում նախագիծը քննարկման փուլում է), ապա այն կգործի որպես օպերատիվ արձագանքման կենտրոն:

Ոլորտում առկա խնդիրներից կարելի է նշել մի քանիսը: Օրինակ, համայնքային կառույցներին պատկանող պաշտոնական մամուլն ու դրանց գործունեությունը լուսաբանող կայքերը (տպագիր և էլեկտրոնային), ինչպես նաև սփյուռքյան տեղեկատվական-վերլուծական պորտալները թեև աչքի էին ընկնում կայուն և ակտիվ գործունեությամբ և ներկայացված էին կիբեռտարածությունում, այդուհանդերձ, ժամանակի ընթացքում դրանց մի մասն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (տեխնիկական, ֆինանսական և այլն) չեն գործում: Նկատելի է նաև,

[1] Азербайджанская диаспора создаст специальный фонд и координационный центр связи с информационной войной (04.06. 2016), http://ru.apa.az/azerbaydjanskaya_diaspora/azerbajdzhanskaya-diaspora-sozdast-specialnyj-fond-i-koordinacionnyj-centr-s-vyazi-s-informacionnoj-vojnoj.html

որ լրատվական, անգամ ոչ երկրորդական նշանակության համայնքային կառույցների կայքէջերը հինգ-վեց, երբեմն տասը տարվա կտրվածքով չեն թարմացվում։

Մեկ այլ հարց է, թե որքանով են դրանք ազդեցիկ համայնքային կյանքում (նաև տվյալ պետության հանրության շրջանում) և ինչ դերակատարում կարող են ունենալ։ Հասանով Անար Մովսում օղլին, վերլուծելով ադրբեջանական սփյուռքի մաս-մեդիայի գործունեության մի շարք ասպեկտներ, նկատում է, որ, օրինակ, ՌԴ ադրբեջանական սփյուռքի լրատվամիջոցները սփյուռքի ներսում լայն շփում ապահովող հաղորդակցային գործառույթի իրականացման ազդեցության տեսանկյունից էֆեկտիվ չեն։ Հեղինակի կարծիքով՝ Ռուսաստանի տարածքում հրատարակվող բազմաթիվ ադրբեջանական պարբերականներից ընդամենը մի քանիսն են պահանջված, այն էլ՝ առանձին խմբերի շրջանում։ Խնդիրն այն է, որ ի տարբերություն հնաբնակների, որոնք Ռուսաստանում հաստատվել են նախախորհրդային շրջանում և կազմում են սփյուռքի միջուկը, 1990-ական թթ. այստեղ հաստատված միգրանտների ռուսերենի իմացությունը ցածր մակարդակի է։ Նրանք չեն ընթերցում ռուսալեզու, այդ թվում համայնքային մամուլը։ Այդ պատճառով նորաբնակները նախընտրում են ադրբեջաներենով հրատարակումները, որտեղ, սակայն, բավարար չափով չեն լուսաբանվում ինտեգրացիոն խնդիրները[1]։ Ոլորտի խնդիրներն, իհարկե, չեն սահմանափակվում վերը բերված մի քանի օրինակներով։

[1] *Гасанов Анар Мовсум оглы,* Тенденции развития СМИ азербайджанской и армянской диаспор РФ, https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov_2007/09/gasanovanar.doc.pdf, տե՛ս նաև *Гасанов Анар Мовсум оглы,* Средства массовой информации диаспор в структуре этнической журналистики: на примере средств массовой информации азербайджанской диаспоры в России, 2007, Москва.

Ամփոփելով կարող ենք նշել, որ ԱՀ պետական կառույցները սփյուռքի հետ մեկտեղ տեղեկատվական-քարոզչական ոլորտում ձգտում են գործել ընդհանուր տրամաբանության մեջ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ հայ-ադրբեջանական հակամարտությունն ընթանում է նաև տեղեկատվական տիրույթում, անհրաժեշտ է առանձին ուսումնասիրությունների միջոցով վեր հանել ադրբեջանական սփյուռքի «մեդիա-զինանոցին» առնչվող բոլոր հիմնահարցերը, գնահատել դրանց քանակական և որակական առանձնահատկությունները:

Գիտակրթական ոլորտ

Ադրբեջանը սփյուռքյան քաղաքականությունում, այլ ուղղություններին զուգահեռ, փորձում է ընդլայնել և զարգացնել սփյուռքի հետ կապերի ոլորտը՝ ի դեմս գիտական սփյուռքի, հետապնդելով հետևյալ հեռահար նպատակները.

- Ներդնել ստացած գիտելիքները, փորձը և կարողությունները երկրի տնտեսական, գիտակրթական ոլորտների բարեփոխման և կրիտիկական ենթակառուցվածքների զարգացման գործում: Դա բացատրվում է նրանով, որ ներկայում քաղաքական, տնտեսական և տեխնիկական գիտություններում, կառավարման, ճարտարագիտական գիտակարգերում ակադեմիական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի հաստատությունները համապատասխանաբար բախվում են դասախոսական և բարձրորակ մասնագետների սակավության խնդրին:
- Հաստատել միջազգային կապեր արտասահմանյան բուհական և գիտատեխնիկական նշանակության հաստատությունների հետ:

- Ադրբեջանցիների համար գիտական սփյուռքը այլ տեսանկյուններից ևս առանձնահատուկ նշանակություն ունի։ Մի կողմից՝ պաշտոնական Բաքուն ձգտում է նրանց վրա դնել արտերկրի համայնքների կազմակերպման-համախմբման աշխատանքների իրագործումը, մյուս կողմից՝ ներգրավել նրանց Արցախի հակամարտության հետ կապված լոբբիստական-քարոզչական աշխատանքներում, դիվանագիտական ջանքերի զարգացման և ամրապնդման գործում։

Վերոհիշյալ ուղղությամբ հստակեցվել են գիտական սփյուռքին առնչվող ռազմավարական նպատակները, մշակվել համագործակցության ընդունելի մեխանիզմներն ու այն ապահովող համապատասխան գործիքները։ Հարկ է նշել, որ գիտական սփյուռքի հետ հարաբերություններում գործում է «վերևից ներքև» ռազմավարությունը (կենտրոնացված մոտեցում), որտեղ փոխգործակցության գլխավոր դերակատարները պետական գերատեսչական կառույցներն ու հարցով շահագրգիռ գիտական հաստատություններն են։

Առաջին նման քայլերից կարելի է համարել «2009-2015թթ. Ադրբեջանի Հանրապետության գիտության զարգացման ազգային ռազմավարության» շրջանակներում կրթության նախարարության, Ադրբեջանի ԳԱԱ, Ադրբեջանի սփյուռքի հետ աշխատանքի պետական կոմիտեի, Տեղեկատվական տեխնոլոգիաների և Տուրիզմի ինստիտուտների կողմից 2010թ. ստեղծված «Ադրբեջանի գիտատեխնիկական սփյուռքի» (www.elmidiaspora.internet.az) պորտալը, որն Ադրբեջանի և սփյուռքի գիտնականների միջև երկխոսության և համագործակցության հարթակի դեր պետք է կատարեր։ Ավելի լայն իմաստով պորտալի ստեղծումը

հետապնդում էր մի քանի նպատակներ. ստանալ քանակական գնահատականներ գիտական սփյուռքի որոշ չափորոշիչների և սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների վերաբերյալ, պարզել Ադրբեջան նրանց վերադառնալու հնարավորությունները և տեղի գիտնականների հետ համագործակցության հեռանկարները: Այդ նպատակների իրականացման համար նախնական փուլում պորտալի առջև դրվեցին մի քանի առաջադրանքներ, որոնք կազմում էին գործունեության հիմնական ուղղությունները.

- արտերկրում գիտատեխնիկական ոլորտներում աշխատող ադրբեջանցի մասնագետների վերաբերյալ տեղեկատվական բազայի (ընդհանուր տեղեկություններ, հրատարակությունների ցանկ, կոնտակտային տվյալներ և այլն) ստեղծում,
- պորտալի տեղեկատվական աջակցման ստեղծում և պորտալի մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում,
- ադրբեջանական սփյուռքի խնդիրներով բոլոր հետաքրքրվողներին, առաջին հերթին՝ կառավարական մարմիններին, ոչ կառավարական կազմակերպություններին, սփյուռքի հետ աշխատողներին օգնության ցուցաբերում՝ համապատասխան տեղեկատվություն ստանալու գործում,
- ադրբեջաներենով ինտերնետ ռեսուրսների հարստացում[1]:

[1] Azərbaycanın elmi diasporu" layihəsi çərçivəsində İnternet portalı yaradılıb, http://www.muallim.edu.az/www.old/arxiv/2010/09/09-18.htm,
Elmi diaspora ilə bağlı internet portalın təqdimatı keçirildi, http://old.525.az/view.php?lang=az&menu=8&id=7141&type=1#gsc.tab=0,
Ахмедов Натиг Бахлул оглы, Разработка портала о научно-технической диаспоре Азербайджана, http://ito.su/main.php?pid=26&fid=8509
http://ito.su/main.php?pid=26&fid=8509.

Այնուհետև, գիտությանը մոտ կանգնած այլ կառույցներ ևս՝ որպես առանձին ինստիտուցիոնալ միավորներ, ձեռնարկեցին համագործակցությանը միտված քայլեր, որոնք ամրագրված էին պետական ռազմավարական նշանակության փաստաթղթերում: Օրինակ՝ «Ադրբեջանի ազգային ակադեմիայի զարգացման հայեցակարգ (մինչև 2020թ.)»-ով նախատեսվում է ԳԱԱ-ն համալրել սփյուռքի բարձր որակավորում ունեցող մասնագետներով՝ երկրի գիտական ներուժի մեծացման համար[1], ներգրավել արտերկրի սփյուռքյան կադրերին դրամաշնորհային նախագծերի փորձաքննության, գիտական առաջնահերթությունների որոշման, երիտասարդ գիտնականների համար կարճաժամկետ ուսուցողական ծրագրերի իրականացման և այլնի մեջ, ինչպես նաև հիմնել «Ադրբեջանցի գիտնականների սփյուռք» կոչվող տեղեկատվական համակարգը[2]: Բացի վերոհիշյալից, Ադրբեջանի նախագահին առընթեր «Գիտության զարգացման հիմնադրամը» ստեղծել է արտերկրում և Ադրբեջանում գիտության տարբեր ասպարեզներում աշխատող ամենաակտիվ գիտնականների և մասնագետների էլեկտրոնային շտեմարաններ:

Գիտական սփյուռքի ձևավորումն անմիջականորեն կապ ունի «ուղեղների արտահոսքի» հետ, և այստեղ ամենևին էլ նշանակություն չունի անհատական նախաձեռնությամբ, թե պետական տարբեր ծրագրերով են հեռացել, քանի որ այն առաջին հերթին կազմավորվում է հենց այդ գործընթացների

[1] 2-3 тысячи работников НАНА могут попасть под сокращение, http://ru.apa.az/novosti-azerbaydjana/sotsium/2-3-tysyachi-rabotnikov-nana-mogut-popast-pod-sokrashenie.html

[2] *Y.Kechagiaras,* “Engaging the Scientific Diaspora from EaP countries, ERC EaP Countries Regional Event, 20-21 April, 2017, Tbilisi, https://erc.europa.eu/sites/default/files/events/docs/07_Yannis_Kechagiaras.pdf

հետևանքով, հատկապես այնպիսի սփյուռքերի դեպքում, որոնք իրենց բնույթով դասական չեն, այլ նորաստեղծ են, ինչպիսին ադրբեջանականն է: Ադրբեջանցի մասնագետների գնահատականներով՝ արտերկրում «կուտակված» գիտական ներուժը կազմում է սփյուռքի կարևոր բաղադրիչներից մեկը, որը ձևավորվել է միգրացիոն գործընթացների հետևանքով:

ԽՍՀՄ փլուզման սկզբնական շրջանում Ադրբեջանից արտագաղթած մասնագետների ճնշող մեծամասնությունը նախընտրել է հեռանալ հիմնականում հետևյալ ուղղություններով՝ ՌԴ, Թուրքիա և Իրան[1]: Առաջին նման դեպքերը գրանցվեցին ԽՍՀՄ փլուզման և նրան հաջորդող տարիներին, մանավանդ որ ՌԴ-ում հաստատված մասնագետները չունեին լեզվական խոչընդոտներ: Բացի լեզվական գործոնից, առանձնակի նշանակություն ուներ այն հանգամանքը, որ ադրբեջանական գիտությունը, լինելով խորհրդային գիտական համակարգի մաս, ամենևին էլ խորթ չէր վերջիններիս համար, քանի որ նրանցից շատերը կրթություն էին ստացել խորհրդային հանրապետությունների համալսարաններում, ինչը նպաստում էր արագորեն ինտեգրվելու այդ երկրի գիտական համակարգին: Համաձայն ադրբեջանցի մասնագետների՝ Ռուսաստան են արտագաղթել ֆինանսական ճգնաժամի և սոցիալ-տնտեսական անկայունության հետևանքով իրենց գործունեությունը դադարեցրած գիտաուսումնական հաստատություններում աշխատող ռուսախոս, հիմնականում հումանիտար գիտությունների և էլեկտրո-

[1] *А.Борисенко,* Интеллектуальная миграция на постсоветском пространстве: региональный обзор, http://www.fundeh.org/publications/articles/177/.

նիկայի ոլորտների մասնագետները, մոտավորապես գիտնականների մեկ հինգերորդ մասը[1]:

Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի երկրներ ուղեղների արտահոսքի տեսանկյունից առաջատար դիրքեր է զբաղեցնում Թուրքիան, որին հաջորդում է Իրանը: 1990-ական թթ. սկզբին աշխատանք փնտրելու նպատակով Թուրքիա մեկնեցին հիմնականում ֆիզիկոսներ և մաթեմատիկոսներ: Գիտնականների թիվը համալրվեց նաև հաջորդ տարիներին Թուրքիայի կողմից իրականացված *«Ուսանողական մեծ նախագիծ»* ծրագրի շրջանակներում բարձրագույն կրթություն (բակալավրիատ, մագիստրատուրա, դոկտորանտուրա) ստանալու նպատակով Ադրբեջանից ներգրավված շուրջ 2000 ուսանողների հաշվին: Նրանց մի մասը բարձրագույն կրթություն ստանալուց հետո աշխատանքի տեղավորվեց Թուրքիայի առաջատար համալսարաններում և գիտահետազոտական ինստիտուտներում[2]: Օրինակ, 2011թ. տվյալներով՝ Անկարայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնում արդեն աշխատում էր 80-ից ավելի ադրբեջանցի՝ Թուրքիայի ռազմարդյունաբերական համալիրի կառուցման և զենքերի արդիականացման ոլորտներում[3]: Մյուս կողմից՝ կրթություն ստացող երիտասարդ կադրերի շրջանում նկատվում էին նոր միտումներ. Թուրքիան վերածվեց հարթակի երրորդ երկրներ տեղափոխվել ցանկացող ադրբեջանցիների համար, որոնք մեկնում էին Արևմուտք ինչպես աշխատանք փնտրելու, այնպես էլ մասնագիտական աճի նպատակով: Ամեն

[1] *Сулейманов Абульфаз Давуд Оглы,* Социологический анализ интеллектуальной миграции Азербайджана, Sociology of Science And Technology. 2010. Vol. 1. No. 1, с. 111.
[2] Նույն տեղում:
[3] Утечка мозгов, http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/ (07.09.2012)

դեպքում, Ադրբեջանը որոշակի պարիտետ է պահպանել դեպի Թուրքիա գնացող և հետ վերադարձող գիտնականների հարցում[1]: Նկատելի է ադրբեջանցի մասնագետների, հատկապես քաղաքագետների և միջազգայնագետների առկայությունն ինչպես բուն Թուրքիայում, այնպես էլ վերջիններիս ֆինանսավորմամբ արտերկրում հիմնադրված «ուղեղային կենտրոններում»:

Հետխորհրդային երկրներից և Թուրքիայից հետո մասնագետների համար հեռանկարային էին համարվում Իրանն ու Իսրայելը: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ աշխատանք փնտրելու նպատակով 1999թ. Ադրբեջանից Իսրայել է արտագաղթել բնագիտության ոլորտի 93, 2010թ.՝ 47, 2011թ.՝ 58 մասնագետ, որոնց մի մասն աշխատում է կենսաբանական հետազոտությունների ոլորտում, մյուս մասը՝ ռազմարդյունաբերական ձեռնարկություններում[2]: Ի տարբերություն Իսրայելի, ուր ավելի շատ տեղափոխվել են բնագիտության և գիտատեխնիկական ոլորտի մասնագետներ, ԻԻՀ-ում սկզբնական շրջանում մեծ տեղ է հատկացվել հումանիտար ոլորտի հետևյալ մասնագետներին՝ իրավաբաններ, պատմաբաններ, քաղաքագետներ և այլն[3]: 2012թ. տվյալներով՝ Թեհրանում գործող «Շահիդ Բագիրի» ռազմարդյունաբերական համալիրում, Կարաջի միջուկային հետազոտությունների և «Ճառագայթ» գիտահետազոտական կենտրոններում աշխատել են Ադրբեջանի բժշկական և Բաքվի պետական համալսարանների 1995-2010թթ. շրջանավարտները՝ 58 մասնագետ[4]:

[1] Научная диаспора и развитие российского сектора исследований и разработок, «Экономика образования», № 4, 2008.
[2] Утечка мозгов, http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/ (07.09.2012).
[3] *Сулейманов Абульфаз Давуд Оглы,* Социологический анализ интеллектуальной миграции Азербайджана, Sociology of Science And Technology. 2010. Vol. 1. No. 1 , c. 112.
[4] Утечка мозгов, http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/ (07.09.2012).

1990-ականների վերջերից ադրբեջանական գիտական սփյուռքի քարտեզը կրեց որոշակի փոփոխություններ, այն արդեն ընդգրկում էր աշխարհագրական ավելի լայն տարածք, մասնավորապես նկատվում էր ուղեղների արտահոսք դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ (Գերմանիա), ավելի ուշ՝ ԱՄՆ, Կանադա և այլն: Այս երկրներ հիմնականում արտագաղթել են բժիշկներ, ինժեներներ, լրագրողական, ՏՏ և այլ ոլորտների մասնագետներ[1]:

Գիտական սփյուռքը մասամբ համալրվել է նաև պետական/միջպետական գիտակրթական ծրագրերով[2] արտերկրում (շուրջ 30 պետությունների առաջատար համալսարաններում) կրթություն ստացած այն երիտասարդ գիտնականների հաշվին, ովքեր նախընտրել են չվերադառնալ: Մասնագիտական առաջնահերթությունների շարքում այս ծրագրերով նախապատվություն է տրվել հետևյալ ոլորտներին՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա, բժշկություն, ճարտարագիտություն, գյուղատնտեսություն, անասնաբուժություն, բնապահպանություն, տնտեսագիտություն, անձնակազմի կառավարում, մշակույթ և տուրիզմ[3]:

[1] «Утечка мозгов» из Азербайджана обретает массовый характер: из страны «убегают» квалифицированные медики, http://www.panorama.am/ru (02/05/2017).

[2] Այդ ծրագիրն իրականացվել է 2006թ. հոկտեմբերի 19-ին Ադրբեջանի նախագահի 1746 հրամանագրով հաստատված *«Արտասահմանյան երկրներում Ադրբեջանի երիտասարդության ուսումնառության պետական ծրագրի»* շրջանակներում:

[3] Особенности азербайджанской системы образования, http://moscow-baku.ru/opinions/aktualno/osobennosti-azerbaydzhanskoy-sistemy-obrazovaniya /

2010-2016թթ. արտերկրում կրթություն ստացած ադրբեջանցի ուսանողների թվաքանակն ըստ երկրների (առաջին տասնյակ)[1]

Երկրներ	*2010/2011*	*2011/2012*	*2012/2013*	*2013/2014*	*2014/2015*	*2015/2016*
Թուրքիա	839	842	877	1024	866	907
Մեծ Բրիտանիա	136	213	267	499	570	621
Գերմանիա	111	168	278	351	325	316
Ռուսաստան	507	335	314	377	303	247
Կանադա	36	87	129	179	189	195
Նիդերլանդներ	22	25	27	67	72	139
Շվեյցարիա	11	24	41	68	86	82
Ավստրալիա	6	17	20	53	61	72
ԱՄՆ	25	30	36	58	63	57
Ֆրանսիա	54	50	43	44	53	54

Ինչպես նշում են ադրբեջանցի մասնագետները, այս ծրագրերին դիմող ուսանողներն այն դիտել են ոչ միայն արտերկրում կրթության միջոցով մասնագիտական կարողությունների զարգացման բացառիկ հնարավորություն, այլև երկրից ընդմիշտ հեռանալու միջոց[2]: Այդ պատճառով տվյալ երևույթի վերացման նպատակով մշակվեցին մեխանիզմներ. մասնավորապես՝ ուսանողների հետ կնքվում են վերադարձի և երկրի գիտական

[1] Տե՛ս Number of Azerbaijan citizen educated in higher educational institutions foreign countries by state http://webcache.googleusercontent.com/search?q=cache:fjw8KrANmp8J: www.stat.gov.az/sour-ce/education/en/001_8.25en.xls+&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am.

[2] *Мариам Г. Сеидбейли,* Научная диаспора как ресурс развития отечественной науки, Проблемы деятельности ученого и научных коллективов, Институт истории естествознания и техники им. С.И. Вавилова РАН, Номер 1 (31), 2015, с. 18.

համակարգերում պարտադիր աշխատանքի անցնելու պայմանագրեր[1]: Սակայն հաշվի առնելով, որ ընդունված մեխանիզմները կիրառության մեջ են մտել բավական ուշ, սկզբնական շրջանում արտերկրում կրթություն ստացած ուսանողները համալրեցին ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող տասնամյակում երկրից հեռացած մասնագետների շարքերը՝ նոր որակ հաղորդելով ադրբեջանական սփյուռքին:

Ինչ վերաբերում է միջնակարգ կրթությանը, ապա այս ուղղությամբ վերջին տասնամյակում բավականաչափ աշխատանքներ են իրականացվել: Մասնավորապես, Ռուսաստանում, Ուկրաինայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Թուրքիայում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում և այլ համայնքներում ստեղծվել են 160 հասարակական կրթական հաստատություններ՝ կիրակնօրյա դպրոցներ: Դրանցում դասավանդվում են ադրբեջաներեն, պատմություն և աշխարհագրություն: Լայնորեն օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները: Օրինակ, այն երկրներում, որտեղ հնարավորություն չի եղել բացել համայնքապատկան դպրոցներ, Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտը, սփյուռքի պետկոմիտեի հետ համատեղ, գործի է դրել կիրակնօրյա դպրոցների վիրտուալ տարբերակը, որը ևս պահանջված է: Դրան զուգահեռ, պետկոմիտեի շրջանակներում 2013-ից սկսել է գործել ադրբեջաներենի «Հեռավար ուսուցման կենտրոն»-ը: Այս վերջին նախագծով պետկոմիտեն նպատակադրվել է ընդլայնել դասա-

[1] *М.Кело, Ф.Дюбоск,* Управление человеческими ресурсами в государственном высшем образовании в странах-партнерах Tempus, Справочный документ, Кишинев, 22-23 Апреля 2013, с. 12.

վանդվող առարկաների ցանկը՝ ներառելով գրականության, մշակույթի, աշխարհագրության դասընթացները[1]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո միգրացիայի հետևանքով երկրից հեռացած և արտերկրի գիտական հաստատություններում աշխատող մասնագետների հետ տարբեր ձևաչափերով համագործակցելու և նրանց ներուժն օգտագործելու ուղղությամբ Ադրբեջանը ձեռնարկում է որոշակի քայլեր: Այս ամենով հանդերձ, գիտական սփյուռքի հետ կապերի ոլորտում Ադրբեջանը բախվում է մի շարք խոչընդոտների՝ արտաքին և ներքին խնդիրներով պայմանավորված, որոնցից կարող ենք առանձնացնել մի քանիսը.

- Սփռվածության տեսանկյունից ադրբեջանական գիտական սփյուռքը թեև զբաղեցնում է բավական լայն աշխարհագրական տարածք՝ Հս. Ամերիկայից մինչև Ավստրալիա, սակայն առայսօր արտերկրում չեն ստեղծվել մասնագետներին մեկ հարկի տակ համախմբող սփյուռքյան գիտական կառույցներ (*Scientific Diaspora Organizations*), չհաշված մշակութային նշանակության սփյուռքյան կառույցները, ինչը ցույց է տալիս, որ կոնկրետ երկրում գիտական ներուժը կուտակված չէ մեկ վայրում, այլ ցրված է տարբեր կենտրոններում՝ դժվարացնելով այդ հանրույթների համախմբումը:
- Մյուս կողմից, թեև միգրացիայի հետ կապված խնդիրները մշտապես գտնվել են այդ երկրի մասնագիտական շրջանակների և պատկան մարմինների ուշադրության կենտ-

[1] Диаспорские организации вступили в новый этап своего развития, Российская газета – Азербайджан, №6494 (222), https://rg.ru/2014/09/30/ibragimov.html.

րոնում, այնուամենայնիվ, ելնելով խնդրի հետ կապված մասնագիտական քննարկումներից և իրականացվող միջոցառումներից, բացակայում են արտերկիր հեռացած գիտական/մասնագիտական ներուժին առնչվող հստակ վիճակագրական տվյալները, չկան գիտական սփյուռքի քանակական և որակական գնահատականներ, ինչն իր հերթին մասնակիորեն դժվարացնում է ադրբեջանցի մասնագետներին քարտեզագրել և հաշվառել եղած կադրերը: *«Ադրբեջանցի գիտնականների սփյուռք»* տեղեկատվական համակարգի և պորտալի աշխատանքներն ուղղված են առաջին հերթին այդ ցուցանիշների գնահատմանը: Անհայտ է մնում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո այդ երկրից հեռացած ռուս, հրեա և այլ ազգության մասնագետներն արդյո՞ք քանակական ցուցանիշների գնահատման դեպքում համարվելու են ադրբեջանական գիտական սփյուռքի մաս: Ընդհանրապես, ադրբեջանցի հետազոտողներն իրենց ուսումնասիրություններում շրջանցում են այդ հարցը:

- Ձեռնարկվող քայլերի տրամաբանությունը վկայում է, որ Ադրբեջանը, արտերկրի գիտնականներին տեղեկատվական ցանցերի միջոցով և գիտական համագործակցության այլ ձևերով հեռավար համախմբելու աշխատանքներից զատ, հետապնդում է նաև նրանց վերադարձնելու քաղաքականություն: Սակայն հաշվի առնելով գիտական համակարգում առկա բյուրոկրատիան, կոռուպցիան, ֆինանսական ճգնաժամը և բազմաթիվ այլ կազմակերպչական խնդիրներ, որոնց մասին բարձրաձայնում են այդ երկրի գիտնականները, և այն հանգամանքը, որ դեռևս շարու-

նակվում է երիտասարդ կադրերի արտագաղթը Ռուսաստան և Արևմուտք[1], այս պահի դրությամբ ինտելեկտուալ ներուժի ինտեգրման միջոցներից կարող է գործել առաջին տարբերակը: Չենք բացառում, որ, այնուամենայնիվ, կգրանցվեն վերադառնալու առանձին դեպքեր, մանավանդ եթե գործի դրվեն համապետական նշանակության նախագծեր: Այլ հարց է, թե այդ համագործակցությունից ինչ արդյունքներ կգրանցվեն:

Առկա հիմնախնդիրները

Սփյուռքի հետ կապերի ոլորտում Ադրբեջանը բախվում է բազմաթիվ խնդիրների, ինչը հանգեցնում է պետություն-սփյուռք գործակցության որոշակի խզման: Գլխավոր հարցը սփյուռքի անհամախմբվածությունն է, որի մասին բազմիցս բարձրաձայնվել է այդ երկրի քաղաքական, գիտական և մերձգիտական շրջանակների կողմից:

«Եվրոպայի ադրբեջանցիների կոնգրեսի» առաջին փոխնախագահ և «Աշխարհի ադրբեջանցիների միության» ղեկավար Ֆ.Մամեդովը, գնահատելով ադրբեջանական սփյուռքի ներկա իրավիճակը, փաստում է, որ այն իր ազդեցիկությամբ զիջում է ոչ միայն լավ կազմակերպված հայկական և հրեական, այլև փոքր ժողովուրդների սփյուռքերին: Նա պնդում է, որ ադրբեջանական սփյուռքի թույլ լինելը պայմանավորված է համայնքների ներսում գոյություն ունեցող անհամախմբվածությամբ՝ շեշտելով, որ դրա

[1] *М.Зейналов,* Семья не защищена: почему и куда уезжают из Азербайджана (20.10. 2017), http://www.bbc.com/russian/features-41692992?ocid=wsrussian..social.sponsored-post.facebook.SMP%28AEP%29-AzeriMigration.nneed3.AZ%2CAM%2CGE-18+.statementad.mktg

վրա ազդում են մի շարք հանգամանքներ. բանսարկություններ, սփյուռքյան գործիչների միջև պայքար հանուն առաջնորդության և այն, որ համայնքային որոշ ղեկավարներ սփյուռքյան կառույցներն օգտագործում են անձնական հարստացման համար: Այսպիսի մթնոլորտ տիրում է գրեթե բոլոր համայնքներում: Խմբավորվում են այն սոցիալական շերտերը, որոնք խոչընդոտում են բուն սփյուռքի միասնականությանը և պատնեշում պետություն-սփյուռք հարաբերությունները: Այդ խմբերն են.

1. Աշխատանքային միգրանտներ և գործարարներ, որոնց ճնշող մեծամասնությունը զբաղված է գումար վաստակելով և ընդհանրապես չի մասնակցում համայնքային միջոցառումներին:
2. Քաղաքական վտարանդիներ և ընդդիմադիր կուսակցությունների համախոհներ, որոնք եվրոպական երկրներում ստեղծելով իրենց հասարակական-քաղաքական կազմակերպությունները՝ զբաղված են ադրբեջանական իշխանությունների քննադատությամբ:
3. Մարդիկ, ովքեր ստեղծում են իրենց «գրպանային» սփյուռքյան կառույցները, որոնց մասին գիտեն միայն սահմանափակ թվով մարդիկ[1]:

Պառակտվածության փաստը կարելի է ցայտուն տեսնել հատկապես Ռուսաստանի օրինակով, որտեղ կենտրոնացված է ադրբեջանական ամենաստվարաթիվ սփյուռքը: Մասնավորապես, ՌԴ Պերմի շրջանում վերջին շրջանում միմյանց դեմ են

[1] *Ф.Мамедов,* Если азербайджанская диаспора не объединится, то её ждут очень тяжёлые времена (16.12.2016), http://azunion.org/ru/esli-azerbajdzhanskaya-diaspora-ne-obedinitsya-to-eyo-zhdut-ochen-tyazhyolye-vremena/.

դուրս եկել երկու ադրբեջանական սփյուռքյան կազմակերպություններ՝ «Ադրբեջանցիների միությունը» և «Ադրբեջանական սփյուռքը»: Ընդ որում, առաջինի շուրջ համախմբվել են մինչխորհրդային ժամանակաշրջանում հաստատված ադրբեջանցիները, երկրորդում՝ տարբեր սոցիալական շերտեր ներկայացնող նորահաստատ միգրանտները: Ժամանակին տարաձայնություններ կային նաև «*Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրես*»-ի և «Ռուսաստանի ադրբեջանցիների ազգային մշակութային դաշնային ինքնավարության» («ՖՆԿԱ ԱզերՌուս») ազդեցիկ կառույցների միջև: Երկուսն էլ ձգտում էին վերածվել ՌԴ ադրբեջանական սփյուռքի հիմնական և գլխավոր կառույցի[1]:

Ֆ.Մամեդովը, քննադատելով սփյուռքի պետկոմիտեի պահվածքը, նշում է. *«Ադրբեջանական սփյուռքի տարբեր հատվածներում ի հայտ եկած հակասություններն ու կոնֆլիկտային իրավիճակները լուծելու փոխարեն պետկոմիտեն հայտնվել է դիտորդի դերում և իր անտարբերությամբ թույլ է տալիս, որ կործանվեն այնպիսի խոշոր և ազդեցիկ սփյուռքյան կառույցներ, ինչպիսիք են «Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրես»-ը, «ՖՆԿԱ ԱզերՌուս»-ը և մյուսները»:* Այս և այլ հիմնախնդիրների կարգավորման նպատակով նա առաջարկում է ստեղծել «Ադրբեջանական սփյուռքյան կառույցների էթիկական նորմերի կոդեքս»[2]:

Ի վերջո, Ռուսաստանի արդարադատության նախարարությունը վերահսկողական գործունեության կազմակերպման

[1] *А.Скаков,* Азербайджанское меньшинство в политической жизни современной России, Журнал «Россия и новые государства Евразии», М., Номер 2 (31), 2016, с. 76-77.
[2] Двери нашей организации открыты всем нашим соотечественникам (07.08.2015), http://vesti.az/news/258645

շրջանակներում ստուգում անցկացնելով կոնգրեսում և պարզելով, որ կազմակերպության կանոնադրությունը չի համապատասխանում ՌԴ օրենսդրությանը՝ հայցով դիմեց ՌԴ գերագույն դատարանին, որն էլ 2017թ. մայիսի 15-ին որոշում կայացրեց լուծարել այն[1]: Այս որոշումն ինքնին մեծ հարված հասցրեց ադրբեջանական համայնքներին. Ռուսաստանի 67 մարզերում կոնգրեսն ունի 73 գրասենյակ, և քանի որ դրանք անմիջականորեն ենթարկվում են «կենտրոնին», հավանաբար կդադարեցնեն իրենց աշխատանքները կամ կգործեն այլ կարգավիճակում:

Իրավիճակը նույնն է նաև Եվրոպայում և ԱՄՆ-ում: Բելգիայի «Ադրբեջանական տուն» հաստատության նախագահ Բ.Գյուրչամը հավաստում է, որ այդ երկրում բնակվող ադրբեջանցիների միջև միասնականություն չկա, և գլխավոր մեղավորներն են Բելգիայում Ադրբեջանի դեսպանատունն ու Սփյուռքի գործերով պետական կոմիտեն, որոնք անուշադրության են մատնել այս հարցը[2]: Իր հերթին, Նյու Յորքի ադրբեջանական համայնքի ակտիվիստ Մ.Նասիփը նշում է, որ համայնքի որոշ ղեկավարներ իրենց անձնական շահերը վեր են դասում ազգի և հայրենիքի շահերից[3]: Ամերիկայի ադրբեջանցիների կազմակերպության նախագահ Թ.Ազերիի խոսքերով, ԱՄՆ

[1] Верховный суд РФ ликвидировал организацию "Всероссийский Азербайджанский конгресс", http://tass.ru/politika/4253292, տես՛ նաև Кто или что стоит за закрытием азербайджанской структуры в России?, https://eadaily.com/ru/news/2017/05/18/kto-ili-chto-stoit-za-zakrytiem-azerbaydzhanskoy-struktury-v-rossii, Руководство ВАК вводило в заблуждение общественность и правительство Азербайджана-Видади Аббасов, http://turannews.com/clndr/2017/years/interview_001_ru.htm, Конец «закона диаспоры», или почему верховный суд ликвидировал «всероссийский азербайджанский конгресс» (02.10.2017), http://www.iarex.ru/articles/54574.html.

[2] Azərbaycan diasporu daxilində birlik və həmrəylik varmı? (14.04.214), http://olaylar.az/news/diaspora/76316

[3] Նույն տեղում:

ադրբեջանական սփյուռքը թույլ է, քանի որ այստեղ ևս համայնքը մասնատված է հազար ու մի մասերի: Նրանք ստեղծում են իրենց կառույցները, սակայն ոչ մեկին հայտնի չէ, թե դրանք ինչ նպատակների են ծառայելու[1]:

Թյուրքախոս և սլավոնական ժողովուրդների միջև համագործակցության նպատակով ստեղծված «Բարեկամություն» բարեգործական հիմնադրամի նախագահ Մ.Սեիդովի կարծիքով, իրենք ունեն բավական ուժեղ սփյուռք, սակայն տեղական իշխանությունների վրա քաղաքական տեսանկյունից որևէ ազդեցություն չունեն: Պատճառներից մեկն այն է, որ սփյուռքյան կառույցների միջև կան լուրջ տարաձայնություններ, ինչը թույլ չի տալիս նրանց միավորվել: Երկրորդ՝ արտերկրում գործող ադրբեջանական դեսպանատներն ու հյուպատոսությունները սփյուռքյան կառույցների նկատմամբ տարբեր մոտեցումներ ունեն: Նրանք համայնքի անդամներին բաժանել են երկու մասի՝ «օտարների» և «յուրայինների»: Արդյունքում՝ այդ երկու բաժանված խմբերի և նրանց կառույցների միջև տեղի են ունենում բախումներ[2]:

Հրապարակախոս Ջ.Շահվերդիևն իր «Ուժեղ Ադրբեջանի թույլ և տկար սփյուռքը» քննադատական հոդվածում նշում է. «Ադրբեջանական սփյուռքի կառույցներն ամենուր գտնվում են խղճուկ վիճակում: Երեք երկրներում (ՌԴ, Ուկրաինա և Շվեդիա) համայնքային կառույցների միջև «պատերազմ» է ընթանում: Այս դեպքում խոսել միասնականության մասին ավելորդ է: Կարևոր տոներին և օրերին հավաքվելով և քննադատելով հայերի

[1] ABŞ-ın Qarabağa pul ayırması daxili siyasətlə bağlıdır (15.12.2009), http://hafta.az/index2.php?m=yazi&id=32459
[2] Azərbaycan diasporası xaricdə siyasi qüvvəyə çevirilə bilməyib (17.07.2014), http://azpolitika.info/?p=41310

«օկուպացիոն քաղաքականությունը» (չակերտները՝ *Ա.Ս.*)՝ նրանք համարում են, որ այդպիսով կատարել են իրենց առաքելությունը:

Այսպիսին են ադրբեջանական սփյուռքի գործողությունները: Սփյուռքի պետկոմիտեն, որին ամեն տարի պետությունը բյուջեից հատկացնում է մեծ գումարներ, այդպես էլ արտերկրում բնակվող ադրբեջանցիների խնդիրների լուծմանն ուղղված խոշոր նախագծեր չիրագործեց[1]:

Ադրբեջանը սփյուռքյան քաղաքականությունում սկզբից ևեթ կարևորել է նաև իրանական հեղափոխությունից առաջ և հետո դեպի Արևմուտք (հիմնականում ԱՄՆ, Գերմանիա, Շվեդիա և այլն) այդ երկրից արտագաղթած «ադրբեջանցիներին» (թյուրքալեզու իրանցիներ) իր առանցքի շուրջ մոբիլիզացնելը: Ինչպես այս առիթով ժամանակին դիպուկ նկատել է փորձագետ Հ.Նահապետյանը, «*Բաքուն փորձում է իր հսկողության տակ առնել արտերկրում գործող իրանական ադրբեջանցիների գաղթօջախները և նրանց ձևավորած միությունները: Եթե հաշվի առնենք, որ իրանական ադրբեջանցիների վտարանդի միությունների աշխատանքը կրում է հիմնականում հակահիրանական բնույթ և վայելում ԱՄՆ հովանավորությունը՝ այս կետում ձևավորվում է ԱՄՆ-Ադրբեջան շահերի ընդհանրություն: Սա լրացուցիչ խթան է Բաքվին՝ առավել ակտիվ աշխատանք կատարելու և ագրեսիվ գործելու համար*»[2]:

[1] *C. Şahverdiyev,* Güçlü Azerbaycan'ın güçsüz ve aciz diasporası (10.11.2014), http://www.haberhergun.com/guclu-azerbaycanin-gucsuz-ve-aciz-diasporasi-makale,1184.html, համայնքներում եղած խնդիրների վերաբերյալ տե՛ս նաև *C.Şahverdiyev*, Aramızda həmrəylik var mı? (29.12.2015), http://www.haberhergun.com/aramizda-hmrylik-varmi-makale,2104.html

[2] *Հ.Նահապետյան*, Ադրբեջանական լոբբինգի կայացման գործընթացը. ընդհանուր տվյալներ (19.04.2007), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2270

Սակայն նկատենք, որ այդ քաղաքականությունը մեծ հաշվով չտվեց այն արդյունքները, ինչն ակնկալում էր Ադրբեջանը: Օրինակ, ըստ թուրք հետազոտողների. *«Ադրբեջանից և Իրանից արտագաղթած շերտերը գործում են միմյանցից անջատ»*: Առանց խորանալու մանրամասնությունների մեջ, հեղինակները հավելում են, որ թյուրքախոս իրանցիների հետ կապված *«լուրջ խնդիրներ կան ազգային գիտակցության առումով»*[1]: Թյուրքախոս իրանցիների հետ կապված՝ նույն իրավիճակն է նաև այլ համայնքներում[2]: Նշենք նաև, որ, այնուամենայնիվ, ադրբեջանական կողմին հաջողվում է օգտագործել նրանց մեդիա-ռեսուրսներն իրենց հակահայ քաղաքականությունում: Մասնավորապես, Չիկագոյում գործող «Հարավային Ադրբեջան հեռուստաընկերությունը» (*Güney Azərbaycan Televizyası-GünAz TV*) հեռարձակում է արցախյան հակամարտության, Խոջալուի իրադարձությունների և Հայոց ցեղասպանության թեմաներով հաղորդումներ՝ ադրբեջանա-թուրքական տեսակետներին համահունչ[3]:

Ռուս մասնագետ Ա.Սկակովը, ի թիվս այլ երևույթների, իր հոդվածում անդրադառնում է Արևմտյան Սիբիրի ադրբեջանական խոշոր համայնքների խնդրին, որոնք, ըստ հեղինակի, պոտենցիալ վտանգ են ներկայացնում ինչպես ՌԴ-ի, այնպես էլ Ադրբեջանի համար, քանի որ Ռուսաստանի տարբեր շրջան-

[1] *R.Uslu, S.Kocaman*, The Activities of the Azerbaijani Diaspora in the United States of America, The 2013 WEI International Academic Conference Proceedings, p. 49, https://www.westeastinstitute.com/wp-content/uploads/2013/04/ORL13-222-Ramazan-USLU-Sinan-KOCAMAN.pdf, տե՛ս նաև *S.Mardanov*, Azerbaycan-ABD ilişkileri ve Azerbaycan'da ABD algısı, Doktora Tezi, Ankara, 2012, s. 56.

[2] Տե՛ս В Швеции мы все доверяем друг другу, а в Азербайджане никто никому не верит, http://minval.az/news/123681171

[3] https://www.gunaz.tv/az/axtaris?acar-soz=Hocal%C4%B1

ներում ադրբեջանցիները հաճախ դառնում են իսլամական ծայրահեղական հոսանքների (սալաֆիզմ) անդամներ: Հակամարտածին գործոն է նաև այն, որ Սիբիրի շրջաններում առկա են ադրբեջանցիների հանցագործ խմբավորումներ: Միևնույն ժամանակ, ՌԴ ադրբեջանական համայնքները «փակ» են, և ի տարբերություն հնաբնակների՝ ներգաղթյալ միգրանտների շրջանում միջէթնիկ ամուսնությունները ցածր տոկոս են կազմում[1]:

Հետևություններ

Ամփոփելով Ադրբեջանի Հանրապետության՝ սփյուռքի հանդեպ վարվող քաղաքականության որոշ առանձնահատկություններն ու ներկայացնելով մի քանի ոլորտներում կատարված աշխատանքները, նպատակներն ու խնդիրները՝ կարող ենք ասել, որ ադրբեջանական սփյուռքը որպես հանրային դիվանագիտության սուբյեկտ՝ քաղաքական, տնտեսական, գիտական և տեղեկատվական տեսանկյուններից վերածվել է կարևոր «ռազմավարական ռեսուրսի»: Այսպիսով, սկզբից ևեթ պետություն-սփյուռք համագործակցությունը հիմնվում է հետևյալ օրակարգային խնդիրների և նպատակների վրա.

- Տեղեկատվական-քարոզչական միջոցներով նպաստել միջազգային հանրության շրջանում Ադրբեջանի դրական իմիջի ձևավորմանը: Կոնկրետ երկրներում բնակվող քաղաքական գործիչների և այդ շրջանակներին մոտ կանգնած անհատների հետ հաստատել սերտ կապեր, նրանց միջոցով համաշխարհային հանրությանը հասցնել Ադրբեջանի մասին «ճշմարտությունները»,

[1] *А.Скаков,* Азербайджанское меньшинство в политической жизни современной России, журнал «Россия и новые государства Евразии, М., Номер 2 (31), 2016, с. 76.

- իրականացնել աշխատանքներ պարբերականների, թերթերի հրատարակման, ռադիոհեռուստատեսության հեռարձակման և տեղեկատվական գործակալությունների հիմնադրման ուղղությամբ,
- համագործակցել այլ սփյուռքերի հետ, մշակել ադրբեջանական և թուրքական (թյուրքական) սփյուռքերի գործունեությունը համակարգող ռազմավարություն, տարբեր մակարդակներում թյուրքախոս երկրների սփյուռքյան կառույցների մասնակցությամբ անցկացնել դրան նպաստող միջոցառումներ,
- Ադրբեջանի սոցիալ-տնտեսական, գիտության զարգացման մեջ ներգրավել արտերկրում բնակվող ադրբեջանցի գործարարներին[1] և գիտական հանրության ներկայացուցիչներին,
- նպաստել համայնքների կրթամշակութային խնդիրների լուծման նպատակով կիրակնօրյա դպրոցների բացմանը,
- միգրանտների իրավունքների պաշտպանության համար ստեղծել համապատասխան կազմակերպություններ, խորհրդատվական կենտրոններ,
- կազմակերպել պատանիների և երիտասարդության ամառային հանգիստն Ադրբեջանում,
- ձեռնարկել քայլեր արտերկրի խորհրդարաններում, պետական հաստատություններում, տեղական ինքնակառա-

[1] Ադրբեջանի սփյուռքի գործերով պետկոմիտեն 2016թ. հոկտեմբերի վերջին նախատեսում էր Բաքվում անցկացնել «Ադրբեջանցի գործարարների համաշխարհային առաջին ֆորումը», որը սակայն չի կայացել, տե՛ս Bakıda Dünya Azərbaycanlı İş Adamlarının Forumu keçiriləcək (29.09.2016), http://eurasiadiary.com/az/news/geopolitics/74578-bakida-dunya-azerbaycanli-is-adamlarinin-forumu-kecirilecek, Почему нацелились на Назима Ибрагимова – большая расправа во власти (24.10.2016), http://minval.az/news/123632629.

վարման մարմիններում ադրբեջանցիների ներկայության ապահովման ուղղությամբ:

Աղբյուրներ և գրականություն

1. *А.Скаков,* Азербайджанское меньшинство в политической жизни современной России, Журнал «Россия и новые государства Евразии», М., № 2 (31), 2016.
2. *Гасанов Анар Мовсум оглы,* Средства массовой информации диаспор в структуре этнической журналистики: на примере средств массовой информации азербайджанской диаспоры в России, М, 2007.
3. *Мариам Г. Сеидбейли,* Научная диаспора как ресурс развития отечественной науки, Проблемы деятельности ученого и научных коллективов, Институт истории естествознания и техники им. С.И. Вавилова РАН, Номер 1 (31), 2015, с. 18.
4. *М.Кело, Ф.Дюбоск,* Управление человеческими ресурсами в государственном высшем образовании в странах-партнерах Tempus, Справочный документ, Кишинев, 22-23 апреля 2013.
5. *Сулейманов Абульфаз Давуд Оглы,* Социологический анализ интеллектуальной миграции Азербайджана, Sociology of Science And Technology. Volume 1. № 1, 2010.
6. Научная диаспора и развитие российского сектора исследований и разработок, «Экономика образования», № 4, 2008.
7. *Н.Шафиев*, Деятельность диаспоры как важный элемент лоббирования интересов, Гілея: науковий вісник, Вип. 87, 2014
8. *R.B. Aliyev*, Joint Activity of Azerbaijani and Turkish Diaspora, Гилея: научный вестник , № 102, 2015.
9. *R.Mamedov*, Problem of Nagorny Karabakh and Azerbaijan Diaspora, Перспективы науки, № 3 (42), Тамбов, 2013.
10. *S.Mardanov*, Azerbaycan-ABD ilişkileri ve Azerbaycan'da ABD algısı, Doktora Tezi, Ankara, 2012.

Համացանցային աղբյուրներ

1. *Հ.Նահապետյան*, Ադրբեջանական լոբբինգի ծավալման դինամիկան (10.05.2007), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2266

2. *Հ.Նահապետյան*, Ադրբեջանական լոբբինգի կայացման գործընթացը. ընդհանուր տվյալներ (19.04.2007թ.), http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2270
3. *А.Борисенко,* Интеллектуальная миграция на постсоветском пространстве: региональный обзор, http://www.fundeh.org/publications/articles/177/,
4. Азербайджанцы, проживающие за рубежом, будут голосовать за Ильхама Алиева, https://ru.sputnik.az/politics/20081004/42514172.html
5. Азербайджанцы мира смогут принять онлайн участие на IV Форуме азербайджанцев Украины, http://ru.apa.az/azerbaydjanskaya_diaspora/azerbajdzhancy-mira-smogut-prinyat-onlajn-uchastie-na-iv-forume-azerbajdzhancev-ukrainy-.html
6. Азербайджанская диаспора создаст специальный фонд и координационный центр связи с информационной войной (04.06.2016), http://ru.apa.az/azerbaydjanskaya_diaspora/azerbajdzhanskaya-diaspora-sozdast-specialnyj-fond-i-koordinacionnyj-centr-s-vyazi-s-informacionnoj-vojnoj.html
7. *Ахмедов Натиг Бахлул оглы*, Разработка портала о научно-технической диаспоре Азербайджана, http://ito.su/main.php?pid=26&fid=8509
8. Верховный суд РФ ликвидировал организацию "Всероссийский Азербайджанский конгресс", http://tass.ru/politika/4253292,
9. В Швеции мы все доверяем друг другу, а в Азербайджане никто никому не верит, http://minval.az/news/123681171
10. В скором времени будет готов окончательный вариант хартии солидарности азербайджанцев мира, https://azertag.az/ru/xeber/V_SKOROM_VREMENI_BUDET_GOTOV_OKONCHATELNYI_VARIANT_XARTII_SOLIDARNOSTI_AZERBAIDZHANCEV_MIRA-699305
11. *Г.Новрузова*, Информационные ресурсы Азербайджанской Диаспоры России (12.23.2013), http://www.novoye-vremya.com/w28475/.../#.WdodMFt-rDc
12. *Гасанов Анар Мовсум оглы,* Тенденции развития СМИ азербайджанской и армянской диаспор РФ, https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov_2007/09/gasanovanar.doc.pdf,
13. Двери нашей организации открыты всем нашим соотечественникам (07.08.2015), http://vesti.az/news/258645
14. Диаспорские организации вступили в новый этап своего развития, Российская газета - Азербайджан, № 6494 (222), https://rg.ru/2014/09/30/ibragimov.html.

15. Конец «закона диаспоры», или почему верховный суд ликвидировал «Всероссийский азербайджанский конгресс» (02.10.2017), http://www.iarex.ru/articles/54574.html.
16. Кто или что стоит за закрытием азербайджанской структуры в России?, https://eadaily.com/ru/news/2017/05/18/kto-ili-chto-stoit-za-zakrytiem-azerbaydzhanskoy-struktury-v-rossii
17. *М.Зейналов*, Семья не защищена: почему и куда уезжают из Азербайджана (20.10.2017), http://www.bbc.com/russian/features-41692992?ocid=wsrussian..social.sponsored-post.facebook.SMP%28AEP%29-AzeriMigration.nneed3.AZ%2CAM%2CGE-18+.statementad.mktg
18. *Новрузова Гюнай Курбан кызы*, Роль азербайджанских представителей науки и культуры, проживающих в Европе, в развитии западной культуры, http://dspace.nbuv.gov.ua/bitstream/handle/123456789/56084/26-Novruzova.pdf?sequence=1
19. Особенности азербайджанской системы образования, http://moscow-baku.ru/opinions/aktualno/osobennosti-azerbaydzhanskoy-sistemy-obrazovaniya /
20. Перспективы, стратегические коммуникации и совместное управление тюркской диаспоры, «5-й Всемирный тюркский форум», Документ о стратегических перспективах, http://www.tasam.org/Files/Etkinlik/File/VizyonBelgesi/DTF5_Vizyon_RU_pdf_997195b9-c0fb-427e-a21c-d3cb0c0f04a1.pdf
21. Почему нацелились на Назима Ибрагимова – большая расправа во власти (24.10.2016), http://minval.az/news/123632629
22. Руководство ВАК вводило в заблуждение общественность и правительство Азербайджана-Видади Аббасов, http://turannews.com/clndr/2017/years/interview_001_ru.htm,
23. *С.Румянцев,* Диаспоростроительство в постсоветском Азербайджане, Пояснительная записка 12/06, Январь, 2012, http://www.carim-east.eu/media/sociopol_module/Explanatory%20Notes%20AZ2%20-%2006.pdf
24. *Ф.Мамедов*, Если азербайджанская диаспора не объединится, то её ждут очень тяжёлые времена (16.12.2016), http://azunion.org/ru/esli-azerbajdzhanskaya-diaspora-ne-obedinitsya-to-eyo-zhdut-ochen-tyazhyolye-vremena/
25. Указ Президента Азербайджанской Республики № 859, Баку, 21 февраля 2003 года, http://lib.aliyevheritage.org/ru/1498491.html
26. «Утечка мозгов» (07.09.2012), http://www.zerkalo.az/2012/utechka-mozgov/

27. «Утечка мозгов» из Азербайджана обретает массовый характер: из страны «убегают» квалифицированные медики, http://www.panorama.am/ru (02/05/2017).
28. 2-3 тысячи работников НАНА могут попасть под сокращение, http://ru.apa.az/novosti-azerbaydjana/sotsium/2-3-tysyachi-rabotnikov-nana-mogut-popast-pod-sokrashenie.html
29. *A.Babiş*, Türk Konseyi: Türk Birliğinin Hazırlığı mı? (Hazırlanması Zorunlu Bir Alan: Ortak Diaspora),(26.06.2014), http://ekoavrasya.net/Duyuru.aspx?did=144&Pid=10&lang=TR&Ara=Ciz
30. ABŞ-ın Qarabağa pul ayırması daxili siyasətlə bağlıdır (15.12.2009), http://hafta.az/index2.php?m=yazi&id=32459
31. Azərbaycan Respublikasinin Diaspor Ilə Iş Üzrə Dövlət Komitəsi, http://www.azerbaijan.az/_StatePower/_CommitteeConcern/_committeeConcern_a.html
32. Azərbaycan diasporu daxilində birlik və həmrəylik varmı? (14.04.214), http://olaylar.az/news/diaspora/76316
33. Azərbaycan diasporası xaricdə siyasi qüvvəyə çevirilə bilməyib (17.07.2014), http://azpolitika.info/?p=41310
34. Azərbaycanın elmi diasporu" layihəsi çərçivəsində İnternet portalı yaradılıb, http://www.muallim.edu.az/www.old/arxiv/2010/09/09-18.htm
35. Bütov Azerbaycan Diaspora Televizyonu Yayına Başladı (17.05.2013), http://www.optimushaber.com/butov-azerbaycan-diaspora-televizyonu-yayina-basladi-270241h.htm
36. *C.Şahverdiyev,* Güçlü Azerbaycan'ın güçsüz ve aciz diasporası (10.11.2014), http://www.haberhergun.com/guclu-azerbaycanin-gucsuz-ve-aciz-diasporasi-makale,1184.html,
37. C.Şahverdiyev, Aramızda həmrəylik var mı? (29.12.2015), http://www.haberhergun.com/aramizda-hmrylik-varmi-makale,2104.html
38. Çağla Gül Yesevi, Türk Dünyası ve diaspora (02 05.2013), http://www.oncevatan.com.tr/turk-dunyasi-ve-diaspora-makale,29446.html
39. Dünya Türk Forumu,Türk Konseyi,Türk Diasporası ve Sosyoekonomik İş Birliği, http://www.tasam.org/index.php?sagblok=119
40. Elmi diaspora ilə bağlı internet portalın təqdimatı keçirildi, http://old.525.az/view.php?lang=az&menu=8&id=7141&type=1#gsc.tab=0, http://ito.su/main.php?pid=26&fid=8509

41. Ermeni Diasporasına Karşı Türk Diasporası Kuruluyor!... (09.03.2007) http://habervitrini.com/gundem/ermeni-diasporasina-karsi-turk-diasporasi-kuruluyor-655418
42. Güney Azərbaycan Televiziyası, https://www.gunaz.tv/az/axtaris?acar-soz=Hocal%C4%B1
43. Xaricdə diasporumuzun media fəaliyyətini qənaətbəxş saymaq olar (03.29.2016), http://www.sherg.az/site/id-15009/Az%C9%99rbaycan_h%C9%99qiq%C9%99tl%C9%99ri_d%C3%BCnyaya_yay%C4%B1l%C4%B1r#.WcIaBNJ-rGh
44. Türk Diasporası Vizyonu, Stratejik İletişim ve Yönetişimi, 2016, İstanbul, http://www.tasam.org/Files/Etkinlik/File/VizyonBelgesi/DTF5_Vizyon_TR_pdf_0ba46c0f-5d28-4d14-b18b-83aaf0f1294f.pdf
45. Türk Konseyi, Kiev'de Bölgesel Diaspora Merkezi açtı (25.12.2014), http://ukrturk.net/turk-konseyi-kievde-bolgesel-diaspora-merkezi-acti/,
46. Türkiye Azerbaycan Dernekleri Federasyonu, http://tadef.org.tr/1_Sayfa-hakkimizda.aspx
47. H.Cabbarlı, Dünya Azerbaycan ve Türk Diaspora Teşkilatı Başkanlarının I. Formuna Eleştirel Yaklaşım (15.03. 2007), http://atsam.org.az/dunya-azerbaycan-ve-turk-diaspora-teskilati-baskanlarinin-i-formuna-elestirel-yaklasim/?lang=tr
48. 24 Aralık 2014 tarihinde Kiev'de Türk Keneşi Diaspora Bölgesel Merkezi açılmıştır, http://www.turkkon.org/tr-TR/24-aralik-2014-tarihinde-kiev%E2%80%99de-turk-kenesi-diaspora-bolgesel-merkezi-acilmistir/3/54/1118
49. Number of Azerbaijan citizen educated in higher educational institutions foreign countries by state http://webcache.googleusercontent.com/search?q=cache:fjw8KrANmp8J:www.stat.gov.az/sour-ce/education/en/001_8.25en.xls+&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am
50. R.Uslu, S.Kocaman, The Activities of the Azerbaijani Diaspora in the United States of America, The 2013 WEI International Academic Conference Proceedings, p. 49, https://www.westeastinstitute.com/wp-content/uploads/2013/04/ORL13-222-Ramazan-USLU-Sinan-KOCAMAN.pdf
51. Y.Kechagiaras, "Engaging the Scientific Diaspora from EaP countries, ERC EaP Countries Regional Event, 20-21 April, Tbilisi, 2017, https://erc.europa.eu/sites/default/files/events/docs/07_Yannis_Kechagiaras.pdf

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծության արդյունքները թույլ են տալիս ներկայացնել կիրառական նշանակություն ունեցող հետևյալ առաջարկությունները, որոնք կարող են հետաքրքրել ՀՀ պատկան մարմիններին և ոլորտով զբաղվող մասնագետներին։

- Հասարակական-քաղաքական, դիվանագիտական ուղիներով իրականացնել գործնական քայլեր Իսրայել-Հունաստան-Կիպրոս նոր դաշինքի ձևաչափի շրջանակներում այդ երկրների սփյուռքերի հետ համագործակցության զարգացման ուղղությամբ։ Հայաստանը, հանդիսանալով Հունաստանի բնական դաշնակիցը, ունենալով փորձ և ավանդույթներ հունական սփյուռքի հետ գործակցության հարցում, կարող է ներգրավվել այդ ձևաչափում։ Սա հնարավորություն է հայկական կողմի համար նաև հայ և հրեական սփյուռքի տարբեր համայնքների միջև երկխոսության խորացման համար։ Հարցն ակտուալ է նրանով, որ հայկական և հրեական սփյուռքերի միջև գործակցութան առկա բացը կարողացել են հմտորեն լրացնել թուրքական և ադրբեջանական լոբբիստական կազմակերպություններն ու խմբերը։
- Հայաստանյան իրականությունում «Ազգ-բանակ» հայեցակարգը լավ հարթակ կարող է հանդիսանալ պետություն-սփյուռք գործակցության զարգացման, հատկապես Հայաս-

տանի պաշտպանական անվտանգության ապահովման ոլորտում սփյուռքի հայրենակիցների մասնակցության ընդլայնման հարցում: Սա ենթադրում է կամավոր զինծառայության ինստիտուտի ներդրում, երբ զինծառայությունը կիրականացվի անկախ քաղաքացիության սկզբունքից: Կամավոր զինծառայության ինստիտուտը հնարավորություն է տալիս հայության ոչ հայրենաբնակ հատվածի ներկայացուցիչներին հայրենիքին ծառայությունը կամավոր հիմունքներով իրականացնել բարեգործական, աջակցման նախաձեռնությունների և ծրագրերի միջոցով:

- Միջազգային լրատվամիջոցներում և ուղեղային կենտրոններում աշխատող հայ լրագրողների և վերլուծաբանների գործունեության հիմնական ուղենիշը պետք է լինեն հայկական խնդիրների (օրինակ, Արցախյան հակամարտության) ակտուալացումը և հայկական ու տվյալ երկրի (դիցուք՝ ԱՄՆ) շահերի ներդաշնակության գաղափարի առաջմղումը:
- Հաշվի առնելով ԱՄՆ հայկական լոբբիստական կառույցների լուսանցքային դերը վերջին երկու՝ 2012թ. և 2016թ. նախագահական ընտրություններում՝ անհրաժեշտ է հետայսու ակտիվացնել հայ համայնքի մասնակցությունն այդ գործընթացին և ընդլայնել ԱՄՆ ապագա գործադիր իշխանության հետ քննարկվող հարցերի շրջանակը (բացի Ցեղասպանության ճանաչման և դատապարտման խնդրից, այդ շրջանակի մեջ ներառելով նաև հայությանը հուզող այլ հիմնահարցեր՝ Արցախյան խնդիրը, ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակումը, հայ-ամերիկյան տնտեսական, քա-

ղաքական և այլ հարաբերությունների զարգացումն ու խորացումը, Մերձավոր Արևելքի հայ համայնքների դրությունը և այլն)։

- Գիտության ոլորտում ընդհանրական քաղաքականության փոխարեն նպատակահարմար կլինի խորացնել արդեն իսկ որդեգրված թիրախավորված քաղաքականությունը. արտասահմանյան բուհերում հայ երիտասարդների ուսումը հովանավորելու հարցում շեշտադրել այն մասնագիտությունները, որոնք առավել են համապատասխանում ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ գիտատար արդյունաբերության առաջնահերթություններին։
- Ստեղծել սփյուռքի և հայաստանյան գիտնականներին միավորող համացանցային ռեսուրս՝ «Աշխարհի հայ գիտնականներ» կայքը, որի «Ով ով է» բաժնում կարտացոլվեն հայ գիտնականների/մասնագետների տվյալները, գիտական հետաքրքրությունների ոլորտները, գիտության ոլորտում ունեցած ձեռքբերումները և այլն։ Այն կարող է գործել կամ անմիջապես ՀՀ ԿԳՆ, կամ էլ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ենթակայության ներքո։ Կայքը կարող է ունենալ լայն ձևաչափով քննարկումների դաշտ, որտեղ ներկայացված կլինեն համագործակցության հնարավոր ձևերը (գիտահետազոտական նախագծերի փորձագիտական գնահատում, ոլորտներում մասնագետների վերապատրաստում, կրթական ծրագրերով՝ կարճաժամկետ/երկարաժամկետ դասավանդում և այլն)։
- Ընդլայնել սփյուռքում գործող հայ գիտնականներին միավորող գիտական ցանցերի աշխարհագրական ծիրը։ Այդ

նպատակով կարելի է ստեղծել համահայկական գիտական ցանցային կառույց կամ Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցության մասնաճյուղերը տարածել այլ երկրներում։ Այս կառույցներում, գիտնականներից և մասնագիտական տարբեր խմբերի ներգրավումից բացի, նախընտրելի է, որ ներկայացված լինեն տվյալ երկրում բնակվող հայ գործարարները։ Սփյուռքահայ ինտելեկտուալներին և գործարարներին միավորող այս կառույցներն էապես կարող են մեծացնել իրենց դերակատարումը՝ վերածվելով յուրօրինակ հենակետերի պետություն-գիտական սփյուռք հարաբերություններում։

- Կազմակերպել հայկական գիտական սփյուռքի խնդիրներին նվիրված գիտաժողովներ։
- Կարելի է ձեռնամուխ լինել սփյուռքի կապիտալի մասնակցությամբ համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը։ Խոսքը վերաբերում է այնպիսի ընկերությունների հիմնմանը, որոնց բաժնետոմսերի մի մասը կպատկանի սփյուռքի, մյուս մասը՝ Հայաստանի գործարարներին։ Այստեղ չպետք է բացառել նաև սեփականության իրավունքով ՀՀ մասնակցությունն այդ համատեղ ձեռնարկություններին։

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով սույն աշխատանքը՝ իսրայելական, իրանական, ադրբեջանական և թուրքական սփյուռքերի վերաբերյալ մի շարք դիտարկումներ հայտնենք։ Ծագումնաբանական առումով հիշյալ սփյուռքերի միջև կան զգալի տարբերություններ։ Եթե իսրայելական սփյուռքի ձևավորումն ըստ էության սկսվում է ավելի քան երկու հազար տարի առաջ՝ հրեական պետականության կորստով, ապա իրանական, թուրքական և ադրբեջանական սփյուռքերը կարելի է համարել 20-րդ դարի երևույթ։ Իրանական սփյուռքի առաջացումը վերագրվում է հիմնականում 1979թ. իսլամական հեղափոխությանը, իսկ թուրքական և ադրբեջանական սփյուռքերը հիմնականում աշխատանքային միգրացիայի արդյունք են։ Այլ խոսքերով, եթե իրանական սփյուռքի ձևավորումն ուներ քաղաքական պատճառներ, ապա թուրքական և ադրբեջանական սփյուռքերի պարագայում գերակա էր սոցիալ-տնտեսական բաղադրիչը։

Անկախ սփյուռքերի ծագումնաբանական առանձնահատկություններից՝ վերոնշյալ երկրները ձգտում են խորացնել հարաբերություններն արտերկրի հայրենակիցների հետ՝ օրակարգում ունենալով հետևյալ ռազմավարական նպատակները.

1. աջակցություն սփյուռքի գոյապահպանությանը, ինքնակազմակերպմանն ու զարգացմանը,

2. սփյուռքի գիտական, տեղեկատվական, քաղաքական ներուժի և ֆինանսատնտեսական կապիտալի ներգրավում՝ պետական և համազգային մարտահրավերների դիմագրավման նպատակով։

Պայմանավորված երկրի հնարավորություններով, ինչպես նաև ներքին և արտաքին տարատեսակ հանգամանքներով՝ հիշյալ պետությունները սփյուռքի հանդեպ քաղաքականությունում կիրառում են տարբեր ռազմավարական-հայեցակարգային մոտեցումներ՝ համապատասխան գործառութային մեխանիզմներով։

Հարկ է նշել, որ սփյուռքը վերոհիշյալ չորս երկրների պարագայում էլ, լինելով որոշակի ռեսուրս, նաև խնդիրներ ունի։ Որոշ դեպքերում հատկապես Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի սփյուռքերը նույնիսկ մարտահրավեր են հանդիսանում այդ երկրների համար։

Դիտարկվող չորս երկրների պարագայում էլ պետություն-սփյուռք հարաբերություններում առկա են որոշ դրսևորումներ, որոնք առնվազն հետաքրքրություն կարող են ներկայացնել սփյուռքի հանդեպ քաղաքականություն իրականացնող պետական կառույցների, ինչպես նաև ոլորտով հետաքրքրվող գիտական շրջանակների համար։

РЕЗЮМЕ

Подводя итоги нашей работы, поделимся рядом наблюдений относительно израильской, иранской, азербайджанской и турецкой диаспор. Генеалогически эти диаспоры существенно отличаются друг от друга. Если формирование израильской диаспоры по сути началось более двух тысячелетий назад – со времен утраты иудейской государственности, то иранская, турецкая, азербайджанская диаспоры могут считаться порождением XX века. Возникновение иранской диаспоры обусловливается в основном исламской революцией 1979г., а турецкая и азербайджанская диаспоры сформировались преимущественно вследствие трудовой миграции. Другими словами, если у формирования иранской диаспоры были политические предпосылки, то в случае азербайджанской и турецкой диаспор превалирует социально-экономический компонент.

Независимо от генеалогических особенностей диаспор, указанные страны стремятся углубить взаимоотношения с зарубежными соотечественниками, имея в своей повестке следующие стратегические цели:

1. Поддержка сохранения, самоорганизации и развития диаспоры,

2. Вовлечение научного, информационного, информационного, политического потенциала и финансово-экономического капитала для противостояния государственным и общенациональным вызовам.

В зависимости от возможностей страны, а также различных внутренних и внешних обстоятельств упомянутые государства применяют в своей диаспоральной политике разные концептуально-стратегические подходы с соответствующими функциональными механизмами.

Необходимо отметить, что во всех четырех указанных случаях диаспора, будучи определенным ресурсом, имеет и ряд проблем. В некоторых случаях диаспора – особенно это касается Ирана, Азербайджана и Турции – сама может выступать вызовом для метрополий.

У всех четырех рассматриваемых стран во взаимоотношениях государство-диаспора есть некоторые проявления, которые, как минимум, могут представлять интерес для государственных структур, осуществляющих политику в отношении диаспоры, а также для научных кругов, интересующихся данной сферой.

SUMMARY

In summary of this book a number of notes can made about the Israeli, Iranian, Azerbaijani and Turkish diasporas. There are many differences between these diasporas in terms of their origins. While the Israeli diaspora started to form over two thousand years ago after the loss of the Jewish statehood, the Iranian, Azerbaijani and Turkish diasporas can be deemed a phenomenon of the 20th century. The emergence of the Iranian diaspora is attributed to the Islamic Revolution of 1979, whereas the Turkish and Azerbaijani diasporas are primarily a result of labor migration. Worded differently, the underlying causes for the advent of Iranian diaspora were political, while in case of the Turkish and Azerbaijani diasporas the socioeconomic component was dominant.

Regardless of the origins peculiarities of the diasporas, these countries try to deepen relations with their compatriots abroad, having in mind the following strategic objectives:

1. Support for survival, self-organization and development of the diaspora.
2. Involvement of the diaspora's scientific, information, and political potential, and financial capital to assist with facing the state and pan-national challenges.

Given the potential of the country, as well as various internal and external circumstances, the governments of these countries use various strategic and conceptual approaches along with their relevant functional mechanisms.

It has to be noted that the diasporas of the mentioned four countries have both resources and problems. In some cases, especially the diasporas of Iran, Turkey and Azerbaijan even pose certain challenges to these countries.

For all four countries the state-diaspora relations contain manifestations that at least can be interesting for government entities which implement diaspora policies, as well as scientific circles with research interest in this area.

Նշումների համար

Արեստակես Սիմավորյան
Վահրամ Հովյան
Կարեն Վերանյան

ԻՍՐԱՅԵԼԻ, ԻՐԱՆԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գիտական խմբագիր ՝
Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 34,25 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 300։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում։